

Գրութիւնների Ուսումնասիրութիւն

**«Արդարների ճանապարհը ծագող լույսի պէս է.
Որ գնալով լուսավորվում է,
մինչև որ կատարյալ օր է դառնում»**

Հատոր II

Ժամանակը Հասել է

«Որ Տիրոջ երեսիցը հանգստանալու ժամանակները գան. և նա ուղարկէ առաջուց ձեզ համար քարոզուած Հիսուս Քրիստոսին. Որին երկինքը պէտք է ընդունի, մինչև այն ամեն բաների հաստատվելու ժամանակները, որոնց համար խօսեց Աստված իր բոլոր սուրբ մարգարէների բերանովը հավիտենից հետեւ» «Իսկ դուք, եղբայրներ, խավարումը չէք, որ այն օրը գողի պէս ձեզ վերայ հասնէ» (Գործք. 3:19-21, Ա Թես. 5:4):

3126, 11 ԱՆԻ, ԳՅՈՒՄՐԻ
study.b24@gmail.com

Թագավորների Թագավորին և Տերերի Տիրոջը

ԻՐ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԲԵՐԻՆ

ԵՎ

«ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ՝ ՈՐ ԱՄԵՆ ՏԵՂ ՏԻՐՈՋ
ԱՆՈՒՆԸ ԿԿԱՆՉԵՆ «ՀԱՎԱՏՔԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ»

ՈՒ

ՀԱՌԱՉՈՂ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆԸ՝ ՈՐՈՆՔ ԱՍՏԾՈ
ՈՐԴԻՆԵՐԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆԸ ԿՍՊԱՍԵՆ

«Եվ ամենին լուսավորեմ, թե ի՞նչ է այն խորհրդի
տևտեսությունը, որ հավիտյաններից հետե
ծածկված էր Աստուծոյ մօտ՝ որ ամեն բան
ստեղծեց: Որ մեր վրայ աւելցուց իմաստութեամբ
ու գիտութեամբ, Մեզի հայտնելով իր կամքին
խորհուրդը՝ իր հաճությանը պէս: Ժամանակների
լրության տևտեսութեան համար, որ ամեն
բան բովանդակուի Քրիստոսումը, ինչ որ
երկնքումն է՝ եվ ինչ որ երկրումը, Նրանում»
(Եփես. 3:4, 5, 9; 1:8-10):

Գրվել է 1889 թվականին եղբայր Ռասելի կողմից

Ժամանակը Հասել Է

Առաջաբան

Այս հատորի առաջին հրատարակությունը հրապարակվել է 1889 թ-ին: Այդ օրվանից ի վեր մեկ հրատարակությունները մեկը մյուսի ետևից լույս է տեսել տարբեր լեզուներով, և այժմ ավելի քան մեկ ու կես միլիոն օրինակ գտնվում է մարդկանց ձեռքերում: Այս թվերը զարմանալի են, եթե հաշվի առնենք, թե որքան քիչ մարդիկ են այսօր հավատում Աստվածաշնչին որպես Աստվածային հայտնության, և որքան քիչ են նրանք, ովքեր իրապես հավատում են Աստվածաշնչին, գնահատում են մարգարեությունը և ժամանակագրությունը՝ հատկապես Աստվածաշնչյան ժամանակագրությունը և աշխարհի Աստվածաշնչյան պատմությունը:

Հեղինակը և հրատարակիչները մեծ պատճառ ունեն ուրախանալու՝ անընդմեջ ստացվող վկայություններից, որ այս հատորը մեծ օգուտ է բերել Աստծո ժողովրդին յուրաքանչյուր երկրում՝ Աստվածաշնչի ուսումնասիրության գործում՝ Տիրոջ Խոսքի ուղերձը ուսումնասիրողի համար օգտակար տարբեր վերնագրերի և դասակարգումների ներքո համախմբելով: Մասնավորապես, մենք լսել ենք որ շատերը օրհնություններ են ստացել՝ ուսումնասիրելով Երկրորդ գալուստի բնույթը այս հատորում ներկայացված Աստվածաշնչյան ապացույցների օգնությամբ, որոնք ցույց են տալիս, որ մեր Տերը այլևս երբեք չի գա այս երկիր որպես մարդ, քանի որ որպես մարդ Իր առաքելությունը ամբողջությամբ կատարել է, երբ Աստծո շնորհով Գողգոթայում ճաշակեց մահը յուրաքանչյուր մարդու համար: Ընթերցողի ուշադրությանը ներկայացված տեքստերը, որոնք ապացուցում են, որ մեր Տերը այժմ փառավորված է Հոր աջ կողմում և շուտով կդառնա

աշխարհի Թագավոր, շատերի համար օգտակար են եղել, ինչպես վկայում են նրանց նամակները:

Այս հատորը չի պնդում, որ անսխալական է և չի պնդում որևէ ուղիղ ներշնչում Աստծո կողմից Նրա Խոսքի մեկնաբանության մեջ: Հակառակը, այն նշում է, որ աստվածային հայտնությունը Աստվածաշունչն է: Նրա ձգտումն է եղել համադրել աստվածաշնչյան և առաջարկել մտորումներ դրա իմաստի շուրջ:

Այսպիսի դժվար թեմաներ ուսումնասիրելիս, որոնք հազվադեպ են ուրիշների ուշադրության առարկա դառնում, չի կարելի տարօրինակ համարել, եթե այս հատորում ներկայացված որոշ առաջարկներ չեն կատարվել ամբողջական ճշգրտությամբ: Սակայն հեղինակը, հրատարակիչները և այս հատորի հազարավոր ընթերցողները չեն ամաչում դրա մեջ ներկայացված թեմաներից և շարունակում են այն առաջարկել բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են Աստվածաշնչի ուսումնասիրությամբ՝ որպես ամենահետաքրքիր և ամենաօգտակար միջոց Տիրոջ Խոսքի ըմբռնման համար:

Այստեղ ներկայացված Աստվածաշնչյան ժամանակագրությունը ցույց է տալիս, որ Ադամից սկսված մեծ հազարամյա օրերը ավարտվել են, և որ մեծ յոթերորդ օրը՝ Զրիստոսի հազարամյա թագավորությունը, սկսվել է 1873 թվականին: Վերջին 43 տարիների իրադարձությունները, որոնք այս հատորը կոչում է Հազարամյակի սկիզբ, ամբողջությամբ հաստատվում են այստեղ ներկայացված աստվածաշնչյան մարգարեություններով: Այս 43 տարիների ընթացքում դրվեցին բոլոր ժամանակակից հայտնագործությունների հիմքերը: Թեթև արդյունաբերության առաջին սարքերից մեկը՝ կարի մեքենան, սկսեց կատարելագործվել 43 տարի առաջ:

Այդ օրվանից ի վեր՝ մարդկային հնարամտության շնորհիվ, մենք ունեցել ենք ամեն տեսակի տնային մեքենաներ, գործիքներ, ինչպես նաև արհեստանոցների, խանութների համար սարքավորումներ, գործարաններում և տանը — առատությամբ և ցածր գնով: Սա նվազեցնում է աշխատանքի բեռը և վերացնում «ճակատի քրտնաջան աշխատանքը», որը Աստվածաշնչում կապված է անեծքի հետ:

Համոզված կարող ենք ասել, որ այս 43 տարիների ընթացքում աշխարհը իր հարստությունը հազարապատկել է: Եվ երբ հիշում ենք, որ այս 43 սերունդներից առաջ եղել են մարդկային ջանքերի ամբողջ վեց հազար տարիները, դա գրեթե անհավանական է թվում, որ աշխարհը վերջին 43 տարիների ընթացքում հազար անգամ ավելի շատ է հասցրել իրականացնել, քան նախորդ վեց հազար տարիների ընթացքում: Անշուշտ, սա վկայում է այս հատորի պնդմանը, որ մենք մտել ենք մեծ յոթերորդ օրը, և այն, և մեր սերնդի հետ կատարվելիք ամեն բան, ընդամենը նախանշումն է դեռևս գալիք շատ ավելի մեծ օրհնությունների՝ երբ Արդարության Արեգակը կբարձրանա իր ճառագայթներով՝ բուժում պարզևելով, և կցրի աշխարհի ամբողջ խավարը, անտեղյակությունը և սնահավատությունը:

Այս հատորը ներկայացնում է այն, ինչ հեղինակը քարոզել է ավելի քան քառասուն տարվա ընթացքում, որ «Հեթանոսների ժամանակները» ժամանակագրորեն ավարտվել են Զ.հ. 1914 թվականի աշնանը: «Հեթանոսների ժամանակներ» արտահայտությունը Աստվածաշնչում նշանակում է այն տարիները կամ ժամանակահատվածը, երբ աշխարհի հեթանոսական ազգերին թուլյատրվում էր վերահսկողություն ունենալ՝ բնական իսրայելից պատկերավոր թագավորության վերցվելուց հետո և լրացնել այդ իրադարձության ու

Մեսիայի ձեռքով Աստծո Թագավորության հաստատման միջև ընկած դատարկությունը — «ով ունի իրավունք» (Եզեկիել 21:27):

Մենք, իհարկե, 1889 թվականին չէինք կարող իմանալ, թե արդյոք 1914 թվականը, որը Աստվածաշնչում այդքան հստակ նշված է որպես հեթանոսների աշխարհը կառավարելու իրավունքի կամ թուլությունից ազատության ավարտը, կնշանակե՞ր, որ նրանք այդ պահին ամբողջությամբ կորցնելու են իշխանությունը, թե՞ նրանց ժամկետի ավարտից հետո սկսվելու է նրանց հեռացումը: Մենք հավատում ենք, որ Տիրոջ ծրագիրը վերջինն է: Ամսօրյապես, 1914 թվականի օգոստոսին, մարգարեությունում նշված թագավորությունները սկսեցին ներկայիս մեծ պայքարը, որը, ըստ Աստվածաշնչի, կավարտվի բոլոր մարդկային կառավարությունների ամբողջական տապալմամբ, հարթելով ճանապարհը Աստծո Որդու Թագավորության լիակատար հաստատման համար:

Մենք չենք կարող նայել վարագույրի ետևը, մենք չենք կարող իմանալ այն բաները, որոնք ընթանում են մեր փառավոր Տիրոջ և Նրա Եկեղեցու արդեն փառավորված անդամների ղեկավարությամբ: Մեր կարծիքն այն է, որ ինչ-որ կերպ Տերը այժմ միջամտում է աշխարհի գործերին այնպես, ինչպես Նա չի արել անցյալում: Մենք գիտենք, որ մեծ Նեղության ժամանակը, որը սկսվել է, շատ սերտորեն համընկնում է Աստվածային հայտարարության հետ, որը վերաբերում է Մեսիայի Թագավորության հաստատման ժամանակին և պայմաններին: Տերը ինքն է մեզ տեղեկացնում, որ այն ժամանակ, երբ Նա կվերցնի Իր մեծ իշխանությունն ու կկառավարի, ազգերը կկատաղեն, և Աստվածային բարկությունը կգա: Մի փոքր անց կգա մեռելների դատաստանի ժամանակը և Աստծո ծառաներին՝ փոքր ու մեծ, պարգևատրելու պահը, ինչը

վերջապես կհանգեցնի անուղղելիների ոչնչացմանը, որոնք երկրի վրա ապականող ազդեցություն են ունեցել:

Ամբողջ աշխարհում մարդիկ տեղյակ էին Աստվածաշունչ ուսումնասիրողների կանխատեսումների մասին՝ Զ.հ. 1914 թվականի վերաբերյալ: Եվ երբ բռնկվեց այսպիսի ահռելի պատերազմ, երբ խռովության քամիները սկսեցին փչել այնքան բուռն ու ավերիչ, հազարավորները հիշեցին այն, ինչ լսել և կարդացել էին Յեթանոսական ժամանակների ավարտի մասին: Այսօր հազարավոր մարդիկ լիովին գնահատում են այն ժամանակները, որոնց մեջ մենք ապրում ենք: Այդ ազդեցությունը շատ օգտակար և ոգեշնչող է: Գիտակցությունը, որ մենք գտնվում ենք Տիրոջ օրում և որ շատ շուտով Նրա բոլոր սրբերը հարության փոփոխության միջոցով կհավաքվեն Նրա մոտ, ոգեշնչող և խրախուսող ազդեցություն է ունենում Աստվածաշունչ ուսումնասիրողների վրա, առանձնացնելով նրանց աշխարհից և նրա վախերից ու ձգտումներից, և ուղղելով նրանց հայացքը դեպի Կյանքի պսակը, որը Տերը պահել է նրանց համար, ովքեր ամենից շատ են սիրում Նրան:

Հեղինակը ընդունում է, որ այս գրքում նա ներկայացնում է այն միտքը, որ Տիրոջ սրբերը կարող են ակնկալել լինել Նրա հետ փառքի մեջ հեթանոսական ժամանակների ավարտին: Բնականաբար, սա սխալ էր, սակայն Տերը այս սխալը ուղղեց իր ժողովրդի օրհնության համար: Գաղափարը, որ ամբողջ Եկեղեցին փառքով կհավաքվեր մինչև 1914 թ. հոկտեմբերը անշուշտ, արտասովոր ոգեշնչող և սրբացուցիչ ազդեցություն ունեցավ հազարավոր մարդկանց վրա, որոնք դրա համար կարող են օրհնել Տիրոջը — նույնիսկ այդ սխալի համար: Շատերը, անշուշտ, կարող են արտահայտել իրենց երախտագիտությունը Տիրոջը, որ Եկեղեցու հույսերի գազաթնակետը չհասավ այն ժամանակ, երբ մենք

սպասում էինք, և որ մենք, որպես Տիրոջ ժողովուրդ, ունենք
ևս հնարավորություններ սրբությունը կատարելագործելու
և մեր Ուսուցչի հետ մասնակցելու Նրա Խոսքի հետագա
ներկայացմանը Իր ժողովրդին:

Մեր սխալը ակնհայտորեն չէր վերաբերում
հեթանոսների ժամանակների ավարտին, սակայն մենք
հանգեցինք սխալ եզրակացության, որը Տիրոջ Խոսքով
արտոնված չէր: Մենք Աստվածաշնչում նկատեցինք որոշ
գուգահեռներ հրեական դարաշրջանի և Ավետարանական
դարաշրջանի միջև: Պետք է նկատեինք, որ այս
գուգահեռները երկու դեպքում էլ ցույց էին տալիս նոմինալ
համակարգերի ոչնչացումը և չեն ցույց տալիս Նոր
Ստեղծագործության փառավորվելու ժամանակը: Այս
բացատրությունը կօգնի ընթերցողին ուսումնասիրել
«ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՍԵԼ Է» աշխատությունը: Մենք չենք
կասկածում, որ անցյալում մեզանից շատերին հասած
հսկայական օրհնությունները շարունակելու են հասնել
հազարավոր այլ մարդկանց այս հատորի միջոցով:
Հեղինակը աղոթում է սրա համար,

Չարլզ Թ. Ռասել

Բրուքլին, Նյու Յորք

1916 թ. հոկտեմբերի 1

Բովանդակություն

ԳԼՈՒԽ I

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԺԱՄԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Աստվածային Նշանակման ժամեր և ժամանակներ – Ինչու դրանք չեն ներկայացվել ավելի պարզ – ճիշտ ժամանակին բացահայտված – ժամերն ու ժամանակները իմանալու անկեղծ ցանկությունը գովելի է – Աղվենտիստների սխալները – ժամանակների և վերաբերող մարգարեությունների իրական նպատակը – մեր ներկա դիրքորոշումը – հաջորդ գլուխների նպատակը 14

ԳԼՈՒԽ II

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակագրությունը անհրաժեշտ է մարգարեությունները հասկանալու համար – Աստվածաշնչում ներկայացված անհրաժեշտ տվյալներ – Ադամի ստեղծումից մինչև մեր թվարկության 1873 թվականը անցել է վեց հազար տարի – Աստվածաշնչյան ժամանակագրությունը մեծ դարաշրջաններում – Դրա մանրամասն ուսումնասիրությունը – Արարչագործությունից մինչև ջրհեղեղի ավարտի օրը՝ երբ ջրերը ամբողջությամբ քաշվեցին երկրի երեսից – Մինչև Աբրահամական ուխտը – Մինչև օրենքի տրվելը – Մինչև Զանանի ցեղերի միջև բաժանումը – Դատավորների ժամանակաշրջան – Թագավորների ժամանակաշրջան – Ամայացման ժամանակաշրջան – Մինչև մեր թվարկության 1873 թվական – Ինչպե՞ս է այս ժամանակագրությունը տարբերվում եպիսկոպոս Աշերի ժամակագրությունից,

ինչպես այն նշված է անգլերեն Աստվածաշնչերում – Մեր Տիրոջ ծննդյան իրական ամսաթիվը.....39

ԳԼՈՒԽ III

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱՋԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Դանիելի մարգարեության յոթանասուն շաբաթները – Այդ ժամանակահատվածում տեղի ունենալիք կանխագուշակված իրադարձություններ – Մեսիայի գալստի նշված ժամանակը և այն սկզբունքը, որը բխում է նշման եղանակից – Մյուս ժամանակների մարգարեությունների բանալին – Մեսիայի խաչելության նշված ժամանակը – Իսրայելին որպես ազգ տրված հատուկ շնորհը արդարացիորեն վերցվեց, սակայն շարունակվեց անհատների համար – Սրբությունների Սրբության Օծումը – Ցավը թափվեց ավերողի վրա.....77

ԳԼՈՒԽ IV

ՅԵԹԱՆՈՍՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Ի՞նչ են հեթանոսների ժամանակները – Դրանց սկիզբը, դրանց տևողությունը, դրանց ավարտը մ. թ. 1914 թվականին – Առնչվող իրադարձություններ – Յետագա իրադարձություններ – Բառացի և խորհրդանշական ժամանակ – Հիշարժան պատկեր – Ներկայիս նշանները – Աստծո թագավորությունը ոչնչացնելու է հեթանոսական իշխանությունը – Կազմակերպված է մինչև դրա ավարտը – Մինչև մ.թ. 1914 թվականը – Ինչու՞ են հեթանոսական թագավորությունները ընդիմանում – Ինչպե՞ս և ինչու՞ բոլորը վերջապես ուրախությամբ կընդունեն այն – Կգան բոլոր ազգերի ցանկալիքը.....89

ԳԼՈՒԽ V

ՏԻՐՈՋ ՎԵՐԱԴԱՐՁԻ և ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԸ

Տիրոջ երկրորդ գալուստի բնույթի ներդաշնակությունը աստվածային ծրագրի մյուս առանձնահատկությունների հետ – Երբ և ինչպես եկեղեցին կտեսնի նրան – ինչպես և երբ Տիրոջ փառքը կբացահայտվի այնքան, որ ամեն մարմին տեսնի այն – Պարզապես հակասող թվացող հայտարարությունները ցույց են տրվում որպես ներդաշնակ – Նա գալիս է «Գողի նման» – Չի գա նկատելի ձևով – «Գոչյունով» – «Ձայնով» – «Մեծ փողի ձայնով» – Նա կհայտնվի բոցավառ կրակով վրեժ առնելու – Այնուամենայնիվ, «Նա կգա նույն ձևով», ինչպես երկինք գնալիս – Այս ուղղությամբ ցուցադրված մարգարեական ժամանակի կարևորությունը – Ներկայիս նշանների ներդաշնակությունը.....127

ԳԼՈՒԽ VI

ԵՐԿՐԻ ՄԵԾ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Մովսեսի կանխագուշակած «Ամեն բաների հաստատվելու ժամանակները» – Դրանց մեկնարկի նշված ամսաթիվը – Դրանք չեն կարող սկսվել, մինչև Մեծ վերականգնողը չգա – Օրենքից ստացված ապացույց – Մարգարեներից ստացված հաստատող վկայություն – Մասնավոր և համատեղ դիտարկման արդյունքում ստացված տրամաբանական եզրակացություններ – Ներկա ցուցումների ներդաշնակությունը213

ԳԼՈՒԽ VII

ՉՈՒԳԱՅԵՌ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐ

Հրեական դարը որպես Ավետարանական դարի պատկեր – Երկու դարաշրջանների միջև նշանակալի զուգահեռություն կամ համապատասխանություն – Այնուամենայնիվ, դրանք տարբերվում են – Զրիստոնեական դարաշրջանի գերազանցությունը, հակառակը – Մարմնեղեն և հոգեղեն Իսրայելի միջև եղած հակադրությունը – Ուշագրավ զուգահեռների ուսումնասիրություն – Հատուկ ուշադրություն ժամանակային զուգահեռներին – Մարմնեղեն Իսրայելի բարեհաճության ժամանակաշրջանը – Նրանց շնորհից զրկվելու ժամանակը – Մարգարեության մեջ անբարեհաճության ժամանակահատվածը ներկայացված է որպես բարեհաճության ժամանակաշրջանի տևողությանը հավասար – Առաքելական վկայություն, որ անբարեհաճության ժամանակը համընկնում է հոգեղեն Իսրայելի վերին կոչման ժամանակի հետ – Ավետարանական դարաշրջանի տևողությունը անուղղակիորեն, սակայն հստակ ցուցադրված է – Աստվածաշնչյան ժամանակագրության, Հոբեյանի վկայության, հեթանոսների ժամանակների և այլ մարգարեությունների ներդաշնակությունը՝ այս զուգահեռությունների դասերով, անհերքելի, համոզիչ և բավարար են.....249

ԳԼՈՒԽ VIII

ԱՌԱՋ ԵՂԻԱՆ ՊԵՏՔ Է ԳԱ

Ինչպես է այս կարևոր մարգարեությունը կապված Երկրորդ գալստի հետ – Մասնակի և պատկերավոր կատարում Հովհաննես Մկրտչի մեջ – Իրական կատարումը – Սուրբ լեռան տեսիլքը – Եղիայի, պատկերի և Նախապատկեր Եղիայի միջև ուշագրավ

համապատասխանություններ – Ժամանակը հասել է –
Հեռանկար – Եղիայի հաջորդը՝ Եղիսեն.....308

ԳԼՈՒԽ IX

ԱՆՕՐԵՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԸ – ՆԵՌ

Նեռը պետք է զարգանա, հայտնվի և խոցվի Տիրոջ օրվանից առաջ – Քննարկվող հարցի վերաբերյալ հակառակ տեսակետ – Մարգարեական նկարագրություն – Նեռի ծնունդը – Նրա արագ զարգացումը – Պատմական պատկերը և Աստվածաշնչյան նկարագրությունը համընկնում են – Նրա թագավորությունը կեղծ է – Նրա գլուխն ու բերանը աչքի ընկնող են – Նրա ամբարտաւան հայիոյական խոսքերը – Նրա հայիոյական ուսմունքները – Նրա ճնշումները Ամենաբարձրյալի սրբերի նկատմամբ – Նրա հազարամյա իշխանությունը – Նեռը Հոգու սրով խոցված – Նրա վերջին պայքարը և ավարտը.....331

ԳԼՈՒԽ X

ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՍԵԼ Է

Հակասությունների բացակայություն – Զրիստոսի թագավորության հաստատումը, այժմ ընթացող գործը – Մարգարեության վկայությունը համընկնում է – Այս աշխարհի իմաստունները շատ բան են տեսնում – Արթուն սրբերը ավելի հստակ են տեսնում – Բոլորի համար կարևոր է ունենալ բաց աչքեր և նայել ճիշտ ուղղությամբ.....459

ԳԼՈՒԽ I

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԺԱՄԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Աստվածային Նշանակման ժամեր և ժամանակներ – Ինչու դրանք չեն ներկայացվել ավելի պարզ – ճիշտ ժամանակին բացահայտված – ժամերն ու ժամանակները իմանալու անկեղծ ցանկությունը գովելի է – Ադվենտիստների սխալները – ժամանակներին վերաբերող մարգարեությունների իրական նպատակը – մեր ներկա դիրքորոշումը – հաջորդ գլուխների նպատակը:

Ինչպես «ԴԱՐԵՐԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ» գրքում մենք ձգտեցինք ներկայացնել մարդկության փրկության աստվածային ծրագրի հիմնական սկզբունքները բացառապես աստվածաշնչյան տեսանկյունից, այնպես էլ այս հատորում ցանկանում ենք նույն հիմքի վրա ցույց տալ, որ այս ծրագրի տարբեր առանձնահատկությունների համար հստակ սահմանված են ժամեր ու ժամանակներ դրանց իրականացման համար, որ այս ծրագրի իրականացման ընթացքում յուրաքանչյուր հաջորդ գիծը ճշգրիտ ժամանակին է իրականացվել, և որ մոտեցել է այն ժամանակը, երբ այն կհասնի իր գագաթնակետին՝ օրհնելով երկրի բոլոր ընտանիքներին (Ծննդ. 28:14, Գաղ. 3:16):

Ավետարանական դարաշրջանի երկար դարերի ընթացքում Եկեղեցին, իր Տիրոջ կողմից ուսուցանված, աղոթել է. «Գա քո արքայությունը, լինի քո կամքը, ինչպես երկնքումն՝ այնպես էլ երկրի վրա»: Սակայն այս երկար ժամանակահատվածի պատճառով շատերը, ինչպես քնկոտ երեխաները, գրեթե մոռացել են այս բառերի կարևորությունը, որոնք այժմ կարծես թուլանում են նրանց շուրթերին: Բոլոր նրանց, որոնց սրտերը դեռևս

հավատարիմ են Տիրոջը, մենք կոչ ենք անում Պողոս առաքյալի խոսքերով. «Քնից զարթնելու ժամն է, որովհետև այժմ փրկությունը մեզ ավելի մոտ է, քան այն ժամանակ, երբ հավատացիք: Գիշերն անցել է, ու ցերեկը՝ (հազարամյան), մոտեցել»: Այո, այն իսկապես դռների մոտ է: Երկնքի թագավորությունը այժմ մոտ է, ոչ թե իր պարզապես սաղմնային կամ սկզբնական փուլում, ինչպես մեր Տիրոջ առաջին գալուստին (Մատթեոս 3:2), այլ այն իմաստով, որով Նա հայտարարեց, որ այն դեռ պետք է գա (Հովհաննես 18:36,37) – «Չորությամբ և մեծ փառքով»:

Այնուամենայնիվ, Միայն նրանք, ովքեր ուշադիր ուսումնասիրել են «Դարերի Ծրագիրը», կկարողանան գնահատել այս հատորի ուսուցումը՝ Աստծո կողմից նշանակված ժամերի և ժամանակների վերաբերյալ, որոնք նախատեսված են այդ ծրագրի տարբեր կողմերի զարգացման և նրա վերջնական կատարման համար: Հուսով ենք, որ ոչ ոք չի ձեռնամուխ լինի այս ուսումնասիրությանը, մինչև ամբողջությամբ չի ըմբռնել նախորդ հատորի դասերը: Հակառակ դեպքում դա նրանց համար ճիշտ ժամանակին կերակուր չի լինի: Ճշմարտությունը ճիշտ ժամանակին կերակուր է միայն այն ժամանակ, երբ մենք պատրաստ ենք այն ընդունել: Երեխան պատրաստ չէ լուծելու մաթեմատիկական խնդիր, մինչև որ նախապես չսովորի թվերի և լեզվի կիրառությունը: Այնպես է նաև աստվածային ճշմարտության դեպքում՝ այն կառուցված է քայլ առ քայլ, և դրա իմաստը ըմբռնելու համար մենք պետք է բարձրանանք տրված աստիճաններով՝ իհարկե, ապացուցելով Սուրբ Գրքով մեր յուրաքանչյուր հաջորդ քայլը, սակայն միևնույն ժամանակ չվախենալով այդ քայլերը կատարել, երբ գտնում ենք դրանց համար հուսալի հենարան: Միայն նրանք, ովքեր անսասան հավատք ունեն Աստծո հանդեպ, և որոնց համար «այսպես է ասում Տերը» արտահայտությունը բոլոր կասկածների և վեճերի վերջն է, կարող են Աստծո Հոգով

առաջնորդվել դեպի ճշմարտություն, դեպի այն, ինչը Նոր Է, սակայն հնով և նույն հիմքով հաստատված:

Աստված այս առաջնորդությունը առաջարկում է միայն նման մարդկանց: Այս դարի վերջում, որը հունձքի ժամանակն է, շատ ճշմարտություններ պետք է բացահայտվեն, որոնք Աստված նախկինում չէր հայտնել անգամ իր ամենահավատարիմ ու նվիրված զավակներին: Ինչպես Ամբակում մարգարեն հայտարարեց (2:3), Աստծո ծրագրի փառավոր իրականացման տեսիլքը կխոսի և չի ստի և որ Աստծո որոշ զավակների համար այն կխոսի այնքան հստակ, որ նրանք, ինչպես հրահանգված է, կկարողանան գրել այն տախտակների վրա, որպեսզի ուրիշները հեշտությամբ կարդան: Եվ ապա Դանիելն էլ (12:4,9,10) հայտարարեց, որ գիտությունը կաճի, և որ իմաստունները (հավատի միջոցով) կհասկանան այս տեսիլքը:

Մենք այստեղ չենք ձգտում մարգարեություն անել մարդկային երևակայության առատությունից, և ոչ էլ որևէ կերպ սուրբ Գրություններում գրվածից ավելի իմաստուն լինել: Ուստի, մերժելով բոլոր մարդկային հորինվածքները, մենք մնում ենք մոտ աստվածային ճշմարտության աղբյուրին, ձգտելով մարգարեությունը կարդալ մարգարեության լույսով և նրա ակնհայտ իրականացմամբ, և բացատրել տախտակների վրա այն, ինչ Աստված ասել է, որ կնքված կմնա, և որը, հետևաբար, չէր կարող հասկացվել մինչև այս վերջին ժամանակը, սակայն որի համար Նա վստահեցրել է, որ այն ժամանակ պիտի հասկանան:

Այս հատորում մենք ներկայացնում ենք Աստծո կողմից նշանակված ժամերի և ժամանակների վերաբերյալ վկայությունների մի շղթա, որի յուրաքանչյուր օղակը, մեր համոզմամբ, ամուր հիմնված է Սուրբ Գրքի վրա: Եվ եթե մենք այս շղթան դիտարկենք որպես ամբողջություն՝

տեսնելու, թե ինչպես են դրա մասերը կապված միմյանց հետ, այն ծառայում է որպես ապացույց այնպիսի լայն և ընդգրկող ծրագրի, այնպիսի խորը մտադրության և կատարյալ ներդաշնակության, որ ջանադիր և խոնարհ ուսումնասիրողի համար ակնհայտ կլինի, որ սա մարդկային մտքի լայնությունից և խորությունից վեր է, և հետևաբար չի կարող մարդու կողմից լինել:

Մենք տեսնում ենք, որ Ավետարանական դարի ավարտը, ինչպես հրեական դարի ավարտը, կոչվում է հունձքի ժամանակ (Մատթ. 9:37, 13:24, 30, 39), որ այն, ինչպես նախորդը, քառասուն տարվա ժամանակահատված է; և որ մարգարեական վկայության ճառագայթները հատուկ կերպով կենտրոնացած են դարերի հունձքերի վրա, հատկապես այս դարի հունձքի վրա, որտեղ նույնիսկ հրեական դարի ողջ լույսը՝ իր տիպիկ բնույթի շնորհիվ—հավաքվում է փառավոր կենտրոնում: Այս լույսի ներքո մենք այժմ հստակ տեսնում ենք մեր Աստծո հիասքանչ քայլերը ոչ միայն անցյալ դարերի երկար տեսադաշտում, այլև Նրա ծրագրի ներկայիս իրականացման մեջ: Եվ, բացի այդ, ըստ Նրա խոստման համաձայն՝ մեզ ցույց տալու գալիք բաները (Հովհաննես 16:13): Մենք առավելագույն տեսողական պարզությամբ տեսնում ենք Նրա իմաստուն քայլերը՝ բոլորի օրհնության համար գալիք Հազարամյա Դարում, մինչև դրա հիասքանչ ավարտը՝ ամեն բաների վերականգնմամբ: Մենք տեսնում ենք, որ այս հունձքի մեջ կենտրոնացած են բազմաթիվ մեծ ու նշանակալի իրադարձություններ. դրանց մեջ է մեծ նեղության ժամանակը, Եհովայի օրը, Նեռի վերջնական ու լիակատար տապալումը և Մեծ Բաբելոնի անկումը, հրեաների նկատմամբ շնորհքի վերադարձի սկիզբը, մեր Տիրոջ երկրորդ գալուստը և Նրա թագավորության հաստատումը, և սրբերի հարությունը և վարձատրումը:

Մարգարեությունը հստակ սահմանում է այս հնձի շրջանի սկիզբն ու ավարտը, ինչպես նաև այն իրադարձությունները, որոնք պետք է տեղի ունենան դրա ընթացքում: Մարգարեական ժամանակագրության տարբեր գծերի վրա կենտրոնանալը մինչև այն իրադարձությունները, որոնցում դրանք գազաթնակետին են հասնում, այս հատորի նպատակն է: Դրա վկայությունը ընդունելու համար ընթերցողը պետք է ունենա ականջ՝ լսելու համար (Հայտնություն 2:7, Մատթ. 11:15), և անկեղծորեն պատրաստ լինել մերժելու բազմաթիվ նախապաշարմունքներ, հենց որ տեսնի որ դրանք չեն համընկնում Աստծո խոսքի հետ: Մենք չենք կասկածում, որ դա մեծ օրհնություն կլինի նրանց համար, ովքեր այդպիսի տրամադրվածություն ունեն և համբերությամբ ու ուշադրությամբ ուսումնասիրում են այս հատորի դասերը: Եթե դրա դասերը ընդունվեն բարի և ազնիվ սրտերում, վստահ ենք, որ այն ուժ կլինի նրանց աշխարհից առանձնացնելու և որպես ցորեն հասունացնելու համար՝ հնձի համար: Սրբերին այս հնձի ժամանակ արթնացնելը, հասունացնելը և առանձնացնելը՝ ինչպես ցորենը որովից, այն նպատակն է, որի համար, մեր համոզմամբ, մեր Տիրոջ կողմից նախանշվել են այս այժմ բացահայտվող մարգարեությունները:

Նրանք, ովքեր ունեն արտոնություն տեսնելու Աստծո մեծաշուք դարերի քարտեզը, որը այնքան հստակ է ներկայացնում նախորդ հատորում բացահայտված աստվածային ծրագրի կարգավորված կառուցվածքը, խորը նախագիծը և հրաշալի հնարավորությունները, պետք է անհամբեր լինեն բացահայտելու այն ամենը, ինչ Աստված կհաճի հայտնաբերել դրա ժամերի և ժամանակների վերաբերյալ: Նրանց հետաքրքրությունը այս թեմայի նկատմամբ պետք է շատ ավելի մեծ լինի, քան նրանցը, ովքեր ապրել են նախորդ դարերում և չեն տեսել բոլորի համար նախապատրաստված մեծ օրհնությունները:

Աստծո հավատարիմ զավակները ձգտում են իմանալ, թե երբ է գալու Հաղթության Թագավորը և երբ է կապվելու խավարի իշխանը, երբ լույսի որդիները կշողան արեգակի պես, և խավարը ցրված կլինի, երբ սրբերը ամբողջությամբ ընդունվեն աստվածային որդեգրման մեջ, և տառապող ստեղծագործությունը ազատվի ապականության ստրկությունից, և երբ մեր երկնային Հոր փառավոր նկարագիրը ամբողջությամբ հայտնվի զարմացած աշխարհին, ստիպելով բոլորին, ովքեր սիրում են արդարությունը, խոնարհել իրենց սրտերը երկրպագության, սիրո և հնազանդության մեջ:

Այդպիսի ցանկությունների բացակայությունը ցույց է տալիս Աստծո ծրագրերի նկատմամբ հետաքրքրության և հարգանքի պակաս: Բոլոր առաքյալները, մարգարեները և հրեշտակները ցանկանում և ջանասիրաբար փնտրում էին իմանալ այն ժամանակը, որին Աստծո Հոգին մատնանշում էր մարգարեների միջոցով: Եվ Նրա զավակների նման հետաքրքրությունը միշտ հաճելի է Աստծուն, որովհետև, թեև մինչ այդ նա երբեք լիովին չէր բավարարել նման ցանկությունները՝ քանի որ համապատասխան ժամանակը դեռ չէր եկել, նա երբեք չէր հանդիմանել այդ հետաքրքրության համար: Հակառակը, նա հետաքրքրասեր Դանիելին անվանեց «սիրելի» և պատասխանեց Նրա հետաքրքրությանը այնքանով, որքանով դա համապատասխանում էր իր ծրագրին:

Ուստի նման հետաքրքրասիրությունը չի կարելի համարել Աստծո գաղտնիքների հանդեպ անպարկեշտ հետաքրքրասիրություն: Աստված ուզում է, որ մենք ցուցաբերենք մեր հետաքրքրությունը Նրա ծրագրերի նկատմամբ՝ «դիմելով Սուրբ Գրություններին» և «ուշադրություն դարձնելով մարգարեական հաստատուն խոսքին», և այդպիսով գտնվենք այն ճիշտ, սպասողական դիրքում, որը պատրաստ կլինի ճանաչել աճող

ճշմարտությունը: Ծածուկ բաները մեր Տեր Աստծու համար են, իսկ հայտնի բաները՝ մեզ և մեր որդիների համար հավիտյան (2 Օրենք 29:29): Ուստի, եթե մենք խստորեն հետևենք Աստծո խոսքին և խուսափենք անհիմն ենթադրություններից, ապա կանգնած կլինենք ամուր հիմքի վրա: Եթե Աստծո ծրագիրը, ժամերն ու ժամանակները Սուրբ Գրություններում չգրվեին, ոչ ոք չէր կարողանա դրանք այնտեղ գտնել, և Աստված, իհարկե, մարգարեների և առաքյալների միջոցով չէր գրի առնի այն, ինչ ցանկանում էր հավիտյան գաղտնի պահել: Իր ժամանակին և կարգով աստվածային ծրագրի յուրաքանչյուր գրանցված առանձնահատկություն և դրա ժամերն ու ժամանակները հայտնվում են արթուն կացողների համար, սակայն ծրագրի ամբողջական կառուցվածքը՝ իր ժամանակային առանձնահատկությունների հետ միասին, նախատեսված չէր հասկանալու համար մինչև «վերջի ժամանակ» կոչվող շրջանը (Դանիել 12:9,10): Եվ պետք է հիշել, որ մինչև այն պահը, երբ Աստված չի նախատեսում բացահայտել իր գաղտնիքները, ոչ ուսումը, ոչ էլ բարեպաշտությունը չեն կարող դրանք հայտնաբերել: Չնայած մարգարեությունները դարեր շարունակ բոլորի աչքի առաջ են եղել, դրանք *հնարավոր չէր* բացել և դրանց գաղտնիքները կարդալ, մինչև չգար համապատասխան ժամանակը:

Երբ աշակերտներից ոմանք եկան մեր Տիրոջ մոտ և հարցրին Աստծո արքայության հաստատման ժամանակի մասին (նույնիսկ մինչ այն կարող էր բացվել), Նա պատասխանեց. «Ձեր գործը չէ ժամերն ու ժամանակներն իմանալը, որ Հայրն իր իշխանությամբ սահմանեց» (Գործք 1:7): Եվ մեկ այլ առիթով, նույն թեմայով, Նա ասաց. «Սակայն այդ օրվա ու ժամի մասին ոչ ոք չգիտի՝ ո՛չ հրեշտակները երկնքում, ո՛չ էլ Որդին, այլ միայն Հայրը: Չգո՛ւյշ եղեք, արթո՛ւն մնացեք ու աղոթե՛ք, որովհետև

չգիտեք, թե ժամանակը ե՞րբ է գալու... Եվ ինչ որ ձեզ ասում են, բոլորին են ասում՝ արթո՛ւն կացեք» (Մարկոս 13:32, 33, 37):

Մեր Տիրոջ խոսքերը բնավ չեն նշանակում, որ Հորից բացի ոչ ոք երբեք չի իմանա Նրա ժամերն ու ժամանակները: Հետևաբար դա չի ապացուցում, որ մենք այժմ չենք կարող իմանալ այդ ժամերն ու ժամանակները, ինչպես որ չի ապացուցում, որ մեր Տերը այժմ չի կարող իմանալ դրանք: Եվ հենց այն փաստը, որ մեր Հոր ծրագիրը, ինչպես նաև Նրա ժամերն ու ժամանակները այժմ հստակ տեսանելի են, սա զորավոր ապացույց է, որ մենք այժմ ապրում ենք չարի ներկայիս տիրապետության ավարտի և Հազարամյա Օրվա առավոտվա ժամանակաշրջանում, երբ գիտությունը պետք է շատանա, և իմաստունները պետք է հասկանան (Դանիել 12:4,10): Եթե մարգարեությունը երբեք նախատեսված չլիներ հասկանալու համար, ապա դրա տրման մեջ ոչ մի ողջամիտ նպատակ չէր լինի:

Վարդապետի այս խոսքերը ցույց են տալիս, որ Աստված իր ծրագրի տարբեր մասերը չի իրականացնում պատահական, խառնաշփոթ ձևով, այլ յուրաքանչյուր հատվածի համար սահմանել է հստակ և որոշված ժամեր ու ժամանակներ: Իր անսահման զորությունն ու իմաստությունը երաշխավորում են, որ ոչ մի ձախողում կամ ուշացում չի լինի:

Այս խոսքերից պարզ է նաև, որ մինչև այդ պահը Հայրը դեռ ոչ ոքի չէր հայտնել Իր ծրագրի ժամերի ու ժամանակների մասին — անգամ մեր Տեր Հիսուսին: Այն համոզմունքը, թե մեր Տերը հանդիմանել է նրանց, ովքեր փորձել են ուսումնասիրել և հետաքրքրվել ժամերով ու ժամանակներով, այդպիսով արգելելով նման քննությունը, ամբողջությամբ սխալ է: Նրա խոսքերը հստակ ցույց են տալիս, որ թեև ժամերն ու ժամանակները դեռ նրանց չէին

հայտնվել, դրանք մի օր շատ կարևոր կլինեն և այդ ժամանակ կբացահայտվեն արթուն կացողների համար:

Նրանք, ովքեր դարերի ընթացքում արթուն էին, թեև չեն տեսել այն ամենը, ինչի համար հսկում էին, այնուամենայնիվ մեծ օրհնություն են ստացել և առանձնացվել աշխարհից՝ այդպես վարվելով, մինչդեռ նրանք, ովքեր «ճիշտ ժամանակին» կենդանի կլինեն և հնազանդվելով «հսկեն», կիմանան, կտեսնեն, «կհասկանան» և անտեղյակ չեն մնա այս դարի «հունձքի» հրաշալի իրադարձությունների մեջ: Ով երբևէ անտեսում է արթնությունը, կորցնում է այն օրհնությունը, որի վրա Տերը մեծ շեշտ էր դրել, և ապացուցում է, որ կամ այս աշխարհի աստծո կողմից նախապաշարմունքներով կուրացել է, կամ այս կյանքի ու ներկայիս շահերի ծանրաբեռնվածությամբ՝ անտեսելով իր Տիրոջը լիովին նվիրվելու ու առաջին հերթին Աստծո արքայությունը ու գալիք կյանքը փնտրելու իր ուխտը:

Պետրոս ու Պողոս առաքյալները անրադառնում են ժամերի ու ժամանակների այս թեմային: Պետրոսը առաքյալը ասում է (Բ Պետրոս 1:16), որ մենք չենք հետևում հորինված առասպելներին, որ նա տեսիլքում տեսավ Զրիստոսի գալիք թագավորության փառքը կերպարանափոխության լեռան վրա, երբ տեսավ փառավոր «տեսիլքը» Մովսեսի, Եղիայի և Զիսուսի փայլուն զգեստներով – Մովսեսը ներկայացնելով հին օրերի արժանավորներին (Եբր. 11:38-40) ովքեր լինելու են երկնային Թագավորության երկրային ներկայացուցիչները, և Եղիան ներկայացնում է այս Ավետարանական դարի «հաղթողներին» – ամբողջ տեսարանը նախանշում է «գալիք փառքը», երբ արդարության համար կրած տառապանքները կավարտեն ընտրությունը ըստ շնորհի: Այնուամենայնիվ, Պետրոսը, անգամ իր տեսիլքը պատմելիս, մատնանշում է մարգարեական վկայությունը՝

ասելով. «Եվ մարգարեական ակեյի հաստատ խօսքն ունինք, որ եթե Նորան մտիկ անեք, լաւ կ'անեք, ինչպէս մի ճրագի որ լոյս է տալիս մութ տեղը, մինչեւ որ ցերեկը լուսանա» (Բ Պետրոս 1:19): Նա լավ գիտեր, որ այն ժամանակ ոչ ոք չէր կարող ամբողջությամբ հասկանալ բոլոր մարգարեությունները, և այդ պատճառով սրբերին հորդորում էր զգոն լինել՝ ոչ թե երկինքը դիտելու, այլ հետևելու, թե երբ կկատարվեն այն ամենը, ինչ Աստված սուրբ մարգարեների միջոցով ասել էր վերականգնման և «վերականգնման ժամանակների» մասին, որոնք կազմում են Նրանց վկայության այն մեծ ու կարևոր մասը: Նա վստահեցնում է մեզ, որ մինչև լուսաբացը մարգարեությունը մեզ համար կունենա արդիական ու կարևոր ճշմարտություններ:

Պողոս Առաքյալն ասում է. Ինչ վերաբերում է ժամերին ու ժամանակներին, եղբայրներ, ձեզ գրելու կարիք չկա, որովհետև դուք ինքներդ հաստատ գիտեք, որ Տիրոջ օրը գալու է, ինչպէս գողը՝ գիշերով [այն կգա լուռ ու աննկատ, և դրա գալուց հետո որոշ ժամանակ շատերը չեն հասկանա, որ ապրում են դրա մեջ]: «Երբ ասեն, թե խաղաղություն և ապահովություն է, այն ժամանակ Նրանց վրա կործանումը հանկարծակի կհասնի, [հանկարծակի, կամ արագ՝ անցյալ վեց հազար տարիների դանդաղ գործընթացների համեմատ]: Իսկ դուք, եղբայրներ, խավարի մեջ չեք, որ այդ օրը գողի պէս ձեզ վրա հասնի» (Ա Թեսալ. 5:1-4):

Բոլոր «եղբայրները» ունեն լապտեր՝ հուսալի մարգարեական խօսքը, որին Պետրոս Առաքյալը անվանեց ճրագ, որը լոյս է տալիս մթության մեջ: Եվ քանի դեռ Նրանք պահպանում են եղբայրների ճիշտ դիրքորոշումը՝ որպէս հավատարիմ, խոնարի և համեստ Աստվածաշնչի ուսումնասիրողներ, Նրանք երբեք մթության մեջ չեն մնա. Նրանք միշտ կունենան ճշմարտությունը՝ որպէս ճիշտ

Ժամանակին մատուցված կերակուր: Աստծո հետ լիակատար ներդաշնակ գտնվողները երբեք չեն մնացել անհրաժեշտ ճշմարտությանը անտեղյակ, որպեսզի աշխարհի հետ խավարում թափառեն: Աբրահամն ու Ղովտը նախապես գիտեին Սողոմի ոչնչացման մասին: Աստված ասաց. «Մի՞թե ես Աբրահամից կծածկեմ, ինչ որ անելու եմ» (Ծննդոց 18:17): Նոյը ժամանակին իմացավ ջրհեղեղի մասին և հասցրեց կառուցել տապանը, և նրան հայտնեցին հենց այն օրը, երբ պետք է մտներ դրա մեջ: Առաջին գալստի ժամանակ ևս Սիմեոնն ու Անան և Արևելքի իմաստունները գիտեին, որ պետք է սպասեն Մեսիային: Իրականում այն ժամանակ սպասումը ընդհանուր էր (Ղուկաս 2:25-38; Մատթեոս 2:2, Ղուկաս 3:15): Եվ եթե Աստված այդպես էր վարվում ծառաների տան հետ, միթե պակաս կանի որդիների տան համար: Մեր Տերն ու Գլուխն ասել է. «Ձեզ այլևս ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտի, թե իր տերն ի՞նչ է անում. Ձեզ ընկերներ եմ կոչում, որովհետև այն ամենը, ինչ իմ Հորից լսեցի, ձեզ հայտնեցի»: Մեր Տերը անշուշտ ճիշտ ժամանակին կիմանա ժամերի ու ժամանակների մասին, քանի որ նա պետք է իրականացնի ծրագիրը, և եթե նա չի փոխվել, կհայտնի ծրագրերը իրեն մոտ գտնվողներին և իր գործում ներգրավվածներին՝ իր ընկերներին, իր սրբերին:

Հետևաբար, բանականությունը մեզ ասում է, որ ինչպես գրված է՝ «Տեր Աստված ոչինչ չի անի, մինչև որ իր խորհուրդը չհայտնի իր ծառաներին՝ մարգարեներին» (Ամոս 3:7), և որ նրանց հայտնածի մեծ մասը ոչ թե իրենց համար էր, այլ մեզ՝ Ավետարանական Եկեղեցու համար (Ա Պետրոս 1:12), այդ պատճառով ոչ մի կասկած չկա, որ հավատարիմները մթության մեջ չեն մնա և կկարողանան ճանաչել, որ Տիրոջ օրը եկել է: Այն նրանց վրա չի գա գողի և թակարդի պես՝ անակնկալ, որովհետև նրանք զգոն կլինեն և կունենան խոստացված լույսը, որը այդ պահին անհրաժեշտ է նրանց առաջնորդելու համար:

Առաքյալը բացատրում է, թե ինչու է Նա այդքան վստահ պնդում, որ դուք, եղբայրներ, ճիշտ ժամանակին կիմանաք ժամերի ու ժամանակների մասին և խավարում չեք լինի: Նա ասում է (5-րդ տողում). «Դուք բոլորդ լույսի որդիներ եք ու ցերեկվա որդիներ»: Այս որդիները ճշմարտությանից ծնվածներն են, և նրանք պետք է այս ճշմարտության միջոցով օրեցօր աճեն մինչև կատարյալ օրը, որին նրանք պատկանում են (Հակոբոս 1:18, Հովհաննես 17:17,19):

Ուշադրություն դարձրեք, թե որքան խիստ են այս և այլ գրություններում «դուք» և «ձեր», ինչպես նաև «նրանք» և «նրանց» անձնական դերանունները տարբերակում նշված խմբերին՝ սրբերին աշխարհից: Տիրոջ օրը սրբերի տիրապետած գիտելիքը հակադրվում է աշխարհի անտեղյակությանը՝ բացահայտվող իրադարձությունների իմաստի և ուղղության հարցում: «Ձեզ գրելու կարիք չկա»: «Երբ ասեն, թե խաղաղություն և ապահովություն է, այն ժամանակ նրանց վրա կործանումը հանկարծակի կհասնի... ու նրանք չեն ազատվելու: Իսկ դուք, եղբայրներ, խավարի մեջ չեք, որ այդ օրը գողի պես ձեզ վրա հասնի: Դուք բոլորդ լույսի որդիներ եք»: «Չգո՛ւյշ եղեք ձեր անձերի համար. գուցե ձեր սրտերը ծանրանան զեխությամբ, հարբեցողությամբ և այս կյանքի հոգսերով, ու այդ օրը հանկարծակի ձեզ վրա հասնի: Որովհետև այն որոգայթի պես կհասնի բոլորի վրա, ովքեր բնակվում են ամբողջ երկրի երեսին: Ուրեմն արթո՛ւն կացեք ու ամեն ժամ աղոթե՛ք, որ արժանի լինեք ազատվելու այն ամենից, որ տեղի է ունենալու, և կանգնելու Մարդու Որդու առաջ (Ղուկաս 21:24-36):

Այսպիսով, եթե Աստծո մի զավակ, ով ապրում է Տիրոջ օրերում, հայտնվում է խավարում և անտեղյակ է այս փաստից, դա նշանակում է, որ կամ գոհանում է այս աշխարհի բաներով և գիտովցած է աշխարհի ոգով, կամ ծանրաբեռնված է այս կյանքի հոգսերով: Երկու դեպքում էլ

անտարբեր և անուշադիր մնալով՝ չի պահպանում իր լապտերը մաքուր ու վառ վիճակում և իր անոթում յուղ չունի՝ այսինքն՝ Աստծո խոսքը սրտում ու մտքում, և ճշմարտության Հոգին իր ներսում:

Չնայած ժամերի ու ժամանակների, ինչպես նաև ծրագրի մանրամասների հետ կապված շատ բաներ կանխագուշակվել էին մարգարեների կողմից, նրանք խոստովանեցին, որ անտեղյակ են մարգարեությունների իմաստից, որոնց մասին նրանք խոսել էին (Տես Դանիել 12:8, Եզեկիել 20:49, Մատթեոս 13:17, Ա Պետրոս 1:10-12): Մութ և խորհրդանշական լեզվով արտահայտված և վերաբերվող ապագա իրադարձություններին՝ այդ ժամանակ դրանք հասկանալը անհնարին էր: Այսպիսով, թեև դրանք նախապես գրվել էին և վկայում էին աստվածային նախաճանաչման ու կարգավորման մասին, դրանք նախատեսված էին նրանց ուսման համար, ովքեր ապրում էին դրանց կատարման ճիշտ ժամանակին, ոչ թե նրանց համար, ովքեր դրանք հնչեցրել էին (Հռոմ. 15:4): Նրանք սպասում էին աստվածային ծրագրի և մարդկային պատմության տարբեր փոխկապակցված կողմերի բացահայտմանը, որոնք, Աստծո կարգադրությամբ, պետք է բացեին դրանք և հարուստ դարձնեին համբերատար, ուսումնասիրող Աստծո զավակներին «ժամանակին մատուցվող սննդով» փորձության և նեղության ժամի համար «նեղության օրվա» – այն օրվա, որով ավարտվում է այս դարը, և որի մեջ էլ ծագում է նոր դարաշրջանն ու տնօրինությունը:

Հիանալի ժամանակակից մեխանիզմ, որը հայտնի է «Կոմբինացիոն ժամանակային կողպեք» անվամբ և կիրառվում է մի շարք խոշոր բանկերում, ծառայում է մարգարեության աստվածային կարգավորման լավ օրինակ: Ինչպես ցանկացած այլ կոմբինացիոն կողպեք, բանալին կամ բռնակը միշտ մնում է կողպեքում: Դրա

բացելու համար անհրաժեշտ են բռնակի որոշ հատուկ շարժումներ, որոնք հայտնի են միայն այն անձին, ով տեղյակ է համակարգին, իսկ ճիշտ շարժումներից ամենափոքր շեղումը միայն բարդացնում է գործը և բացելը դարձնում է ավելի դժվար: Կոմբինացիոն ժամացույցային կողպեքը ունի ևս մեկ առանձնահատուկ մանրամասնություն. բանկային պահոցների ներսում տեղադրված ժամացույցային մեխանիզմի շնորհիվ դուռը գիշերը կողպվում է այնպես, որ հաջորդ առավոտ մինչև որոշակի ժամը ոչ ոք չի կարող այն բացել, և նույնիսկ այդ ժամին բացվում է միայն փականի համար նախատեսված ճիշտ կոդի օգնությամբ:

Այսպիսով մեր Երաշխավոր Հայրը գիշերվա ընթացքում իր մեծ ժամանակային կողպեքով փակել և կնքել է իր ծրագրի բազմաթիվ կողմերը, որը կարգավորված էր այնպես, որ դրանք չբացվեին մինչև «նշանակված ժամանակը»՝ մեծ վերականգնման օրվա առավոտը: Եվ ապա Եհովայի օծյալը, «որն ունի բանալին» և հասկանում է դրա վրա դրված կողավորումը, «Բացում է, և ոչ ոք չի կարող փակել» (Հայտնություն 3:7): Նա մեզ համար բացում է այն, տալով անհրաժեշտ տեղեկություններ այն մասին, թե ինչպես մարգարեության բանալին պետք է գործադրվի նրանց կողմից, ովքեր ձգտում են գտնել անսահման իմաստության գանձերը: Եվ մենք կարող ենք հիմա բացել աստվածային իմաստության գանձերը, որովհետև առավոտյան ժամը եկել է, թեև դեռ վաղ է և աշխարհում դեռ լուսաբաց չէ: Բայց միայն ուշադիր կիրառելով բանալին մեծ ճարտարապետի սահմանած կողավորման համաձայն, դրա գանձերը կբացվեն մեզ համար:

Իրականում այս պատկերն համապատասխանում է Աստծո ամբողջ ծրագրին՝ իր բոլոր մասերում: Ճշմարտության յուրաքանչյուր հատկանիշն ու յուրաքանչյուր մարգարեությունը ընդամենը մի մեծ

համադրության մի մասն է, որը այժմ կարող է բացվել, որովհետև առավոտ է՝ որովհետև մեծ ժամանակի կողպեքի ամրակները հանված են: Եվ այս մեծ համադրությունը, երբ բացվի, լիովին ու շքեղորեն կբացահայտի աստվածային իմաստության, արդարության, սիրո և զորության անսահման գանձերը: Ով բացում է, նա իսկապես կճանաչի Աստծուն այնպես, ինչպես երբեք նախկինում չի ճանաչել:

Այսպիսով, եկեք Սուրբ Գրությունները ուսումնասիրենք մեծ հարգանքով, որպեսզի ճշգրիտ բացահայտենք, թե ինչ է Աստված հաճել մեզ հայտնել իր ժամերի և ժամանակների մասին: Քանի որ Նա վերջերս իր ծրագրի հոյակապ ընդհանուր գծերը այնքան պարզ է դարձրել, մենք կարող ենք արդարացիորեն հույս ունենալ, որ եկել է պահը, երբ Նա մեզ կհասցնի դրա կոնկրետ մանրամասների ըմբռնմանը: Ժամերը ու ժամանակները իմաստությամբ թաքցված էին անցյալում, և սրբերը դրանով փրկվում էին հուսահատությունից, քանի որ ժամանակը երկար էր, սակայն երբ ծրագիրը մոտենում է իր փառավոր ավարտին, սրբերի արտոնությունն է իմանալ այն, որպեսզի բարձրացնեն իրենց գլուխները և ուրախանան, գիտակցելով, որ իրենց փրկությունը մոտ է (Ղուկաս 21:28): «Վերջին ժամանակների» ժամանակի վերաբերյալ բացահայտումը սրբերին կբերի նույն օգուտն ու հուսադրումը, որքան դրա նախորդ բացահայտումը անօգուտ և հուսահատեցնող կլիներ:

Անշուշտ, մեր Աստված կարգուկանոնի Աստված է: Ամեն ինչ, ինչ Նա անում է, կատարվում է հստակ նախապես սահմանված ծրագրի համաձայն, և Նրա նշանակած ժամերն ու ժամանակները այդ ծրագրի ոչ աննշան և ոչ անպետք մասն են: Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը ծնվեց նշանակված ժամանակին՝ «Երբ ժամանակի լրումը հասավ, Աստված իր Որդուն ուղարկեց»

(Գաղ. 4:4): Ոչ առաջ և ոչ հետո, այլ հենց այն պահին, երբ ժամանակը լրացավ: Մեր Տիրոջ առաջին քարոզը ժամանակի մասին էր՝ «Նա քարոզում էր և ասում. «Լրացել է ժամանակը... ապաշխարե՛ք ու հավատացե՛ք Ավետարանին» (Մարկոս 1:15): «Քրիստոսը որոշված ժամանակին մեռավ» (Հռոմեացիներ 5:6) «Երրորդ օրը [նշանակված ժամանակին] հարություն առավ՝ Գրքերի համաձայն» (Ա Կորնթացիներ 15:4) Իր ծառայության ընթացքում նրա թշնամիները բազմիցս փորձեցին բռնել նրան, սակայն նշվում է, որ նրանք չկարողացան, «որովհետև նրա ժամանակը դեռ չէր եկել» (Հովհաննես 7:30):

Ժամանակի մարգարեությունները տրված չէին միայն հետաքրքրասիրությունը բավարարելու համար, այլև որպեսզի Աստվածաշնչի ուսումնասիրողը կարողանա ժամանակին ճանաչել կանխատեսված իրադարձությունները: Օրինակ՝ չնայած մարգարեությունը նշել էր առաջին գալուստի ժամանակն ու ձևը, այն մնաց անորոշ մինչև Քրիստոսի գալը: Եվ դա օգնեց նրանց, ովքեր ուշադիր ուսումնասիրում էին Գրքերը, ճանաչելու մարդ Հիսուսին որպես Քրիստոսին, Աստծո կողմից ուղարկվածը՝ ըստ նախախնամության և մարգարեության: Եվ նույն կերպ, Նրա երկրորդ գալստի ժամանակ, մարգարեությունները, որոնք ցույց են տալիս դրա ժամանակն ու ձևը, պետք է բացահայտվեն, որպեսզի օգնեն մեզ ճանաչել Նրա օրը՝ դրա իրադարձությունների հաջորդականությունն ու այդ ժամի պարտավորությունները: Հին Կտակարանի Գրքերը խորությամբ կարդալիս չի կարելի չնկատել ամսաթվերի առանձնահատուկ նշանակությունը և դրանց մեծ ճշգրտությամբ նշումը, նույնիսկ օր առ օր, թեև բավական հաճախ դրանք կապված են թվացյալ շատ աննշան իրադարձությունների հետ: Բայց ուշադիր ուսումնասիրողը կգտնի, որ այս տարբեր ամսաթվերն ու

Ժամանակագրական հղումները հիանալի ապացույցների շղթայի օղակներ են, որոնք մեծ ճշգրտությամբ ցույց են տալիս աշխարհի պատմության երկու ամենանշանավոր և կարևոր իրադարձությունները՝ աշխարհի Փրկչի և Տիրոջ առաջին և երկրորդ գալուստները, և դրանց հետ կապված կարևոր հարցերը:

Այն փաստը, որ քրիստոնյաների մեծամասնությունը անտարբեր են այս ամենի նկատմամբ, ոչ մի պատճառ չէ նրանց համար, ովքեր սիրում են Նրա ներկայությունը և ցանկանում են, որ Նա ճանաչի իրենց, ընկղմվեն նման անտարբերության վիճակի մեջ:

Պետք է հիշել, որ մարմնեղեն Իսրայելը, բացառությամբ Աստծո «ընկերներից», սայթաքեց և չճանաչեց իր այցելության ժամանակը (Ղուկաս 19:44), և որ մարգարեն կանխագուշակել է Իսրայելի երկու տների՝ անվանական հրեական տան և անվանական քրիստոնեական տան գլորումը (Ես. 8:14): Միայն «մնացորդը» յուրաքանչյուր դարի ավարտին կամ հնձման ժամանակ պատրաստ է ընդունելու և գնահատելու այդ պահին հասունացած ճշմարտությունները և, հետևաբար, մտնելու Նոր դարաշրջանի առանձնահատուկ արտոնություններն ու օրհնությունները: Ուստի այս դարի փակման շրջանում յուրաքանչյուր քրիստոնյայի առաջնային հոգածությունն է ապահովել, որ ինքը լինի «մնացորդի» անդամը, ոչ թե՛ գոլ, անհոգ, անտարբեր զանգվածի, որը անշուշտ կգլորվի, ինչպես մարգարեացել են մարգարեն, Տերը և առաքյալները, և ինչպես ցույց տրվեց մարմնեղեն Իսրայելի օրինակով, որը հայտնի է որպես նրա ստվեր կամ պատկեր:

Բայց թեև ժամանակային մարգարեությունը իր ժամանակին մեծ օգուտ կբերի՝ ցույց տալով Աստծո ծրագրի տարբեր կողմերը, որոնք վերաբերում են հնձին և այլն, այնպես էլ մեր Տիրոջ գալստի և հայտնության ձևի իմացությունը չափազանց անհրաժեշտ է: Եվ ցանկալի է, որ

հետագա քննարկումների ընթացքում այս հարցին առավելագույն ուշադրություն դարձնենք: Եվ այս բոլոր գիտելիքների հիմքում պետք է լինեն սրբությունն ու խոնարհությունը, որոնք հարթում են ճանապարհը դրանց ընդունման համար՝ թույլ տալով Աստծո զավակին հեռացնել իր սրտից նախապաշարմունքները և ջանասիրաբար որոնել ու ճանաչել այն ինչ բացահայտվել է: Այդպես էր առաջին գալուստի ժամանակ. միայն ջանասերները, նվիրվածները ու խոնարհները ճանաչեցին ժամանակն ու կերպը: Աշխարհիկներն ու ծանրաբեռնվածները, հագեցածները չեն ճանաչի ո՛չ մարգարեությունները, ո՛չ էլ դրանց կատարման ժամանակի նշանները, մինչև հնձումը չանցնի և հատուկ շնորհքի ամառը չավարտվի:

Հրեական դարի ավարտին, կամ «հունձքի» պահին, իսկապես հնազանդ և անկեղծ «ճշմարիտ խորայելացիները» մնացին սպասման վիճակում, որը խիստ տարբերվում էր նրանց շրջապատի մարդկանց վիճակից՝ ովքեր հպարտ, աշխարհասեր և ինքնագոհ էին: Այսպիսով նրանք ոչ միայն ավելի պատրաստ էին ընդունելու Աստծո նախանշած ծրագիրը, այլև ավելի պատրաստ էին լսելու և ուսումնասիրելու ճշմարտությունը, երբ դրա հետ առնչվում էին: Եվ մեր Տեր Հիսուսը, մինչդեռ մերժում էր փարիսեցիների ինքնագոհ և մեղադրողական սոֆիստիկան՝ տալով մթազնված և խուսափողական պատասխաններ, մյուս կողմից ժամանակ և հոգատարություն էր հատկացնում ճշմարտությունը հստակ և հասկանալի կերպով ներկայացնելու նրանց, ովքեր փնտրում էին այն խոնարհությամբ և անկեղծությամբ (Մատթ. 13:10–17, 16:1–4, Մարկոս 7:1–23, Ղուկաս 18:18–30, Հովհաննես 1:45–51, Ղուկաս 24:13–32, 33–49, Հովհաննես 20:24–28; 21:1–12): Հպարտներն ու ինքնագոհները, և նրանց հետևող բոլորը, գլորվեցին (Մատթ. 15:14), մինչդեռ խոնարհներն ու ճշմարտասերները

ջանասիրաբար փնտրում էին ճշմարտությունը: (Մատթեոս 13:36, Մարկոս 4:10): Եվ Տերը բացատրեց Նրանց խորհրդավոր խոսքերը և ասաց. «Ձեզ տրուած է Աստուծոյ արքայութեան խորհուրդը գիտենալ, բայց Նրանց որ դոսի են, [ճշմարիտ Իսրայելացիներ չեն], ամեն բան առականերով է լինում. Որ տեսնելով տեսնեն՝ եւ չտեսնեն, եւ լսելով լսեն եւ չ'իմանան»:

Նույնպէս այս դարի վերջում: Ճշմարտությունը այստեղ, ինչպէս այնտեղ, առանձնացնում է անկեղծ ու խոնարհ մարդկանց և Նրանց առաջնորդում դէպի այն գիտելիքը, որը այժմ հասանելի է նման մարդկանց: Այն գորացնում ու լուսավորում է Նրանց, որպէսզի Նրանք չընկնեն անվանական քրիստոնյաների զանգվածների հետ: Բայց անտարբեր և ինքնագոհները մերժում են այժմ հասանելի ճշմարտությունները, քանի որ իրենց սրտի անպարկեշտ վիճակը կուրացնում է Նրանց: Ուստի Տերը Նրանց մերժելու է՝ որպէս անարժան իր հարսնացուն դառնալու (Եփես. 4:1, Ա Կորնթ. 9:27):

Շատերը լուրջ սխալ են թույլ տալիս, երբ կարծում են, թէ Աստծո գործերի ու ծրագրերի գիտությունը քիչ կարևորություն ունի, որ քրիստոնեական բնավորության առաքինությունները Աստծո միակ պահանջն է մեզանից և որ անտեղյակությունը օգնում է դրանք ավելի լավ պահպանել: Ինչքան այլ կերպ է Սուրբ Գիրքը ներկայացնում այս հարցը: Այն մեզ խորհուրդ է տալիս ոչ միայն զարգացնել քրիստոնեական բնավորության առաքինությունները, այլև մշտապէս պահպանել այնպիսի սրտի վիճակ, որը թույլ կտա մեզ ճանաչել ճշմարտությունը (առավելապէս այն մեծ ճշմարտությունը, որը վերաբերում է Տիրոջ ներկայությանը) և երբ տեղի են ունենում դարաշրջանային փոփոխություններ: Դարաշրջանային ճշմարտության գիտությունը այս դարի վերջում նույնքան կարևոր է, որքան հրեական դարի վերջում: Նրանք, ովքեր

չճանաչեցին այն ժամանակ հասունացած ճշմարտությունը, չստացան այն ժամանակ տրված շնորհները: Եվ նույնպես այս դարի վերջում՝ նրանք, ովքեր չեն կարողանում ճանաչել այժմ տրված ճշմարտությունը, կուրացած անհավատությամբ և աշխարհասիրությամբ, չեն կարող ստանալ այժմ շնորհվող հատուկ շնորհները: Նրանք հաղթողներ չեն, ուստի անպիտան են Զրիստոսի հարսնացու լինելու և սրբերի փառավոր ժառանգության մեջ նրա հետ ժառանգակիցներ դառնալու համար: Այս դարում ճշմարտությունը, անբարենպաստ պայմանների մեջ, դառնում է փորձություն ևստծո հանդեպ մեր հավատարմության համար. հետևաբար, ինչպես մանգաղ, այն բաժանում է արժանիներին անարժանիներից՝ ցորենը որովից:

Մարգարեական ժամանակների ուսումնասիրության նկատմամբ առկա է որոշակի հակազդողականություն՝ պայմանավորված «Երկրորդ ադվենտիստների» և այլոց անցյալ սխալ մեկնաբանություններով, ինչպես նաև նշված ժամանակին սպասվող իրադարձությունները չճանաչելու հետագա ձախողումներով: Այնուամենայնիվ, մենք տեսնում ենք, որ անգամ սա եղել է ևստծո ծրագրի մի մասը՝ թույլ տալով, որ նրան վերագրվեն արհամարհանքն ու ծաղրը, որպեսզի թեման մթագնվի բոլորի համար, բացի նրանցից, որոնց համար այն նախատեսված էր, և այդպիսով խոչընդոտի աշխարհիկ իմաստուններին ու գիտուններին դրա ըմբռնմանը (Մատթեոս 11:25): Մենք չենք կասկածում, որ սա նույնքան ևստծո ծրագրի մի մասն էր, որքան այն, որ Հիսուսը ուղարկվեց Նազարեթ՝ արհամարհված մի վայր, «որպեսզի նա Նազարեթցի կոչվի» (Մատթեոս 2:23), չնայած որ նա իրականում ծնվել էր պատվավոր Բեթլեհեմ քաղաքում: Ինչպես այն օրերի աշխարհիկ իմաստուններն ու գիտունները ասում էին, «Հնարավոր է, որ Նազարեթից որևէ լավ բան դուրս գա» Նույնպես այսօր, երբ նշվում է մարգարեական ժամանակը

կամ Տիրոջ երկրորդ գալստին առնչվող որևէ բան, շատերը գոչում են «աղվենտիստ», կարծես ուզում են ասել՝ «Արդյո՞ք Աղվենտիզմից որևէ լավ բան կարող է դուրս գալ» – չնայած նրանք ընդունում են, որ ժամանակը ներառող բազմաթիվ մարգարեություններ դեռևս չեն կատարվել և որ Տիրոջ երկրորդ գալուստը Սուրբ Գրքի ամենանշանավոր թեման է:

Մենք խորը համերաշխություն ունենք և առաջին աղվենտիստների (հրեաների), և երկրորդ աղվենտիստների հանդեպ, թեև նրանցից միայն մի քանիսն են հասկացել այն ճշմարտությունները, որոնց շատ մոտ էին, սակայն չեն կարողացել ըմբռնել դրանք՝ կուրացած լինելով կեղծ սպասումներով: Մեր աղվենտիստ ընկերները չեն կարողացել ըմբռնել ոչ Տիրոջ վերադարձի եղանակը, ոչ էլ դրա նպատակը, ինչպես դրանք սահմանված են Սուրբ Գրություններում: Հետևաբար նրանք հույս չեն ունեցել «տեսնել նրան այնպիսին, ինչպիսին նա է», այլ այնպիսին, ինչպիսին նա եղել է: Նրանք հավատում են, որ Նրա գալուստի նպատակը (բացառությամբ սրբերի) բոլորի սրտերը լցնելն է վախով ու սարսափով, որ Նրա նպատակը ընտրյալներին հավաքելն է, մնացած մարդկության ոչնչացումը և աշխարհի այրումը: Այսպիսի մտքեր ունենալով՝ նրանք ժամանակի մարգարեությունները օգտագործում էին որպես գավազան՝ աշխարհին մտրակելու և Աստծո մոտ քշելու համար: Բայց աշխարհը անտարբերությամբ նայեց ու ասաց, որ նրանք անխոհեմ խանդավառներ են, և եթե Աստված կա, ապա նա անշուշտ ավելի խելամիտ է ու արդար: Աշխարհի արհամարհանքը աճում էր նյութի ոչնչացման և աշխարհների փլուզման մասին նրանց յուրաքանչյուր նոր կանխատեսման և նրանց մարգարեությունների յուրաքանչյուր նոր ձախողման հետ: Եվ հիմա մարգարեական ժամանակների հիշատակումը լայնորեն ընդունվում է կասկածամիտ ժպիտով կամ

բացահայտ արհամարհանքով, անգամ այն քրիստոնյաների կողմից, որոնք լավ գիտեն, որ մարգարեությունը և ժամանակագրությունը կազմում են Աստծո հայտնության մեծ մասը:

Բայց երանի նրան,

Ում աշխարհի մռայլ հայացքը չի կարող դողեցնել,

Ում նրա արհամարհանքով լի ժպիտը չի կարող անհանգստացնել,

Ում դժբախտության ծովերը չեն կարող կուլ տալ,

Ու ոչ էլ սատանայի հնարքները կարող են գայթակղել:

Բայց Աստված ժամանակների վերաբերյալ մարգարեությունները չի տվել նման նպատակով, և նա չի փորձի աշխարհը այսպիսին ճանապարհով փոխակերպել, որովհետև նա փնտրում է նրանց, ովքեր պաշտում են իրեն հոգով և ճշմարտությամբ (Յովհաննես 4:23), և ոչ նրանց, ովքեր վախից են մտնում իր ծառայության մեջ: Եթե նա նախատեսեր մարդկանց վախեցնելով հնազանդեցնել, նա կարող էր գտնել ավելի արդյունավետ միջոց, քան ժամանակային հայտարարությունները — ինչպես պնդում են մեր աղվեստիստ ընկերները: Մարգարեական ժամանակը տրված էր ոչ թե աշխարհին վախեցնելու կամ աշխարհի համար, այլ եկեղեցուն վերջին դարի փորձությունների ժամանակ լուսավորելու, զորացնելու, հուսադրելու, քաջալերելու և առաջնորդելու համար: Դրա համար էլ գրված է. «ոչ մի ամբարիշտ չպիտի հասկանա, այլ միայն իմաստունները»: Նրանց համար սա դառնում է իր ժամանակին պատրաստված սնունդ, և այն, մյուս սնունդի հետ միասին, կգորացնի դրանից օգտվողներին, որպեսզի նրանք «կարողանան կանգնել չար օրը»՝ այն նեղության

օրը, որով այս դարը ավարտվում է: Այն նրանց հնարավորությունն կտա հասկանալու իրենց շուրջը տեղի ունեցող զարմանահրաշ իրադարձությունները, որպեսզի նրանք չկլանվեն վախով ու սարսափով, ոչ էլ կույ գնան այն ծրագրերով ու կեղծ տեսություններով՝ որոնք սխալմամբ գիտական են կոչվում: Եվ միևնույն ժամանակ նրանք կարող են հայտնվել սպառնիչ կրակի (վշտի) մեջ՝ որպես Աստծո և Նրա ծրագրի վկաներ և որպես մարդկանց ուսուցիչներ՝ մատնանշելով Եհովայի ծրագրի փառավոր արդյունքը և բարձրացնելով դրոշ ազգերի համար (Ես. 62:10):

Սա է ժամանակների մարգարեության նպատակը, և որքան կենսական ու անփոխարինելի է այս նպատակը՝ որպեսզի Աստծո ժողովուրդը կատարյալ լինի և լիովին պատրաստված այս ժամանակի համար: Առանց այս մարգարեական ժամանակային ապացույցների մենք կարող էինք տեսնել Տիրոջ այս Օրվա իրադարձությունները, սակայն չգիտակցեինք դրանց մասին և մեր պարտականություններն ու արտոնությունները դրանում: Ուրեմն, թող ոչ ոք, ով իսկապես նվիրված է, չթերագնահատի այս մարգարեական ժամանակային ապացույցները, որոնք նախատեսված էին առաջնորդելու մեր խոսքերն ու գործերը հազարամյա օրվա վաղ առավոտյան, արևածագից առաջ, երբ աշխարհն ու անվանական եկեղեցին դեռ քնած են, անտեղյակ և անուշադիր ներկայում տեղի ունեցող ժամանակային փոփոխություններից: Այս մարգարեական ժամանակային ապացույցները մեծապես Աստծո միջոցն էին՝ գրողի ուշադրությունը ավելի լիովին և ուշադիր դարձնելու աստվածային ծրագրի այլ առանձնահատկությունների վրա: Դրանց վրա ուշադրություն դարձնելը ուսումնասիրողին պետք է բերի երկարաժամկետ օգուտ՝ ոչ միայն «ներկա ճշմարտությունը» ճանաչելու միջոցով, այլև տալով ուժ և կենսական իրականություն բոլոր

աստվածաշնչյան ճշմարտություններին՝ ներկայացված ապացույցների շնորհիվ, որ Աստծո բոլոր ծրագրերը ժամանակի և ձևի ներդաշնակությամբ գործում են՝ հասնելու Նրա փառավոր նպատակներին:

Ադվենտիստների կանխատեսումների ձախողումը, որոնք փորձեցին սահմանել աշխարհի այրման ժամանակը և այլն, ավելի շատ վերաբերում էր սպասվող իրադարձությունների բնույթին, քան ժամանակին: Ինչպես հրեաները, նրանք սխալվեցին ճիշտ ժամանակին սխալ բան փնտրելով: Սա երկրորդական պատճառ էր, որ նրանք ձախողվեցին՝ չկարողացան հստակ ընկալել ճշմարտությունը, սակայն առաջնային պատճառը այն էր, որ դեռևս չէր եկել ավելի հստակ բացահայտման ժամանակը: Այնուամենայնիվ, դա այն ժամանակն էր, երբ սրբերին ոգեշնչում էին սպասել Տիրոջ գալստին՝ ելնել փեսային դիմավորելու և անցնել հիասթափության միջոցով Նրա իրական գալստից առաջ: Այս ամենը նշված էր մեր Տիրոջ «Տասը կույսերի» առակայում, ինչը հետագայում մանրամասն ցույց կտրվի: Ինչպես ցույց է տրված Նախորդ հատորում, Տիրոջ օրվա այն կրակը, որը պետք է կռվ տա երկիրը, խորհրդանշական է, ոչ թե բառացի, և հաջորդ գլուխներում ցույց կտրվի, որ որոշ ժամանակային մարգարեությունների կիրառությունները, որոնք ադվենտիստները ձախողված են համարել, իրականում ձախողված չեն եղել, այլ ճշմարիտ են, և որ դրանք հստակ նշում են այս ժամանակի խորհրդանշական կրակը, որը արդեն սկսվում է:

Ադվենտիստները, ծանրաբեռնված երկրի բառացի այրման սպասումով, փորձեցին բոլոր մարգարեական ժամանակաշրջանները սեղմել մեկ սովորական օրվա՝ քսանչորս ժամի մեջ: Եվ այդպիսով նրանք խեղաթյուրեցին որոշ մարգարեություններ՝ դրանք հարմարեցնելու և մյուսների հետ համապատասխանեցնելու համար: Բայց

այսօր Աստվածային ծրագրի ավելի հստակ պատկերացումը բացահայտում է տարբեր ժամանակային մարգարեությունների կատարյալ ներդաշնակությունը, և ոչ մի անհրաժեշտություն չկա դրանցից որոշները թեքելու կամ խեղաթյուրելու՝ մյուսների հետ համատեղելու համար: Հաջորդ գլխներում առաջնային մարգարեությունների ուսումնասիրությունը սկսելիս մենք ոչ թե նախ ձևակերպում ենք մի տեսություն և ապա փորձում բոլոր մարգարեական ժամանակաշրջանները դրա տակ հարմարեցնել, այլ ուշադիր հետևում ենք յուրաքանչյուր ժամանակաշրջանի ավարտին և միայն այնուհետև դրանք միավորում մեկ միասնական տեսության կամ ծրագրի մեջ, որը այդպիսով ցույց է տրվում է գաղտնիքների մեծ Հայտնողի կողմից: Դուք կտեսնեք, որ Աստծո ծրագրի կարգն ու ներդաշնակությունը նրա ժամերում ու ժամանակներում նույնքան ակնհայտ են, որքան այն ծրագրի փառավոր հատկանիշները, որոնք ներկայացվել են նախորդ հատորում և պատկերված են «Դարերի քարտեզ»-ում: Եվ երբ դարերի մեծ ժամացույցը հարվածի մարգարեական ցուցիչի վրա նշված ժամին, կանխագուշակված իրադարձությունները կիրականանան այնպես հաստատ, որքան որ Աստված դրանք կանխագուշակել է:

ԳԼՈՒԽ II

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակագրությունը անհրաժեշտ է մարգարեությունները հասկանալու համար – Աստվածաշնչում ներկայացված անհրաժեշտ տվյալներ – Ադամի ստեղծումից մինչև մեր թվարկության 1873 թվականը անցել է վեց հազար տարի – Աստվածաշնչյան ժամանակագրությունը մեծ դարաշրջաններում – Դրա մանրամասն ուսումնասիրությունը – Արարչագործությունից մինչև ջրհեղեղի ավարտի օրը՝ երբ ջրերը ամբողջությամբ քաշվեցին երկրի երեսից – Մինչև Աբրահամական ուխտը – Մինչև օրենքի տրվելը – Մինչև Զանանի ցեղերի միջև բաժանումը – Դատավորների ժամանակաշրջան – Թագավորների ժամանակաշրջան – Ամայացման ժամանակաշրջան – Մինչև մեր թվարկության 1873 թվական – Ինչպե՞ս է այս ժամանակագրությունը տարբերվում եպիսկոպոս Աշերի ժամակագրությունից, ինչպես այն նշված է անգլերեն Աստվածաշնչերում – Մեր Տիրոջ ծննդյան իրական ամսաթիվը:

Այս գլխում մենք ներկայացնում ենք աստվածաշնչյան ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ Ադամի ստեղծումից սկսած վեց հազար տարիները ավարտվել են մ.թ. 1872 թվականին և հետևաբար, Զ.Յ. 1872 թվականից ի վեր ժամանակագրապես մտել ենք յոթերորդ հազարամյակ կամ Հազարամյա Թագավորություն – որի առաջին հատվածը՝ «Տիրոջ օրը», «նեղության օրը», կդառնա այս աշխարհի թագավորությունների փլուզման և Աստծո Թագավորության ամբողջ երկինքների տակ հաստատման վկա:

Ժամանակագրությունը նույնպես անհրաժեշտ է որպես մարգարեական ժամանակաշրջանների ուսումնասիրման

հիմք: Առաջին հերթին պետք է պարզենք, թե որտեղ ենք գտնվում ժամանակի հոսքի մեջ, և դրա համար մեզ անհրաժեշտ են հուսալի թվագրություններ հաշվարկների համար: Ուստի ժամանակագրության թեման առաջինն ենք վերցնում: Եվ մարդկային պատմության ամբողջական ժամանակագրությունը անխուսափելիորեն պետք է սկսվի մարդու ստեղծումից:

Մարդու ստեղծումից անցած ժամանակը տարբեր կերպ են գնահատում: Աստվածաշնչյան վկայությունը ընդունողների մեջ կարծիքների տարբերությունը շատ փոքր է, սակայն այն մերժողների մեջ տարբերությունները ահռելի են՝ տասը հազարից մինչև հարյուր հազարավոր տարիներ: Այս ենթադրությունները հիմնված են այնպիսի փաստերի վրա, որոնք շատ թույլ հիմք են տալիս նման չափազանցված և անխոհեմ եզրակացությունների համար: Օրինակ՝ Շվեյցարիայի և Իռլանդիայի տորֆային ճահճակներում, մեծ խորության վրա հայտնաբերված քարե նետերի գլխիկները համարվում են ապացույց, որ դրանց մակարդակը նախկինում եղել է մակերևույթը, և որ տորֆային մամուռը աստիճանաբար աճել է դրանց վրա և դրանց շուրջը: Այդպիսի աճի համար պահանջվող ժամանակը հաշվարկվում է մեկ դարում աճի ներկայիս տեմպի հիման վրա, որը շատ դանդաղ է: Եթե նրանց ենթադրությունները ճիշտ լինեին, դա իսկապես կհաստատեր, որ մարդիկ գոյություն են ունեցել հարյուր հազարավոր տարիներ առաջ: Սակայն այլ երկրաբաններ (և ոչ անհիմն) պնդում են, որ այդ տորֆային ճահճակները նախկինում այնքան փափուկ են եղել, որ քարե նետի ծայրը մի քանի դարի ընթացքում հեշտությամբ կարող էր խորը սուզվել:

Եկեք բերենք մեկ այլ օրինակ. «Երբ չափում էին Նեոդոսի հովտի ավազոտ հողի խորությունը, հայտնաբերվեցին երկու թխված աղյուս՝ մեկը քսան յարդ խորության վրա,

մյուսը՝ քսանչորսի վրա. եթե հաշվարկենք գետի կողմից տարեկան նստվածքի հաստությունը՝ ընդունելով, որ այն կազմում է ութ դյույմ յուրաքանչյուր դարում, ստիպված ենք առաջին աղյուսին վերագրել 12 000 տարվա, իսկ երկրորդին՝ 14 000 տարվա տարիք: Նման հաշվարկների հիման վրա Բուրմայստերը [հայտնի երկրաբան] գնահատում է, որ Եգիպտոսի հողի վրա առաջին մարդու հայտնվելուց ի վեր անցել է յոթանասուն երկու հազար տարի: Իսկ Դրեյփերը [մեկ այլ հայտնի երկրաբան] վերջին սառնամանիքի ժամանակ Եվրոպայում ապրած մարդուն վերագրում է ավելի քան 250 000 տարվա տարիք:

Իհարկե, «եթե մենք գնահատենք» ինչպես այս մեծ մարդիկ, մենք կհասնենք նույն մեծ եզրակացություններին: Բայց մեզնից ոմանք այնքան անգիտական են, որ հարցնում են՝ արդյոք ավելի քան հավանական չէ՞, որ Նեղոս գետի կեղտաջրերի նստվածքները եղել են շատ անկանոն, ինչպես այլ գետերի դեպքում, որոնք երբեմն փոխում են իրենց հունը և զարմանալիորեն մեկ հեղեղով լվանում իրենց ափերը: Նորից հիշում ենք Նոյի ժամանակների ջրհեղեղը, որը ոչ միայն հատուկ նշված է Աստվածաշնչում, այլև պահպանվել է հեթանոսական ազգերի ամենահին ավանդություններում, և զարմանում ենք, թե որքան կավ և ավերակներ է այն առաջացրել՝ դարում ութ դյույմից բացի: Մեզ նաև հետաքրքրում է, թե ինչու այս մեծ մտքերին չի հուշվել – ինչպես դա բնականաբար հուշվում է ոչ այնքան մեծ մտքերին – որ «լորձոտ հողի» մեջ նետված երկու աղյուս, երբ այն ծածկված է ջրով և շատ փափուկ է, իրենց սեփական քաշի տակ բավականին խորը կընկնեին, քանի որ դրանք շատ ավելի խիտ են, քան ավազը: Ինչ վերաբերում է այս երկու աղյուսների նստած խորքերի տարբերությանը, ոչ գիտական մտքի համար ավելի տրամաբանական կթվար ենթադրել, որ մեկը կավի մեջ ընկել է կողքի կամ ծայրով, մինչդեռ մյուսը՝ հարթ ընկնելով, նստել է դանդաղ, քան ենթադրել, որ երկու հազար տարվա

տարբերությամբ ապրած մարդիկ պատրաստել են երկու ամբողջությամբ նույնական աղյուսներ:

Չի անցել շատ տարիներ, երբ Միսիսիպի գետի նախկին հունում հայտնաբերվեց մի մարդու կմախք, և որոշ երկրաբաններ սկսեցին հաշվել, թե քանի հազարավոր տարիներ կարող էին ցույց տալ կմախքը ծածկող բազմաթիվ ոտնաչափ խորը ավազի, լորձի և այլ նյութերի շերտերը, և կարծեցին, թե ձեռք են բերել նախապատմական մարդու շատ արժեքավոր նմուշ: Բայց երբ ավելի ուշ՝ գանգի մնացորդներից մի քանի ոտնաչափ ներքև, հայտնաբերվեցին հարթ նավակի մասեր, որոնք օգտագործվում էին Միսիսիպիում ոչ ավելի քան հիսուն տարի առաջ, դա ամբողջությամբ խարխիլեց հաշվարկները և ազատեց մարդկությանը «մեկ այլ ապացույցից», թե աշխարհը հարյուր հազարավոր տարիներով ավելի հին է, քան Սուրբ Գիրքը սովորեցնում է:

Թողնելով այս քրոնոլոգիայի հարցում որոշ երկրաբանների անհամապատասխան և ամբողջությամբ անվստահելի ենթադրությունները, մենք դիմում ենք մարդկային պատմությանը տեղեկություններ ստանալու համար: Իսկ ի՞նչ ենք գտնում: Ամենահին հեթանոսական ժողովուրդների պատմությունը հստակ և առանձին կերպով չի հետևվում ավելի քան երեք հազար տարի: Այդ սահմաններից այն կողմ ամեն ինչ մութ, անորոշ, առասպելական, հեքիաթային և անհավաստի ավանդույթ է: Հռոմեական պատմությունը չի ձգվում այդքան հեռու անցյալ, քանի որ Հռոմը հիմնադրվել է ընդամենը երկու հազար յոթ հարյուր տարի առաջ, սակայն անգամ նրա առաջին դարերը պատված են անորոշ ավանդույթներով: Բաբելոնյան, սիրիական և եգիպտական պատմություններում երեք հազար տարի հետ գնալը մեզ հասցնում է այնպիսի ժամանակաշրջանի, երբ նրանց արձանագրությունները կտոր-կտոր են և խորը մթության

մեջ են: Զինաստանի պատմությունը մեզ հասցնում է Ցզոու դինաստիա, որտեղ չինական պատմության իրադարձությունները «դառնում են ավելի հավանական»: Իսկ ի՞նչ ենք գտնում Յունաստանում, որը վերջին երեք հազար տարիների ընթացքում հայտնի է իր գիտականությամբ և որտեղ, մյուս ժողովուրդների համեմատ, առավել շատ ենք ակնկալում գտնել ճշգրիտ պատմություն: Մենք պարզում ենք, որ նրա թվագրությունը ճշգրիտ է վերջին երկու հազար վեց հարյուր տարիների համար և ոչ ավելի: Այնուհետև մենք հասնում ենք այն, ինչը հայտնի է որպես Յունաստանի «ավանդական, առասպելական կամ նախապատմական դարաշրջան»: Երկրի վրա մարդկային գոյության առաջին երեք հազար տարիների միակ տրամաբանական և համակարգված նկարագրությունը գտնվում է Աստվածաշնչում: Եվ այս փաստը անշուշտ անմիջական կապ ունի դրա աստվածային ծագման, առաջնորդության և պահպանության մասին պնդումների հետ:

Ինչպես պատմության դեպքում, այնպես էլ թվագրությունների դեպքում՝ աշխարհը, Աստվածաշնչից բացի, չունի միջոց հետևելու իր ժամանակագրությանը ավելի հեռու, քան մ.թ.ա. 776 թվականը: Այս առնչությամբ մեջբերում ենք Յեյլի քոլեջի պրոֆեսոր Ֆիշերի խոսքերը: Նա ասում է. «Թվագրությունների ճշգրիտ մեթոդի մշակումը դանդաղորեն ձևավորվեց: Ժամանակաշրջանների գյուտը անփոխարինելի էր այս նպատակին հասնելու համար: Դրվագների ամսաթվերի հստակեցման ամենահին հստակ ժամանակը սահմանվել է Բաբելոնում՝ Նաբոնասարի դարաշրջանը, մ.թ.ա. 747 թվականին: Յուլները (մոտ մ.թ.ա. 300 թվականից) դրվագները թվագրում էին Օլիմպիական խաղերում առաջին գրանցված հաղթանակից՝ մ.թ.ա. 776 թվականից: Այս խաղերը տեղի էին ունենում յուրաքանչյուր չորրորդ տարում: Յուրաքանչյուր օլիմպիադա այդպիսով կազմում

Էր չորս տարի: Հռոմեացիները, թեև Հռոմի հիմնադրումից հետո մի քանի դար անց, իրենց թվարկումը սկսեցին հենց այդ իրադարձությունից՝ մ.թ.ա. 753 թվականից:

Մեր հետագա ապացույցներից մեկն այն է, որ հնագույն անցյալի բազմաթիվ, այսպես կոչված, պատմություններ այնքան լեցուն են անհեթեթություններով և առասպելական ավանդություններով, որ դրանք ժամանակագրական տվյալների առումով անարժեք են և ամբողջությամբ անարժան ուշադրության: Մենք մեջբերում ենք հետևյալը Ամերիկյան հանրագիտարանից՝ «Ժամանակագրություն» վերնագրի տակ:

Հին ազգերի պատմությունը, եթե բացառություն չենք անում հրեաների դեպքում, վերադառնում է հազարավոր կամ միլիոնավոր տարիների առասպելական ժամանակաշրջաններ, և նույնիսկ երբ արձանագրությունները սկսում են ստանալ պատմական բնույթ, անհամապատկությունները չափազանց մեծ են.... Ասորական, Բաբելոնյան և Եգիպտական արձանագրությունները գրված են անհետացած լեզուներով և վաղուց մոռացված գրի տեսակներով.... Հունական և Հռոմեական թվագրությունները ընդհանուր առմամբ լավ հաստատված են մինչև առաջին Օլիմպիական խաղերը (մ.թ.ա. 776 թ.) և մ.թ.ա. 510 թ. կոնսուլատի հիմնադրումը, որոնցից առաջ դրանք հիմնականում ավանդական կամ առասպելական են: Հերոդոտոսը արժեքավոր է միայն իր սեփական ժամանակի՝ մոտ մ.թ.ա. 450 թ. և մեկ-երկու դար ավելի վաղ շրջանի իրադարձությունների համար:

Քլիսթոնը իր «Հունական քրոնոլոգիա» (Էջ 283) աշխատությունում ասում է. «Հեբրայական Գրություններում պարունակվող պատմությունը զարմանալի և հաճելի հակադրություն է ներկայացնում հույների վաղ շրջանի հաշվետվություններին. վերջիններում մենք դժվարությամբ ենք հետևում մի քանի

մութ փաստերի, որոնք մեզ են հասել պոետների միջոցով, ովքեր բանավոր ավանդությունից ստացածը փոխանցել են պոեզիայի և առասպելի բոլոր զարդարանքներով. Հեբրայական ազգի տարեգրություններում մենք ունենք իսկական պատմություններ, գրված ժամանակակիցների կողմից՝ ոգեշնչման առաջնորդությամբ: Այսպիսով, այն, ինչ նրանք մեզ են փոխանցել, կրում է կրկնակի վավերացում: Նրանց օգնել է աստվածային ոգեշնչումը՝ փաստեր արձանագրելիս, որոնց վերաբերյալ, որպես պարզապես մարդկային վկաներ, նրանց վկայությունը կհամարվեր վավերական»:

Աստվածաշունչը, մեր Աստծո կողմից տրված առաջին երեք հազար տարիների պատմությունը, աշխարհում միակ ստեղծագործությունն է, որը – սկսվում է Ադամից, պատմության մեջ հիշատակված առաջին մարդուց, որի անունը, ստեղծման և մահվան ժամանակը գրանցված են, և որի սերունդները մոտավորապես չորս հազար տարվա ընթացքում հաջորդական օղակներով՝ անուններով և տարիքներով, հետևելի են – մեզ տալիս է կենդանի և համահունչ պատմություն մինչև այն շրջանը, երբ աշխարհիկ պատմությունը լավ հաստատված է: Ինչպես կոտեսենք, Աստվածաշնչային գրառումը հասնում է մինչև Կյուրոսի առաջին տարին, Բ.ա. 536 թ. լավ հաստատված և ընդհանուր առմամբ ընդունված թվականը: Այստեղ է, որ Աստվածաշնչյան ժամանակագրության թելը կտրվում է՝ այն կետում, որտեղ աշխարհիկ պատմությունը հուսալի է: Այսպիսով, Աստված Իր զավակների համար ապահովել է հստակ և անընդմեջ պատմագրություն մինչև մեր օրերը: Աստվածաշունչը իր մարգարեություններով անգամ լրացնում է պատմությունը մինչև «ամեն բաների վերականգման» ավարտը յոթերորդ հազարամյակի վերջում, որտեղից կսկսվի հավիտենական երջանկության նոր դարաշրջանը: Ուստի Աստվածաշունչը աշխարհում միակ փաստաթուղթն է, որը մարդկային պատմության

ամբողջական պատկերն է ներկայացնում: Այն մեզ առաջնորդում է Ճննդոց գրքի կորած դրախտից մինչև Հայտնության գրքի վերականգնված դրախտը՝ հետևելով մարդկության ճանապարհին դեպի հավերժություն: Ընդհանուր առմամբ, Աստվածաշնչի պատմությունն ու մարգարեությունը տալիս են իրադարձությունների ամբողջ ընթացքի պանորամային պատկերացում՝ մարդու ստեղծումից և անկումից մինչև նրա հաշտեցումն ու վերականգնումը: Այսպիսով, Աստվածաշունչը բոլոր պատմության քարտեզն է: Ուստի Աստվածաշունչը ամբողջ պատմության քարտեզն է: Դրա բացակայության դեպքում, ինչպես ճիշտ է նկատվել, պատմությունը կլիներ «ինչպես գետեր, որոնք հոսում են անհայտ աղբյուրներից դեպի անհայտ ծովեր»: Բայց դրա առաջնորդությամբ մենք կարող ենք հետևել այդ գետերին մինչև դրանց աղբյուրները և, ավելին, տեսնել դրանց փառավոր ավարտը հավերժության օվկիանոսում:

Ուստի, միայն Աստվածաշնչում, կարող ենք ակնկալել գտնել մի արձանագրություն, որը կարգ ու կանոն կհաղորդի մարդկային պատմության տարեգրքերում առաջին հայացքից հանդիպող անհամապատասխան ժամանակաշրջաններին և ժամանակագրային խառնաշփոթին՝ դրանք ներդաշնակեցնելով միմյանց և բնության շրջափուլերի հետ:

Սկսելով «Մարդու ստեղծումից ի՞նչ ժամանակ է անցել» հարցից՝ մենք պետք է և իսկապես վստահ լինենք, որ Նա, ով տվել է մարգարեությունները և ասել, որ դրանք պետք է հասկացվեն վերջին ժամանակներում, իր խոսքում տրամադրել է անհրաժեշտ տվյալները, որոնք թույլ են տալիս մեզ ճշգրիտորեն տեղորոշել այդ մարգարեությունները: Սակայն նրանք, ովքեր ակնկալում են գտնել այս հարցերը այնքան պարզ ներկայացված, որ դրանք համոզիչ լինեն մակերեսային ընթերցողի կամ

անկեղծ չլինող կասկածողի համար, հիասթափված կմնան: Աստծո ժամերն ու ժամանակները ներկայացված են այնպես, որ այս պահին դրանք համոզիչ են միայն նրանց համար, ովքեր Աստծո հետ ծանոթ լինելու շնորհիվ կարող են ճանաչել Նրա բնորոշ մեթոդները: Ապացույցները տրված են «Որպեսզի Աստծու մարդը լինի կատարյալ, պատրաստ ամեն բարի գործի» (Բ Տիմ. 3:17): Նրանք լավ գիտեն, որ իրենց Հայրը որ ճանապարհով էլ առաջնորդի, նրանք պետք է քայլեն հավատքով, ոչ թե երևույթով: Մենք հույս ունենք, որ բոլոր նրանց, ովքեր պատրաստ են այս ճանապարհով քայլել, կարողանանք յուրաքանչյուր քայլի ժամանակ ցույց տալ Աստծո Խոսքի հաստատուն պնդումները՝ որպես հուսալի հիմք հավատքի համար:

Այստեղ մենք չենք քննարկի Հին Կտակարանի գրքերի Յոթանասնից¹ և հրեական տարբերակների արժանիքները, դրանց ժամանակագրական տվյալների տարբերությունները և այլն, այլ կբավարարվենք, և հուսով ենք՝ ընթերցողին ևս համոզենք, այն հայտարարությամբ, այլ կբավարարվենք (և, հուսով ենք, ընթերցողն էլ) այն պնդմամբ, որ առաջինը թարգմանվել է եգիպտացիների կողմից, մինչդեռ վերջինը՝ բնագրական հրեական ձեռագիրն է: Այս փաստերը, հրեաների կողմից այդ սրբազան գրությունների յուրաքանչյուր տառի և նշանի հանդեպ գրեթե մոլեռանդական պաշտամունքի հետ միասին, ուժեղ ապացույց են հրեական տարբերակի հուսալիության մասին: Գիտնականների կողմից այն ընդհանուր առմամբ ընդունված է, և այս հատորում մենք հետևում ենք դրա թվագրություններին և այլն:

Այստեղ մենք ներկայացնում ենք ապացույցները, որ Ադամի ստեղծումից մինչև Բ.Յ. 1873 թվականը անցել է վեց

¹ Հենրի Բրաունի «Ordo Seclorum»-ը հաստատում է, որ Յոթանասնից ժամանակագրությունը անհիմն է:

հազար տարի: Եվ թեև Աստվածաշնչում ուղղակի նշված չէ, որ յոթերորդ հազարամյակը կլինի Զրիստոսի թագավորության դարաշրջանը՝ աշխարհի վերականգնման մեծ Շաբաթ օրը, սակայն այս պատվավոր ավանդույթը հիմնված է ողջամիտ հիմքի վրա: Իսրայելին տրված օրենքը, որպես տիպիկ ժողովուրդ, սահմանելով, որ վեց օր աշխատանքի և հոգևածության ավարտին պետք է հաջորդի մեկ օր հանգստի և վերականգնման իրենց սեփական գործերից, հարմար կերպով պատկերավորում է վեց հազար տարիները, որոնց ընթացքում ամբողջ ստեղծագործությունը աշխատում և հառաչում է մեղքի ու մահվան ստրկության տակ (Հռոմեացիներ 8:22) ապարդյուն փորձերում ինքն իրեն ազատելու, և մեծ Հազարամյա Օրը, երբ հոգևածներն ու բեռնավորվածները կարող են գալ Զրիստոս Հիսուսի մոտ՝ իրենց հոգիների հովիվը ու տեսուչը, և նրա միջոցով գտնել հանգիստ, թարմություն և վերականգնում — որի ընթացքում, նրա անգին արյան արժանիքների շնորհիվ, նրանք կարող են գտնել ապաշխարություն և մեղքերի թողություն: Յոթերորդ (խորհրդանշական) օրը Նա հարցրեց հիվանդ մարդուն. «Ուզո՞ւմ ես առողջանալ» — և նրա հավատքի ու հնազանդության պատասխան Նա նրան տվեց զորություն վերցնելու իր մահիճը և գնալ (տես Հովի. 5:6–9, ինչպես նաև Մատթ. 12:10, 13, Հովի. 7:23, Ղուկաս 13:11–16; 14:1–5). Ուստի, նախապատկերող Շաբաթվա՝ Հազարամյակի ընթացքում, ամբողջ աշխարհին կհայտարարվի, որ «ով ուզում է» կարող է ունենալ հավիտենական կյանք և առողջություն, եթե ընտրի հավատքի և հնազանդության ճանապարհը:

Մենք չպետք է անտեսենք այն փաստը (որ արդեն նշվել է I հատորի VIII գլխում), որ «օր» տերմինը բնույթով անորոշ է և պարզապես նշանակում է ժամանակահատված՝ լինի այն երկար, թե կարճ: Պետրոս առեաքյալը նշում է, որ աշխարհի պատմության յոթերորդ հազարամյակը կլինի

Աստծո հանգստի յոթերորդ օրը՝ «Այս մեկը ևս ձեզանից ծածկված թող չլինի, սիրելիներ, որ Տիրոջ համար մեկ օրը հազար տարվա պես է, իսկ հազար տարին՝ մեկ օրվա պես ... Բայց Տիրոջ օրը գողի պես պիտի գա», և այլն (Բ Պետրոս 3:8,10):

Եվ եթե երկրի պատմության յոթերորդ հազարամյա շրջանը հատուկ նշանակված է որպես Զրիստոսի իշխանության դարաշրջան, ապա ցույց տալով, որ այն սկսվել է մ.թ. 1873 թվականին, մենք կհաստատենք, որ արդեն գտնվում ենք դրա մեջ: Եվ սա մեզ հիշեցնում է այն, ինչ քննարկել ենք Նախորդ հատորում: Գրությունը ցույց է տալիս, որ Հազարամյակի առավոտը, այսինքն՝ Տիրոջ օրը, աշխարհի և անվանական եկեղեցու համար մութ, փոթորկոտ և տխրությամբ լի կլինի, թեև դրա առաջին առավոտյան լույսը սրբերի համար լի կլինի մխիթարությամբ և ուրախությամբ, ովքեր իրենց մխիթարությունն ու խաղաղությունը ստանում են Ավետարանում ներկայացված հույսից, որը, ինչպես խարիսխ, անցնում է տագնապի ժամանակը և ամուր բռնում է հազարամյա առավոտի և փառքի թանկարժեք խոստումները: Նրանք տեսնում են նեղության ժամանակից այն կողմ փառավոր թագավորությունն ու խոստացված օրհնությունները:

Աշխարհի ներկայիս ընդհանուր վիճակը և 1873 թվականից ի վեր սոցիալիզմի, նիհիլիզմի և կոմունիզմի արագ զարգացումը, որոնց հայտարարված նպատակը իշխանությունների տապալումն ու աշխարհի հարստությունների վերաբաշխումն է, անշուշտ, չեն հակասում մեր սպասումներին, որքան էլ որ որոշ առումներով դրանք մերժելի լինեն օրենքն ու կարգուկանոնը և խաղաղությունը սիրողների համար: Միայն նրանք, ովքեր տեսնում են, որ գալիք անարխիան և խռովությունը Աստծո գործիքներն են ավելի կատարյալ

օրենքի և կարգուկանոնի, ինչպես նաև ավելի տևական խաղաղության հաստատման համար, կազատվեն ճշող վախից, երբ անցնեն դրա միջով:

Բայց ժամանակագրության արժեքը միայն յոթերորդ դարի կամ Զազարամյակի մատնանշման մեջ չէ: Իսկ երբ մենք ներկայացնենք որոշ մարգարեական գծեր, որոնք ամբողջությամբ անկախ են ժամանակագրությունից, դրանք ծառայելու են որպես չափանիշ, որով հաստատվելու են այդ մարգարեական գծերը: Այս երկու դասի մարգարեական ուսմունքների (որոնց մի մասը կախված է ժամանակագրությունից, մյուսները՝ անկախ) միջև գոյություն ունեցող կատարյալ ներդաշնակությունը ոչ միայն հստակ ապացույց է այս կիրառումների ճշտության, այլև այն ժամանակագրության ճշտության, որը բացահայտում է այդ ներդաշնակությունը: Նույն սկզբունքն է գործում. դժվար բացվող գանձերի տուփը բացող բանալին անշուշտ իսկականն է: Ստորև ներկայացված ժամանակագրությունը համադրում է Քրիստոսի Թագավորության և դրա հաստատման վերաբերյալ տարբեր մարգարեական հայտարարություններ՝ ցույց տալով դրանց ճիշտ հերթականությունն ու ժամանակացույցը: Ժամանակագրությունը այն բռնակն է կամ լծակը, որով բոլոր մարգարեական ապացույցները, ինչպես բանալու ատամնավոր եզրերը կամ ողնաշարերը, միավորվում և գործի են դրվում:

6000 տարիների ժամանակագրության համառոտ շարադրանք

Հետևյալ կրճատված ժամանակագրական շրջանների նկարագրությունը ճիշտ կլինի անվանել Աստվածաշնչյան ժամանակագրություն, քանի որ միայն Աստվածաշնչյան վկայությունը հետևում է մինչև Կյուրոսի առաջին տարին՝

մ.թ.ա. 536 թ. մի ամսաթիվ, որը լավ հաստատված է և ընդհանուր առմամբ ընդունվում է գիտնականների կողմից: Այստեղ ավարտվում է Աստվածաշնչյան ժամանակագրության թելը՝ մի փոքր անց այն ժամանակաշրջանից, երբ աշխարհիկ պատմությունը սկսում է լինել հուսալի: Սա ինքնին ակնառու ապացույց է աստվածային առաջնորդության և հսկողության՝ օգնելով մեզ միայն այնտեղ, որտեղ մենք ինքներս մեզ օգնել չենք կարող:

Ադամի ստեղծումից

Մինչև ջրհեղեղի ավարտը.....	1656 տարի
Մինչև Աբրահամի հետ կնքված ուխտը.....	427 տարի
Մինչև Ելքը և Օրենքի տրվելու ժամանակը.....	430 տարի
Մինչև Քանանի բաժանումը.....	46 տարի
Դատավորների ժամանակաշրջան.....	450 տարի
Թագավորների ժամանակաշրջան.....	513 տարի
Ամայացման ժամանակաշրջան.....	70 տարի
Այստեղից մինչև Մ.թ. 1 թվականը.....	536 տարի
Այստեղից մինչև Բ.հ. 1873 թվականը.....	1872 տարի
Ընդհանուր	6000 տարի

Երբ հերթով ուսումնասիրենք այս յուրաքանչյուր ժամանակաշրջանը, թող ընթերցողը ինքնուրույն դատի և տեսնի, թե որքան ամուր հիմք է Աստծո հոսքում դրված մեր հավատքի համար: Հին Կտակարանի պատմական շարադրանքում մենք գտնում ենք երկու բացեր, սակայն երբ հայտնաբերում ենք, որ Նոր Կտակարանում Աստված տրամադրել է կամուրջներ՝ այդ երկու բացերը կապելու

համար, Սա պետք է ամրապնդի մեր վստահությունը, որ Աստված կազմակերպել է այս պատմությունը այնպես, որ թաքցնի իր ժամերն ու ժամանակները մինչև դրանց հայտնության համար համապատասխան պահը՝ ինչպես արել է մյուս նշված ճշմարտությունների դեպքում: Հիմա առանձին-առանձին կքննենք վերոհիշյալ ժամանակաշրջանները՝ ըստ վերևում նշված հերթականության, մինչև Կյուրոսի թագավորությունը: Թող ձեր Աստվածաշունչը ձեռքի տակ լինի, և ստուգեք յուրաքանչյուր մեջբերումը, որպեսզի ընդունեք սա որպես Աստծո խոսք, ոչ թե որպես մարդու:

Ադամի ստեղծումից մինչև ջրհեղեղից հետո երկրի չորանալու օրը ընկած ժամանակաշրջանի ժամանակագրությունը

Ադամը հարյուր երեսուն տարի ապրեց, եվ իր նմանութեամբը իր պատկերի պես որդի ծնեց, եվ նրա անունը Սեթ կոչեց (Ծննդոց 5:3).....	130 տարի
Եւ Սեթը հարիւր հինգ տարի ապրեց, եւ ծնեց Ենոփին (Ծննդոց 5:6).....	105
Ենոփն ինսուտն տարի ապրեց, եւ Կայնանին ծնեց (Ծննդոց 5:9).....	90
Կայնանը եօթանասուն տարի ապրեց, եւ ծնեց Մադաղիէին (Ծննդոց 5:12).....	70
Եւ Մադաղիէը վաթսուներկինգ տարի ապրեց, եւ ծնեց Յարեդին (Ծն. 5:15).....	65
Եւ Յարեդը հարիւր վաթսուներկու տարի ապրեց, եւ ծնեց Ենոփին (Ծն. 5:18).....	162
Ենոփը վաթսուներկինգ տարի ապրեց, եւ ծնեց Մաթուսադային (Ծն. 5:21).....	65

Մաթուսաղան հարիւր ութսունեւեօթը տարի ապրեց եւ ծնեց Ղամէքին (Ծն. 5:25).....	187
Եւ Ղամէքը հարիւր ութսունեւերկու տարի ապրեց, եւ մի որդի ծնեց (Ծն. 5:28).....	182
Նոյը վեց հարիւր տարեկան էր, երբոր ջրհեղեղը երկրի վերայ եղաւ (Ծն. 7:26).....	600
Ընդհանուր առմամբ, Ադամի ստեղծումից մինչև այն օրը, երբ երկրի ջրերը չորացան (Ծննդոց 8:13).....	1656 տարի

Այսքան պարզ ու ճշգրիտ ոչինչ չի կարող լինել: Եկեք այժմ ուսումնասիրենք հաջորդ ժամանակաշրջանը:

Ջրհեղեղից մինչև Աբրահամի հետ կնքված ուխտը՝ նրա հոր՝ Թարայի մահվան տարում

Սեմը հարիւր տարեկան էր եւ ծնեց Արփաքսադին՝ ջրհեղեղից երկու տարի յետոյ (Ծննդոց 11:10).....	2 տարի
Արփաքսադը երեսունեւհինգ տարի ապրեց եւ ծնեց Սաղային (Ծննդոց 11:12)	35
Սաղան երեսուն տարի ապրեց, եւ ծնեց Եբերին (Ծննդոց 11:14).....	30
Եբերը երեսունեւչորս տարի ապրեց, եւ ծնեց Փաղէկին (Ծննդոց 11:16).....	34
Փաղէկը երեսուն տարի ապրեց, եւ ծնեց Ռազաւին (Ծննդոց 11:18)	30
Ռազաւը երեսունեւերկու տարի ապրեց եւ ծնեց Սերուգին (Ծննդոց 11:20).....	32

Սերուզը երեսուն տարի ապրեց, Եւ ծնեց Նաքովին (Ծննդոց 11:22).....	30
Նաքովը քսանեւինը տարի ապրեց Եւ ծնեց Թարային (Ծննդոց 11:24).....	29
Թարայի օրերը երկու հարիւր հինգ տարի եղան. Եւ Թարան Խառանումը մեռաւ (Ծննդոց 11:32)	205
Ընդհանուր.....	427 տարի

Սա նույնպէս շատ պարզ և ճշգրիտ է: Բայց հաջորդ ժամանակաշրջանը այդքան հեշտ չի հետևւում, քանի որ քրոնոլոգիայի ուղիղ գիծը կոտրված է մինչև Իսրայելի Եգիպտոսից ելքը: Ուստի մենք լիովին անկարող կլինեինք առաջ շարժվել, եթե Պողոսն ու Ստեփանոսը, որպէս Հոգու խոսնակներ, չապահովեին կապող օղակը:

Աբրահամի հետ կնքված ուխտից մինչև Օրենքի տրվելու ժամանակահատվածը

Պողոսը հայտարարում է, որ այս ժամանակաշրջանի տևողությունը եղել է չորս հարյուր երեսուն տարի (Գաղատացիներ 3:17): Ուխտը ներառում էր Քանան երկրի հավիտենական տիրապետության խոստումը, և թեև այն բազմիցս հաստատվեց Աբրահամին, Իսահակին և Հակոբին, այն միշտ նույն ուխտն էր (Տես Ծննդոց 12:7,8; 13:14-18, 26:3,4, 35:9-12, 46:2-4, 50:24.): Ծննդոց 12:1-5, 7-ի և Գործք առաքելոց 7:2-5-ի համեմատությունը ցույց է տալիս, որ ուխտը (նախորդ խոստման համաձայն) կնքվեց հենց այն պահին, երբ Աբրահամը ամբողջությամբ համաձայնեց իր առջև դրված պայմաններին: Սա տեղի ունեցավ անմիջապէս այն բանից հետո, երբ նա մտավ Քանան, Խառանում իր հոր մահից հետո՝ ով մահացավ

դեպի Քանան ճանապարհին: Ուխտի ամսաթիվը (Թարայի մահից անմիջապես հետո), որը հաստատվում է Ստեփանոսի հայտարարությամբ, և Պողոսի այն նկատառումը, որ Օրենքը տրվել է ուխտից 430 տարի անց, այսպիսով Նոր Կտակարանի միջոցով լրացնում է Հին Կտակարանի ժամանակագրական առկա բացը: Բայց եկեք ուշադիր կարդանք պատմությունը և ուշադրություն դարձնենք այն մանրամասներին, թե ինչպես է կառուցված այս կամուրջը:

Եվ Տերը ասաց Աբրահամին [նախքան նա լքել էր Միջագետքը կամ Քաղդեացիների Ուրը]. «Գնա՛ր քո երկրից, քո ազգականներից և քո հոր տնից այն երկիրը, որ ես ցույց կտամ քեզ. «և [եթե դու այդպես վարվես] ես քեզ մեծ ազգ պիտի դարձնեմ» — և այլն (Ծննդոց 12:1, 2. Համեմատեք Գործք առաքելոց 7:2-ի հետ): Սա նշանակում է, որ Աստված Աբրահամին ուխտը առաջարկեց նույնիսկ մինչև նրա հոր՝ Թարայի մահը և մինչև նա մեկներ խառան բնակվելու: Բայց գոյություն ունեւ մի պայման, որի առկայության դեպքում միայն ուխտը կարող էր իրականացվել, և որը Աբրահամից պահանջում էր հավատք և հնազանդություն: Այս պայմանի ելությունը նրանում էր, որ ուխտին միանալու համար նա պետք է հավատք ցուցաբերեր խոստմանը՝ լքելով իր հայրենի երկիրը և սիրելիներին ու մեկնելով դեպի իրեն ցույց տրված երկիրը: Եվ Աբրահամը այդպես էլ արեց: Նրա կինը, զարմիկը՝ Ղովտը, և տարեց հայրը, ով կիսում էր նրա հավատը և ցանկանում էր կիսել նրա վիճակը, նույնպես թույլտվություն ստացան մեկնելու: Եվ նրանք չորսով մեկնեցին խոստացված երկիր: Ճանապարհին նրա հայրը մահացավ խառանում, որից հետո Աբրահամը շարունակեց իր ճանապարհը դեպի Քանան, որպեսզի այնտեղ ստանա և հաստատի ուխտը: Ինչպես Ստեփանոսը հայտարարեց Իսրայելին. «Նրա հոր մահվանից հետո նրան փոխադրեց այս երկիրը, որտեղ հիմա դուք բնակվում եք»: «Եվ Աբրամը

գնաց, [Խառանից], ինչպես Տերն ասել էր Նրան» (Գործք 7:4, Ծննդոց 12:4): Եվ ուխտը կնքվեց հենց այն պահին, երբ նա մտավ երկիրը (տես Ծննդոց 12:5–7): Այսպիսով մենք ունենք ուխտի ամսաթիվը և չորս հարյուր երեսուն տարիների սկիզբը, որոնք նախատեսված էին սկսվել անմիջապես Թարայի մահից հետո և ժամանակագրական հաջորդականությամբ մինչև Օրենքի տրվելու պահը: Օրենքի առաջին մասը՝ Պատեքը, սահմանվեց հենց այն օրը, երբ Իսրայելը դուրս եկավ Եգիպտոսից (Ելք 12:41–43, 47, 50, 51):

Կարողում ենք. «Եւ Եգիպտոսի մէջ Իսրայելի որդիների բնակուած ժամանակը չորս հարիւր երեսուն տարի էր: Եւ եղաւ որ չորս հարիւր երեսուն տարուայ վերջին՝ հենց նոյն օրը՝ Եհովայի բոլոր զօրքերը Եգիպտոսի երկրիցն ելան» (Ելք 12:40–42, 51):

Ոմանք կարող են պնդել, որ Մովսեսի և Պողոսի խոսքերը (Ելք 12:40–42 և Գաղատացիներ 3:17) անհամապատասխան են (առաջինը նշում է, որ Իսրայելի մնալը տևել է չորս հարյուր երեսուն տարի), և որ, Աբրահամի հետ կնքված ուխտից մինչև Օրենքի տրվելու պահը անցել է չորս հարյուր երեսուն տարի, հիմնավորելով, որ եթե Աբրահամի Քանան ժամանելու պահից մինչև Օրենքի տրվելու պահը անցել է ընդամենը չորս հարյուր երեսուն տարի, ապա Իսրայելի որդիների Եգիպտոսում մնալը պետք է լիներ շատ ավելի կարճ: Բայց պետք է նկատի առնել, որ այնտեղ չի ասում, թե Իսրայելը Եգիպտոսում պանդուխտ է եղել 430 տարի, այլ որ այդ ժողովրդի, որը որոշ ժամանակ ապրել է Եգիպտոսում, ամբողջ պանդխտության տևողությունը կազմել է 430 տարի: «Իսրայելի որդիները, որոնք ապրել էին Եգիպտոսում, չորս հարյուր երեսուն տարի բնակվեցին օտար երկրում»: Այս բնակությունը սկսվեց այն ժամանակ, երբ Աբրահամը մտավ Քանան (Եբր. 11:8,9): Իսրայելը

գտնվում էր Աբրահամի, Իսահակի և Յակոբի մեջ այն նույն իմաստով, ինչ Ղեւին տասանորդներ էր տալիս Մելքիսեդեկին, դեռևս իր հոր երանքում գտնվելիս (Եբր. 7:9,10):

Աբրահամի հետ կնքված ուխտը ուժի մեջ մտավ այն պահից, երբ նա ոտք դրեց խոստացված Երկիր՝ Զանան, Խառանկից հեռանալուց հետո: Այդ պահից սկսած նա և նրա մեջ դեռ չծնված ողջ Իսրայելը դարձան խոստման ժառանգներ և օտարերկրացիներ, որոնք սպասում էին Աստծո խոստման կատարմանը: Այս բնակությունը տևեց չորս հարյուր երեսուն տարի՝ մինչև այն օրը, երբ Իսրայելը դուրս եկավ Եգիպտոսից և ստացավ Օրենքի առաջին մասը՝ Պատեքի հաստատումը: Այս օտար բնակությունը տևել էր չորս հարյուր երեսուն տարի, մինչև այն օրը, երբ Իսրայելը դուրս եկավ Եգիպտոսից և ստացավ Օրենքի առաջին դրույթը՝ Պատեքի հաստատումը: Ուստի Մովսեսի և Պողոսի հայտարարությունները վերաբերում են ճիշտ նույն ժամանակաշրջանին, ինչը հանդիսանում է ամենահստակ ապացույցը, որ Աբրահամի հետ կնքված ուխտից մինչև Օրենքի տրվելու պահը անցել է չորս հարյուր երեսուն տարի: Պողոսը առանձնակի շեշտ է դրել այն փաստի վրա, որ Չատիկը պետք է դիտվի որպես Օրենքի սկիզբ (ինչը նաև ցույց է տալիս Մովսեսը՝ Ելք 12:42, 43, 47, 50), իսկ Մովսեսը առանձնակի շեշտ է դրել ժամանակահատվածի ճշգրտության վրա:

Այսպիսով, մենք ունենք երրորդ հստակ սահմանված ժամանակաշրջան: Եվ երբ հաշվի ենք առնում Տիրոջ ճշգրտությունը՝ մինչև իսկ օրվա, այս ժամանակագրական շղթայի օղակը տրամադրելիս, դա մեզանում մեծ վստահություն է ներշնչում, հատկապես երբ խորհում ենք այն փաստի շուրջ, որ անցյալում Եկեղեցու համար նման

ճշգրտությունը առանձնահատուկ հետաքրքրություն չի ներկայացրել, սակայն այն տրված է հենց մեր ներկա օգտի համար:

Ելքից մինչև ցեղերի միջև Քանանի բաժանումը

Իսրայելի քառասուն տարիներին, կամ «փորձության օրը անապատում» (2 Օրենք. 8:2, Սաղմոս 95:8–10, Եբր. 3:8,9), հաջորդեցին վեց տարվա պատերազմը Քանանում և երկրի բաժանումը ցեղերի միջև: Մեկ տարի, մեկ ամիս և հինգ օր անցավ նրանց Եգիպտոսից դուրս գալուց մինչև Սինայը լքելու և Փառանի ուղղությամբ ճանապարհ ընկնելու պահը (Թվեր 33:3, 10:11-13): Եվ այնտեղից՝ Փառան անապատի Կադես-Բառնեայից, ուղարկվեցին լրտեսներ (Թվեր 13:3–26; 32:8–13). Նրանցից մեկը՝ Քաղեբը, երկրի բաժանման ժամանակ (Հեսու 11:23, 10:42), ասաց. «Ես քառասուն տարեկան էի, երբ Տիրոջ ծառա Մովսեսն ինձ Կադես-Բառնեայից ուղարկեց երկիրը հետախուզելու, և ես նրան սրտիս մեջ եղածի պես անկեղծ լուր բերեցի ... Արդ, ահա Տերն ինձ ողջ է պահել, ինչպես որ ասել էր. քառասունհինգ տարիներին այն ժամանակից ի վեր, որ Տերն այս խոսքն ասաց Մովսեսին, երբ Իսրայելի որդիները թափառում էին անապատում: Եվ ահա ես այսօր ութսունհինգ տարեկան եմ» (Հեսու 14:7,10): Ուստի Հեսուի խոսքերից պարզ է, որ երկրի հետախուզումից մինչև նրա բաժանումը ցեղերի միջև անցել է քառասունհինգ տարի, իսկ Եգիպտոսից դուրս գալուց մինչև լրտեսների գեկույցը՝ մի փոքր ավելի քան մեկ տարի, ինչը Եգիպտոսից դուրս գալուց մինչև երկրի բաժանումը կազմում է ընդհանուր առմամբ քառասունվեց ամբողջական տարի և մի կոտորակ:² Այս ժամանակաշրջանի առաջին քառասուն

² Մենք հաշվի ենք առնում միայն ամբողջական տարիները, քանի որ ավելի ճշգրիտ հաշվարկը անհնարին է: Երբեմն, ինչպես վերևում,

տարիները անցան անապատում (ինչպես ցույց են տալիս բազմաթիվ համարներ՝ Գործք 7:36; Եբրայեցիս 3:9), մինչդեռ մնացած վեց տարիները, մինչև երկրի բաժանումը, անցան Զանանում՝ Խոստացված Երկրի նվաճման և գրավման ընթացքում:

Դատավորների ժամանակաշրջան

Այժմ մենք հասել ենք ժամանակագրության ամենաբարդ հատվածին՝ հողի բաժանումից մինչև Սափուղի թագավոր օծումը: Այն սովորաբար կոչվում է Դատավորների ժամանակաշրջան, թեև դատավորները այս պաշտոնը մշտապես չէին զբաղեցնում: Դատավորների և Առաջին Թագավորաց գրքերում ներկայացված արձանագրությունը նշում է տասնինը ժամանակահատված, որոնք ընդհանուր առմամբ կազմում են մոտավորապես չորս հարյուր հիսուն տարի: Սակայն դրանք այնքան անջատված, ընդհատված, և խճճված են, որ դրանցից որևէ հստակ եզրակացության գալ չի հաջողվում: Մենք ստիպված կլինեինք, ինչպես մյուսները, եզրակացնել, որ այս հարցի շուրջ ոչինչ դրական չի կարող հայտնի լինել, եթե ոչ Նոր Կտակարանը, որը լրացնում է այդ

տարիները նշվում են կոտորակային ժամանակահատվածներով: Իսկ ոմանք կարճ են, ինչպես Սեդեկիայի թագավորության դեպքում: Սեդեկիայի մասին նշվում է, որ նա թագավորել է տասնմեկ տարի (2 Մնաց. 36:11, Երեմ. 52:1), սակայն վերջին գլխի 3-7-րդ համարներից պարզ է դառնում, որ նա իրականում թագավորել է տասը տարի, չորս ամիս և ինը օր: Մենք հավատում ենք, որ տարիների այս կոտորակային մասերը լրացնում են միմյանց, և մեր վստահությունը, որ Տերը այսպես է կանխորոշել և կարգավորել ամեն ինչ, հիմնված է դրանից բխող արդյունքների և հետևանքների վրա, ինչպես նաև արդեն նշված ճշգրտության վրա՝ մինչև իսկ օրը, նույնիսկ ավելի երկար ժամանակահատվածներում: Աստծո հոգատարության և ճշգրտության այս հարցում պատկերացում ստանալու համար տես (Ծննդոց 7:11, 13, Ելք 12:40, 41):

բացը: Պողոս առաքյալը վկայում է, որ երբ Աստված վիճակով բաժանեց նրանց միջև երկիրը, «մոտ չորս հարյուր հիսուն տարի նրանց դատավորներ տվեց մինչև Սամուել մարգարեի օրերը: Հետո նրանք թագավոր խնդրեցին, և Աստված նրանց տվեց Սավուղին» (Գործք 13:19–21):

Հունարեն «hos» բառը, որը սովորական թարգմանությունում թարգմանվել է «մոտ» («մոտավորապես»), նշանակում է «ընթացքում» կամ «երբ»: Նույն հեղինակը նույն բառը օգտագործում է ևս երեք տեղ, որոնք սովորական թարգմանությունում թարգմանվել են «while» («երբ»), այն է՝ Գործք 1:10, 10:17, Ղուկաս 24:32: Այս հատվածը ավելի ճիշտ կլիներ թարգմանել այսպես. «Նա նրանց դատավորներ տվեց չորս հարյուր հիսուն տարվա ընթացքում»: Սիրիական թարգմանությունը այսպես է կարդում՝ «Եվ չորս հարյուր հիսուն տարի նա նրանց դատավորներ տվեց մինչև մարգարե Սամուելը» — «Դատավորներից» վերջինը:

Առաքյալի կողմից Դատավորների այս ժամանակաշրջանի տևողության վերաբերյալ արված հայտարարությունը մենք ընդունում ենք որպես խնդրի հատուկ մշակված լուծում: Միայն երկու դեպք կա (Ուխտից մինչև օրենքը ընկած չորս հարյուր երեսուն տարիների ժամանակահատվածը և Դատավորների շրջանը), երբ Հին Կտակարանի ժամակագրությունը ամբողջությամբ պարզ չէ, և երկուսն էլ հստակ նշված են Նոր Կտակարանում: Կարո՞ղ ենք սա համարել պարզ պատահականություն:

Ավելի տրամաբանական է ենթադրել, որ Աստված սկզբում թաքցրել է այս հարցը՝ Հին Կտակարանի գրառումը թողնելով անավարտ, և հետո լրացրել է բացթողումը Նոր Կտակարանում, որպեսզի ճիշտ ժամանակին, երբ ուշադրությունը պետք է դրա վրա հրավիրվեր, նրանք, ովքեր բավարար հետաքրքրություն

կունենային պատմությունները համեմատելու համար, գտնեին բացակայող օղակները՝ մեծ ժամանակի պահապանին հենվելու ուսուցման նպատակով:

Թագավորների ժամանակաշրջան

Սավուղի թագավորությունը տևեց վերջին դատավորի պաշտոնավարումից հետո քառասուն տարի, մինչև Դավիթը օծվեց թագավոր, ինչպես վերևում ցույց է տրված, և նրանից հետո Դավթի գծով թագավորների ժամանակաշրջանները քրոնիկներում հեշտությամբ կարելի է հետևել այսպես՝

Սավուղի «ժամանակը».....	Գործք 13:21.....	40 տարի
Դավիթ թագավորեց	1 Սևաց. 29:27,40 ...	40 տարի
Սողոմոն	2 Սևաց. 9:30.....	40 տարի
Ռոբովամ	12:13.....	17 տարի
Աբիա	13:2	3 տարի
Ասա	16:13	41 տարի
Հովսափատ	20:31	25 տարի
Հովրամ	21:20	8 տարի
Ոքոզիա	22:2	1 տարի
Գոթոդիա	22:12.....	6 տարի
Հովասա	24:1	40 տարի
Ամասիա	25:1.....	29 տարի
Ոզիա	26:3.....	52 տարի
Հովաթամ	27:1	16 տարի
Աքազ	28:1.....	16 տարի

Եզեկիա	29:1	29 տարի
Մանասե	33:1	55 տարի
Ամոն	33:21	2 տարի
Յովսիա	34:1.....	31 տարի
Յովակիմ	36:5	11 տարի
Սեդեկիա	36:11	11 տարի
Ընդհանուր.....		513 տարի

Ավերածության 70 տարիները

Սա մեզ բերում է երկրի ավերածության ժամանակաշրջան, որը տևեց յոթանասուն տարի և ավարտվեց նրա ժողովրդի վերադարձով Բաբելոնից՝ Կյուրոսի առաջին տարին, Բ.ա. 536 թվականին (տես 2 Մնաց. 36:20,23), ամսաթիվ, որը լավ է հաստատված աշխարհիկ պատմության մեջ, և որի սահմաններից այն կողմ Աստվածաշնչյան ժամանակագրության գիծը չի տարածվում:

Վերադարձից մինչև մ.թ. 1873 թ. Ժամանակահատվածը

Շրջանը, որը սկսվում է հրեաների վերադարձից Բաբելոնից՝ իրենց երկրի յոթանասունամյա ավերակության ավարտին, Կյուրոսի առաջին թվականին, և հասնում է մ.թ. 1 թվականին հայտնի ամսաթվին, չի ընդգրկվում Աստվածաշնչային պատմության մեջ: Սակայն, ինչպես արդեն նշվել է, աշխարհիկ պատմությունը հստակ հաստատում է այն որպես 536 տարվա ժամանակահատված: Պտղոմեոսը, հույն-եգիպտական գիտնականը, մաթեմատիկոսը և աստղագետն, լավ

հիմնավորել է այս թվերը: Դրանք ընդհանուր առմամբ ընդունվում են գիտնականների կողմից և հայտնի են որպես Պտղոմեոսի կանոն:

Այսպիսով, մենք գտել ենք ստեղծումից մինչև քրիստոնեական դարաշրջանի (մ.թ.) սկիզբը հստակ և միացյալ ժամանակագրական շղթա՝ ընդհանուր առմամբ չորս հազար հարյուր քսանութ (4128) տարվա տևողությամբ, որը, քրիստոնեական դարաշրջանի հազար ութ հարյուր յոթանասուններկու (1872) տարիների հետ միասին, կազմում է վեց հազար տարի՝ ստեղծումից մինչև մ.թ. 1873 թվականը:

Այս ժամանակագրության համեմատությունը Աշերի ժամանակագրության հետ

Ոմանց համար հետաքրքիր կլինի իմանալ, թե վերոհիշյալ ժամանակագրությունը ինչով է տարբերվում Աստվածաշնչի ընդհանուր հրատարակության եզրագծում տեղ գտած, Աշերի ժամանակագրությունից: Երկու տարբերակների միջև տարբերությունը, մինչև ավերման յոթանասուն տարիների ժամանակաշրջանը, կազմում է հարյուր քսանչորս (124) տարի: Այս տարբերությունը կազմված է 18, 4, 2 և 100 տարվա չորս ժամանակահատվածներից՝ հետևյալ կերպ:

Աշերը յոթանասուն տարվա ավերման ժամանակահատվածը նշում է տասնութ տարով ավելի վաղ, քան վերևում ցույց է տրված՝ այսինքն՝ Հուդայի վերջին թագավոր Սեդեկիայից պաշտոնանկությունից առաջ, քանի որ նա ենթադրել է, որ Բաբելոնի թագավորը

այդ ժամանակ գերի է տարել շատ մարդկանց:³ (2 Մնաց. 36:9,10,17, 4 Թագավորաց 24:8-16) Նա ակնհայտորեն թույլ է տալիս ոչ հազվադեպ սխալ՝ այդ յոթանասուն տարիները համարելով գերության ժամանակահատված, մինչդեռ Տերը հստակ հայտարարում է դրանք որպես երկրի ավերման յոթանասուն տարիներ, որպեսզի երկիրը մնա «ավերված, առանց բնակչի»: Սա տեղի չունեցավ մինչև Սեդեկիային գահընկեց անելը (4 Թագավորաց 24:14): Սակայն Սեդեկիային տապալելուց հետո սկսված ավերածությունը լիակատար էր. թեև երկրի աղքատներից ոմանք մնացին որպես խաղողագործներ և հողագործներ (4 Թագավորաց 25:12), սակայն շուտով անգամ նրանք՝ «բոլոր մարդիկ, թե՛ փոքր, թե՛ մեծ» — փախան Եգիպտոս՝ Քաղղեացիներից վախենալով (26-րդ համար): Այստեղ կասկած չկա. հետևաբար, երկրի ավերման ժամանակը հաշվելիս պետք է հաշվի առնել Սեդեկիա թագավորության իշխանության ավարտը, ինչպես մենք ենք արել:

Մենք նաև գտնում ենք Հովթամի թագավորության մեջ չորս տարվա տարբերություն, որը Աշերը նշում է որպես չորս տարվա տևողություն: Սակայն Աստվածաշունչը հայտնում է, որ Նա թագավորել է ութ տարի (2 Մնաց 21:5, 4 Թագավորաց 8:17):

Երկու տարվա տարբերությունից մեկը գտնվում է Աքազի թագավորության տևողության մեջ, որը Աշերը նշում է որպես տասնհինգ տարի, մինչդեռ Աստվածաշունչը ասում է, որ այն տևել է տասնվեց տարի. (2 Մնաց. 28:1, և 4 Թագավորաց 16:2): Մյուս տարանշատությունը վերաբերում է Հովասի թագավորության տևողությանը, որը Աշերը հաշվում է երեսունինը տարի, մինչդեռ

³ Սակայն նկատի ունեցեք, որ այս մասնակի գերությունը տեղի է ունեցել ոչ թե տասնուութ, այլ տասնմեկ տարի առաջ՝ մինչև Սեդեկիա թագավորի գահընկեց լինելը:

Աստվածաշունչը նշում է քառասուն տարի (4 Թագավորաց 12:1, 2 Մնաց. 24:1):

Այս տարբերությունները կարելի է բացատրել միայն այն եկթադրությամբ, որ Ուշերը հետևել է կամ փորձել է հետևել Հովսեփոսին՝ հրեա պատմաբանին, որի ժամանակագրական տվյալները այժմ ընդհանուր առմամբ ճանաչվում են թերի և սխալ: Մենք հենվում ենք միայն Աստվածաշնչի վրա, հավատալով, որ Աստված ինքն է իր մեկնաբանն:

Թագավորների ժամանակաշրջանում այս քսանչորս տարվա տարբերությունից բացի, վերևում նշված աստվածաշնչյան ժամանակագրության և Աշերի ժամանակագրության միջև կա ևս մեկ անհամապատասխանություն՝ Դատավորների ժամանակաշրջանում հարյուր տարվա տարբերություն: Այստեղ Աշերը շեղվել է 3 Թագավորաց 6:1-ում առկա ակնհայտ սխալից, որտեղ ասվում է, որ Սողոմոնի թագավորության չորրորդ տարին Եգիպտոսից ելքի ժամանակից հաշված 480-րդ* տարին էր: Իրականում այստեղ թիվը պետք է լիներ 580 տարի: Հնարավոր է, որ սխալը կատարվել է պատճենահանման ընթացքում. որովհետև եթե Դավթի քառասուն տարիներին, Սավուղի քառասունամյա թագավորությանը և Եգիպտոսից ելքից մինչև երկրի բաժանումը Սողոմոնին տրված քառասունվեց տարիներին գումարենք Սողոմոնի չորս տարիները, ապա ընդհանուրը կազմում է հարյուր երեսուն տարի: Եվ եթե այս թվերը հանենք 480 տարուց, դատավորների ժամանակաշրջանի համար կմնա ընդամենը 350 տարի, այն դեպքում երբ Դատավորների գրքում և Պողոս առաքյալի մոտ նշվում է 450 տարի (ինչպես արդեն ցույց ենք տվել): Եբրայական թվանշան «դալեթը» (4) շատ նման է «հե» (5) թվանշանին, և, հավանաբար, սա է պատճառը, որ պատճենողը թույլ է տվել այս սխալը: Հետևաբար, 3

Թագավորաց 6:1-ը պետք է ընթերցվի որպես հինգ հարյուր ութսուն տարի, ինչը ամբողջությամբ համապատասխանում է մյուս վկայություններին:

Այսպիսով, Աստծո խոսքը ուղղում է որոշ փոքր սխալներ, որոնք ինչ-որ կերպ ներթափանցել են դրա մեջ:⁴ Հիշեք, որ այս անհամապատասխանությունները հանդիպում են այնտեղ, որտեղ դրանք կարելի է արդյունավետորեն հաղթահարել Նոր Կտակարանի ներշնչված վկայությամբ:

Թեև Աշերը Մ.Թ. 1-ը թվագրում է Ադամի ստեղծումից 4005 թվականին, այն իրականում, իրականում (ինչպես արդեն ցույց ենք տվել ըստ աստվածաշնչյան վկայության) դա եղել է 4129 թվականը, ինչը նշանակում է, որ 1872 թ. Զ.Հ. համարվում է աշխարհի 6000-րդ տարին, իսկ Զ.Հ. 1873 թվականը՝ յոթերորդ հազարամյա շրջանի, կամ երկրի պատմության հազարամյա օրվա սկիզբն է:

Սա է հստակ և ամուր ժամանակագրությունը, որը ստացվում է բացառապես Աստվածաշնչից՝ Ստեղծումից մինչև լավ փաստագրված աշխարհիկ պատմություն: Եվ իր գրառմամբ, լռությամբ և ճիշտ ժամանակին աստիճանաբար բացահայտվելով՝ այն վկայում է աստվածային նախախնամության առանձնահատուկ

⁴ Նման անհամապատասխանությունն նկատվում է 2 Մնաց. 36:9-ը համեմատելիս 4 Թագ. 24:8-ի հետ. առաջինում նշվում է տասնութ, իսկ երկրորդում, ակնհայտորեն սխալ,՝ ութ, որպես Հովաքիսի տարիք, ով թագավորեց երեք ամիս, չարիք գործեց Տիրոջ աչքի առաջ և պատժվեց գերության միջոցով և այլն: Այդպիսի սխալը հեշտությամբ կարող էր տեղի ունենալ, սակայն Աստված այնպես է պահպանել Իր խոսքը, որ պատճենողների մի քանի աննշան սխալները ակնհայտ են դառնում, և Իր խոսքի ամբողջական ներդաշնակությունը ամուր հիմք է տալիս հավատքի համար:

մեթոդների մասին: Սա, քրիստոնեական դարի և Նախորդ դարերի հուսալի ամսաթվերի հետ միասին, թույլ է տալիս մեզ ճշգրտորեն որոշել մեր դիրքը ժամանակի հոսքում: Եվ հույսով ու ուրախությամբ մենք սկսում ենք բարձրացնել մեր գլուխները, գիտակցելով, որ իսկապես շտապում ենք դեպի յոթերորդ հազարամյակի փառավոր դարաշրջանը, — նույնիսկ երբ հասկանում ենք, որ, ըստ մարգարեական կանխատեսումների, դրա սկիզբը անխուսափելիորեն մոայլ ու աղետներով լի է լինելու, և որ փոթորկաբեր ամպերը արդեն հավաքվում են ու խավարվում:

Մեր Տիրոջ ծննդյան ամսաթիվը

Վեցերորդ դարում Եկեղեցին սկսեց ժամանակը հաշվել մեր Տիրոջ ծննդյան օրվանից և հաստատեց մեր դարաշրջանի ամսաթիվը, որը մինչև օրս էլ կիրառվում է, այն է՝ Պարսկաստանի արքա Կյուրոսի առաջին տարուց 536 տարի անց:⁵ Այս ամսաթվի ճշգրտությունը կամ անճշգրտությունը որևէ ազդեցություն չունի նոր ներկայացված քրոնոլոգիայի վրա, որը ցույց է տալիս, որ Ադամի ստեղծումից հաշված վեց հազար տարին ավարտվել է մ.թ. 1872 թվականին: Մեր դարաշրջանի սկիզբ համարվող ժամանակից անցել է հազար ութ հարյուր յոթանասուն երկու տարի, իսկ Պարսկաստանի արքա Կյուրոսի առաջին տարին եղել է այդ թվականից հինգ հարյուր երեսունվեց տարի առաջ (մ.թ.), անկախ նրանից՝ արդյոք դա մեր Տիրոջ ծննդյան թվականն էր, թե ոչ:

⁵ Մեր դարաշրջանի սկիզբը հաստատվել է վեցերորդ դարի սկզբին, Դիոնիսիոս Էքսիգուոսի և այդ ժամանակաշրջանի այլ գիտնականների կողմից, թեև լայնորեն կիրառության մեջ է մտել միայն երկու դար անց:

Մենք, հավանաբար, դա ավելի լավ չենք կարող բացատրել, քան հին նկարի օգնությամբ՝ գծի վրա գտնվող աստղով:

Մ.Թ.Ա _____ * _____ Մ.Թ.

Թող գիծը ներկայացնի Երկրի պատմության վեց հազար տարին՝ Ադամի ստեղծումից մինչև մեր թվարկի 1873 թվականը, և թող աստղանիշը ներկայացնի մ.թ.ա. և մ.թ. շրջադարձային կետը: Այս կետը որևէ ուղղությամբ տեղափոխելը չի փոխում ամբողջ ժամանակաշրջանի երկարությունը, թեև փոխում է տարիների նշանակումը: Այս շրջադարձային կետը մեկ տարով հետ տեղափոխելը կդարձնի մ.թ.ա. ժամանակաշրջանը մեկ տարով կարճ, իսկ մ.թ. ժամանակաշրջանը մեկ տարով երկար, սակայն մ.թ.ա. և մ.թ. ժամանակաշրջանների ընդհանուր տարիների քանակը կմնա նույնը, քանի որ մեկից վերցվածը միշտ մյուսի լրացումն է: Այնուամենայնիվ, եկեք կարճ քննարկենք մեր Տիրոջ ծննդյան թվականը, քանի որ դա օգտակար կլինի մեր հետագա ուսումնասիրության համար:

Գիտնականների շրջանում լայնորեն ընդունված է այն տեսակետը, որ ընդհանուր առմամբ ընդունված Համընդհանուր դարաշրջանի սկիզբը չորս տարով սխալ է՝ մեր Տերը ծնվել է չորս տարով ավելի վաղ, քան հաստատված տարեթիվը, այսինքն՝ մ.թ.ա. 4 թվականին: Եվ Աստվածաշնչի Համընդհանուր թարգմանության հրատարակիչները հետևել են այս տեսությանը: Մենք չենք կարող համաձայնվել, որ մ.թ.ա. 4 թվականը մեր Տիրոջ ծննդյան ճիշտ թվականն է: Հակառակը, մենք հավատում ենք, որ Նա ծնվել է ընդհանուր ընդունված Համընդհանուր դարաշրջանի (Մ.Թ.) սկիզբից ընդամենը մեկ տարի երեք ամիս առաջ՝ մ.թ.ա. 2 թվականի հոկտեմբերին:

Շատերի այն պնդման հիմնական պատճառը, որ մեր դարաշրջանը պետք է սկսվի չորս տարի ավելի վաղ՝ ճշգրիտ համընկնելու Փրկչի ծննդյան թվականին, նրանում է, որ ցանկանում են համատեղել դա հրեա պատմաբան Յովսեփոսի որոշ հայտարարությունների հետ, որոնք վերաբերում են Յերովդես Մեծի թագավորության տևողությանը: Նրա մեկ հայտարարության համաձայն՝ թվում է, թե Յերովդեսը մահացել է Բ.Ա. հաշվարկվող տարուց երեք տարի առաջ: Եթե սա ճիշտ լիներ, դա անշուշտ կհաստատեր, որ մեր Տերը ծնվել է Բ.Ա. 4 թվականին, քանի որ հենց այս Յերովդեսն էր, որ հրաման արձակեց Բեթլեհեմի մանուկների սպանության մասին, որոնցից փրկվեց մանուկ Յիսուսը (Մատթ. 2:14-16): Բայց արդյո՞ք Յովսեփոսի այս հայտարարությունը հուսալի է: Արդյո՞ք Յերովդեսը մահացել է մեր թվարկությունից չորս տարի առաջ: Մենք պատասխանում ենք՝ ոչ, քանի որ միայն Յովսեփոսը բավարար հեղինակություն չէ նման եզրակացության համար, քանի որ նա հայտնի է ամսաթվերը նշելիս անճշտությամբ:

Բայց այս գաղափարը գերիշխեց, և մ.թ.ա. 4 թվականը լայնորեն ընդունվեց, մինչդեռ պատմական իրադարձություններն ու թվերը հնարավորինս խեղաթյուրվեցին՝ այս տեսությանը համապատասխանելու և այն աջակցելու համար: Մյուս ենթադրյալ ապացույցներից մեկը, որ 4 մ.թ.ա. թվականն է ճիշտ, լուսնային խավարումն էր, որը, ըստ Յովսեփոսի, տեղի է ունեցել Յերովդեսի մահից քիչ առաջ: Այս խավարման մասին հայտնի է հետևյալը. Յերովդեսը Տաճարի դարպասների վերևում տեղադրել էր մեծ ոսկեգույն արծիվ: Երկու նշանավոր հրեաներ՝ Մատթեոսն ու Յուդան, համոզեցին մի քանի երիտասարդների այն գցել, ինչը նրանք արեցին, և դրա համար ձերբակալվեցին ու մահապատժի ենթարկվեցին: Հարցը պարզաբանելու համար Յովսեփոսը բացատրում է, որ այդ ժամանակ

գոյություն ունենալ մեկ այլ Մատթեոս՝ գերագույն քահանան, որը այս խռովության մեջ ներգրավված չէր: Նա հետո ավելացնում է. «Բայց Յերովդեսը հեռացրեց այս Մատթեոսին քահանայապետի պարտականություններից և մյուս Մատթեոսին, որը խռովություն էր բորբոքել, կենդանի այրեց իր ընկերների հետ միասին: Եվ հենց այդ գիշեր տեղի ունեցավ լուսնի խավարում»: Սա գրանցված է որպես Յերովդեսի վերջին հայտնի գործողություններից մեկը և, ըստ Յովսեփոսի, ստացել է թվական, որը կարող է համապատասխանել մ.թ.ա. 4 թվականին, քանի որ նա այն նշել է վերոհիշյալ լուսնի խավարմամբ:

Այնուամենայնիվ, քանի որ տարվա ընթացքում երբեմն կարող են լինել միևնույն չորս լուսնային խավարումներ, ակնհայտ է, որ առանց որևէ հատուկ հանգամանքների նման դեպքի գրանցումը ոչինչ չի ապացուցում: Երբ նշվում են խավարման գիշերային ժամը, եղանակը և տևողությունը (ինչպես եղել է մի քանի դեպքերում), գրանցումը չափազանց կարևոր է ամսաթվերը հաստատելու համար: Այնուամենայնիվ, այս կոնկրետ դեպքում նման բան չկա, և հետևաբար այս գրառումը ժամանակագրական առումով ոչինչ չի ապացուցում: Այո, Յովսեփոսը նշում է, որ այս իրադարձությունից առաջ պահք է պահվել, սակայն նա չի մանրամասնում, թե ինչպիսի պահք էր դա և որքան ժամանակ առաջ էր տեղի ունեցել:

Այսպիսով, պարզ է դառնում, որ մ.թ.ա. 4 թվականին եղել է միայն մեկ լուսնի խավարում, մինչդեռ մ.թ.ա. 1 թվականին՝ երեք: Զ.ա. 4-ի խավարումը միայն մասամբ էր (վեց մատի լայնք, այսինքն՝ լուսնի միայն կեսը ծածկվեց), մինչդեռ ք.ա. 1-ի երեք խավարումներն էլ ամբողջական էին՝ ամբողջ լուսինը ծածկվեց, և, իհարկե, ավելի երկար տևողությամբ, ինչը այս իրադարձությունը շատ ավելի նկատելի դարձրեց: Ուստի, եթե խավարման տեսությունը

որևէ նշանակություն ունի, այն անշուշտ չի աջակցում ավելի վաղ թվականին՝ մ.թ.ա. 4-ին:

Հովսեփոսը իր պատմության մեջ ներկայացնում է մի քանի կարևոր ժամանակահատվածներ և որոշ իրադարձությունների ամսաթվեր, սակայն այդ ամսաթվերը վստահելի չեն: Որոշ տվյալներ ցույց են տալիս, որ Հերոդեսը մահացել է մ.թ.ա. 4 թվականին, սակայն մյուսները չեն համընկնում այդ ամսաթվի հետ: Օրինակ, ասվում է, որ նա մահացել է յոթանասուն տարեկանում: Նա 47 թ. Բ.ա. նշանակվեց Գալիլեայի կառավարիչ, և Հովսեփոսը նշում է, որ այդ ժամանակ նա 25 տարեկան էր (Ant. 14:9:2): Սա նրա ծննդյան թիվը դարձնում է Բ.ա. 72 (47 + 25): Իսկ եթե նրա մահը տեղի է ունեցել 70 տարեկանում, ապա դա կլիներ Բ.ա. 2-ին, ոչ թե Բ.ա. 4-ին:

Այս առնչությամբ օգտակար է նշել գիտնականների կարծիքների բախումը Հերոդեսի մահվան ճշգրիտ թվի շուրջ, որպեսզի բոլորի համար պարզ լինի, որ չկա հիմնավոր պատճառ ընդունելու մ.թ.ա. 4 թվականը որպես միակ թիվը, որը համապատասխանում է Մատթեոս 2:14-16-ին: Ֆաուստի «Աստվածաշնչային հանրագիտարանը» Հերոդեսին (երբ նա դարձավ իշխան) մոտ քսան տարեկան է համարում: Ուստի նրա յոթանասուն տարեկանում մահը տեղի կունենար Բ.Յ. 2 թվականին: Չեմբերսի հանրագիտարանը և Սմիթի Աստվածաշնչային բառարանը նշում են, որ այդ ժամանակ նա 15 տարեկան էր, ուստի նրա մահը տեղի է ունեցել մ.թ. 7 թվականին: Ապլեթոնի հանրագիտարանը «Ժամանակագրություն» հոդվածում նշում է. «Հովսեփոսը նույնպես տալիս է թվականներ, սակայն նա ընդհանուր առմամբ այնքան անփույթ է, որ նրան հաշվի առնել չի կարելի»:

Հիմա մենք կշարունակենք ներկայացնել այս հարցի վերաբերյալ աստվածաշնչյան ապացույցները, որոնք ավելի համահունչ են «Ընդհանուր դարաշրջանին» և ցույց են

տալիս, որ մեր Տերը ծնվել է Մ.Թ.Ա հունվարի 1-ից ընդամենը մեկ տարի երեք ամիս առաջ: Այս մասին՝ ավելի ուշ:

Մեր Տիրոջ ծառայությունը տևեց երեք ու կես տարի: Վաթսուհինը խորհրդանշական շաբաթները (Դանիել 9:24–27) տևեցին մինչև Նրա մկրտությունն ու օծումը որպես Մեսիա: Այնուհետև սկսվեց Իսրայելի համար վերջին, կամ յոթանասուներորդ, շաբաթը (յոթ տարի)՝ շնորհքի ժամանակաշրջանը: Այս յոթանասուներորդ, շաբաթվա կեսին Նա մահապատժի ենթարկվեց՝ Իր առաքելության սկիզբից երեք ու կես տարի անց: Մենք գիտենք, որ Նա խաչվել է Չատիկի ժամանակ, մոտավորապես ապրիլի 1-ին (անկախ տարեթվից): Հետևաբար, Նրա ծառայության երեք ու կես տարին, որը ավարտվեց ապրիլին, պետք է սկսված լիներ տվյալ տարվա հոկտեմբերին: Եվ որևէ տարվա հոկտեմբերը պետք է լինի Նրա ծննդյան իսկական ամիսը, քանի որ Նա, երբ լրացրեց 30 տարին, անմիջապես սկսեց Իր ծառայությունը և, ըստ Օրենքի (որի տակ Նա ծնվել և որին ենթարկվել է), չէր կարող սկսել ծառայել 30 տարին չլրացած: Քանզի կարդում ենք. «Հիսուս, երբ սկսեց Իր ծառայությունը, մոտ երեսուն տարեկան էր», և այլն:

Հովհաննես Մկրտիչը մեր Տիրոջից վեց ամսով մեծ էր (Ղուկաս 1:26, 36); հետևաբար Նա հասուն տարիքի էր հասել (օրենքով՝ երեսուն տարեկան — Թվեր 4:3, Ղուկաս 3:23 և այլն), Նա սկսեց քարոզել վեց ամիս առաջ, քան մեր Տերը հասավ մեծահասակության տարիքին և սկսեց Իր ծառայությունը: Հովհաննեսի ծառայության սկիզբը հստակ սահմանված է որպես «Կեսար Տիբերիոսի, Հռոմի երրորդ կայսեր, տիրապետության տասնհինգերորդ տարին» (Ղուկաս 3:1): Սա ճշգրիտ հաստատված թվական է, որը չի կարող որևէ լուրջ կասկած հարուցել: Տիբերիոսը կայսր դարձավ Կեսար Ավգուստոսի մահից հետո, Հռոմի 767-րդ տարում, որը համապատասխանում է մ.թ. 14 թվականին:

Չպետք է սպասենք, որ այս տեղեկությունը բառ առ բառ նշված լինի: Եթե այդպես լիներ, այն հայտնի կլիներ նախքան իր ժամանակը: Այն ներկայացված է այնպես, որ թաքցված մնա մինչև «վերջի ժամանակը» (Դանիել 12:4,10):

Մեր Տիրոջ խոսքերը՝ «Երուսաղեմը հեթանոսների կողմից կոխկոշտված կմնա, մինչև հեթանոսների ժամանակները լրանան», ոչ միայն ենթադրում են հեթանոսական տիրապետության սահմանափակ և որոշակի ժամանակահատված, այլև այն միտքն են հուշում, որ թեև հոգեդեն և թե մարմնեդեն Իսրայելը ենթարկվել է այս հեթանոսական ուժերին, սակայն այդ «ժամանակները» ինչ-որ կերպ կապված են և չափվում են երկրի վրա գտնվող Երուսաղեմ քաղաքով և Իսրայելի մարմնավոր տուևով: Եվ ծագում է միտքը՝ արդյոք Աստված Իսրայելի պատմության մասին կանխագուշակել է ինչ-որ բան, որը մեզ կտա այդ «ժամանակների» ճշգրիտ չափը, որոնց մասին մեր Տերը խոսում է: Այո:

Վերադառնալով Ղևտացիներ գրքին, մենք այնտեղ գտնում ենք երկրային և ժամանակավոր բնույթի օրհնություններ և անեծքներ: Եթե Իսրայելը հավատարմորեն հնազանդվեր Աստծուն, այն կօրհնվեր մյուս ազգերից վեր, եթե ոչ, նրանց վրա կիջնեին որոշ չարիքներ: «Եւ ձեր մէջը ման կգամ, եւ ձեզ համար Աստուած կլինեմ, եւ դուք ինձ համար ժողովուրդ կլինեք... Բայց եթէ ինձ չլսեք եւ այս բոլոր պատուիրանքները չկատարեք... իմ երեսը ձեզ վերայ կդարձնեմ, եւ ձեր թշնամիների առաջին կսպանուիք եւ ձեզ ատողները կիշխեն ձեզ վերա»: «Չուր տեղը կսերմանեք ձեր սերմերը, որովհետեւ ձեր թշնամիները կուտեն դրանք»: «Եթե այսքանից հետո էլ ինձ չլսեք, այն ժամանակ ձեր մեղքերի

համար յոթնապատիկ կպատժեմ ձեզ» (Ղևտ. 26:16,17,18,24,28):

Այս «յոթնապատիկ» պատժի սպառնալիքը նշվում է երեք անգամ: «Յոթնապատիկի» նախորդող տարբեր պատիժները վերաբերում են ասորիների, մովաբացիների, մադիանացիների, փղշտացիների և այլոց ձեռքով տարբեր գերության շրջաններին, որոնց ընթացքում Աստված շարունակեց հոգ տանել նրանց մասին: Նրա վերաբերմունքը նրանց հանդեպ արտահայտվել է այսպես՝ «պատվիրան պատվիրանի վրա, օրենք օրենքի վրա, մի փոքր այստեղ, մի փոքր այնտեղ»: Սակայն Նա նրանց մասին շարունակում էր հոգ տանել, և երբ նրանք ապաշխարեցին ու աղաչեցին Նրան, Նա լսեց նրանց, պատասխանեց և փրկեց նրանց իրենց թշնամիների ձեռքից (Դատավորներ 3:9, 15): Բայց երբ այս պատիժները չբերեցին ցանկալի արդյունք, Նա հայտարարեց «յոթնապատիկ» սպառնալիք. թագը հավերժորեն վերցվեց, և Իսրայելը, ինչպես նաև ողջ աշխարհը, յոթ անգամ ենթարկվեց գազանային ուժերին. Սա նրանց վրա եկավ Աստծո նախազգուշացման համաձայն: «Եթե այսքանից հետո էլ ինձ չլսեք, [բոլոր նախորդ պատիժներից] այն ժամանակ ձեր մեղքերի համար յոթնապատիկ կպատժեմ ձեզ»:

«Յոթ անգամները» (ավելին, լրացուցիչ կամ հավելյալ) սպառնալու համատեքստը ցույց է տալիս, որ դրանք ներառում են վերջնական և եզրափակիչ պատիժ այդ ժողովրդի նկատմամբ, երբ մյուս պատժիչ միջոցները բազմիցս ձախողվել էին նրանց մշտական բարեփոխման հարցում: Այս «յոթ անգամների» պատիժը նախատեսված է նրանց լիովին խոնարհեցնելու Տիրոջ առջև և այդպիսով պատրաստելու նրանց ընդունելու Նրա օրհնությունները: Ուստի այս «յոթ անգամները» վերաբերում են այն ժամանակահատվածին, երբ հեթանոսները պետք է

իշխեին նրանց վրա: Եվ մեր Տերը անշուշտ հենց այս «յոթ անգամների» ժամանակաշրջանին էր հղում անում, երբ խոսում էր «հեթանոսների ժամանակների» մասին:

Ժամանակը, երբ փոքր գերություններն ու պատիժները տեղի տվեցին այս վերջնական մեծ ազգային «յոթ ժամանակների» պատժին, ինչպես արդեն ցույց է տրվել, այն էր, երբ հեռացվեց նրանց վերջին թագավոր Սեդեկիան — որից ի վեր անցել է մեկ երկար պատժի շրջան — կանխատեսված «յոթ ժամանակները» կամ 2520 տարի:

Աստվածաշնչում «ժամանակը» օգտագործվում է տարվա իմաստով՝ լինի այն բառացի, թե խորհրդանշական, սակայն մինչև որևէ մարգարեության հնչեցման պահը անհնար էր իմանալ, թե խոսքը վերաբերում է բառացի՞, թե՞ խորհրդանշական ժամանակին: Մարգարեները ջանասիրաբար փնտրեցին, սակայն ապարդյուն, պարզելու համար, թե ո՞ր ժամանակն է, կամ ինչպիսի՞ ժամանակ (բառացի՞, թե՞ խորհրդանշական) է Հոգին նկատի ունեցել (Ա Պետրոս 1:11): Մարգարեությունում օգտագործվող խորհրդանշական տարին հաշվարկվում է լուսնային տարվա սկզբունքով՝ տասներկու ամիս, յուրաքանչյուր ամիսը երեսուն օր, ընդհանուր՝ երեք հարյուր վաթսուն օր, որտեղ յուրաքանչյուր օրը ներկայացնում է մեկ տարի: Հետևաբար, «ժամանակը» կամ տարին, եթե խորհրդանշական է, նշանակում է երեք հարյուր վաթսուն (360) խորհրդանշական օր, իսկ «յոթ ժամանակները» ներկայացնում են հինգ հազար երկու հարյուր (7 x 360 = 2520) խորհրդանշական օր, կամ 2520 բառացի տարի:

Այստեղ առաջ է գալիս հարցը՝ արդյոք այս «յոթ ժամանակները» բառացի՞, թե՞ խորհրդանշական էին: Արդյո՞ք դրանք վերաբերում էին յոթ տարվա՞, թե՞ 2520 տարվա: Մենք պատասխանում ենք՝ դրանք խորհրդանշական ժամանակներ էին, 2520 տարի: Դրանք չեն կարող հասկացվել որպես յոթ բառացի տարի, քանի որ

Իսրայելը ունեցել է ավելի երկար գերության շրջաններ՝ օրինակ՝ նրանք ծառայել են Միջագետքի թագավորին ութ տարի (Դատավորներ 3:8), Մովաբի թագավորին տասնութե տարի (Դատավորներ 3:14), թագավոր Յաբինին՝ քսան տարի (Դատավորներ 4:2,3), փղշտացիներին՝ մեկ շրջան քառասուն տարի և մեկը՝ տասնութե տարի (Դատավորներ 10:7,8; 13:1), Բաբելոնում անցկացրած յոթանասուն տարիներից բացի: Այն փաստը, որ այս բոլոր ժամանակահատվածները շատ ավելի երկար էին, քան «յոթ» կամ բառացի տարիները, և այն, որ «յոթը» նշվում էր որպես վերջնական, ամենամեծ և հստակ պատիժ, ապացուցում է, որ մենք գործ ունենք ոչ թե բառացի, այլ խորհրդանշական ժամանակի հետ, չնայած որ Ղևտացիներ 26:18-21, 24, 28 - ում «յոթ» թարգմանված եբրայական բառը, նույն բառն է, որը թարգմանվում է «յոթ ժամանակներ»: Դանիել 4:13, 20, 22, 29-ում, միակ տարբերությամբ այն է, որ Դանիելում ավելացվում է «իդդան» բառը, միևնույն Ղևտացիներում այն թողնվում է ենթադրյալ: Բացի այդ, յուրաքանչյուր դեպքում այն կրկնվում է չորս անգամ: Նաբուգոդոնոսորի դեպքում դրանք բառացի տարիներ էին, սակայն մենք դեռ կտեսնենք, որ և՛ Նաբուգոդոնոսորը, և՛ նրա «յոթ ժամանակը» խորհրդանշական էին:

Նաբուգոդոնոսորի նվաստացման «յոթ ժամանակները» (Դանիել 4:16,23-26) իրականում յոթ բառացի տարի էին, երբ դրանք կատարվեցին, և այդպես Իսրայելի և աշխարհի նվաստացումը «իշխանությունների» տակ ապացուցվեց, որ այն յոթ խորհրդանշական ժամանակ է՝ բաղկացած երկու հազար հինգ հարյուր քսան բառացի տարիներից: Այս ժամանակաշրջանին այժմ մնացել է ընդամենը քսանվեց տարի, և բոլոր ներկա գործոնները՝ ամեն կողմից, մատնանշում են հեթանոսական տիրապետության ավարտը, հավիտենական արդարության հաստատումը և

Նոր Ուխտի բոլոր օրհնությունները Իսրայելի և ամբողջ հառաչող ստեղծագործության համար:

Իսրայելի յոթ ժամանակի ավարտը

Այս երկար ժամանակահատվածը («յոթ ժամանակներ», կամ 2520 տարի) Իսրայելի պատժի համար հեթանոսական տիրապետության շրջան է՝ «հեթանոսների ժամանակներ»: Զանի որ, ինչպես արդեն ցույց ենք տվել, «Հեթանոսների ժամանակները» սկսվել են մ.թ.ա. 606 թվականին և պետք է տևեին երկու հազար հինգ հարյուր քսան տարի, դրանք կավարտվեն մ.թ. 1914 թվականին ($2520 - 606 = 1914$). Այնուհետև կկատարվեն նույն գլխի վերջին մասի օրհնությունները (Ղևտ. 26:44,45): Աստված կհիշի և Իսրայելի համար կկատարի նրանց նախնիների հետ կնքված ուխտը (Հոռմ. 11:25–27):

Սա որոշների համար կարելի է ավելի հստակ ցույց տալ այսպես՝ Իսրայելի «յոթ ժամանակ» պատիժը = 2520 տարի: Դրանք սկսվեցին այն ժամանակ, երբ իշխանությունը հանձնվեց հեթանոսներին, ինչը, ինչպես ցույց ենք տվել, տեղի ունեցավ մ.թ.ա. 606 թվականին: Հետևաբար, մ.թ. 1 թվականին նրանց ժամանակաշրջանի 606 տարիները արդեն անցել էին և մնացածը ցույց է տալիս մ.թ. 1914 թվականը:

Որպես ապացույց, որ Աստվածաշունչը խորհրդանշական մարգարեության մեջ կիրառում է «մեկ օրը մեկ տարվա» սկզբունքը, մենք մեջբերում ենք հետևյալ կատարված օրհնակները: (ա) լրտեսները ստիպված եղան Զանան երկիրը ուսումնասիրելիս ճանապարհորդել 40 օր, ինչը խորհրդանշում էր Իսրայելի քառասուն տարվա թափառումները անապատում (Թվեր 14:33, 34), (բ) Երբ Աստված Եգիպտեի միջոցով Իսրայելին հայտնելու էր Նեղոսի ժամանակաշրջանի մասին, նա մարգարեին

խորհրդանշաբար հայտարարեց. «Ամեն տարվա համար մեկ օր եմ սահմանել քեզ» (Եզեկիել 4:1-8): (գ) Դանիել 9:24-27-ում ներկայացված այդ նշանավոր և արդեն կատարված մարգարեությունում, որը քննվել է նախորդ գլխում, որտեղ ցույց է տրվում մեր Տիրոջ օծման ժամանակը և դրանից հետո Իսրայելի համար նախատեսված յոթ տարվա շնորհքի ժամանակահատվածը, որի մեջ Մեսիան «մահացավ», օգտագործվում է խորհրդանշական ժամանակաչափ. յոթանասուն խորհրդանշական շաբաթներից յուրաքանչյուր օրը ներկայացնում էր մեկ տարի և այդպես էլ կատարվեց: (դ) Դանիել 7:25-ում և 12:7-ում Պապականության տիրապետության ժամանակահատվածը նշվում է որպես երեք ու կես ժամանակ, և մենք գիտենք (և այս հատորում կներկայացնենք), որ այն կատարվեց հազար երկու հարյուր վաթսուն տարում ($360 \times 3 \frac{1}{2} = 1260$): Նույն ժամանակահատվածը նշվում է Հայտնության գրքում. 12:14-ում այն կոչվում է երեք ու կես ժամանակ ($360 \times 3 \frac{1}{2} = 1260$); 13:5-ում այն կոչվում է քառասուն երկու ամիս ($30 \times 42 = 1260$), և 12:6-ում այն կոչվում է հազար երկու հարյուր վաթսուն օր: Այս մարգարեությունների կատարումը հետագայում առանձնապես կքննվի: Այժմ բավական է նշել, որ Հոգու կողմից «ժամանակ» բառի այլուր կիրառումը համընկնում է տվյալ տերմինի ներկայիս օգտագործման հետ՝ այն իմաստով, որ խորհրդանշական մարգարեության մեջ «ժամանակը» խորհրդանշական երեք հարյուր վաթսուն տարի է: և այն փաստը, որ երեք ու կես ժամանակը, որպես չափ կիրառվելով ապստամբ եկեղեցու հաղթանակի համար, կատարվել է հազար երկու հարյուր վաթսուն տարում, հաստատում է այն սկզբունքը, որի հիման վրա հաշվարկվում են հեթանոսական տիրապետության յոթ ժամանակները ($360 \times 7 = 2520$) և ապացուցում է, որ դրանց ավարտը մ.թ. 1914 թվականն է, քանզի եթե երեք ու կես ժամանակը կազմում է 1260 օր (տարիներ), ապա յոթ

ժամանակը կլինի հենց երկու անգամ ավելի երկար՝ այսինքն՝ 2520 տարի:

Եթե Իսրայելի «յոթ ժամանակը» բառացի ժամանակով (յոթ տարի) կատարված լիներ, Աստծո անապայմանական ուխտով իրենց հայրերի հետ երաշխավորված օրհնությունը կհետևեր: (Տես Ղևտացիներ 26:45, 30:17, 31:13, 32:34) Բայց դա այդպես չեղավ: Նրանք մինչ օրս երբեք չեն վայելել այդ խոստացված օրհնությունները, և այդ ուխտը չի կատարվի, ասում է Պողոսը (Ռոմեացիներ 11:25,26), մինչև որ ընտրված Ավետարանական Եկեղեցին, Զրիստոսի մարմինը, կատարյալ չղառնա որպես Նրանց փրկիչ, որի միջոցով ուխտը կգործարկվի: «Սա է այն ուխտը, որ այն օրերից հետո պիտի կապեմ Իսրայելի տան հետ [այսինքն՝ պատժի յոթ ժամանակներից հետո], ասում է Տերը՝ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում և նրանց սրտի վրա պիտի գրեմ այն. ես նրանց Աստվածը պիտի լինեմ, և նրանք իմ ժողովուրդը պիտի լինեն: Եվ այլևս յուրաքանչյուր մարդ իր ընկերոջը և յուրաքանչյուր մարդ իր եղբորը չի սովորեցնի՝ ասելով. ճանաչե՛ք Տիրոջը, որովհետև նրանք ամենքը՝ նրանց փոքրից մինչև մեծը, պիտի ճանաչեն ինձ, - ասում է Տերը - որովհետև ես պիտի ներեմ նրանց անօրհնությունը և նրանց մեղքերն այլևս չեմ հիշի» (Երեմ. 31:33,34, Եբր. 10:16,17): «Այդ օրերին [պատժի յոթ անգամների ավարտից հետո եկող շնորհքի օրերում] այլևս չեն ասի՝ «Հայրերն ազդի կերան, որդիների ատամները թմրեցին»: Այլ ամեն մարդ իր անօրենության համար պիտի մեռնի, ամեն մարդ, որ ազդի ուտի, նրա ատամները պիտի թմրեն» Երեմիա 31:29,30:

Բաբելոնում յոթանասուն տարիների վերջում տեղի ունեցած վերականգնումը ազատագրում չէր հեթանոսական իշխանությունից, քանի որ դրանից հետո նրանք մշտապես հարկատու ժողովուրդ էին: Այդ վերականգնումը ծառայեց միայն մի ժողովուրդ միասին

պահպանելուն, որին պետք է ներկայացվեր Մեսիան: Սա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ հեթանոսական տիրապետությունը արդեն Իսրայելին ենթարկության մեջ էր պահում, և երբ մեր Տերը, հաշվի առնելով այս փաստը, ասաց, որ նրանք կշարունակեն ոտնակոխ լինել մինչև հեթանոսների ժամանակների ավարտը (կատարումը): Աշխարհը վկայում է այն փաստին, որ Բ.ա. 606 թվականից ի վեր Իսրայելի պատիժը հեթանոսական տիրապետության տակ անընդմեջ է եղել, որ այն դեռ շարունակվում է, և որ չկա որևէ հիմք նրանց ազգային վերակազմավորման հույս ունենալու մինչև Բ.հ. 1914 թվականը՝ մինչև նրանց «յոթ ժամանակների» (2520 տարի) ավարտը: Բայց որքան ավելի է մոտենում այս երկարատև ազգային պատժի ավարտը, այնքան ավելի հստակ ենք տեսնում անպտուղ թզի ծառի ծաղկման ակնհայտ նշանները, որոնք ազդարարում են չարի ձմռան ավարտը և Հազարամյա ամռան մոտեցումը, որը նրանց ամբողջությամբ կվերականգնի իրենց խոստացված ժառանգությանը և ազգային անկախությանը: Ինքնին այն փաստը, որ այժմ մեծ պատրաստություններ և ակնկալիքներ կան Իսրայելի հայրենիք վերադարձի վերաբերյալ, ուժեղ լրացուցիչ ապացույց է, որը հաստատում է Սուրբ Գրքի այս ուսմունքը: Այս իրադարձության նշանակության մասին տես Հատոր I, էջեր 286-298:

Վկայությունների մեկ այլ կողմը

Դանիելը 4-րդ գլխում ներկայացնում է հեթանոսների ժամանակների վերաբերյալ մեկ այլ տեսանկյուն: Այստեղ մարդու սկզբնական տիրապետությունը ողջ երկրի վրա, դրա վերացումը և դրա վերականգնման անխուսափելիությունը (որը պետք է սկսվի հեթանոսների ժամանակների ավարտին) համոզիչ կերպով պատկերված են Նաբուգոդոնոսորի երազում, Դանիելի

մեկնաբանության մեջ և Նաբուգոդոնոսորի կյանքում դրա իրականացման մեջ:

Նաբուգոդոնոսորը իր երազում «տեսավ ահա մի ծառ երկրի մեջտեղում. նա շատ բարձր էր: Այն ծառը մեծացավ ու զորացավ: Նրա բարձրությունը հասավ մինչև երկինք, և նա տեսնվում էր երկրի բոլոր ծայրերից: Նրա տերևները գեղեցիկ էին, պտուղները՝ առատ, ու նրա վրա ուտելիք կար բոլորի համար. նրա տակ դաշտի գազանները հովանի էին գտնում, նրա ճյուղերի վրա էին բնակվում երկնքի թռչունները, և նրանից էր կերակրվում ամեն մարմին: Անկողնու մեջ իմ մտքի տեսիլքներում տեսա, որ ահա մի պահապան, մի սուրբ իջավ երկնքից: Նա ուժգին գոչեց և այսպես ասաց. “Ծառը տապալե՛ք, ճյուղերը կտրատե՛ք, տերևները թոթափե՛ք և պտուղները ցիրուցան արեք. գազանները թող փախչեն նրա տակից, և թռչունները՝ նրա ճյուղերից: Բայց նրա արմատների բունը հողի մեջ թողեք, երկաթե ու պղնձե կապանքով՝ դաշտի խոտերի մեջ, և թող թրջվի երկնքի ցողով, և նրա բաժինը անասունների հետ լինի երկրի խոտերի մեջ: Նրա մարդկային միտքը թող փոխվի, ու նրան անասունի միտք տրվի, և նրա վրայով յոթ ժամանակ թող անցնի: Վճիռը հրամայվել է պահապաններից, և դատավճիռը հրահանգվել է սրբերի կողմից. որպեսզի ապրողներն իմանան, որ Ամենաբարձրյալն է տիրում մարդկանց թագավորության վրա և այն տալիս է, ում որ ուզում է, և մարդկանցից ամենանվաստին է կարգում նրա վրա»:

Այս զարմանահրաշ ծառը, իր փառքով ու գեղեցկությամբ, ներկայացնում էր մարդկային ցեղին իր ներկայացուցիչ ու գլուխ Ադամի միջոցով տրված երկրի առաջին տիրապետությունը, որին Աստված ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք և լցո՛ւք երկիրն ու տիրեցե՛ք դրան. իշխե՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների վրա ու երկրի վրա սողացող բոլոր կենդանիների վրա» (Ծննդոց 1:28): Մարդու

սկզբնական փառքը և Նրան շնորհված իշխանությունը իսկապես հիասքանչ էին և տարածվում էին ողջ երկրի վրա՝ օրհնելու, մնուցելու, պաշտպանելու և հոգ տանելու բոլոր կենդանի արարածների համար: Բայց երբ մեղքը մտավ աշխարհ, հրաման տրվեց կտրել ծառը, և մարդկության փառքը, գեղեցկությունը և իշխանությունը վերացվեցին: Եվ ստորին արարածները այլևս Նրա ազդեցության տակ ապաստան, պաշտպանություն և օրհնություն չգտան: Մահը կտրեց մեծ ծառը, ցրվեց Նրա պտուղներն ու տերևները և ստորին ստեղծածին թողեց առանց իր տիրոջ ու բարերարի:

Մարդու տեսանկյունից կորցրած տիրապետությունը վերականգնելու ողջ ուժը անշրջելիորեն կորել էր: Սակայն Աստծո տեսանկյունից այդպես չէր: Տիրապետությունը սկզբնապես ծագել էր Նրա ծրագրից և եղել էր Նրա շնորհալի պարգևը, և թեև Նա հրամայել էր այն կտրել, արմատը՝ Աստծո վերականգնման նպատակն ու ծրագիրը, շարունակվեց, թեև ամուր կապանքներով կապված, որպեսզի չաճի մինչև աստվածային նշանակած ժամանակը:

Ինչպես երագում կերպարը փոխվում է ծառի կոճղից՝ դառնալով նվաստացած մարդու, որին իջեցրել են կենդանիների ընկերակցության և նմանության, որոնց մոտ բանականությունը տապալված է և որոնցից հեռացել է ողջ փառքը, այնպես էլ մենք տեսնում ենք մարդուն՝ ընկածին, երկրի նվաստացած տիրակալին. Նրա փառքը և տիրապետությունը հեռացել են: Դատավճռի կայացումից ի վեր մարդկությունը կենդանիների հետ է կիսում իր բաժինը, և մարդկային սիրտը դարձել է կենդանական ու անարգված: Ինչ տպավորիչ է պատկերը, երբ հաշվի ենք առնում մարդկության մեծ զանգվածի ներկայիս ու անցյալի կիսաքաղաքակիրթ և վայրենի վիճակը, և որ Նույնիսկ այն փոքր փոքրամասնությունը, որը ձգտում է հաղթահարել

անկման միտումը, հաջողության է հասնում միայն սահմանափակ չափով՝ մեծ պայքարի և անընդհատ ջանքերի գնով: Մարդկային ցեղը պետք է մնա իր անկման մեջ՝ չարի տիրապետության տակ, մինչև սովորի այն դասը, որ Բարձրյալն է տիրում մարդկանց թագավորությանը և այն տալիս է ում ուզենա: Եվ քանի դեռ մարդիկ այս անարգված վիճակում են, Աստված թույլ է տալիս նրանց մեջ գտնվող ամենաանարգելի բնավորության տեր անհատներին իշխել նրանց վրա, որպեսզի նրանց ներկայիս դառն լիորձը ապագայում դառնա երկարաժամկետ օգուտ:

Դանիելի մեկնաբանության մեջ ասվում է, որ «այս խոսքը կատարվեց Նաբուգոդոնոսորի, արքայի վերաբերյալ», և որ նա այդպիսի անխոհեմ, ապականված, գազանային վիճակում շրջում էր գազանների մեջ, մինչև անցան յոթ ժամանակներ (նրա դեպքում՝ յոթ բառացի տարի): Դանիելի երազի մեկնաբանությունը վերաբերում է միայն Նաբուգոդոնոսորի դեպքում դրա կատարմանը: Սակայն այն հանգամանքը, որ երազը, դրա մեկնաբանությունն ու կատարումը այստեղ այդքան մանրամասն նկարագրված են, ապացուցում է այս պատմության նպատակային բնույթը: Եվ այն հանգամանքը, որ այն կատարյալ կերպով հարմար է պատկերավորելու աստվածային նպատակը՝ ամբողջ մարդկային ցեղին չարի իշխանության տակ ենթարկելը նրա պատժի և ուղղման համար, որպեսզի իր ժամանակին Աստված կարողանա այն վերականգնել և հաստատել արդարության և հավիտենական կյանքի մեջ, համոզում է մեզ ընդունել այն որպես նախանշված պատկեր:

Նաբուգոդոնոսորի վրա երազի կատարումը առանձնապես ուշագրավ է, երբ հիշում ենք, որ նա մարդկային իշխանության ներկայացուցիչն ու գլխավոր ղեկավարն էր (Դանիել 2:38), և որպես երկրի տեր

մարգարեն Նրան դիմեց գրեթե նույն բառերով, որոնցով Աստված առաջին անգամ դիմեց Ադամին՝ «երկնքի Աստուածը քեզ թագաւորութիւն, կարողութիւն, զօրութիւն եւ պատիւ է տուել»: «Եւ ամեն տեղեր ուր որ մարդկանց որդիք են բնակվում՝ դաշտի գագանները եւ երկնից թռչունները քո ձեռքն է տուել, եւ քեզ իշխան է դրել նորանց ամենի վերայ» (Դանիել 2:37,38): Համեմատեք Ծննդոց 1:28.) Հետո, մեղքի պատճառով, Նաբուգոդոնոսորը ստացավ «յոթ ժամանակների» պատիժ, որից հետո Նրա բանականությունը սկսեց վերադառնալ, և Նրա իշխանության վերականգնումը կատարվեց: Նա վերականգնվեց իր թագավորությունում, և Նրան ավելացվեց մեծություն, երբ սովորեց անհրաժեշտ դասը, որին Նա հղում է անում հետևյալ խոսքերով՝

Եվ այն օրից հետո ես՝ Նաբուգոդոնոսորս, աչքերս դեպի երկինք բարձրացրի, իմ խելքն ինձ դարձավ, և Ամենաբարձրյալին օրհնաբանեցի, գովաբանեցի ու փառաբանեցի՝ հավիտյանս կենդանի եղողին, որի իշխանությունը հավիտենական իշխանություն է, և Նրա թագավորությունը սերնդեսերունդ կմնա: Եվ երկրի բոլոր բնակիչները ոչնչի պես են համարվում, և Նա ըստ իր կամքի է անում երկնքի զորքի ու երկրի բնակիչների մեջ, և մեկը չկա, որ խփի Նրա ձեռքին ու ասի Նրան. Ի՞նչ ես անում: Այդ ժամանակ խելքս ինձ դարձավ, և ինձ վերադարձան իմ թագավորության ու փառքի հետ իմ մեծավայելչությունն ու փառահեղությունը: Իմ խորհրդականներն ու իմ մեծամեծները փնտրեցին ինձ, և ես վերահաստատվեցի իմ թագավորության վրա, ու առավել վեհություն տրվեց ինձ: Արդ ես՝ Նաբուգոդոնոսորս, գովաբանում, մեծարում և փառաբանում եմ երկնքի Թագավորին, որովհետև Նրա բոլոր արարքները ճշմարիտ են, և Նրա ճանապարհներն արդար են, և որը կարողանում է նսեմացնել հոխորտանքով ընթացողներին:

Նաբուգոդոնոսորի անկումը խորհրդանշում էր մարդկային անկումը դաժան կառավարությունների տակ յոթ խորհրդանշական ժամանակների կամ տարիների (մեկ տարին մեկ օրվա համար՝ 2 520 տարի) ընթացքում, սկսած իր օրերից: Եվ պետք է նշել, որ սա ամբողջությամբ համընկնում է Իսրայելի համար մարգարեացված յոթ ժամանակների հետ, որոնք, ինչպես Նոր տեսանք, ավարտվում են մ.թ. 1914 թվականին: Իրոք, հենց Նաբուգոդոնոսորի օրոք Իսրայելը գերության մեջ տարվեց Բաբելոն, երբ Աստծո թագավորության թագը վերցվեց, և սկսվեցին այդ յոթ ժամանակները:

Սա ամբողջությամբ համապատասխանում է այն, ինչ Աստված հայտնեց Դանիելին, երբ Նա նկարագրեց այս հեթանոսական կառավարությունները որպես բազմաթիվ վայրի գազաններ, մինչդեռ Աստծո թագավորությունը նրանց իշխանության ավարտին պատկերվում է որպես տրված Մարդու Որդուն նման մեկին:

Մենք որևէ պատճառ չենք տեսնում նշելու այս դրվագը հեթանոս թագավորի պատմության մեջ, բացի միայն հեթանոսների ժամանակների անկմանն ու տևողությանն կանխատեսելու համար: Փաստն այն է, որ նրա անկման յոթ տարիները ճշգրիտ արտացոլում են մարդկության անկումը; Նույնպես փաստ է, որ Աստված խոստացել է վերականգնել երկրային իշխանությունը, երբ մարդկությունը սովորի որոշ մեծ դասեր, երրորդ փաստն այն է, որ յոթ խորհրդանշական «Հեթանոսների ժամանակները» (2520 տարի) կավարտվեն հենց այն պահին, երբ մարդկությունը կհասկանա իր անկումը և իր ներկայիս անկարողությունը աշխարհը իր իսկ բարօրության համար կառավարելու հարցում, և կպատրաստվի Աստծո արքայությանն ու տիրապետությանը: Եվ այս պատկերավոր համապատասխանությունը հանգեցնում է համոզման, որ Նաբուգոդոնոսորի յոթ

տարիները (չնայած դրանք անձամբ նա ապրեց) ունեցել են ավելի մեծ և լայն նշանակություն՝ ծառայելով որպես հեթանոսական տիրապետության յոթ խորհրդանշական ժամանակների նախատիպ, որոնց նա ներկայացնում էր:

Նաբուգոդոնոսորի անկման համար հստակ ամսաթիվ չի նշվում, և դրա կարիքը չկա, քանի որ Նրա անկման շրջանը խորհրդանշում էր հեթանոսական տիրապետության ողջ ժամանակաշրջանը, որը սկսվեց այն ժամանակ, երբ Սեդեկիայից վերցվեց Աստծո տիպական թագավորության թագը: Այն սկզբից ի վեր գազանային էր, և Նրա ժամանակները հաշված են. Նրա սահմանները դրված են Եհովայի կողմից և չեն կարող անցնել:

Ինչ ոգեշնչող է մեր աչքի առաջ գտնվող այս յոթ ժամանակների ավարտի հեռանկարը: Դաժան հեթանոսական ուժերը այլևս չեն ունիզի, չեն ճնշի և չեն մոլորեցնի ո՛չ Իսրայելին, ո՛չ էլ մարդկային աշխարհին, որը ներկայացվում է այս ազգով: Այնժամ Աստծո ու Նրա Զրիստոսի Թագավորությունը հաստատվելու է երկրի վրա, և Իսրայելն ու ողջ աշխարհը օրհնվելու են Նրա արդար ու ճշմարիտ իշխանության ներքո: Այնժամ խոստման ու հույսի արմատը, որը առաջին անգամ տնկվել էր Եդեմում (Ծննդ. 3:15), անցել էր Ջրհեղեղի միջով և կրկին տնկվել Իսրայելում՝ խորհրդանշական ազգում (Ծննդ. 12:1–3), կծիկ և կծաղկի մեկ անգամ ևս:

Այն սկսեց ծլել մեր Տիրոջ առաջին գալուստին, սակայն դեռ չի եկել նշանակված ժամանակը, որպեսզի ծաղկի և իր օրհնյալ պտուղը տա ամենայնի վերականգնման մեջ: Բայց հեթանոսների ժամանակների ավարտին գարնան հուսալի նշանների պակաս չի լինի, ամառային պտուղները առատ կլինեն, իսկ աշնանային բերքը փառավոր կլինի, հավաքված ուրախության համար գալիք փառքի անվերջ դարերի համար: Այնժամ երկրի սկզբնական տերը, վերականգնված բանականությամբ, ամբողջությամբ

կվերականգնվի՝ ավելացված գեղեցկությամբ ու փառքով, ինչպես օրինակայում էր, և կօրհնի, կբարձրացնի ու կպատվի երկնքի Թագավորին:

Մենք արդեն սկսում ենք տեսնել բանականության վերադարձը մարդկությանը. մարդիկ որոշ չափով արթնանում են՝ գիտակցելով իրենց սեփական անկումը և փնտրում են միջոցներ իրենց վիճակը բարելավելու համար. նրանք մտածում, պլանավորում և աշխատում են ավելի լավ պայմանների համար, քան այն, որոնց մեջ հայտնվել էին գազանների իշխանության տակ: Բայց մինչ նրանք կհասնեն ճանաչելու Աստծուն և Նրա տիրապետությունը ամենայնի վրա, նրանք կհանդիպեն ևս մեկ սարսափելի խելագարության նոպայի, որի պայքարից հետո արթնանալու են թույլ, անօգնական և սպառված, սակայն խելքը նրանց այնքան վերականգնված կլինի, որ կճանաչեն և կխոնարհվեն նրա իշխանության առջև, ով գալիս է վերականգնելու երկար ժամանակ կորցրած առաջին տիրապետությունը՝ հիմնված բարու և չարի փորձառության և գիտության վրա:

Ճիշտ է, մեծ բաներ ենք սպասում, երբ պնդում ենք, որ առաջիկա քսանվեց տարիների ընթացքում բոլոր ներկա կառավարությունները կործանվելու և դադարելու են գործել, սակայն մենք ապրում ենք արտառոց և բացառիկ ժամանակներում՝ «Եհովայի օրում», երբ իրադարձությունները արագ են գազաթնակետին հասնում, և գրված է. «որովհետև Տերն անհապաղ և վճռական մի բան է անելու երկրի վրա» (Տես հատոր I, գլուխ XV.): Վերջին տասնմեկ տարիների ընթացքում այս բաները քարոզվել և հրատարակվել են հիմնականում վերոհիշյալ ձևով, և այդ կարճ ժամանակահատվածում աշխարհի ամենահզոր կայսրությունների թուլացման և տապալման ուղղությամբ ազդեցությունների ու գործոնների զարգացումը զարմանալի է եղել: Այդ ժամանակ

կոմունիզմը, սոցիալիզմը և նիհիլիզմը ուժգին կերպով ի հայտ եկան և արդեն մեծ անհանգստություն են առաջացնում երկրի իշխանների ու բարձր դիրքավորների մեջ, որոնց սրտերը վախից թուլանում են և երկրի վրա գալիք բաների տեսլականից, որովհետև ներկայիս իշխանությունները դողում են և վերջապես մեծ տագնապով կանցնեն:

Այս հստակ աստվածաշնչյան ապացույցների հիման վրա, որոնք վերաբերում են հեթանոսների ժամանակների, մենք այն համարում ենք հաստատված ճշմարտություն, որ այս աշխարհի թագավորությունների վերջնական ավարտը և Աստծո Թագավորության լիակատար հաստատումը երկրի վրա տեղի կունենան մոտավորապես 1915 թ. վերջին: Այնժամ Եկեղեցու աղոթքը, որը նրա Տիրոջ հեռանալուց ի վեր հնչում է՝ «Գա քո թագավորությունը», կպատասխանվի, և այդ իմաստուն ու արդար կառավարման տակ ամբողջ երկիրը կլցվի Տիրոջ փառքով՝ գիտությամբ, արդարությամբ և խաղաղությամբ (Սաղմոս. 72:19, Ես. 6:3, Ամբ. 2:14); և Աստծո կամքը կկատարվի «երկրի վրա, ինչպես որ երկնքում է»:

Դանիելի հայտարարությունը, որ Աստծո թագավորությունը կհիմնվի ոչ թե այն բանից հետո, երբ այս երկրային թագավորությունները կործանվեն, այլ հենց նրանց օրերում, երբ դրանք դեռ գոյություն ունեն և իշխանություն ունեն, և որ հենց Աստծո թագավորությունն է, որը կխփի և կկործանի այս բոլոր թագավորությունները (Դան. 2:44), արժանի է մեր հատուկ ուշադրության: Այսպես էր յուրաքանչյուր այս գազանանման կառավարության դեպքում. դրանք գոյություն ունեին դեռևս մինչև համընդհանուր տիրապետություն ձեռք բերելը. Բաբելոնը գոյություն ուներ շատ ավելի վաղ, քան նվաճեց Երուսաղեմը և ձեռք բերեց գերիշխանություն (Դան. 2:37, 38). Մարա-Պարսկաստանը գոյություն ուներ դեռ

Բաբելոնը նվաճելուց առաջ: Եվ այդպես էր բոլոր թագավորությունների դեպքում՝ նրանք նախ պետք է գոյություն ունենային և կուտակեին գերազանց ուժ, նախքան ուրիշներին նվաճելը: Այսպես է նաև Աստծո Թագավորության դեպքում. այն տասնութ դար գոյություն է ունեցել դեռևս ձևավորման փուլում, սակայն մարդկության մնացած մասի պես ենթարկվել է «գոյություն ունեցող իշխանություններին», որոնք «Աստծո կողմից են հաստատված»: Մինչ նրանց «յոթ ժամանակները» չավարտվեն, Աստծո Թագավորությունը չի կարող ստանձնել համընդհանուր իշխանություն: Այնուամենայնիվ, ինչպես մյուսները, այն պետք է ձեռք բերի բավարար գորություն՝ այս թագավորությունները տապալելու համար, նախքան դրանք ջախջախի:

Այսպիսով, «Եհովայի օրը», այսինքն՝ «նեղության օրը», մեր Տերը վերցնում է իր մեծ գորությունը (որը դեռ չի կիրառվել) և կթագավորի, և հենց սա է, որ կհանգեցնի խռովությանը, թեև աշխարհը դեռ մի որոշ ժամանակ չի հասկանա դա: Չի կարող որևէ կասկած լինել, որ սրբերը նույնպես կմասնակցեն ներկայիս թագավորությունների այս ջախջախմանը: Գրված է. «Նրանց թագավորներին կապեն շղթաներով և նրանց իշխաններին՝ երկաթե ոտնակապերով. Որպեսզի նրանց համար գրված դատավճիռը կատարեն. ահա սա է նրա բոլոր սրբերի փառքը» (Սաղմոս 149:8, 9): «Հաղթողին ու իմ գործերը մինչև վերջ պահողին ազգերի վրա իշխանություն պիտի տամ: Եվ նա կհովվի նրանց երկաթե գավազանով և կփշրի նրանց [կայսրություններին] բրուտի ամանի պես» (Հայտնություն 2:26,27, Սաղմոս 2:8,9):

Մեր ուսումնասիրությունը (նախորդ հատորում) Աստծո Թագավորության և երկրի գազանային թագավորությունների բնույթների միջև առկա հսկայական տարբերության վերաբերյալ օգնում է մեզ տեսնել նաև

պատերազմական մեթոդների տարբերությունը: Այս նվաճման և ոչնչացման մեթոդները արմատապես տարբեր կլինեն ցանկացած նախորդ մեթոդից, որով երբևէ ազգեր են տապալվել: Նա, ով այժմ ստանձնում է իր մեծ իշխանությունը թագավորելու, պատկերված է որպես այն մեկը (Հայտնություն 19:15), որի բերանից դուրս է գալիս սուր, «որով հարվածելու է ազգերին: Նա նրանց կիշխի երկաթե գավազանով»: Այս սուրը ճշմարտությունն է (Եփեսացիներ 6:17), և կենդանի սրբերը, ինչպես նաև աշխարհում շատերը, այժմ օգտագործվում են որպես Տիրոջ մարտիկներ մոլորության և չարիքի տապալման գործում: Բայց թող ոչ ոք շտապ եզրակացություն չանի, թե այստեղ խորհրդանշված է ազգերի խաղաղ դարձի գալը, քանի որ բազմաթիվ գրություններ, ինչպիսիք են Հայտնություն 11:17-18, Դանիել 12:1, Բ Թեսաղոնիկեցիներ 2:8, Սաղմոսներ 149 և 47, ուսուցանում են հակառակը:

Այսպիսով, մի զարմանաք, երբ հաջորդ գլուխներում մենք ներկայացնենք ապացույցներ, որ Աստծո Թագավորության հաստատումը արդեն սկսվել է, որ մարգարեությունում ցույց է տրվում, որ այն պետք է սկսի իշխանություն գործադրել մ.թ. 1878 թվականին, և որ «Ամենակալ Աստծո մեծ օրվա մարտը» (Հայտնություն 16:14), որը կավարտվի մ.թ. 1915 թվականին՝ երկրի ներկայիս կառավարման լիակատար տապալմամբ, արդեն սկսվել է: Չորքերի հավաքումը ակնհայտ է Աստծո խոսքից:

Եթե մեր տեսողությունը նախապաշարմունքով չի մթազնաձ, և եթե մենք ճիշտ ենք կարգավորել Աստվածաշնչի աստղադիտակը, ապա կարող ենք հստակ տեսնել «Տիրոջ օրում» նախատեսված բազմաթիվ իրադարձությունների բնույթը՝ որ մենք արդեն դրանց մեջ ենք և որ «Նրա բարկության Մեծ Օրը եկել է»:

Ճշմարտության սուրը, արդեն սրած, պետք է հարվածի յուրաքանչյուր չար համակարգի և սովորույթի՝

քաղաքացիական, սոցիալական և եկեղեցական: Ավելին, մենք տեսնում ենք, որ հարվածը սկսված է: Մտքի ազատությունն ու մարդու իրավունքները՝ քաղաքացիական և կրոնական, որոնք դարեր շարունակ անտեսվել են թագավորների, կայսրերի, պապերի, խորհուրդների, ավանդույթների և դավանանքների կողմից, այժմ գնահատվում և հաստատվում են ինչպես երբեք: Ներքին հակամարտությունը արդեն բորբոքվում է. շուտով այն կբռնկվի որպես կլանող կրակ, և մարդկային համակարգերն ու սխալները, որոնք դարեր շարունակ կապկպել են ճշմարտությունը և ճնշել հառաչող ստեղծածին, պետք է հալվեն դրա առջև: Այո, ճշմարտությունը և դրա լայնածավալ ու աճող գիտելիքը սուր է, որը ապշեցնում և ջարդում է տարբեր երկրների գլխավորներին (Սաղմոս 110:6): Սակայն ինչ օրհնություն է թաքնված այս տառապանքում: Այն կպատրաստի մարդկությանը ավելի լիովին գնահատելու արդարությունն ու ճշմարտությունը Արդարության Թագավորի իշխանության ներքո:

Երբ մարդիկ վերջապես կհասկանան, որ արդարությունը դրված է որպես կապարալար, իսկ ճշմարտությունը՝ որպես կշռաքար (Ես. 28:17), նրանք կհասկանան, որ միայն արդարության խիստ կանոններն են կարող ապահովել բոլորի ցանկալի օրհնությունները: Իրենց իսկ ճանապարհների և եսակենտրոնության տխուր պտուղների պատճառով ամբողջովին հուսահատված՝ նրանք ուրախությամբ կընդունեն և կենթարկվեն արդար կառավարությանը, որը վերցնում է վերահսկողությունը: Եվ, ինչպես գրված է. «Բոլոր ազգերի ցանկալիքը կգա» – Աստծո Թագավորությունը, Եհովայի Օծյալի ամբողջական և անսահմանափակ իշխանության տակ:

Մենք ապրում ենք, մենք բնակվում ենք
Մեծ ու սարսափելի ժամանակում:
Դարերից դարեր պատմող մի դարում,
Ապրելը հիասքանչ է:
Լսեք ազգերի դղրոյունը,
Երկաթը փշրվում է կավի հետ միասին:
Լսեք, ի՞նչ ձայն է լսվում: Սա ստեղծագործությունն է,
Որ հառաչում է դեպի լավ օրվան:
Տեսե՛ք մարգարեական ճշմարտության բացահայտումը:
Զգույշ եղեք և պահեք ձեր հագուստները սպիտակ:
Թող յուրաքանչյուր նյարդ ու մկան
Պատմեն դարերի մասին — պատմեն Աստծո մասին!

ԳԼՈՒԽ V

ՏԻՐՈՋ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՎ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԸ

Տիրոջ երկրորդ գալուստի բնույթի ներդաշնակությունը աստվածային ծրագրի մյուս առանձնահատկությունների հետ – Երբ և ինչպես եկեղեցին կտեսնի նրան – ինչպես և երբ Տիրոջ փառքը կբացահայտվի այնքան, որ ամեն մարմին տեսնի այն – Պարզապես հակասող թվացող հայտարարությունները ցույց են տրվում որպես ներդաշնակ – Նա գալիս է «Գողի նման» – Չի գա նկատելի ձևով – «Գոչունով» – «Ձայնով» – «Մեծ փողի ձայնով» – Նա կհայտնվի բոցավառ կրակով վրեժ առնելու – Այնուամենայնիվ, «Նա կգա նույն ձևով», ինչպես երկինք գնալիս – Այս ուղղությամբ ցուցադրված մարգարեական ժամանակի կարևորությունը – Ներկայիս նշանների ներդաշնակությունը:

Մեր ունեցած պատկերացումը հեթանոսների ժամանակների արագ ավարտի մասին և այն վստահությունը, որ եկեղեցու հույսի կատարելագործումը պետք է նախորդի դրանց ավարտին, միայն ավելի է սրում նրանց ախորժակը, ովքեր այժմ սպասում են Իսրայելի մխիթարությանը: Նմանները կծարավեն այն բոլոր տեղեկությունների համար, որոնք մեր Հայրը մարգարեների միջոցով տվել է «հունձքի», այս դարի ավարտի կամ փակման շրջանի, այսինքն՝ անվանական եկեղեցու կենդանի անդամների մեջ ցորենի ու որոմի տարանջատման և հաղթողների վերափոխման ժամանակի մասին, որպեսզի լինեն իրենց Տիրոջ և Գլխի հետ և նման լինեն նրան:

Այնուամենայնիվ, որպեսզի կարողանանք գնահատել մարգարեական ուսմունքի ամբողջական իմաստությունը այս խորապես գրավիչ հարցերի շուրջ, անփոխարինելի է,

որ մենք հստակ պատկերացում ունենանք թե՛ մեր Տիրոջ երկրորդ գալուստի նպատակի, և թե՛ այն ձևի մասին, որով Նա կհայտնվի: Մենք հույս ունենք, որ Առաջին հատորի ընթերցումը համոզել է բոլոր ընթերցողներին, որ Նրա գալու նպատակը Աստծո հետ հաշտեցնելն է աշխարհում յուրաքանչյուրին, ով «ցանկանում է» հաշտվել՝ առաջնորդման, ուսուցման և կարգապահության միջոցով, որը կոչվում է դատաստան և օրհնություն»: Ուստի, մինչև անցնել հնձի ժամանակի ուսումնասիրությանը և այլն, Տիրոջ գալուստի և հայտնության ձևը առավել կարևոր հարց է: Ուսումնասիրողը պետք է հստակ տարբերի նպատակը, երբ ուսումնասիրում է Տիրոջ վերադարձի ձևը, և նույնպես հստակ տարբերի երկուսն էլ, երբ անցնում է ժամանակի ուսումնասիրությանը: Սա անհրաժեշտ է կանխելու այն սխալ տեսակետները, որոնք արդեն արմատ են գցել շատերի մտքերում և հիմնված են մեր Տիրոջ գալուստի նպատակի ու ձևի վերաբերյալ կեղծ պատկերացումների վրա:

Հաստատուն բռնեք և պահեք մտքում արդեն ապացուցված այն փաստը, որ Աստծո ծրագիրը մի համահունչ ամբողջություն է, որը իրականացվում է Քրիստոսի միջոցով, և որ երկրորդ գալուստի գործը կապված է առաջինի գործի հետ որպես հետևանքային պատճառ: Այսինքն՝ երկրորդ գալուստի մեծ վերականգնման գործը հետևում է առաջին գալուստում կատարված փրկության գործին որպես տրամաբանական շարունակություն ըստ աստվածային ծրագրի: Ուստի Տիրոջ վերադարձը աշխարհի համար հույսի լուսաբաց է, փրկության միջոցով ապահովված օրհնությունների շնորհման ժամանակ, մինչդեռ Ավետարանական դարը ընդամենը միջանկյալ շրջան է, որի ընթացքում Քրիստոսի հարսնացուն ընտրվում է միանալու իր Տիրոջը մեծ վերականգնման գործում, որի համար Նա գալիս է:

Քրիստոսի Եկեղեցին, որը զարգացել է Ավետարանական դարում, հազարամյա դարաշրջանում վերականգնման մեծ գործում պետք է միանա իր Տիրոջը, ուստի Քրիստոսի առաջին գործը Նրա երկրորդ գալուստի ժամանակ պետք է լինի հավաքել իր ընտրյալ Եկեղեցին, որի մասին մարգարեն (Սաղմոս 50:5) ասում է այս խոսքերով՝ «Իմ սրբերին հավաքեցե՛ք ինձ մոտ, որոնք զոհով ուխտ են կապել ինձ հետ»։ Այս ժողովման կամ հնձման ժամանակը գտնվում է երկու դարաշրջանների համընկնող շրջանում։ Ինչպես կցուցադրվի, դա քառասուն տարվա ժամանակահատված է, որը և ավարտում է Ավետարանական դարաշրջանը, և սկիզբ է դնում Հազարամյա դարաշրջանին (Տես Հատոր I, Էջեր 219-221, 234-237; և «Դարերի քարտեզը»)։ Այս հունձքի շրջանը ոչ միայն իրականացնում է անունով Ավետարանական եկեղեցում ցորենի և որոմի առանձնացումը, ինչպես նաև ցորենի դասի ժողովումն ու փառավորումը, այլև պետք է կատարի որոմի այրումը (ոչնչացումը) (որպես որոմներ, կամ կեղծ ցորեն՝ ոչ որպես անհատներ։ Ոչնչացման կրակը խորհրդանշական է, ինչպես և խոտերը)։ և «երկրի խաղողների» անարժան բերքի հավաքումն ու ոչնչացումը (մարդկային ամբիցիան, ագահությունը և եսասիրությունը), որը դարերի ընթացքում աճել և հասունացել է այս աշխարհի թագավորություններում և մարդկության տարբեր քաղաքացիական ու սոցիալական կազմակերպություններում։

Չնայած մեր Տիրոջ վերադարձի նպատակի քննարկման ընթացքում մենք ցույց ենք տվել, որ դա անձնական գալուստ է լինելու, մենք կրկին կօգնենք ընթերցողին խուսափել սխալ ընկալումներից, երբ դիտարկում է մեր Տիրոջ երկու արտահայտությունները, որոնք առաջին հայացքից հակասական են թվում։ «Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերին մինչև աշխարհի վերջը» (aionos – դար), և «գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու... դարձեալ

կ'գամ եւ ձեզ ինձ մօտ կ'առնեմ» (Մատթեոս 28:20; Յովհաննէս 14:2, 3): Հետեւյալ օրինակը կծառայի որպէս այս երկու խոստումների միջև ներդաշնակության պատկերացում: Մեկ մարդ, բաժանվելիս, մյուսին ասում է. «Հիշի՛ր՝ ես քո ճանապարհորդության ողջ ընթացքում քեզ հետ կլինեմ»: Ինչպե՞ս: Իհարկե ոչ անձամբ, քանի որ նրանք նստել են հակառակ ուղղություններով դեպի հեռավոր նպատակակետեր ընթացող գնացքներում: Այդ խոսքի իմաստը այն էր, որ սիրով, մտքով և հոգատարությամբ նրանք անբաժանելի կլինեն: Նման, սակայն ավելի լիարժեք իմաստով, Տերը միշտ եղել է իր Եկեղեցու հետ. Իր աստվածային գործությունը թույլ է տվել Նրան հսկել, առաջնորդել և օգնել նրանց առաջինից մինչև վերջ: Բայց այժմ մենք քննարկում ենք ոչ թե մեր Տիրոջ ներկայությունը մեզ հետ այս խորհրդանշական իմաստով, այլ նրա երկրորդ անձնական ներկայության և հայտնության ձևը, «երբ գա փառավորվելու իր սրբերի և հիացմունքի արժանանալու բոլոր հավատացյալների մեջ»:

Սուրբ Գիրքը մեզ սովորեցնում է, որ Զրիստոս կրկին գալու է որ թագավորի, Որովհետև Զրիստոսը պետք է թագավորի, մինչև որ բոլոր թշնամիներին իր ոտքերի տակ դնի (բոլոր հակառակորդներին, ամեն ինչ, որը խոչընդոտ է հանդիսանում մեծ վերականգնմանը, որի համար Նա գալիս է), Վերջին թշնամին, որ կխափանվի, մահն է (Ա Կորնթ. 15: 25, 26), և Նա կթագավորի հազար տարի: Ուստի, ինչպես և սպասվում էր, մենք մարգարեություններում գտնում ենք շատ ավելի մեծ հատված, նվիրված երկրորդ գալստին և նրա հազարամյա հաղթական թագավորությանը և չարի ջախջախմանը, քան առաջին գալստի երեսունչորս տարիներին, որոնք նվիրված էին փրկությանը: Մենք տեսանք, որ մարգարեությունները անդրադառնում են այդ երեսունչորս տարիների տարբեր նշանակալի կողմերին՝ Բեթլեհեմից և Նազարեթից մինչև դառնությունն ու քաջախը, հազուստների բաժանումը,

խաչը, գերեզմանը և հարություն առնելը: Ինչպես նաև մարգարեությունը անդրադառնում է երկրորդ ներկայության հազարամյակի տարբեր հանգրվաններին, մասնավորապես դրանց սկզբին և ավարտին:

Մեր Տիրոջ երկրորդ ներկայությունը զգալիորեն ավելի երկար ժամանակ կընդգրկի, քան առաջինը: Նրա առաջին գալուստի առաքելությունը կատարվեց երեսուներես տարուց պակաս ժամանակում, մինչդեռ Նրա երկրորդ ներկայության համար նախատեսված գործը ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է հազար տարի: Ուստի առաջին հայացքից պարզ է, որ, թեև առաջին գալուստի գործը ոչ պակաս կարևոր էր, քան երկրորդի գործը (իրականում այն այնքան կարևոր էր, որ առանց դրա երկրորդ գալուստի գործը երբեք հնարավոր չէր լինի), այն այնքան բազմազան չէր և, հետևաբար, պահանջում էր ավելի քիչ նկարագրություն, քան երկրորդ գալուստի գործը:

Երկրորդ գալուստը քննարկելիս չպետք է, ինչպես առաջին գալուստի դեպքում, ակնկալենք, որ բոլոր մարգարեությունները նշանավորեն մեր Տիրոջ ժամանման որևէ առանձնապես իրադարձային պահ և բոլոր մարդկանց ուշադրությունը հրավիրեն Նրա ներկայության վրա: Դա Աստծո սովորական մեթոդը չէ. առաջին գալուստի դեպքում էլ այդպես չէր: Մեսիայի առաջին գալուստը նշանավորված չէր որևէ հանկարծակի կամ զարմանալի դրսևորմամբ, որը դուրս լիներ սովորական կարգից, այլ այն հայտնվեց և ապացուցվեց մարգարեությունների աստիճանական կատարմամբ, որը մտածող դիտորդներին ցույց էր տալիս, որ սպասվող իրադարձությունները ժամանակին իրականանում են: Եվ այդպես կլինի Նրա երկրորդ գալուստին: Նրա ժամանման ճշգրիտ պահը նշելը պակաս կարևոր է, քան Նրա ներկայությունը ճանաչելը, երբ Նա արդեն եկել է — ինչպես առաջին գալուստի ժամանակ կարևոր էր ճանաչել Նրա ներկայությունը (և

որքան շուտ, այնքան լավ), մինչդեռ Նրա ծննդյան ճշգրիտ օրը իմանալը երկրորդական կարևորություն ուներ: Երկրորդ գալուստի մասին մտածելիս մարդիկ շատ հաճախ կենտրոնանում են հենց գալուստի գործողության և ժամանումի պահի վրա, մինչդեռ պետք է այն պատկերացնեն որպես ներկայության մի շրջան՝ ինչպես եղավ Առաջին գալուստի դեպքում: Այդ դեպքում ներկայության սկսվելու ճշգրիտ պահը թվա պակաս կարևոր, իսկ Նրա ներկայության ողջ շրջանում Նրա նպատակն ու գործը կստանան ավելի մեծ ուշադրություն:

Պետք է հիշենք նաև, որ մեր Տերը այլևս մարդ չէ, որպես մարդ նա իրեն տվեց որպես փրկանք մարդկանց համար, հենց այդ նպատակով մարդ դառնալով (Ա Տիմ. 2:6, Եբր. 10:4,5, Ա Կորնթ. 15:21,22): Նա այժմ բարձրացված է աստվածային բնության մեջ: Ուստի Պողոսն ասաց. «թեև Զրիստոսին էլ գիտեինք մարմնի կողմանէ, այլ հիմա այլ եւս չ'գիտենք» (Բ Կորնթ. 5:16): Նա մեռելներից հարություն առավ որպես կենդանարար հոգեղեն Էակ (Ա Կոր. 15:45), և ոչ թե որպես երկրի վրա հողեղեն մարդ: Նա այլևս ոչ մի իմաստով կամ աստիճանով մարդկային չէ, քանի որ չպետք է մոռանանք այն, ինչ սովորել ենք (տես հատոր I, գլուխ 10) – որ բնությունները տարբեր և անջատ են: Քանի որ նա այլևս ոչ մի իմաստով կամ աստիճանով մարդկային Էակ չէ, չպետք է սպասենք, որ նա կրկին կգա որպես մարդ, ինչպես առաջին գալստին: Նրա երկրորդ գալուստը լինելու է այլ կերպ, ինչպես նաև այլ նպատակով:

Նկատելով այն փաստը, որ մեր Տիրոջ մարդկային բնույթից աստվածային բնույթի վերափոխումը Նրա հարության ժամանակ ավելի մեծ փոփոխություն էր, քան այն, որը տեղի էր ունեցել մոտ երեսուկչորս տարի առաջ, երբ նա հանել էր հոգևոր գոյության փառքը և «մարմին առավ», մենք մեծ օգուտով կարող ենք մանրակրկիտ ուսումնասիրել Նրա յուրաքանչյուր գործողությունը

հարությունից հետո անցած քառասուն օրերի ընթացքում, մինչև նա գնաց «Հոր մոտ», որովհետև հենց այդ քառասուն օրերի հարություն առած Հիսուսն է, որ կրկին գալու է, և ոչ թե մարդ՝ Քրիստոս Հիսուսը, ով իր մահով մեզ փրկագին տվեց: Նա, ով մարմնավոր էակի պես սպանվեց, իր հարության մեջ [կենդանացվեց]. որպես հոգեղեն էակ (Ա Պետրոս 3:18):⁸ Նրա երկրորդ գալուստին Նա չի գալիս ենթարկվելու գոյություն ունեցող իշխանություններին, կայսրին՝ հարկ վճարելու կամ նվաստացում, անարդարություն և բռնություն կրելու, այլ գալիս է թագավորելու՝ երկնքում և երկրի վրա ամբողջ իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելով: Նա չի գալիս իր խոնարհեցման մարմնով՝ այն մարդկային մարմնով, որը Նա ստանձնել էր մահը կրելու համար –մարմին, որը ստորադաս էր Նրա նախկին փառավոր մարմնին (Եբր. 2:9) – այլ գալիս է իր փառավոր, հոգևոր մարմնով, որը «Նրա [Հոր] փառքի լույսն է և Նրա Էության արտահայտումը» (Եբր. 1:3): Զանգի իր մինչև մահ հնազանդության համար նա այժմ բարձրացված է աստվածային բնության և նմանության մեջ և ստացել է ամենանվիրական անունը՝ բացառությամբ միայն Հոր անվան (Ղուկ. 2:9; Ա Կորնթ. 15:27): Առաքյալը ցույց է տալիս, որ մեր մարդկային ըմբռնման համար դեռևս անհասանելի է, թե ինչպիսին է նա այժմ է. ուստի մենք չգիտենք, թե ինչպիսին կլինենք, երբ նմանվենք Նրան, սակայն մենք (Եկեղեցին) կարող ենք

⁸ Այս հատվածի հունարեն տեքստը ասում է՝ «Մահվան մատնվեց մարմինը, կենդանացավ հոգին»: Մեր Տերը մահվան մատնվեց որպես մարմնեղեն կամ մարդկային էակ, սակայն մեռելներից հարություն առավ որպես հոգեղեն էակ: Եվ քանի որ Եկեղեցին պետք է «փոխվի», որպեսզի նմանվի Քրիստոսին, ակնհայտ է, որ Գլխում տեղի ունեցած փոփոխությունը նույն բնույթի էր, ինչ այն, որը նկարագրվում է հաղթողների համար՝ Նրանք կփոխվեն մարդկայինից դեպի հոգեղեն բնություն:

ուրախանալ վստահությամբ, որ մի օր կլինենք Նրա հետ, նման կլինենք Նրան և կտեսնենք Նրան այնպիսին, ինչպիսին Նա կա (Ա Յովհ. 3:2) – ոչ այնպես, ինչպես Նա էր իր առաջին գալուստին խոնարհությամբ, երբ հանել էր իր Նախկին փառքը և մեր համար աղքատացել, որպեսզի մենք Նրա աղքատությամբ հարստանանք:

Եթե հաշվի առնենք մեր Տիրոջ իմաստությունն ու զգուշությունը՝ թե ինչպես Նա իր ներկայությունն է հայտնել իր աշակերտներին հարությանց հետո, ինչպես Նաև դրանից առաջ, Դա կարող է օգնել մեզ հիշել, որ Նույն իմաստությունը կդրսևորվի Նրա երկրորդ գալուստի ժամանակ ինքն իրեն հայտնելու մեթոդներում՝ և՛ Եկեղեցուն, և՛ աշխարհին—մեթոդներ, որոնք պարտադիր չեն նման լինել, սակայն յուրաքանչյուր դեպքում լավ հարմար են Նրա Նպատակին: Եվ Նրա Նպատակը երբեք մարդկանց վախեցնելը կամ հուզելը չէր, այլ միայն Նրանց հանգիստ, խաղաղ դատողություններին մեծ ճշմարտությունների վրա ուղղորդելն էր, որպեսզի դրանք իրենց վրա տպավորություն թողնեին: Մեր Տիրոջ առաջին գալուստը ոչ մի դեպքում ցնցող, հուզիչ կամ վախեցնող իրադարձություն չէր: Ի՞նչ հանդարտ ու խոնարհությամբ Նա եկավ: Այնքան, որ միայն հավատքով ու խոնարհությամբ օժտվածներն էին կարողանում ճանաչել խոնարհ ծննդով մանկանը, Տառապյալ Մարդուն, խոնարհների ու աղքատների բարեկամին և, վերջապես, Խաչվածին՝ որպես երկար սպասված Մեսիային:

Հարությունից հետո Նրա ներկայության դրսևորումը, իր բնույթով, անգամ ավելի զարմանալի փաստ կլիներ, հատկապես հաշվի առնելով Նրա փոխված բնույթը: Սակայն Նրա հարությունը, Նրա փոխված բնության փաստի հետ միասին, այդ ժամանակ դեռ Նախատեսված չէր ամբողջ աշխարհի համար լիովին ակնհայտ լինել, այլ միայն ընտրված մի քանի վկաների համար, որոնք ապագա

սերունդների համար հուսալի վկայություն կբերեին այս փաստի մասին: Եթե այդ ժամանակ ամբողջ աշխարհը տեղյակ լիներ այս փաստին, ապա մեզ հասած վկայությունը, հավանաբար, շատ ավելի քիչ վստահելի կլիներ, քանի որ այն մարդկային գաղափարներով այնքան զարդարված ու խեղաթյուրված, ավանդույթներով այնքան խառնված կլիներ, որ ճշմարտությունը գրեթե կամ ամբողջությամբ անհավանական կթվար: Բայց Աստված այն վստահեց միայն ընտրված, հավատարիմ և արժանի վկաներին: Եվ, դիմելով պատմագրությանը, թող յուրաքանչյուրը նկատի, թե որքան կատարյալ կերպով է նպատակը իրականացվել, և որքան հստակ, վերջնական և համոզիչ կերպով է նրանց ներկայացվել վկայությունը Զրիստոսի հարության և վերափոխման մասին: Նկատե՞ք նաև այն հոգատարությունը, որով Նա ջանում էր չանհանգստացնել կամ չզարմացնել նրանց անհարկի, երբ բացահայտում և ընդգծում էր այս մեծ ճշմարտությունները: Եվ վստահ եղե՞ք, որ Նույն իմաստությունը, զգուշությունը և հմտությունը կդրսևորվեն Նրա մեթոդներում, երբ հայտնի կդարձնի Իր փառավոր ներկայության փաստը Իր երկրորդ գալուստին: Սա անշուշտ համոզիչ կլինի ցանկացած հանդարտ, առողջ մտքի համար, թեև ողջ աշխարհին անհրաժեշտ կլինի խիստ ուսուցում՝ վկայությունը ընդունելու համար անհրաժեշտ ճիշտ մտավոր վիճակին հասնելու համար, մինչդեռ արդար սրտով մարդիկ այս օրինված գիտելիքը շուտ կհասկանան: Աշակերտները անմիջապես չստացան Նրա հարության և հոգեղեն բնությունն ստանալու բոլոր ապացույցները, այլ միայն այն ժամանակ, երբ կարողացան դրանք ընդունել, և այնպես, որպեսզի դա ամենախորը տպավորություն թողներ:

Մեր Տիրոջ ծառայության երեք ու կես տարիների ընթացքում Նրա աշակերտները զոհաբերել էին ընկերներին, հեղինակությունը, գործերը և այլն՝ իրենց ժամանակն ու Էներգիան նվիրաբերելու Մեսիայի

ներկայության քարոզչությանը և նրա արքայության հաստատմանը: Բայց նրանք անխուսափելիորեն ունեին անկատար պատկերացումներ իրենց Տիրոջ բարձրացման ձևի ու ժամանակի, ինչպես նաև նրա հետ խոստացված բարձրացման վերաբերյալ: Այդ ժամանակ ամբողջական գիտելիք ունենալն անհրաժեշտ չէր. նրանց համար բավական էր յուրաքանչյուր քայլ հավատարմորեն կատարել, երբ դրա պահը գալիս էր: Ուստի Վարդապետը նրանց քիչ-քիչ էր սովորեցնում՝ ըստ նրանց ընկալման կարողության: Իր ծառայության ավարտից քիչ առաջ Նա ասաց. «Դեռ շատ բան ունեմ ձեզ ասելու, բայց հիմա չեք կարող տանել»: Սակայն երբ նա՝ ճշմարտության Հոգին, գա, ձեզ կառաջնորդի դեպի ամբողջ ճշմարտությունը. որովհետև ինքն իրենից չի խոսի, այլ կասի, ինչ որ լսի. և գալիք բաների մասին կպատմի ձեզ» (Հովհաննես 16:12, 13, 14:26):

Անհնար է փոխանցել նրանց հիասթափության խորությունը (չնայած որ, որքան հնարավոր էր, նրանք դրա համար նախապատրաստված էին), երբ նրանք տեսան, թե որքան անսպասելիորեն Նրան վերցրին իրենցից և ամոթալի կերպով, ինչպես հանցագործի, խաչեցին – Նրան, որի արքայությունն ու փառքը նրանք սպասում և քարոզում էին, և որը, Նրա խաչելությունից ընդամենը հինգ օր առաջ, թվում էր այդքան մոտ իրականացմանը (Հովհաննես 12:1, 12–19): Չնայած նրանք գիտեին, որ նրան սուտ մեղադրանքով են դատապարտել և անիրավաբար խաչել, սակայն դա չէր փոխում այն փաստը, որ նրանց երկար տարիներ փայփայած ազգային հույսերը՝ իրեա թագավորի մասին, որը կվերականգներ իրենց ազգի ազդեցությունն ու իշխանությունը, ինչպես նաև նրանց անհատական ակնկալիքները, ձգտումները և թագավորությունում կարևոր պաշտոններ ու բարձր պատիվներ զբաղեցնելու մասին երազանքները, բոլորը հանկարծ փլուզվեցին իրենց

թագավորի խաչվելով առաջացած այս անբարենպաստ շրջադարձի հետևանքով:

Վարդապետը լավ գիտեր, թե որքան լքված, անօգնական ու շփոթված կգգային նրանք, որովհետև այսպես է գրված մարգարեի խոսքում. «Հովիւը կ'գարկեմ՝ եւ ոչխարները կ'ցրուին» (Չաքարիա 13:7, Մարկոս 14:27) Եվ իր հարության ու երկինք համբարձվելու միջև ընկած քառասուն օրերի ընթացքում նրա գլխավոր հոգածությունն էր նրանց կրկին հավաքելը և նրանց հավատքը իր նկատմամբ որպես երկար սպասված Մեսիա վերականգնելը՝ նրանց ապացուցելով իր հարության փաստը և այն, որ հարությունից հետո, թեև պահպանելով նույն անհատականությունը, նա այլևս մարդկային չէր, այլ բարձրացված հոգևոր էակ, որին «տրված է երկնքում և երկրի վրա ամեն իշխանություն» (Մատթեոս 28:18):

Նա աստիճանաբար հայտնեց նրանց իր հարության լուրը՝ առաջին հերթին կանանց միջոցով (Մարիամ Մագդաղենացին, Հովհաննան, Հակոբոսի մայր Մարիամը, Սալոմեն և նրանց հետ եղած մյուս կանայք՝ Մարկոս 16:1, Ղուկաս 24:1,10), որոնք վաղ առավոտյան եկան գերեզմանատուն՝ նրա մեռած մարմինը քաղցր բուրմունքներով օծելու համար: Մինչ նրանք զարմանում էին՝ ով կարող է գլորել գերեզմանի դռան քարը, ահա երկրաշարժ եղավ, և երբ նրանք եկան, տեսան, որ քարը գլորված է, և Տիրոջ հրեշտակը նստած է նրա վրա, ով նրանց ասաց. «Դուք մի՛ վախեցեք, գիտեմ, որ խաչված Հիսուսին եք փնտրում: Նա այստեղ չէ, որովհետև հարություն առավ, ինչպես ասել էր: Եկեք տեսե՛ք այն տեղը, որտեղ դրված էր: Իսկույն գնացե՛ք և նրա աշակերտներին ասե՛ք. Մեռելներից հարություն է առել և ահա ձեզանից առաջ Գալիլեա է գնում. այնտեղ նրան կտեսնեք» (Մատթեոս 28:5-7):

Հավանական է, որ Մարիամ Մագդաղենացին լքեց մյուս կանանց և վազեց Պետրոսին ու Հովհաննեսին հայտնելու (Հովհ. 20:1, 2), մինչդեռ մյուսները գնացին մնացած աշակերտներին պատմելու, և երբ նա հեռացավ նրանցից, Հիսուս ճանապարհին հայտնվեց մյուս կանանց, ասելով (Մատթ. 28:9,10) «Ողջույն ձեզ»: Եվ նրանք մոտեցան Նրան, փարվեցին նրա ոտքերին և երկրպագեցին նրան: Այդ ժամանակ Հիսուսը նրանց ասաց. «Մի՛ վախեցեք. գնացեք ասե՛ք իմ եղբայրներին, որ Չալիլեա գնան և այնտեղ ինձ կտեսնեն»: Վախով ու ուրախությամբ նրանք վազեցին պատմելու մյուս աշակերտներին: Իրենց խառը զգացմունքների՝ զարմանքի, շփոթության, ուրախության ու վախի, և ընդհանուր շփոթության մեջ նրանք հագիվ գիտեին, թե ինչպես պատմեն իրենց տարօրինակ ու հրաշալի փորձառությունը: Երբ Մարիամը հանդիպեց Պետրոսին ու Հովհաննեսին, նա տխրությամբ ասաց. «Տիրոջը գերեզմանից հանել են, և չգիտենք, թե ուր են դրել նրան» (Հովհաննես 20:2): Մյուս կանայք պատմեցին, թե ինչպես գերեզմանի մոտ տեսել էին հրեշտակների հայտնություն, որոնք ասել էին, որ նա կենդանի է (Ղուկաս 24:22,23), և հետո ինչպես ճանապարհին հանդիպեցին Տիրոջը (Մատթեոս 28:8,10):

Աշակերտների մեծամասնությունը, ըստ երևույթին, իրենց պատմությունը ընդամենը գերհավատական հուզմունք էր համարում, սակայն Պետրոսն ու Հովհաննեսը ասացին՝ «Մենք կգնանք և ինքներս կտեսնենք», և Մարիամը նրանց հետ վերադարձավ գերեզման: Պետրոսն ու Հովհաննեսը տեսան, որ մարմինը անհետացել է, գերեզմանի հանդերձանքները խնամքով ծալված ու դրված են, և քարը գլորված է դռնից: Հարցական տրամադրությամբ նրանք վերադարձան, իսկ Մարիամը մնաց այնտեղ՝ լաց էր լինում: Աչքերում արցունքներով նա թեքվեց դեպի գերեզմանը և տեսավ երկու հրեշտակներ, որոնք ասացին. «Կին, ինչո՞ւ ես լալիս»: Նա

պատասխանեց. «Նրանք տարել են իմ Տիրոջը, և ես չգիտեմ, թե որտեղ են նրան դրել»: Հետո, շրջվելով, նա տեսավ Հիսուսին, որը կանգնած էր իր առջև, սակայն նրան չճանաչեց: Նա հարցրեց. «Կին, ինչո՞ւ ես լալիս: Ո՞ւմ ես փնտրում»: Նա, կարծելով, որ նա պարտիզպանն է, պատասխանեց. «Տե՛ր, եթե դու ես նրան տարել, ասա ինձ, թե որտեղ ես նրան դրել, և ես կվերցնեմ նրան»: Այնուհետև, ծանոթ ձայնով, որը նա արագ ճանաչեց, Տերը ասաց. «Մարիամ»:

Դա բավական էր, որ նա հավատա հրեշտակի հայտնածին՝ որ նա հարություն է առել, ինչը մինչ այդ թվում էր երազի կամ դատարկ առասպելի պես; և ուրախությունից նա գոչեց. «Տե՛ր»: Նրա առաջին մղումը գրկել նրան և մնալ նրա ներկայության մեջ: Բայց Հիսուս նրբորեն հայտնեց նրան, որ այժմ նրա համար շատ կարևոր առաքելություն կա՝ վկայելու իր հարության փաստին, և որ նա պետք է շտապի հաղորդելու այս լուրը և ամրապնդելու մյուս աշակերտների հավատքը, որոնք դեռ շփոթության և անորոշության մեջ էին, ասելով, «Մի՛ դիպչիր ինձ [հուևարեն՝ haptomai, գրկել], որովհետև դեռ չեմ բարձրացել իմ Հոր մոտ [մի փոքր ժամանակ ևս կլինեմ ձեզ հետ]. այլ գնա իմ եղբայրների մոտ և ասա նրանց. «Ես բարձրանում եմ իմ Հոր մոտ, և ձեր Հոր մոտ, իմ Աստծո մոտ, և ձեր Աստծո մոտ»:» (Հովհաննես 20:17) Մյուս կանանց միջոցով էլ նա նրանց ուղարկել էր լուր, որ Գալիլիայում կհանդիպի նրանց:

Այնուհետև նա հասավ Երուսաղեմից դեպի Էմաուս քայլող երկու տիսուր ու շփոթված աշակերտներին և հետաքրքրվեց նրանց տխրության ու հուսահատության պատճառով: (Դուկաս 24:13-35) Եվ նրանցից մեկը պատասխանեց. «Դու միայն օտար ես Երուսաղեմում և չգիտե՞ս, որ այս օրերին այնտեղ տեղի են ունեցել այս իրադարձությունները:» Եվ նա նրանց ասաց. «Ի՞նչ

իրադարձություններ»։ Եվ նրանք ասացին նրան. «Նազարեթցի Ջիսուսի մասին, որը մարգարե էր, հզոր գործերում և խոսքում Աստծո առաջ և ամբողջ ժողովրդի առաջ. և թե ինչպես գերագույն քահանաներն ու մեր իշխանները մատնեցին նրան դատապարտվելու մահվան և խաչեցին նրան. Բայց մենք հույս ունեինք, որ նա է, ով պետք է փրկեր Իսրայելին. և բացի այս ամենից, այսօր երրորդ օրն է, որ այս բաները կատարվել են. [այստեղ նրանք, հավանաբար, նկատի ունեին Յովհաննես 2:19, 21, 22-ը]։ «Սակայն մեր միջից մի քանի կանայք էլ, որ վաղ առավոտյան գերեզման էին գնացել, մեզ զարմացրին։ Նրա մարմինը չգտնելով՝ եկան ու ասացին, որ հրեշտակների տեսիլք են տեսել, որոնք ասում էին, թե նա ողջ է։ 24 Մեզանից ոմանք գերեզման գնացին և հենց այնպես գտան, ինչպես որ ասել էին կանայք, բայց նրան չտեսան»։

Չարմանալի չէ, որ նրանք շփոթված էին։ Ի՞նչ տարօրինակ էր թվում ամեն ինչը։ Ի՞նչ արտասովոր և հուզիչ էին վերջին օրերի իրադարձությունները։

Այնուհետև ճանապարհորդը նրանց ուղղեց ոգեշնչող քարոզ, որը հիմնված էր մարգարեությունների վրա։

Նա ցույց տվեց նրանց, որ հենց այն իրադարձությունները, որոնք նրանց այդքան հուսահատության մեջ էին գցել, մարգարեական կանխատեսումներ էին իսկական Մեսիայի մասին. մինչ Նա կարողանար թագավորել, օրհնել և բարձրացնել Իսրայելին ու ողջ աշխարհին, Նա պետք է Իր կյանքով փրկեր նրանց Ադամի միջոցով բոլորի վրա ընկած մահվան անեծքից։ Եվ միայն այդժամ նրանց Ուսուցիչը, հարություն առնելով և Տիրոջ փառքով բարձրացվելով, կկատարեր այն ամենը, ինչ մարգարեներն էին գրել Նրա ապագա փառքի և պատվի մասին, ինչպես Նա կատարել էր մարգարեությունները, որոնք կանխագուշակում էին Նրա տառապանքը, խոնարհեցումը և մահը։ Ի՞նչ հիասքանչ քարոզիչ էր Նա։ Եվ ի՞նչ հիասքանչ քարոզ էր դա։

Սա նոր գաղափարների առիթ հանդիսացավ և բացեց նոր ակնկալիքներ ու հույսեր: Եվ երբ նրանք մոտեցան գյուղին, խնդրեցին Նրան մնալ իրենց հետ, քանի որ օրը մոտենում էր ավարտին: Նա մտավ և մնաց: Եվ երբ Նա ընթրում էր նրանց հետ, վերցրեց հացը, կոտրեց այն և տվեց նրանց: Այդժամ նրանց աչքերը բացվեցին, սակայն Նա անհետացավ նրանց տեսադաշտից:

Մինչ այդ պահը նրանք չէին ճանաչել Նրան, չնայած որ միասին քայլել, խոսել և ընթրել էին: Բայց ոչ Նրա դեմքն էր, որ նրանց հայտնեց, որ դա Նա է, այլ հացը օրհնելու և կոտրելու պարզ արարողությունը (հին, ծանոթ ձևով), և սա հաստատեց նրանց հավատը այն բանի նկատմամբ, ինչ նրանք արդեն լսել էին՝ որ Նա հարություն է առել և կրկին կհանդիպի նրանց հետ:

Այն երկու աշակերտները, զարմանքով ու ուրախությամբ լեցուն, անմիջապես ճանապարհ ընկան և վերադարձան Երուսաղեմ, ասելով միմյանց. «ՉԷ՞ որ մեր սրտերը մեր մեջ վառվում էին, երբ ճանապարհին մեզ հետ խոսում էր և Սուրբ Գիրքն էր մեզ բացատրում»: Երուսաղեմ հասնելով, նրանք գտան մյուսներին, որոնք նույնպես ուրախանում էին, ասելով. «Տերը իսկապես հարություն է առել և հայտնվել է Սիմոնին»: Եվ նրանք պատմեցին ճանապարհին տեղի ունեցածը և թե ինչպես ճանաչեցին Նրան, երբ Նա կոտրում էր հացը: Հավանական է, որ այդ երեկո գրեթե բոլորը հավաքվել էին այնտեղ՝ մոռանալով իրենց տները, գործերը և ամեն ինչ. Մարիամ Մագդաղենացին, արտասվելով ուրախությունից, ասաց՝ «Ես ճանաչեցի Նրան այն պահին, երբ Նա անունովս կանչեց ինձ: Դրանից առաջ չէի կարողանում հավատալ հրեշտակի խոսքերին Նրա հարության մասին»: Մյուս կանայք պատմեցին այն հրաշալի իրադարձությունը, որը տեղի էր ունեցել նրանց հետ այդ առավոտյան, և թե ինչպես էին ճանապարհին հանդիպել Նրան: Այնուհետև Սիմոնն իր

պատմությունը պատմեց: Եվ հիմա Եմմաուսից ևս երկու վկաներ էին ժամանել: Ինչ իրադարձություններով լի օր էր: Չարմանալի չէ, որ դրանից հետո նրանք ցանկացան ամեն շաբաթվա առաջին օրը հավաքվել՝ կրկին քննարկելու տեղի ունեցածը և թարմացնելու իրենց հիշողությունները Տիրոջ հարության այս հրաշալի իրադարձության բոլոր հանգամանքների վերաբերյալ: Դա նրանց սրտերը կրկին ու կրկին «ջերմացնում» էր:

Եվ երբ, հուզմունքով ու ուրախությամբ լեցուն, նրանք կրկին սերտ շրջանակով հավաքվեցին, պատմելով միմյանց, թե իրենց հետ ինչ էր պատահել, Տեր Հիսուսը հանկարծ կանգնեց նրանց մեջ (Ղուկաս 24:36–49) և ասաց. «Խաղաղություն ձեզ »: Նա ո՞րտեղից էր եկել: Այսպիսի յուրաքանչյուր ժողով գաղտնի էր անցկացվում փակ դռների ետևում՝ հրեաներից վախի պատճառով (Հովհաննես 20:19, 26), սակայն ահա տեղի ունեցավ անսպասելի հայտնություն առանց որևէ տեսանելի մոտեցման: Նրանք վախեցան, կարծելով, թե ոգի են տեսնում: Այնուհետև Նա հանգստացրեց նրանց, ասելով՝ մի վախեցեք, և ցույց տվեց իր ձեռքերն ու ոտքերը, ասելով. «Տեսե՛ք իմ ձեռքերն ու ոտքերը, որովհետև ես ինքս եմ. շոշափե՛ք ինձ ու տեսե՛ք, որովհետև ոգին մարմին ու ոսկորներ չունի. ինչպես տեսնում եք, ես ունեմ»: Եվ մինչ նրանք ուրախությունից դեռ չէին հավատում և զարմացած էին, նա նրանց ասաց. «Արդյո՞ք այստեղ ուտելիք ունեք»: Եվ նրանք նրան տվեցին մի կտոր խորոված ձուկ, և նա վերցրեց այն ու նրանց առաջ կերավ: Այնուհետև նա բացեց նրանց միտքը, նրանց ըմբռնման աչքերը և բացատրեց նրանց Գրքերը, ցույց տալով Օրենքից և Մարգարեներից, որ այս իրադարձությունները տեղի են ունեցել հենց այնպես, ինչպես մարգարեացվել էր: Բայց Թովմասը այնտեղ չէր (Հովհաննես 20:24), և երբ մյուս աշակերտները նրան ասացին, որ տեսել են Տիրոջը, նա չէր հավատում, ասելով. «Եթե նրա ձեռքերի վրա մեխերի նշանը չտեսնեմ

ու իմ մատը մեխերի տեղերը չդնեմ և իմ ձեռքը Նրա կողի մեջ չխրեմ, չեմ հավատա»:

Ութ օր անցավ առանց այլ դրսևորումների, և Նրանք հանգիստ ժամանակ ունեցան մտածելու և քննարկելու այդ հրաշալի օրվա փորձառությունները, երբ աշակերտները կրկին հավաքվեցին, ինչպես առաջին անգամ, և Հիսուս կանգնեց Նրանց մեջ, ինչպես առաջին երեկոյան, և ասաց. «Խաղաղություն ձեզ»: (Հովհաննես 20:26) Այս անգամ Թովմասը ներկա էր, և Տերը դիմեց Նրան՝ ասելով. «Բեր քո մատը այստեղ, եւ տես իմ ձեռքերը, եւ քո ձեռքը բեր եւ իմ կողը կոխիր, եւ մի լինիր անհավատ՝ այլ հավատացեալ»: Այսպես Նա ցույց տվեց, որ գիտեր, թե ինչ է Թովմասը ասել առանց որևէ մեկի պատմելու, և տվեց իր հարության այն ապացույցը, որը իրեն կհամոզեր. և ուրախությամբ Թովմասը պատասխանեց. «Ով իմ Տերը, եւ ով իմ Աստուածը»:

Դրանից հետո, մինչև Տիրոջ ներկայության հաջորդ դրսևորումը, անշուշտ, անցել էր բավական երկար ժամանակ, և գալիլիացի աշակերտները սկսեցին մտածել իրենց տան ու ապագայի մասին, և հիշելով կանանց միջոցով փոխանցված Տիրոջ խոսքը, որ Նա Նրանցից առաջ կգնա Գալիլիա, Նրանք գնացին այնտեղ: Հավանական է, որ ճանապարհորդության ընթացքում Տերը Նրանց հանդիպեց (ինչպես գրում է Մատթեոսը) մի լեռան վրա: Նրանք շփոթված էին: Նրանք այլևս չէին զգում այն մտերմությունը, որը Նախկինում ունեցել էին Նրա հետ: Թվում էր, որ խաչվելուց ի վեր Նա այլևս չույնը չէր, ինչ Նախկինում էր՝ անսովոր իրավիճակներում և վայրերում հայտնվում ու անհետանում էր: Նա այլևս չէր նմանվում «Մարդ Յիսուս Զրիստոսին» – այդ պատճառով էլ Մատթեոսն ասում է. «Եւ երբոր Նորան տեսան, երկրպագութիւն արին Նորան, բայց ոմանք երկմտեցին»: Նրանց հետ մի քանի խոսք փոխանակելուց հետո Տերը «անտեսանելի դարձավ»

Նրանց համար և թողեց Նրանց զարմանալ, թե ինչ է լինելու հետո: Գալիլիա վերադառնալուց հետո որոշ ժամանակ ոչ մի արտասովոր բան տեղի չունեցավ, և այլևս որևէ նշան չկար Տիրոջ ներկայության մասին: Անշուշտ, Նրանք հավաքվում էին, քննարկում իրավիճակը և զարմանում, թե ինչու նա Նրանց ավելի հաճախ չի հայտնվում:

Իսկ Նրանք սպասում էին, օրերն ու շաբաթները երկար էին թվում: Նրանք վաղուց արդեն հրաժարվել էին կյանքի սովորական զբաղմունքներից, որպեսզի Տիրոջ հետ գնան մի վայրից մյուսը, սովորեն Նրանից և ուրիշներին քարոզեն. «Աստծո արքայությունը մոտ է» (Մատթեոս 10:5-7): Նրանք այլևս չէին ցանկանում վերադառնալ իրենց Նախկին զբաղմունքներին, բայց ինչպես պետք է շարժվեին Տիրոջ գործում: Նրանք բավականաչափ պարզ գիտակցում էին իրավիճակը, որ այլևս չեն կարողանում, ինչպես Նախկինում, քարոզել մոտեցող արքայությունը, քանի որ բոլորը գիտեին, որ իրենց Տերն ու Թագավորը խաչվել է, և միայն Նրանք գիտեին Նրա հարության մասին: Մինչ բոլոր տասնմեկն էլ այսպես շփոթված ու անհանգիստ էին, սպասելով ինչ-որ բանի, թե ինչ՝ չգիտեին, Պետրոսը ասաց. «Ես գնում եմ ձուկ բռնելու.(վերադառնամ իմ հին մասնագիտությանը) Նորան ասեցին. (վեցը մյուսներից ասացին) «Մենք էլ գանք քեզ հետ» (Յովհ. 21:3): Եվ, հավանաբար, մնացածներն էլ վերադարձան իրենց հին զբաղմունքներին:

Ով կարող է կասկածել, որ Տերը անտեսանելիորեն ներկա էր Նրանց հետ բազմիցս իրենց զրույցների ընթացքում, հարթելով ճանապարհը և ուղղորդելով իրադարձությունների ընթացքը և այլն՝ Նրանց վերջնական բարօրության համար: Եթե Նրանք մեծ հաջողության հասնեին և աշխարհիկ գործերով տարված լինեին, շուտով պարզ կլիներ, որ Նրանք բարձր ծառայության համար պիտանի չեն; իսկ եթե ձախողվեին, դա կհամարվեր

հարկադրանքի ձև: Այդ պատճառով Տերը որդեգրեց մի ծրագիր, որը Նրանց սովորեցրեց այն դասը, որը Նա հաճախ է տալիս Իր հետևորդներին՝ որ Նա, կարող է վերահսկել իրենց ջանքերի հաջողությունն ու ձախողումը ցանկացած ուղղությամբ:

Հին ձկնորսների ընկերությունը վերակազմավորվեց. Նրանք հավաքեցին իրենց նավակները, ցանցերը և այլն և դուրս եկան առաջին օրսի. բայց ամբողջ գիշեր աշխատեցին և ոչ մի ձուկ չբռնեցին, ու սկսեցին հուսահատվել. առավոտյան ափին կանգնած մի անծանոթ մարդ կանչեց Նրանց՝ իմանալու իրենց հաջողության մասին. ոչինչ չենք բռնել, – պատասխանեցին Նրանք. Փորձեք Նորից – ասաց անծանոթը. Հիմա գցեք ձեր ցանցը նավակի մյուս կողմում. Չի ստացվի, անծանոթ, մենք ամբողջ գիշեր երկու կողմերն էլ փորձել ենք, և եթե ձուկ լիներ մեկ կողմում, կլիներ նաև մյուսում: Սակայն մենք կրկին կփորձենք, որ տեսնեք: Նրանք այդպես էլ արեցին և ստացան հսկայական բռնած ձուկ: Ի՞նչ տարօրինակ է, – ասացին ոմանք, – բայց արագաշարժ ու հուզվող Հովհաննեսը միանգամից ճիշտ գաղափար ստացավ և ասաց. Եղբայրներ, միայն Տերը կարող էր սա անել: Չե՞ք հիշում բազմության կերակրումը և այլն: Դա Տերն է, և սա ևս մեկ ճանապարհ է, որով Նա ընտրել է իրեն մեզ հայտնել: Չե՞ք հիշում, որ հենց այդպես էր, երբ Տերը առաջին անգամ կանչեց մեզ: Այն ժամանակ էլ մենք ամբողջ գիշեր աշխատել էինք և ոչինչ չէինք բռնել, մինչև Նա մեզ կանչեց՝ ասելով. «Նաև դեպի խորը տար, եւ ձեր ուռկանները գցեցեք օրսի» (Ղուկաս 5:4-11): Այո, անշուշտ, դա Տերն է, սակայն Նրա հարությունից ի վեր մենք Նրան արտաքինով չենք կարող ճանաչել: Նա այժմ հայտնվում է տարբեր կերպարանքներով, սակայն յուրաքանչյուր անգամ մենք գիտակցում ենք, որ դա Նա է՝ այսպիսի առանձնահատուկ հանգամանքների շնորհիվ, որոնք հիշեցնում են մեր անցյալ ծանոթության օրն և նշանավոր դեպք:

Եվ երբ նրանք ափ հասան, պարզեցին, որ Հիսուսի մոտ ոչ միայն ձուկ, այլ հաց էլ կա, և նրանք սովորեցին դասը, որ նրա առաջնորդությամբ, հոգատարությամբ և ծառայության մեջ նրանք սովամահ չեն մնա: (Դուկաս 12:29,30) Նրանք նրան չհարցրին՝ արդյոք նա Տերն է, որովհետև այս, ինչպես և այլ առիթներով, նրանց ըմբռնման աչքերը բացվել էին, և նրանք ճանաչեցին նրան ոչ թե մարմնական տեսողությամբ, այլ հրաշքի շնորհիվ: Այնուհետև հաջորդեցին այդ հաճելի ժամի հրահանգները, որոնք վստահեցրին Պետրոսին, որ չնայած Տիրոջը հերքելուն՝ նա շարունակում է ընդունված մնալ, ինչի համար Պետրոսը զոջաց ու լաց եղավ: Նա այժմ նորից ճանաչեց իր Տիրոջ սերը և շարունակական արտոնությունը՝ հովվել ոչխարներին ու գառներին: Թվում է, թե մենք լսում ենք, ինչպես Տերը ասում է. «Պետք չէ, Պետրոս, վերադառնալ ձկնորսությանդ. ես մի անգամ կանչեցի քեզ մարդկանց ձկնորս դառնալու, և, գիտենալով, որ քո սիրտը մնում է նույնքան նվիրված ու եռանդուն, ես վերականգնում եմ քո լիազորությունը որպես մարդկանց ձկնորսի»:

Եվ նորանց միասին ժողովուած ժամանակը, պատուեր էր տալիս նորանց՝ Երուսաղեմիցը չ'հեռանալ, այլ սպասել Հօր անետիքին, որ՝ ասեց՝ ինձանից լսեցիք: Որովհետև Յովհաննեսը յիրաւի ջրով մկրտեց. բայց դուք Սուրբ Հոգով կ'մկրտուիք (Գործք 1:4,5): Այսպիսով նրանք, ինչպես հրահանգված էր, եկան Երուսաղեմ, և ահա, հարությանից քառասուն օր անց, նա վերջին անգամ հանդիպեց նրանց և խոսեց նրանց հետ: Այս անգամ նրանք համարձակվեցին հարցնել նրան այն թագավորության մասին, որը նա խոստացել էր նրանց, ասելով. «Տեր, այս ժամանակո՞ւմն ես կանգնեցնում Իսրայելի թագաւորութիւնը»: Թագավորության այս գաղափարը ամենահետաքրքրողն էր յուրաքանչյուր հրեայի մտքում: Նրանք հասկանում էին, որ Իսրայելը պետք է լինի Մեսիայի օրոք ազգերի մեջ

գերագույնը, և նրանք դեռ չէին գիտակցում հեթանոսների երկար ժամանակների մասին, և դեռ չէին տեսնում, որ գլխավոր օրհնությունը վերցվել է մարմնեղեն Իսրայելից (Մատթ. 21:43, Յոհ. 11:7), և որ նրանք պետք է լինեին նոր (հոգևոր) Իսրայելի՝ թագավորական քահանայության և սուրբ ազգի անդամներ, որոնց միջոցով, որպես Քրիստոսի մարմին, աշխարհին օրհնություն կհասներ: Նրանք այդ բոլոր բաներից դեռ ոչինչ չէին հասկանում: Ինչպե՞ս կարող էին նրանք դա հասկանալ: Նրանք դեռ չէին ստացել որդեգրության Սուրբ Հոգին, այլ դեռ մնում էին դատապարտման տակ, քանի որ, թեև փրկչի քավիչ զոհը մատուցվել էր, այն դեռ պաշտոնապես չէր ներկայացվել նրանց համար Սրբությունների Սրբությունում, հենց երկնքում (Հովհ. 7:39): Ուստի մեր Տերը նրանց հարցին որևէ բացատրություն չտվեց, այլ պարզապես ասաց՝ «Ձեր բանը չէ գիտենալ ժամերը եւ ժամանակները, որ Հայրն իր իշխանությունումը դրաւ: Բայց դուք զօրութիւն⁹ կ'առնեք՝ երբոր Հոգին ձեզ վերայ կ'գայ, եւ իմ վկաները կ'լինիք Երուսաղէմումը եւ բոլոր Հրեաստանի եւ Սամարիայի մէջ մինչեւ երկրի ծայրերը» (Գործք 1:7, 8):

Երբ նրանք հասան Ձիթենյաց լեռը, Տերը, ով քայլում էր նրանց հետ, բարձրացրեց իր ձեռքերը և օրհնեց նրանց, ապա սկսեց հեռանալ և բարձրանալ, մինչև որ ամպը ծածկեց Նրան նրանց տեսադաշտից (Ղուկաս 24:48–52, Գործք 1:6–15): Հիմա Աստծո ծրագիրը նրանց համար

⁹ Այս խոստացված զորությունը՝ ժամերն ու ժամանակները ճանաչելու և հասկանալու, ինչպես նաև ճիշտ վկայության առնչությամբ ամեն բան իմանալու համար, վերաբերում է ամբողջ Եկեղեցուն, և Սուրբ Հոգու առաջնորդությամբ ու զորությամբ՝ ծրագրի յուրաքանչյուր առանձնահատկության համար ժամանակին տրվում է համապատասխան սնունդ, որպեսզի մենք կարողանանք լինել Նրա վկաները մինչև այս դարի ավարտը (Հովհ. 16:12, 13):

ավելի պարզ դարձավ: Տերը, ով իջել էր երկնքից, վերադարձավ Հոր մոտ, ինչպես մահվանից առաջ էր ասել՝ գնաց նրանց համար տեղ պատրաստելու և կրկին գալու էր նրանց ընդունելու, նա մեկնեց հեռավոր երկիր՝ ստանալու խոստացված թագավորությունը և վերադառնալու (Ղուկաս 19:12). և այդ ընթացքում նրանք պետք է լինեին նրա վկաները ողջ աշխարհում՝ կանչելու և պատրաստելու ժողովուրդ, որը կընդուներ նրան, երբ նա գա փառավորվելու իր սրբերի մեջ և թագավորելու որպես թագավորների Թագավոր և տերերի Տեր: Նրանք հասկացան, որ իրենց նոր առաքելությունն է ամեն արարածին քարոզել Թագավորի մասին, որը գալիս է երկնքից «երկնքում և երկրի վրա ամբողջ իշխանությամբ»: որպես շատ ավելի կարևոր գործ, քան նախորդ տարիների գործը, երբ նրանք քարոզում էին «Մարդ՝ Քրիստոս Հիսուսին» և հետևում նրան, ով «արհամարհված և մերժված էր մարդկանց կողմից»:

Նրանք հասկացան, որ այս գործը շատ ավելի կարևոր է, քան այն, ինչ նրանք կատարել էին նախորդ տարիներին, երբ քարոզում էին «մարդ Յիսուս Քրիստոսին» և հետևում նրան, ով «արհամարհված և մերժված էր մարդկանց կողմից»: Նրանց հարություն առած Տերը իսկապես փոխվել էր՝ ոչ միայն իր արտաքինով (երբեմն հայտնվելով մեկ ձևով ու մեկ տեղում, ապա մեկ այլ ձևով ու մեկ այլ տեղում ցուցադրելով իր «իր ամբողջ զորությունը»), այլև իր վիճակով կամ բնությունով: Նա այլևս հրեաներին չէր դիմում և նրանց չէր հայտնվում, որովհետև հարությունից հետո նրան ոչ ոք (բառի որևէ իմաստով) չէր տեսել նրան, բացի իր ընկերներից ու հետևորդներից: Այսպես հաստատվեցին նրա խոսքերը՝ «Մի փոքր ժամանակ էլ, եւ աշխարհքն էլ չի տեսնիլ ինձ»:

Այսպիսով՝ առաքյալների և վաղ եկեղեցու հավատքը հիմնված էր Տիրոջ հարության փաստի վրա: Նրանց

կասկածները ցրվեծին և նրանց սրտերը լցվեցին ուրախությամբ: Նրանք վերադարձան Երուսաղեմ և նվիրվեցին աղոթքին, աղերսանքին և Սուրբ Գրքերի ուսումնասիրությանը, սպասելով Յոր խոստացած որդեգրմանը և հոգևոր ըմբռնման ու հատուկ, հրաշագործ ուժի պարգևների շնորհմանը (Պենտեկոստի օրը), որպեսզի կարողանային համոզել իսկական իսրայելացիներին և հաստատեն Ավետարանական Եկեղեցին (Գործք 1:14, 2:1):

Չնայած մեր Տերը իր երկրորդ գալուստին չի հայտնագործի իր ներկայությունը նույն ձևով, ինչպես արեց հարությանց հետո անցած քառասուն օրերի ընթացքում, սակայն մենք ունենք նրա հավաստիացումը, որ «եղբայրները խավարում չեն լինի»: Ավելին՝ մենք կունենանք մի օգնություն, որը նրանք չէին կարող և չունեին այդ քառասուն օրերի ընթացքում, այն է՝ «վերեվից տրված զորությունը», որը կուղղորդի մեզ հասկանալու բոլոր այն ճշմարտությունները, որոնք պետք է հասկանանք, (որի համար ժամանակն է հասունացել) և, ինչպես խոստացվել է, ցույց կտա մեզ գալիք բաները: Ուստի պատշաճ ժամանակին մենք ամբողջական պատկերացում կունենանք նրա հայտնության ձևի, ժամանակի և ուղեկցող հանգամանքների մասին, որոնք, եթե ուշադիր հետևենք և նկատենք, ոչ պակաս համոզիչ կլինեն, քան այն վկայությունները, որոնք տրվեցին վաղ Եկեղեցուն մեր Տիրոջ հարության մասին, թեև դրանք այլ բնույթի են:

Անշուշտ, մեր Տերը, իր երկրորդ գալուստին, կարող էր մարդկային կերպարանք ստանալ և այդպես հայտնվել մարդկանց, ինչպես որ հայտնվեց իր աշակերտներին իր հարությանց հետո: Մենք դրանում վստահ ենք ոչ միայն այն պատճառով, որ Նա քառասուն օր մարդկային կերպարանքով երևաց, այլև այն պատճառով, որ նույնիսկ

դրանից առաջ հոգեղեն էակները ցույց էին տվել կարողություն մարմնավորվել և երևալ որպես մարդիկ՝ տարբեր կերպարանքներով: Բայց նման հայտնությունը անհամապատասխան կլիներ Աստծո ծրագրի ընդհանուր ուղղությանը, ինչպես նաև Սուրբ Գրություններում տրված ուղեցույցներին՝ Նրա հայտնության ձևի վերաբերյալ, ինչպես որ մենք կտեսնենք: Փոխարենը, Տիրոջ ծրագիրն այն է, որ Նրա հոգևոր թագավորությունը հաղորդակցվի, գործի և հայտնի իր ներկայությունն ու գործությունը մարդկային, երկրային տարրերի միջոցով: Ինչպես այս աշխարհի իշխան Սատանան, թեև մարդկանց կողմից անտեսանելի է, իր ոգով տիրապետվող և կառավարվող ենթակաների միջոցով լայն ազդեցություն է գործադրում աշխարհում, այնպես էլ խաղաղության Նոր Իշխան՝ Տերը, հիմնականում մարդկանց միջոցով կգործի, որոնք ենթարկվում են Նրան և որոնց վրա տիրապետում և կառավարում է Նրա հոգին, կգործի և կհայտնաբերի իր ներկայությունն ու գործությունը:

Մեր ֆիզիկական աչքերով տեսնելը և ֆիզիկական ականջներով լսելը չի սահմանափակում այն ամենը, ինչ կարելի է տեսնել և լսել: «Ոչ ոք երբեք չի տեսել Աստծուն», սակայն Աստծո բոլոր որդիները տեսել են Նրան, ճանաչել են Նրան և հաղորդակցվել են Նրա հետ (Հովհաննես 1:18, 5:37, 14:7): Մենք լսում ենք Աստծո կանչը՝ մեր «վերին կոչումը», լսում ենք մեր Հովվի ձայնը և անընդհատ նայում ենք Հիսուսին, տեսնում ենք մրցանակը՝ կյանքի պսակը, որը Նա խոստանում է – ոչ բնական տեսողությամբ և լսողությամբ, այլ մեր ըմբռնմամբ: Շատ ավելի թանկագին է մեր փառավորված Տիրոջ այն տեսիլքը (որը հայտնվում է մտքի և հավատքի աչքերին) որպես հոգեղեն, բարձրացված փառքի Թագավոր, մեր Փրկիչ և մեր Թագավոր, քան այն տեսիլքը, որը հայտնվեց մարմնական աչքին Պենտեկոստեից առաջ:

Մեր Տիրոջ համար անհրաժեշտ էր Հարությունից հետո այսպես հայտնվել իր աշակերտներին, սակայն Նրա Երկրորդ գալստյան ժամանակ նման անհրաժեշտություն չկա: Այդ ժամանակ Նրա նպատակը այլ կերպ ավելի լավ կծառայի: Իրականում, Նրա Երկրորդ գալստյան ժամանակ նման հայտնությունը միայն խոչընդոտ կլիներ այն նպատակին, որը պետք է այդ պահին իրականանա: Նա հարությունից հետո հայտնվեց իր աշակերտներին, որպեսզի համոզի նրանց, որ Մեռածը հավիտյան կենդանի է, և նրանք կարողանան դուրս գալ որպես Նրա հարության վկաներ (Ղուկաս 24:48), և որպեսզի նրանց վկայությունը ծառայի որպես ամուր հիմք ապագա սերունդների հավատքի համար: Զանի որ ոչ ոք չի կարող Աստծո կողմից ընդունվել (ստանալ որդեգրության Սուրբ Հոգին) առանց հավատքի Զրիստոսի հանդեպ, անհրաժեշտ դարձավ ոչ միայն այն ժամանակ աշակերտների, այլև բոլոր հետագա սերունդների համար, որ Նրա հարության և փոփոխության ապացույցները լինեն այնպիսին, որոնք բնական մարդիկ կարողանային ընկալել և գնահատել: Սուրբ Հոգով մասնակից դառնալուց և հոգևոր բաներ հասկանալուց հետո (տես Ա Կորնթ. 2:12-16) նրանք կարող էին հավատալ գերեզմանի մոտ գտնվող հրեշտակներին, որ Նա հարություն է առել մեռելներից, նույնիսկ եթե տեսնեին մարդ՝ Զրիստոս Հիսուսի մարմինը դեռ գերեզմանում պառկած: Բայց մինչ այդ՝ նրանց համար անհրաժեշտ էր, որ մարմինը անհետանար, որպեսզի նրանք կարողանային հավատալ Նրա հարությանը: Երբ Սուրբ Հոգին նրանց պարգևեց հոգևոր բաները տարբերելու կարողությունը, նրանք կարող էին հավատալ մարգարեների վկայությանը (որ Նա պետք է մեռնի, հարություն առնի մեռելներից և մեծ փառքով բարձրացվի որպես փառքի Թագավոր) առանց որևէ անհրաժեշտության, որ Նա հայտնվի մարդկային կերպարանքով՝ հագնելով տարբեր մարմիններ, ասես դրանք հագուստներ լինեին, որպեսզի նրանք

կարողանային դիպչել Նրան և տեսնել, թե ինչպես է Նա երկինք բարձրանում: Բայց այս ամենը անհրաժեշտ էր և՛ նրանց, և՛ բոլոր բնական մարդկանց համար: Հոգևոր բաները հասկանալու համար մենք հավատքի միջոցով Նրա միջոցով մոտենում ենք Աստծուն, ստանում ենք մեղքերի թողութուն և որդեգրության Հոգին:

Չնայած մեր Տերը, մարդկային մարմին ստանալով և այլն, հեռացրեց հավատքի բնական խոչընդոտները, այնուամենայնիվ Նա համոզեց իր աշակերտներին և նրանց դարձրեց ուրիշների վկաներ՝ ոչ թե նրանց ֆիզիկական տեսողությամբ կամ շոշափումով, այլ Սուրբ Գրքերի հիման վրա նրանց հետ բանավեճի միջոցով: «Այն ժամանակ նրանց միտքը բացեց, որ Սուրբ Գիրքը հասկանան, և ասաց նրանց. «Գրված է. այսպես պետք է Զրիստոսը չարչարվեր ու երրորդ օրը մեռելներից հարություն առներ, և նրա անունով, Երուսաղեմից սկսած, բոլոր ազգերի մեջ ապաշխարություն ու մեղքերի թողություն քարոզվեր»: «Դուք էլ վկաներն եք այս բաների» (Ղուկաս 24:45–48): Պետրոսն Առաքյալն էլ այս հարցը հստակ է ներկայացնում. «Նրան Աստված երրորդ օրը հարություն տվեց, ու հայտնվեց ոչ թե ամբողջ ժողովրդին, այլ մեզ՝ Աստծուց Նախասահմանվածներին, որ նրա հետ կերանք ու խմեցինք մեռելներից նրա հարություն առնելուց հետո: Նա մեզ պատվիրեց քարոզել ժողովրդին ու վկայություն տալ, որ նա է [հարություն առած Հիսուսը] Աստծուց սահմանված դատավորը մեռածների ու կենդանիների» (Գործք 10:40–42):

Մեր Տիրոջ համար, նրա հարությունից հետո, պարզապես գործնական հարց էր՝ թե որ ճանապարհով երևալը իր աշակերտներին առավել արդյունավետ կլինե՞ր՝ իր հարությունն ու բնության փոփոխությունը հայտնելու համար: Եթե նա հայտնվեր որպես կրակի բոց, ինչպես հրեշտակը հայտնվեց Մովսեսին այրվող թփի մեջ (Ելք 3:2),

նա, անշուշտ, կարող էր նրանց հետ գրուցել, սակայն այդպիսի ապացույցը շատ ավելի քիչ համոզիչ կլիներ, քան այն մեթոդը, որը նա որդեգրեց՝ և՛ առաքյալների, և՛ նրանց վկայած ողջ աշխարհի համար:

Եթե նա հայտնվեր հոգեդեն մարմնի փառքով, ինչպես հրեշտակը հայտնվեց Դանիելին (Դան. 10:5-8), ապա փառքը կլիներ այնքան մեծ, որ վկաները չէին կարողանա դիմանալ: Նրանք, ամենայն հավանականությամբ, այնքան կվախենային, որ չէին կարողանա ստանալ նրա հրահանգները: Տերը երբեք ոչ մեկին այսպես չերևեցավ, բացի Պողոսից, և Պողոսը նրա փառքի այդ ակնթարթից այնքան հուզվեց, որ ընկավ գետնին և կուրացավ նրա պայծառությունից, որը գերազանցում էր կեսօրվա արևի լույսը:

Մեր Տիրոջ կողմից այդ քառասուն օրերի ընթացքում որդեգրած հայտնության մեթոդի ուսումնասիրության ժամանակ մենք տեսանք, որ Նա «թույլատրեց» իրեն հայտնվել անգամ ընտրված վկաներին միայն մի քանի անգամ, և դա էլ միայն կարճ ժամանակով: Ամբողջ այն ժամանակը, որ նա նրանց առջև երևաց, եթե այն տեղի ունենար ոչ թե քառասուն օրերի ընթացքում ընդմիջումներով, այլ մեկ օրվա մեջ կենտրոնացված, հավանաբար կլիներ տասներկու ժամից պակաս, այսինքն՝ այդ ամբողջ ժամանակի ութսուներորդ մասը: Սա ճիշտ լինելով՝ ակնհայտ է, որ նա նրանց հետ անտեսանելի էր այդ քառասուն օրերի 79/80-րդ մասի ընթացքում: Եվ նույնիսկ երբ Նա հայտնվեց նրանց, Նրա արտաքինը չէր համընկնում այն արտաքինին, որը նրանց այնքան ծանոթ էր երեք տարվա ընթացքում կամ որը նրանք տեսել էին ընդամենը մի քանի օր առաջ (բացառությամբ, գուցե, Թովմասին երկրորդ անգամ հայտնվելու դեպքի): Չկա ոչ մի հիշատակում, անգամ անուղղակի, որ նրանք ճանաչել են

Նրան դեմքի ծանոթ հատկանիշներով կամ նույն արտաքինով, ինչ այլ առիթներին:

Մարիամը ենթադրեց, որ Նա պարտիզպահն է: Էմաուսի ճանապարհին գտնվող երկուսի համար Նա ճանապարհորդ էր: Իսկ Գալիլեայի ծովի ձկնորսների և վերին սենյակում գտնվող տասնմեկի համար Նա անծանոթ էր թվում: Յուրաքանչյուր անգամ Նա ճանաչվում էր իր գործերով, իր խոսքերով կամ ձայնի ծանոթ երանգներից:

Երբ Թովմասը հայտարարեց, որ միայն այն ապացույցը, որը վերաբերում է նրա բնական տեսողությանը և հպմանը, ընդունելի կլինի իր համար, Տերը, թեև բավարարեց այդ պահանջը, սակայն նրբորեն հանդիմանեց նրան՝ ասելով. «Հավատացիր, քանի որ տեսար ինձ. երանի՜ նրանց, ովքեր կհավատան առանց տեսնելու»: (Հովհաննես 20:27-29) Ավելի զորավոր վկայությունը այն էր, որը չէր վերաբերում բնական տեսողությանը, և առավել երջանիկ են նրանք, ովքեր պատրաստ են ընդունել ճշմարտությունը՝ ինչպիսի ապացույցներով էլ Աստված հաճի այն հաստատել:

Այսպիսով Նա նրանց ցույց տվեց ոչ միայն, որ այժմ կարող է հայտնվել տարբեր ձևերով ու կերպարանքներով, այլև որ նրանց տեսած մարմիններից ոչ մեկը նրա հոգևոր, փառավոր մարմինը չէր, թեև նրա հարության և ներկայության փաստերը այդպես նրանց համար բացահայտվեցին: Տարբեր կերպարանքներն ու երկարատև անտեսանելի ներկայության ժամանակահատվածները, առանց որևէ արտաքին դրսևորման, ակնհայտ դարձնում էին այն փաստը, որ, թեև նրանց Տերը և ուսուցիչը կենդանի էր և դեռ չէր բարձրացել Հոր մոտ, նա այժմ հոգեղեն էակ էր, մարդկային աչքի համար իսկապես անտեսանելի, սակայն կարող էր իր ներկայությունն ու

գորութիւնը ցանկութեան համաձայն բազմազան ձևերով դրսևորել:¹⁰

Նրա մարմնի և հագուստի ստեղծումը, որոնցով նա հայտնվեց Նրանց հենց այն սենյակում, որտեղ Նրանք հավաքվել էին, աներկմտելի ապացույց էր, որ Քրիստոսը այլևս մարդ չէր, թեև նա իր աշակերտներին վստահեցրեց, որ այն մարմինը, որը Նրանք տեսան և որին Թովմասը հավեց, իսկապես միս ու ոսկորներից կազմված մարմին էր, ոչ թե պարզապես տեսիլք կամ երևույթ: Որպես մարդ, Նա չէր կարող մտնել սենյակ առանց դուռը բացելու, բայց որպես հոգեղեն էակ՝ կարող էր, և այդ պատճառով Նա ակնթարթորեն ստեղծեց և հագավ մարմին ու հագուստ, որոնք համարեց համապատասխան իր նախատեսված նպատակին:

Մենք մի պահ անգամ չենք կարող ընդունել որոշների առաջարկած այն ենթադրությունը, թե մեր Տերը բացեց դռները՝ առանց նկատվելու, որովհետև վկայությունը պարզ ու հստակ է, որ նա եկավ և կանգնեց Նրանց մեջ, երբ դռները փակ էին – հավանաբար շատ ուշադիր փակված և ամրացված – «հրեաների վախի պատճառով» (Հովհաննես 20:19,26):

Նա կրկին ընդգծեց իր վերափոխված բնության փաստը, անհետանալով Նրանց տեսադաշտից՝ «Եվ նա աներեվույթ եղավ Նրանցից»: Մարմինը՝ մսից, ոսկորներից և այլն, իր հագուստներով, հանկարծակի հայտնվելով երբ դռները փակ էին, դռով դուրս չեկավ, այլ պարզապես անհետացավ

¹⁰ Ղուկասի (4:30)-ում նա ժողովրդի համար անտեսանելի չդարձավ: Դա պարզապես հմուտ, արագ շարժում էր, որով նա խուսափեց իր թշնամիների սպանության ծրագրից: Նրանց մահվան ծրագիրը դեռ չիրականացված՝ նա շրջվեց և Նրանց միջով անցավ, և ոչ ոք չունեւ ո՛չ համարձակություն, ո՛չ ուժ Նրան խանգարելու, որովհետև Նրա ժամը դեռ չէր եկել:

կամ լուծվեց հենց այն տարրերի մեջ, որոնցից մի քանի որպես առաջ նա ստեղծել էր այն: Նա անհետացավ նրանց տեսադաշտից և դարձավ անտեսանելի, երբ լուծվեց այն մարմինը՝ միսը, ոսկորները և հագուստը, որոնցով նա հայտնվել էր, թեև, անշուշտ, շարունակեց մնալ նրանց հետ անտեսանելի ներկայությամբ: Այսպես էր լինում այդ քառասուն օրերի մեծ մասի ընթացքում:

Հատուկ դեպքերում, հատուկ ուսուցման նպատակով, Աստված շնորհեց նման զորություն նաև այլ հոգեղեն էակներին՝ հրեշտակներին, որոնք կարող էին հայտնվել որպես մարդիկ՝ մարմնով ու ոսկորներով, ուտել և խոսել նրանց հետ, ում ուսուցանում էին, ինչպես մեր Տերը արեց (Տես Ծննդոց 18, Դատավորներ 6:11–22, 13:3–20 և մեկնաբանությունը այս հատվածների վերաբերյալ I հատորում, էջեր 178–184):

Մեր Տիրոջ և նշված հրեշտակների ցուցաբերած զորությունը՝ հագուստներ ստեղծելու և լուծելու, նույնքան գերբնական էր, որքան նրանց ընդունած մարդկային մարմինների ստեղծումն ու լուծումը, և այդ մարմինները չէին համարվում փառավոր հոգեղեն մարմիններ: Հիշենք, որ մեր Փրկչի խաչելությունից առաջ հագած պատմուճանը ու մյուս հագուստները բաժանվել էին հռոմեական զինվորների միջև, իսկ վարշամակը մնացել էր ծալված գերեզմանում (Հովհաննես 19:23,24, 20:5-7), ուստի նշված դեպքերում, երբ նա հայտնվեց, հագուստը պետք է հատուկ ստեղծված լիներ և, հավանաբար, ամեն առիթի համար առավել համապատասխան էր: Օրինակ, երբ նա Մարիամին հայտնվեց որպես պարտիզայան, հավանաբար հագնված էր այնպիսի հագուստով, ինչպիսին կրում է պարտիզայանը:

Նա նրանց պարզ ցույց տվեց, որ այն մարմինները, որոնցում մեր Տերը հայտնվեց, իրական մարդկային մարմիններ էին, ոչ թե պարզապես պատրանքներ, երբ Նա

Նրանց հետ ճաշում էր և հրավիրում նրանց՝ դիպչելու Իրեն ու ինքնուրույն համոզվելու, որ մարմինը իսկական մսից ու ոսկորներից է: « Ինչո՞ւ եք շփոթվել, ինչո՞ւ են ձեր սրտերում կասկածներ առաջանում: Տեսե՛ք իմ ձեռքերն ու ոտքերը, որովհետև ես ինքս եմ. շոշափե՛ք ինձ ու տեսե՛ք, որովհետև ոգին մարմին ու ոսկորներ չունի. ինչպես տեսնում եք, ես ունեմ»:

Որոշ քրիստոնյաներ մեր Տիրոջ այս արտահայտությունից շատ անհեթեթ եզրակացություններ են անում նրա ստացած մարմնի՝ մսի ու ոսկորների մարմնի իսկության վերաբերյալ: Նրանք այս մարմինը հոգեղեն են համարում և պնդում են, որ հոգեղեն մարմինը կազմված է մսից ու ոսկորներից, ինչպես մարդկայինը, միակ տարբերությամբ՝ նրա զարկերակներում արյան փոխարեն հոսում է ինչ-որ անորոշելի բան, որը նրանք «ոգի» են անվանում: Այդպիսով նրանք անտեսում են մեր Տիրոջ խոսքերը, որ սա ոգեղեն մարմին չէ՝ քանի որ ոգին ոչ միս ունի, ոչ ոսկորներ: Նրանք նաև անտեսում են Հովհաննեսի խոսքերը, որ «դեռ հայտնի չէ», թե ինչ է հոգեղեն մարմինը, և որ մենք չենք իմանա մինչև չփոխվենք, չդառնանք Նրա նման և չտեսնենք Նրան՝ ոչ այնպես, ինչպես Նա էր, այլ ինչպես Նա է (Ա Հովհ. 3:2): Նրանք նաև մոռանում են Պողոս առաքյալի հստակ հայտարարությունը, որ «մարմինն ու արյունը չեն կարող ժառանգել Աստծո արքայությունը», և նրա հետագա վստահեցումը, որ, հետևաբար, Քրիստոսի հետ բոլոր ժառանգները նույնպես պետք է «փոխվեն» (Ա Կորնթ. 15:50,51):

Շատ քրիստոնյաներ կարծում են, որ մեր Տիրոջ փառավոր հոգեղեն մարմինն հենց այն նույն մարմինն է, որը խաչվեց և դրվեց Հովսեփի գերեզմանում: Նրանք ակնկալում են, որ երբ տեսնեն Տիրոջը փառքով, նրան կճանաչեն ըստ Գողգոթայում ստացված վերքերի: Տա մեծ սխալ է, որը պարզ է դառնում անգամ մի փոքր մտածելու

դեպքում. Առաջին՝ դա կհաստատեր, որ Նրա հարություն առած մարմինը ոչ թե փառավոր կամ կատարյալ է, այլ վիրավորված և խեղված: Երկրորդ՝ դա կհաստատեր, որ մենք գիտենք, թե ինչ է հոգեղեն մարմինը, չնայած առաքյալի հակառակ պնդմանը: Երրորդ՝ դա կհաստատեր, որ մեր փրկանքի գինը հետ է վերցվել, քանի որ Հիսուս ասաց. «Իմ մարմինը, որը ես կտամ աշխարհի կյանքի համար»: Հենց Նրա մարմինն էր, Նրա մարդկային կյանքը, Նրա մարդկային բնությունն էր, ինչը Նա զոհաբերեց մեր փրկության համար: Եվ երբ Հոր զորությունը վերակենդանացրեց Նրան, չվերականգնեց Նրա մարդկային գոյությունը, որովհետև այն զոհաբերվել էր որպես մեր փրկության գին: Եթե այդ գինը հետ վերցվեր, մենք դեռ կմնայինք մահվան դատավճռի տակ և առանց հույսի:

Մեր Տիրոջ հարությունից հետո Նրա հոգեղեն մարմինը մարդկային մարմին է, այն Նույնքան անհեթեթ ենթադրություն է, որքան այն, որ Նրա հոգեղեն մարմինը առաջին գալուստից առաջ մարդկային էր, կամ որ այլ հոգեղեն էակներ ունեն մարդկային մարմիններ: Զանգի ոգին ոչ մարմին ունի, ոչ էլ ոսկորներ, և, ինչպես ասում է Պետրոս առաքյալը, մեր Տերը «մեռաւ մարմնով, բայց կենդանի եղաւ հոգով»:

Այնուամենայնիվ, մեր Տիրոջ մարդկային մարմինը գերեզմանից վերցվեց գերբնական կերպով, որովհետև եթե այն մնացած լիներ այնտեղ, դա կդառնար անանցելի խոչընդոտ աշակերտների հավատքի համար, որոնք դեռ չէին ուսուցվել հոգևոր հարցերում, քանի որ «Որովհետև դեռ Սուրբ Հոգին տրուած չէր» (Հովհաննես 7:39): Մենք ոչինչ չգիտենք դրա հետագա ճակատագրի մասին, բացի նրանից, որ այն չտեսավ ապականություն (Գործք 2:27,31): Արդյոք այն լուծվել է գագերի մեջ, թե դեռևս պահպանվում է որևէ տեղ որպես Աստծո սիրո, Զրիստոսի

հնազանդության և մեր փրկության մեծ հիշատակ, ոչ ոք չի իմանում – և դրա մասին իմանալն անհրաժեշտ չէ: Մենք գիտենք, որ Աստված հրաշքով թաքցրեց Մովսեսի մարմինը (2 Օրենք 34:6, Հուդա 9), և մենք նաև գիտենք, որ Աստված հրաշքով պահպանեց մանանան փչացումից որպես հիշատակ ոսկե անոթի մեջ, որը դրված էր քավության տակ գտնվող տապանակի մեջ խորանում, և որ այն խորհրդանշում էր մեր Տիրոջ մարմինը՝ երկնային հացը (Ելք 16:20, 33, Եբր. 9:4, Հովհաննես 6:51–58): Ուստի մեզ չի զարմացնի, եթե Աստծո Թագավորությունում Աստված աշխարհին հայտնի դարձնի բոլորի համար խաչված մարմինը՝ որպես նրանց փրկանքի միջոց –մարմին, որը նախատեսված չէ ապականվելու համար, այլ պահպանված է որպես անսահման սիրո և կատարյալ հնազանդության հավիտենական վկայություն: Հավանական է, որ Հովհաննես 19:37-ը և Չաքարիա 12:10-ը այսպես կերպ իրականանան: Նրանք, ովքեր գոչում էին՝ «Խաչիր նրան», որպես ականատեսներ կարող են ճանաչել հենց այդ մարմինը, որ խոցված էր նիզակով և գամված էր մեխերով:

Եթե մեր Տիրոջ փառավոր մարմինը մսային մարմին համարենք, ապա դժվար է գտնել անգամ ամենափոքր բացատրություն Նրա անսովոր և անսպասելի հայտնություններին, որոնք տեղի էին ունենում Հիսուսի երկինք համբարձվելուց առաջ անցած քառասուն օրերի ընթացքում: Ինչպե՞ս կարող էր Նա այդքան հանկարծակի հայտնվել և անհետանալ: Ինչպե՞ս կարող էր Նա գրեթե ամբողջ այդ քառասուն օրերի ընթացքում անտեսանելի մնալ: Եվ ինչո՞ւ էր Նրա արտաքին տեսքը յուրաքանչյուր անգամ այդքան տարբեր, որ անհնար էր ճանաչել Նրան՝ այն Մեկին, որին նրանք տեսել էին նախկինում, կամ այն Մեկին, որին բոլորը այդքան լավ ճանաչում և սիրում էին:

Բավարար չէ պարզապես ասել, որ սրանք հրաշքներ էին, քանի որ դրանց մեջ պետք է նշվի ինչ-որ օգուտ կամ

անհրաժեշտություն: Եթե Հարությունից հետո Նրա մարմինը կազմված լիներ մսից ու ոսկորներից և լիներ նույն խաչված մարմինը՝ իր բոլոր առանձնահատկություններով ու վերքերով, ապա ինչո՞ւ Նրան պետք կլիներ կատարել հրաշքներ, որոնք ոչ միայն չէին ապացուցում այս փաստը, այլ, մեր տեսանկյունից, հակառակը սովորեցնում որ Նա այլևս մսից ու ոսկորներից կազմված մարդ չէր, այլ մի հոգեղեն էակ, որը կարող էր հայտնվել և անհետանալ ինչպես քամին, որպեսզի ոչ ոք չկարողանար հետևել, թե որտեղից Նա եկավ կամ ուր գնաց, որ Նրանց ուսուցանելու համար Նա հայտնվում էր որպես մարդ՝ տարբեր մարմիններում մսից ու ոսկորներից կազմված, որոնք ինքն էր ստեղծում և լուծում ըստ հանգամանքների:

Խաչելությունից առաջ մեր Տերը շատ մտերիմ հարաբերություններ ուներ Իր աշակերտների հետ, սակայն Հարությունից հետո, թեև Նրանց նույնքան սիրում էր, Նրանց հետ վարվում էր ավելի զուսպ: Անշուշտ, սա արվեց Նրանց վրա ավելի ուժեղ տպավորություն թողնելու համար՝ Իր հիասքանչ բարձրացման պատվով ու արժանապատվությամբ, ինչպես նաև Իր և Իր իշխանության նկատմամբ պատշաճ հարգանք ներշնչելու համար: Չնայած որ որպես մարդ Հիսուսը երբեք չկորցրեց այն վարքագծի արժանապատվությունը, որը հարգանք էր պարտադրում, այնուամենայնիվ, Աստվածային բնության մեջ վերափոխվելուց հետո անհրաժեշտ և տեղին էր ավելի մեծ զսպվածություն ցուցաբերել: Նման զսպվածություն Եհովան միշտ ցուցաբերում էր իր արարածների հետ իր հարաբերություններում, և դա կախված էր հանգամանքներից: Այս զսպվածությունը ակնհայտ էր մեր Տիրոջ բոլոր հանդիպումներում իր աշակերտների հետ հարությանց հետո: Դրանք շատ կարճ էին, ինչպես ինքն ասաց՝ «Ձեզ հետ այլևս շատ չեմ խոսի» (Հովհաննես 14:30):

Ովքեր հավատում են, որ մեր Երկնային Հայրը ոգի է և ոչ թե մարդ, նրանց համար դժվար չի լինի հասկանալ, որ մեր Տեր Հիսուսը, ով այժմ բարձրացված է աստվածային բնության մեջ և ոչ միայն Աստծո բարոյական պատկերն է, այլև «Հոր Էության արտացոլումը», այլևս մարդ չէ, այլ հոգեղեն Էակ, որին ոչ ոք չի տեսել և չի կարող տեսնել առանց հրաշքի: Մարդկանց համար նույնքան անհնար է տեսնել Տեր Հիսուսի հայտնված փառքը, որքան նրանց համար՝ տեսնել Եհովային: Հիշենք, թե ինչպես Սինա լեռան վրա հոգևոր փառքի պարզ արտացոլանքը հարվածեց Մովսեսին և Իսրայելին (Եբր. 12:21, Ելք 19; 20:19–21, 33:20–23, 34:29–35): «Եւ այնպես ահաւոր էր տեսիլքն, որ Մովսէսն ասում էր, թէ «Չարհուրում եմ եւ դողում»: Եվ թեւ Մովսէսը պահպանվեց գերբնական զորությամբ, որպեսզի տեսներ Տիրոջ փառքը և քառասուն օր ու գիշեր (միայն Աստծո հետ, Նրա փառքի ստվերում և առանց որևէ սննդի ու խմիչքի) ստանար և գրի առներ աստվածային օրենքը (Ելք 34:28), այնուամենայնիվ, երբ նա ցանկացավ Տիրոջը դեմ առ դեմ տեսնել, նրան ասվեց. «Դու իմ երեսը չես կարող տեսնել, որովհետև մարդ չի կարող ինձ տեսնել ու կենդանի մնալ» (Ելք 33:20): Ուստի Մովսէսը տեսավ միայն Աստծո ներկայությունը ներկայացնող մի հայտնություն, և ավելին հնարավոր չէր: Սա համընկնում է նաև առաքյալի խոսքերի հետ. «Աստծուն երբեք ոչ ոք չի տեսել» - Նա անմահ, անտեսանելի Թագավորն է, որին ոչ մի մարդ չի տեսել և չի կարող երբևէ տեսնել (Ա Տիմ. 6:15–16): Սակայն հստակ նշվում է, որ հոգեղեն Էակները կարող են և տեսնում են Աստծուն, որ ինքն էլ հոգեղեն Էակ է (Մատթ. 18:10):

Եթե մեր Տերը դեռևս «Մարդ Յիսուս Զրիստոսն է, որ ինքն իրեն բոլորի համար փրկանք տվեց» (Ա Տիմ. 2:5, 6) – եթե մարմնով մեռնելով՝ մարմնով հարություն է առել, և ոչ (ինչպես Առաքյալն է ասում) կյանք պարզևող Հոգով, ապա, փոխարենը, որ բարձրացվեր հրեշտակներից շատ վեր և երկնքի ու երկրի տակ գտնվող ամեն անունից վեր, Նա

կմնար մարդ: Եվ եթե Նա պահպանել է ծառայի կերպարանքը – որը Նա ստանձնել էր յուրաքանչյուր մարդու մահը կրելու համար – և շարունակում է մի փոքր ցածր մնալ հրեշտակներից, ապա Նա ոչ մի կերպ չի կարող տեսնել Աստծուն: Ինչքան անտրամաբանական է այս տեսակետը, երբ այն ամբողջությամբ քննվում է առաքելական վկայության լույսի ներքո: Հաշվի առնել նաև, որ եթե մեր Տիրոջ մարմինը՝ մեխերով, գեղարդով խոցված և վիրավորված, փշե պսակ և կրում է Իր տառապանքների նշանները, ապա դա Իր փառավոր հոգևոր մարմինն է, և եթե Իր սպիերը և խեղված մարդկային դիմագծերը բարձրացված Տիրոջ անբաժանելի մասն են, ապա Նրան նայելը հազիվ թե հաճելի լիներ, նույնիսկ եթե մենք սիրալիր ենք գտնում մեր համար հասցված վերքերը: Եվ եթե Նա ունի այդպիսի անկատար, խեղված և վիրավորված մարմին, և եթե մենք պետք է նմանվենք Նրան, միթե դա չի նշանակում, որ առաքյալներն ու սրբերը, որոնք խաչվել են, գլխատվել, քարկոծվել, այրվել, կտոր-կտոր են եղել և վայրենի գազանների կողմից պատառոտվել են, ինչպես նաև Նրանք, ովքեր դժբախտություն են տեսել, նույնպես կմնան իրենց խեղվածքներով ու սպիերով: Եվ այդ տեսանկյունից, արդյո՞ք երկինքը հավիտենապես չի ներկայացնի ամենավախենալին տեսարան: Բայց դա այդպես չէ և ոչ ոք երկար չի կարող պահպանել այդքան անհեթեթ և Աստվածաշնչին հակասող տեսակետը: Հոգեղեն Էակները կատարյալ են ամեն առումով, և այդ պատճառով Առաքյալը հիշեցնում է Եկեղեցուն, որը երկնային կամ հոգևոր փառքի և պատվի ժառանգ է, որ, թեև թաղվել է թույլության մեջ [մահվան մեջ՝ նշաններով և վերքերով, և այլն], այն [Էակը] հարություն է առնում գործությամբ, թեև թաղվել է անարգանքով [ծերության ու տխրության նշաններով, և այլն] այն հարություն է առնում փառքով, թեև սերմանվել է բնական մարմնով, հարություն կառնի հոգևոր մարմնով և ինչպես որ կրել ենք երկրային

մարդու պատկերը, այնպես էլ կկրենք երկնային Տիրոջ պատկերը (Ա Կորնթ. 15:42-51): Մեր Տեր Հիսուսը մեր համար նույնպես ժամանակավորապես ստացավ երկրային մարմին, որպեսզի փրկի մեզ: Բայց իր հարության մեջ նա դարձավ երկնային Տերը (Հռոմ. 14:9), և մենք, եթե հավատարիմ լինենք, շուտով կկրենք երկնային Տիրոջ պատկերը (հոգեղեն մարմիններ), ինչպես որ այժմ դեռ կրում ենք երկրի տիրոջ՝ Ադամի պատկերը (մարդկային մարմիններ):

Հիշիր, թե ինչ եղավ Պողոսի դեպքում. որպեսզի նա դառնար առաքյալներից մեկը, պետք էր դառնար վկա՝ տեսներ Տիրոջը հարությանց հետո. նա չէր նրանցից, ովքեր քառասուն օրերի ընթացքում տեսել էին հարության և Տիրոջ ներկայության ապացույցները, ուստի նրան շնորհվեց Տիրոջը հատուկ ակնթարթային տեսիլք. Բայց նա Նրան չտեսավ այնպես, ինչպես մյուսները՝ մարմնով ու տարբեր տեսակի հագուստներով պատված: Եվ մեր Տիրոջ հայտնված, փառավոր անձի մի ակնթարթային ակնարկը ստիպեց նրան ընկնել գետնին՝ կուրացած «արևից ավելի պայծառ» փառքից: Եվ դրանից հետո նրա տեսողությունը վերականգնելու համար, առնվազն մասամբ, անհրաժեշտ եղավ հրաշք (Գործք 9:17, 18): Արդյո՞ք Պողոսը Տիրոջը չտեսավ այնպես, ինչպես նա է՝ որպես հոգեղեն Էակ: Եվ միթե մեր Տերը, քառասուն օրերի ընթացքում (որոշակի նպատակով և որոշակի առիթով, ինչպես արդեն նշել ենք), չերևացավ այնպիսին, ինչպիսին որ էր, այսինքն՝ այնպիսին, ինչպիսին որ եղել էր նախկինում: Այստեղ կասկածի տեղ չկա: Տերը ուներ մեկ նպատակ, որի համար հենց այսպես հայտնվեց Պողոսին, և մեկ այլ նպատակ, երբ մյուսներին հայտնվեց այլ կերպ: Պողոս առաքյալը ներկայացնում է այս նպատակը՝ ասելով. «Բոլորից հետո երևաց նաև ինձ՝ իբրև վաղաժամ ծնվածի» (Ա Կորնթ. 15:8): Ինչպես մեր Տիրոջ հարությունն էր մեռելներից դեպի լիակատար հոգեղեն Էակի կատարելություն (Կող. 1:18;

Հռոմ. 8:29), այդպես էլ Եկեղեցու՝ Քրիստոսի մարմնի, հարությունն այստեղ և այլուր նկարագրվում է որպես ծնունդ: Մեր ծննդյան, կամ հարության պահին որպես հոգեղեն Էակներ մենք կոտեսնենք Տիրոջը այնպես, ինչպես որ Նա կա, ինչպես որ Պողոսն է Նրան տեսել: Բայց մենք, վերածնված կամ նորածին որպես հոգեղեն Էակներ, չենք ընկնի և չենք կուրանա մեր Տիրոջ փառավոր դեմքը տեսնելիս: Առաքյալ Պողոսի խոսքերը նշանակում են, որ Նա տեսավ Նրան այնպես, ինչպես մենք կոտեսնենք Նրան՝ «ինչպես որ Նա է». Նա տեսավ Նրան (ինչպես որ Նրան կոտեսի Քրիստոսի ամբողջ Մարմինը), սակայն նշանակված ժամանակից առաջ, մինչև իր մեռելներից հարություն առնելը և, հետևաբար, մինչև այն կարողանալը – սակայն Նա տեսավ Նրան ճիշտ այնպես, ինչպես յուրաքանչյուր վերածնված կոտեսի Նրան իր ժամանակին:

Մովսեսը, սարից իջնելով Իսրայելին Օրենքի ուխտը հաղորդելու համար, հանդիսանում էր Նոր Ուխտի մեծ Օրենսդիրի և Միջնորդի նախատիպը, ով իր երկրորդ գալուստին կհայտնվի աշխարհը կառավարելու և օրհնելու համար: Այսպիսով, Մովսեսը խորհրդանշում էր ամբողջ Եկեղեցին, որի Գլուխն է մեր Տերը: Մովսեսի դեմքը փայլեց, որպեսզի ժողովուրդը չկարողանար նայել նրան, և Նա ստիպված էր դրանից հետո կրել ծածկոց՝ որպես Քրիստոսի հոգևոր փառքի խորհրդանիշ, ինչը պատկերացնում է այն կետը, որը մենք այժմ քննարկում ենք: Քրիստոսն ունի իրական փառք ու պայծառություն, Հոր Էության ճշմարիտ պատկերն է, և մենք նման կլինենք նրան, սակայն ոչ ոք չի կարող տեսնել այդ փառքը. հետևաբար, երբ Տիրոջ փառքը հայտնվի, օրենսդիրի որևէ հայտնություն աշխարհին չի կարող լինել՝ քանի որ հոգևոր Էակների փառքը չի երևում. նրանք կխոսեն քողի միջոցով՝ ծածկոցի տակ: Սա, ինչպես շատ այլ բաներ, խորհրդանշված էր Մովսեսի վարագույրով (Ելք 34:30-33):

Երբ մենք ուշադիր ուսումնասիրում ենք այս հարցը, ավելի ու ավելի համոզվում ենք աստվածային իմաստության մեջ, որը դրսևորվել է այն ձևում, որով մեր Տիրոջ հարությունն հայտնվեց առաքյալներին: Նրանք պետք է լինեին լիովին վստահելի և անթերի վկաներ, որպեսզի երկրի խոնարհները ընդունեին նրանց վկայությունը և հավատային, որ Աստված հարություն է տվել մեր Տիրոջը մեռելներից՝ որպեսզի նրանք ճանաչեն Նրան որպես այն, ով մեռած էր, բայց այժմ հավիտյան կենդանի է, և հավատքով Նրա միջոցով մոտենային Աստծուն: Եվ երբ Սուրբ Հոգու՝ ճշմարտության Հոգու առաջնորդությամբ մտածում ենք Նրա մասին, մեր ըմբռնումը լայնանում է, և այլևս Նրա մեջ չենք տեսնում մարդու՝ Հիսուս Զրիստոսի կերպարը, այլ փառքի և գործության Տիրոջը, աստվածային բնության մասնակցին: Եվ այդպես Նրա մեջ տեսնում ենք Նրան, որի գալուստի և արքայության համար Եկեղեցին այդքան ջերմեռանդորեն աղոթել և կարոտել է: Եվ ոչ ոք, ով ճշմարիտ պատկերացում ունի Նրա մեծ փառաբանության մասին, չի կարող ակնկալել, որ Նրա երկրորդ գալուստին տեսնի մարդ՝ Հիսուս Զրիստոսին, մարմնավոր մարմնով՝ Նրան, ով պատրաստված էր զոհաբերության, վիրավորվեց և սպանվեց որպես մեր փրկանք: Ոչ էլ պետք է սպասենք, որ Իր երկրորդ գալստին Նա մարդկանց կերևա կամ կհայտնվի մարմնով ու ոսկորներով տարբեր մարմնավոր տեսքներով, ինչպես դա անհրաժեշտ էր այն առաջին վկաների համար, սակայն ոչ այժմ: Նա, ինչպես կտեսնենք, Իր երկրորդ ներկայությունը կհայտնաբերի լրիվ այլ կերպով:

Ինչպես մենք սովորել ենք հոգեղեն Էակների և նրանց անցյալ ժամանակներում հայտնությունների մասին, Հստակ է, որ եթե մեր Տերը Իր երկրորդ գալուստի ժամանակ հայտնվեր մարդկանց առջև՝ բացելով նրանց աչքերը, որպեսզի տեսնեն Իր փառքը (ինչպես եղավ

Պողոսի և Դանիելի դեպքում), կամ վերցնել մարդկային մարմին, դա կխարխլեր իր խոսքում ներկայացված ծրագիրը: Մարդկանց առջև փառքով հայտնվելը, հրաշքով նրանց աչքերը բացելով, որպեսզի տեսնեն Նրան, համարժեք կլիներ նրանց կուրացնող տեսարանով ճնշելուն, մինչդեռ մարդու կերպարանքով հայտնվելը կնշանակեր արժանապատվության չափանիշի իջեցում և աստվածային բնությանն ու կերպարանքին իրական արժեքից ցածր արժեք վերագրել: Քանի որ, առաջին հայացքից, ոչ մեկը այս մեթոդներից չի թվում անհրաժեշտ կամ խելամիտ, մենք չենք հավատում, որ դրանցից որևէ մեկը կիրառվեր:

Մարդկային բնությունը, եթե այն կատարյալ է և Աստծո հետ ներդաշնակ, մարմնով Աստծո նմանությունն է: Հետևաբար Ադամը իր սկզբնական կատարելությամբ Աստծո պատկերն էր մարմնով, ինչպես նաև կատարյալ մարդը՝ Հիսուս Քրիստոսը, ով կարող էր ասել իր Փիլիպպոս աշակերտին, ով խնդրել էր տեսնել Հորը. «Ով ինձ տեսավ, նա Հորը տեսավ» – նա տեսավ Աստծո պատկերը մարմնով – «Աստված մարմնով հայտնվեց»:

Նույն կերպ, մարդկային ամբողջ ցեղը, երբ նրա անդամները վերադառնան երկար ժամանակ կորցրած Աստծո պատկերին, կլինի Հոր և Քրիստոսի մարմնավոր պատկերն ու նմանությունը: Հազարամյակի ամենասկզբում, ինչպես արդեն քննարկել ենք, աշխարհը կունենա մարդկային կատարելության օրինակներ (Հատոր 1, էջեր 287–293): Աբրահամը, Իսահակը, Հակոբը և սուրբ մարգարեները, որոնք արդեն փորձված և ընդունված են, մարդկության մեջ կլինեն «իշխաններ»՝ հոգևոր, անտեսանելի թագավորության լիազորված ներկայացուցիչներ: Քրիստոսը նրանց մեջ կհայտնվի՝ նրանց մարմնի մեջ, ինչպես Հայրը հայտնվեց իր մարմնի մեջ: Եվ երբ «յուրաքանչյուր, ով ցանկանում է» հասնի կատարելության

և դառնա լիովին ներդաշնակ Զրիստոսի կամքի հետ, նրանք կդառնան Աստծո և Զրիստոսի պատկեր, և Զրիստոսը կհայտնվի յուրաքանչյուրի մեջ:

Աստծո բարոյական պատկերով ստեղծված, կատարյալ մարդը, լինելով ամբողջությամբ նվիրված կկարողանա կատարյալ կերպով գնահատել Սուրբ Հոգին և Աստծո խոսքը, և փառաբանված Եկեղեցին կուղղորդի նրան: Եվ ոչ մի կասկած չկա, որ տեսիլքներն ու ուղղակի հայտնությունները, ինչպես նաև հոգեղեն աշխարհի և նրա երկրային ներկայացուցիչների միջև լայնածավալ հաղորդակցությունը շատ ավելի մատչելի և սովորական կլինեն, քան երբևէ՝ ավելի նման Եդեմի հաղորդակցությանը, մինչև մեղքը դատապարտություն բերեց և մարդկությունը առանձնացվեց Աստծո շնորհից և ընկերակցությունից:

Ուստի ոչ բանականությունն ու ոչ Սուրբ Գիրքը չեն պահանջում, որ մեր Տերը իր երկրորդ գալուստին հայտնվի տարբեր մարմիններով՝ մտով ու ոսկորներով: Այդպիսի գործողությունների անհրաժեշտության բացակայությունը ակնհայտ է Սատանայի թագավորության հաջողությունից, որը գործում է մարդկանց միջոցով՝ որպես իր ներկայացուցիչներ: Չարի և սխալի ոգուն մասնակից դարձողները ամենաամբողջական կերպով ներկայացնում են մեծ անտեսանելի իշխանին: Այսպիսով նա իրեն արտահայտում է նրանց մարմնում, մինչդեռ ինքը մնում է հոգեղեն Էակ, անտեսանելի մարդու համար:

Աստվածային բնության մասնակիցները՝ «փոխակերպված» Զրիստոսը, հոգեղեն Էակներ կլինեն (ինչպես Սատանան) և նույնպես մարդկանց համար անտեսանելի կլինեն: Նրանց գործողությունները ձևով նման կլինեն, սակայն բնույթով և արդյունքով ուղղակի հակառակ: Նրանց պատվավոր ներկայացուցիչները, որոնք անտեղյակության և անգործության պատճառով չեն կապվել

և ստրկացած չեն՝ ի տարբերություն Սատանայի ծառաների մեծամասնության, այլևս կատարյալ և «իրական ազատ» լինելով, կգործեն իմաստությամբ և ներդաշնակ, կամավոր և սիրո դրդմամբ, և նրանց նշանակումները արդարության պարզև կլինեն:

Մեր Տիրոջ ներկայությունը աշխարհին կհայտնվի «գործության և մեծ փառքի» դրսևորումներով, սակայն ոչ միայն բնական տեսողության համար, այլև նրանց ըմբռնման աչքերին, երբ դրանք բացվեն գնահատելու Նոր Տիրակալի կողմից իրականացվելիք մեծ փոփոխությունները: Նրա ներկայությունն ու արդար իշխանությունը ակնհայտ կլինեն ինչպես պատիժներում, այնպես էլ մարդկությանը Նրա իշխանությունից հոսող օրհնություններում:

Ժամանակին ընդհանուր համոզմունք էր, որ տառապանքն ու դժբախտությունները պատժի նման գալիս են չարիք գործողների վրա: Զանի որ սա թվում էր բնական և արդար օրենք, մարդիկ համընդհանուր ընդունում էին այն՝ հավատալով, որ այդպես էլ պետք է լինի, նույնիսկ եթե իրականում այդպես չէր: Այնուամենայնիվ, փորձառության փաստերը հաստատում են Աստվածաշնչի ուսուցումը, որ անցյալում հաճախ հենց աստվածաված մարդիկ էին տառապում և հալածվում (Բ Տիմ. 3:12): Սակայն «Նեղության օրը», քառասուն տարվա այն շրջանը, որը նախորդում է Մեսիայի թագավորության հաստատմանը, այս կարգը կսկսի փոխվել: Այդ օրը չար ուժերը տապալվելու են, և արդարությունը, աստիճանաբար հաստատվելով, շուտով կհատուցի չարագործներին՝ համապատասխան հատուցմամբ, իսկ բարեգործներին՝ օրհնություններով – «նեղություն և տառապանք՝ ամեն մարդու վրա, որ չարիք է գործում,... Բայց փառք, պատիվ և խաղաղություն՝ ամեն բարիք գործողին» – այն «Բարկութեան եւ այն Աստուծոյ արդար

դատաստանի յայտնութեան օրումը, Որ նա ամեն մէկին իր գործերի պէս հատուցումը կ'տայ» (Յոմ. 2:9,10,6,5): Եվ քանի որ ներկայումս չարիքը շատ է, հատուցումը սկզբում շատ խիստ կլինի, առաջացնելով «նեղության ժամանակ, ինչպիսին չի եղել մարդկության սկզբից ի վեր»: Ուստի ազգերի վրա հատուցման, աղետների և բարկության միջոցով Տերը աշխարհին կհայտնի դարաշրջանի փոփոխության և կառավարիչների փոխարինման փաստը: Եվ այսպէս, «Երբ որ քո դատաստանները հասնում են երկրին, աշխարհի բնակիչները արդարութիւն են սովորում» (Ես. 26:5–11): Նրանք կհասկանան, որ Նոր կարգի ներքո բարիք գործողները կբարձրացվեն, իսկ չարիք գործողները կհայտնվեն սահմանափակումների ու պատժի առջև: Այս թագավորության և Նրա գործունեության՝ խոնարհների, արդարների, աղքատների, կարիքավորների և ճնշվածների օգտին, մոնոպոլիաների և անարդարության ու ճնշման յուրաքանչյուր համակարգի տապալման և մարդկային գործերի ընդհանուր հավասարեցման վերաբերյալ հստակ մարգարեական վկայության համար ուշադիր կարդացեք (Սաղմոս 72:1-19, 37:1-14):

Մեր Թագավորը այսպիսով աստիճանաբար կհայտնվի. ոմանք Նոր Առաջնորդին կճանաչեն մյուսներից շուտ, սակայն ի վերջո «յուրաքանչյուր աչք կտեսնի [horao – ճանաչի] Նրան» (Հայտնություն 1:7): Բայց «նա գալիս է ամպերով» և մինչդեռ տագնապի ամպերը ծանր ու մութ են, երբ լեռները (այս աշխարհի թագավորությունները) դողում ու փլվում են, և երկիրը (կազմակերպված հասարակությունը) ցնցվում, քայքայվում, հալվում է, որոշները կսկսեն գիտակցել այն, ինչ մենք այժմ քարոզում ենք որպէս արդեն մոտիկ գտնվող մի բան՝ որ եկել է Եհովայի մեծ օրը՝ որ մարգարեացված տառապանքի և բարկության օրը ազգերի վրա սկսվում է, և որ Եհովայի Օծյալը վերցնում է իր մեծ իշխանությունը և սկսում է իր

գործը՝ հաստատելով իրավունքը ըստ չափման և արդարութիւնը՝ ըստ կշեռքի (Ես. 28:17): Եվ «նա պետք է թագավորի» մինչ կոչնչացնի երկրի վրա բոլոր իշխանություններին և օրենքներին, որոնք հակադրվում են երկնքի տիրողներին:

Նեղության ուժգնանալուն պես մարդիկ ապաստան կփնտրեն, թեև ապարդյուն, «գութերի» և քարանձավների, հասարակության մեծ ժայռերի և ամրոցների (ազատ մասնության, փոխօգնության ընկերությունների, արհմիությունների, և բոլոր աշխարհիկ ու կրոնական կազմակերպությունների), և երկրի լեռների (կառավարությունների)ի մեջ ասելով՝ «Ընկե՛ք մեզ վրա¹¹ [ծածկե՛ք և պաշտպանե՛ք մեզ] և թաքցրե՛ք մեզ գահի վրա նստողի երեսից և Գառան բարկությունից, որովհետև Նրա բարկության մեծ օրը եկել է» (Հայտնություն 6:15–17):

Ամբողջ աշխարհը խելագարվել է փողի կուռքապաշտության մեջ, որը դժվարությունների ժամանակ կունենա շատ նշանակալի դեր՝ առաջացնելով ոչ միայն Նրա կուտակման, այլև պահպանման անհանգստություն, և այն ամբողջությամբ կործանվելու է, ինչպես ցույց է տրվում Եսայի 2:8-21-ում և Եզեկիել 7:17-19-ում:

Մեծ տրտմության օրը կիրականանա, և բոլորը փախուստ կփնտրեն Նրա փոթորկից; սակայն միայն մի քանիսն կհասկանան, որ Տիրոջ դատաստանները, որոնք այն ժամանակ տարածվելու են ամբողջ աշխարհում, Նրա ներկայության, Նրա իշխանության հաստատման և Նրա

¹¹ Այստեղ օգտագործված հունարեն «epi» բառը սովորաբար թարգմանվում է «վրա», սակայն այն նաև նշանակում է «միջով» և «մոտ», և բազմիցս այդպես է թարգմանվել ընդհանուր թարգմանությունում: Այստեղ խոսքը պաշտպանության մասին է, ոչ թե ոչնչացման:

օրենքների կիրառման արդյունքն են: Այնուամենայնիվ, վերջում բոլորը կճանաչեն [«կտեսնեն»] Փառքի Թագավորին: Եվ բոլոր նրանք, ովքեր այն ժամանակ սիրում են արդարությունը, ուրախությամբ կհնազանդվեն Նրան և ամբողջությամբ կենթարկվեն Նրա արդար պահանջներին:

Դա հատուցման ժամանակն է լինելու բոլոր նրանց համար, ովքեր խաբեությամբ կամ ուժով, երբեմն օրենքի անվամբ և Նրա հովանավորությամբ, անհրավաբար զավթել են ուրիշների իրավունքները կամ գույքը: Վրեժխնդրությունը, ինչպես տեսանք, կգա Տիրոջից՝ ժողովուրդների զանգվածային ապստամբության միջոցով: Իրենց տառապանքի մեջ, չցանկանալով հրաժարվել ոչ մի դուլարից կամ ակր հողից, կամ վաղուց վայելված և չվիճարկված ենթադրյալ իրավունքից կամ պատվից, սակայն տեսնելով մոտեցող վրեժխնդրությունը, շատերը կփնտրեն պաշտպանություն մինչ այդ՝ հզոր քաղաքացիական, սոցիալական և եկեղեցական կազմակերպությունների տակ՝ իրենց շահերը առաջ մղելու և պաշտպանելու համար, զգալով, որ միայնակ անխուսափելիորեն կործանվելու են: Սակայն այդ կազմակերպությունները չեն կարողանա փրկել նրանց Տիրոջ բարկության օրը: Մոտեցող բախումն ու հատուցումը կստիպեն աշխարհի բոլոր ընտանիքներին ողբալ, որովհետև դա կլինի այնպիսի նեղության ժամանակ, ինչպիսին չի եղել ազգերի գոյության օրվանից ի վեր, և այլևս երբեք չի լինի: Նրանք «նրա պատճառով» են ողբալու՝ նրա դատաստանների պատճառով, որոնք բնականաբար մեծ նեղություն կբերեն, և որովհետև Տերը կբարձրանա՝ սարսափելիորեն ցնցելու երկիրը և ոչնչացնելու նրա ապականությունները (Ես. 2:21): Դատաստաններն ու նեղությունը այնքան լայնածավալ կլինեն, որ ոչ ոք չի փրկվի: Վերջ ի վերջո յուրաքանչյուր աչք կնկատի փոփոխությունը և կհայտնաբերի, որ Տերն է տիրում:

Ձգձգումը մեծապես կկրճատվեր, եթե մարդիկ տեսնեին և անմիջապես գործեին արդարության սկզբունքներով՝ անտեսելով և հրաժարվելով անցյալի բոլոր անարդար արտոնություններից, անգամ եթե դրանք օրինականացված լինեին: Սակայն եսասիրությունը թույլ չի տա դա, մինչև որ նեղությունը չճնշի, չընկղմի հպարտներին, չխոնարհեցնի հզորներին և չբարձրացնի խոնարհներին:

Միևնույն ժամանակ, երբ Պաղեստինի դռները բացվեցին, Ռումիսիայում, Գերմանիայում և հատկապես Ռուսաստանում սկսվեց դաժան հալածանք, և այն շարունակում է սաստկանալ: Այս կառավարությունների հրամաններն հերթով գրկեցին նրանց իրավունքներից և արտոնություններից, և նույնիսկ հարևանների հարձակումներ եղան: Վերջիվերջո, այս ամենը ստիպեց նրանց մեծ թվով հեռանալ: Սակայն, անշուշտ, այս հալածանքում կա նաև օրհնություն, քանի որ այն կստիպի նրանց՝ ինչպես միշտ, իրենց հայացքը ուղղել Երուսաղեմի և ուխտերի կողմը, հիշեցնելով, որ նրանք են որոշ մեծ երկրային խոստումների ժառանգները:

Բայց մենք պետք է հիշենք, որ 1878 թ. ընդամենը շրջադարձային կետ էր մարմնավոր Իսրայելի շնորհի վերականգնման գործընթացում: «Հեթանոսների ժամանակների» մեր ուսումնասիրությունից մենք իմացանք, որ Երուսաղեմն ու նրա ժողովուրդը շարունակելու են ոտնակոխ մնալ (հեթանոսների վերահսկողության ու ճնշման տակ) «մինչև հեթանոսների ժամանակները լրանան»: Ուստի, թեև շնորհքի ժամանակը սկսվեց մ.թ. 1878 թվականին, հրեաները լիակատար շնորհքի մեջ չեն մտնի մինչև 1915 թվականը, առավել վաղ: Նրանց վերելքը շնորհքի մեջ (ինչպես նրանց անկումը) լինելու է աստիճանական: Նշանավոր է նաև, որ այս երկու շրջանները՝ նրանց անկումն ու վերելքը, ունեն ճիշտ նույն

տևողությունը: Վայրէջքը եղել է աստիճանական՝ արագացող տեմպով, երեսուկյոթ տարվա ընթացքում՝ սկսած մեր թվարկության 33 թվականից, երբ ավարտվեց նրանց ազգային բարեհաճությունը, մինչև 70 թվականը, երբ ավարտվեց նրանց ազգային գոյությունը, երկիրը ամայացավ, և Երուսաղեմը ամբողջությամբ ավերվեց:

Այսպիսով, պատմությունը ցույց է տալիս նրանց անկման սկիզբն ու ավարտը, մինչդեռ մարգարեությունը նշում է նրանց վերածննդի երկու կետերը՝ 1878 և 1915 թվականները, բացահայտելով երեսուկյոթ տարվա ճշգրիտ գուգահեռություն: Սա մարգարեի կողմից նշված նրանց «միշնե» («կրկնակի») հաջորդ հատվածն է:

Չնայած հրեական և Ավետարանական դարաշրջանների շրջադարձային կետերը՝ համապատասխանաբար մ.թ. 33 թվականը և 1878 թվականը, հստակ նշվում են Իսրայելի նկատմամբ շնորհքի հետքաշումով և վերականգնմամբ, սակայն յուրաքանչյուր դարաշրջանի գործը ձգվում է մինչև հաջորդը: Այսպիսով, հասնելով իր շրջադարձային կետին, հրեական դարաշրջանը տարածվեց Ավետարանական դարաշրջանի սկզբում: Նույն կերպ նրանց նկատմամբ բարեհաճության վերականգնումը՝ հազարամյա դարաշրջանի առաջին առանձնահատկություններից մեկը, ընդգրկում է Ավետարանական դարաշրջանի ավարտը կամ հունձքը: Երեսուն յոթ տարիների ընթացքում (մ.թ. 33 թվականից՝ իրենց ժողովրդի հանդեպ ողորմության ավարտից, մինչև մ.թ. 70 թվականը՝ նրանց ամբողջական տապալումը) Իսրայելը, հավատարիմ մնացորդի բացառությամբ, անկում ապրեց, մինչդեռ հեթանոս հավատացյալները բարձրացան – հրեական դարը ավարտվում էր, և Ավետարանական դարաշրջանը սկսվում էր: Եվ երեսուկյոթ տարիների ընթացքում (1878-ից մինչև 1915 թթ.), Ավետարանական դարը մոտենում է ավարտին, մինչդեռ, բացի հավատարիմ մնացորդից, անվանական քրիստոնեության համար աղետներ են պատրաստվում և իսկապես պատահում են, միևնույն ժամանակ Իսրայելի և ողջ մարդկության համար պատրաստվում է վերականգնման գործը: Այսինքն՝ Մ.թ. 33 թվականը և 1878 թվականը նշանավորում են համապատասխան նոր դարերի սկիզբը, թեև երկու դեպքում էլ նախորդ դարերի հնձման աշխատանքներն ու

մերժվածների ոչնչացումը թույլատրվեցին շարունակվել ևս 37 տարի նոր դարում: Այսպիսով, այս դարերի ճշգրիտ սահմանները հստակ են, և ակնհայտ է նաև, թե ինչպես են դրանք համընկնում:

Այս երկու անցումային շրջաններից յուրաքանչյուրը ենթադրում է կրկնակի առաջադրանք՝ հնի ոչնչացում և նոր կարգի կամ դարի հաստատում: Քանի որ հրեական դարն ու ժողովուրդը միայն տիպեր կամ ստվերներ էին, այստեղ մենք պետք է սպասենք ավելի լայնածավալ արդյունքների, քան այն ժամանակ: Եվ մենք դրանք կտեսնենք: Այս կրկնակի առաջադրանքը շարադրված է մարգարե Եսայիի խոսքերում՝ «(1) Վրեժխնդրության օրն է իմ սրտում, և (2) եւ իմ փրկուածների տարին եկել է» (Ես. 63:4):

Սա ոչ մի կերպ հմուտ հորինված նմանություն չէ՝ փաստերը խեղաթյուրելու համար: Քանզի այս գուգահեռություններից շատերը, ինչպես նաև այլ ճշմարտություններ, ակնհայտ էին մարգարեություններից և քարոզվում էին, ինչպես այստեղ ցույց է տրվում, դեռ 1878 թվականից մի քանի տարի առաջ՝ այն տարուց, որը հայտարարվել էր Իսրայելի շնորհի վերականգնման տարի, մինչ այն իրականում տեղի ունեցավ և մինչ որևէ իրադարձություն դրան այդ տեսանկյունից հղում էր արվում: Այս հատորի հեղինակը Սուրբ Գրքերից քաղված այս եզրակացությունները հրապարակել է բրոշուրի տեսքով դեռևս 1877 թ. գարնանը:

Դժվար է գտնել ավելի ուժեղ ապացույց: Այնուամենայնիվ, այն պահվել է գաղտնի մինչև այս նշանակված ժամանակը, երբ գիտությունը մեծացել է, որպեսզի [ճշմարիտ երկնային ուսուցման մեջ] իմաստունները կարողանան հասկանալ: Մենք գիտենք Իսրայելի մերժման ճշգրիտ տարին (և նույնիսկ օրը): Մարգարեն հստակ նշում է, որ նրանց համար պետք է լիներ

«միշնե», կամ կրկնակի ժամանակաշրջան: Մենք պնդում ենք (և դա հստակ ներկայացրել ենք), որ այս զուգահեռ ժամանակաշրջանը տևել է հազար ութ հարյուր քառասունհինգ տարի և ավարտվել է մ.թ. 1878 թվականին: Այն, որ այն նշանավորված էր շնորհիվ, անվիճելի փաստ է: Մի՛ մոռացեք նաև, որ միայն «կրկնակի» ժամանակաշրջանի ավարտից հետո պրոֆեսոր Դելիցշը հրատարակեց Նոր Կտակարանի իր երրայերեն թարգմանությունը, որը արդեն հազարավոր հրեաների ձեռքում է և մեծ հետաքրքրություն է առաջացնում: Բացի այդ՝ նկատի ունեցեք, որ առաքյալների ժամանակներից ի վեր հրեաների շրջանում ամենամեծ քրիստոնեական շարժումը, որը գլխավորում են Ռաբինովիչը և մյուսները, այժմ Ռուսաստանում ձեռք է բերում մեծ թափ: Եվ դա սկսվեց մոտավորապես նույն ժամանակահատվածում՝ մ.թ. 1878 թվականին (երբ ավարտվեց Իսրայելի «կրկնակի շրջանը»), ինչպիսին էր հեթանոսների արթնացումը մ.թ. 33 թվականին Իսրայելի մերժումից հետո: Հիշեք առաքյալի խոսքերը, որոնք հստակ ցույց են տալիս, որ այս ժողովուրդը դուրս էր դրված աստվածային շնորհից և նրանց պատկանող երկրային ուխտերից, մինչև հեթանոսների լիակատար թվի մուտքը (մինչև Ավետարանական կոչի ավարտը), և ապա դուք կտեսնեք, որ 1878 թվականը նշանակալի թվական է, որը Հոգևոր Իսրայելի համար ոչ պակաս խոր հետաքրքրություն է ներկայացնում, որքան Մարմնավոր Իսրայելի համար:

Այնուամենայնիվ, ինչպես որ ոչ ոք, բացի մեր Տեր Հիսուսից, չգիտեր Օրենքի դարաշրջանի ավարտի և Ավետարանի դարաշրջանի սկզբի նշանակությունը (նույնիսկ առաքյալները, մինչև Պենտեկոստեն, միայն մասամբ գիտեին և ամեն ինչ միայն մթազնված էին տեսնում), այդպես էլ այժմ պետք է սպասենք, որ միայն Զրիստոսի Մարմինը, օծված նույն Հոգով, կկարողանա հստակ տեսնել Ավետարանական դարաշրջանի ավարտը

և դրա ամբողջական նշանակությունը: Աղքատ հրեաներն ու շատերը, որոնք իրենց քրիստոնյաներ են կոչում, դեռևս անտեղյակ են մեծ, դարաշրջանային փոփոխությունից, որը տեղի ունեցավ Առաջին գալուստի ժամանակ՝ հրեական դարաշրջանի ավարտը և Ավետարանական դարաշրջանի առավոտը: Նույնիսկ հիմա քչերն են գիտակցում, և քչերն են իմանալու, մինչև տեսանելի ապացույցները նրանց ֆիզիկական աչքերին չհաստատեն, որ մենք այժմ գտնվում ենք Ավետարանական դարի ավարտին, կամ «հունձքի», և որ մ.թ.1878 թվականը եղել է չափազանց կարևոր նշանակության հանգրվան: Միայն մի քանի հավատարիմների էր վիճակված տեսնել սա, իմանալ այն և չմնալ աշխարհի հետ մթության մեջ: «Ձեզ տրված է իմանալ», — ասաց մեր Տերը:

Բայց ոմանք կարող են ասել, որ թեև Երեմիան Տիրոջ մարգարե էր և նրա վկայությունը «միշնեի» (կամ Իսրայելի կյանքի երկրորդ փորձառության) վերաբերյալ վստահելի է, այս ապացույցը ավելի համոզիչ կլիներ, եթե նույնը հաստատեր մեկ այլ մարգարե: Դրան մենք պատասխանում ենք, որ մեկ հավատարիմ մարգարեի վկայությունը հավատքի համար ամուր և բավարար հիմք է, և որ Առաջին գալուստի բազմաթիվ նշանակալի ապացույցներ կանխատեսվել էին միայն մեկ մարգարեի կողմից: Այնուամենայնիվ, Աստված, ով ողորմածությամբ հարուստ և գթասիրտ է, հաշվի է առել մեր հավատքի թուլությունը և նախապես պատասխանել է մեր սրտերի աղոթքին՝ տալով մեկից ավելի վկայություն:

Այժմ դիմենք Չաքարիայի (9:9–12) մարգարեությանը: Մարգարեական տեսիլքում նա քայլում է Հիսուսի կողքին, երբ Նա մտնում է Երուսաղեմ (33 թ.), խաչվելուց 5 օր առաջ (Հովհաննես 12:1–12): Մարգարեն ժողովրդին հռչակում է. «Մեծապես ուրախացիր, ո՛վ Սիոնի դուստր, ցնծությամբ աղաղակիր, ո՛վ Երուսաղեմի դուստր, ահա քեզ մոտ է

գալիս քո թագավորը. նա արդար ու փրկագործ է, հեգ և Էշի վրա հեծած, Էշի ձագի՝ ավանակի վրա»։ Ուշադրություն դարձրեք այս խոսքերի ճշգրիտ կատարմանը – Մատթ. 21:4–9, 43; Յովհ. 12:12–15, Ղուկ. 19:40–42. Բոլոր մանրամասները կատարվեցին, անգամ աղաղակները։ Երբ ժողովուրդը գոչեց՝ «Օվսանսա», փարիսեցիները պահանջեցին, որ Յիսուս լռեցնի նրանց, սակայն Նա մերժեց և ասաց՝ «Ասում եմ ձեզ, որ եթե դրանք լռեն, քարերն են աղաղակելու»։ Ինչու՞։ Որովհետև մարգարեորեն կանխագուշակված էր, որ լինելու են աղաղակներ, և մարգարեության յուրաքանչյուր մանրուք պետք է կատարվեր։ Թող մարգարեությունների կատարման այս ճշգրտությունը, մինչև ամենափոքր մանրուք, ներշնչի մեզ վստահություն այս և այլ մարգարեների հետագա հաստատումների նկատմամբ։

Նրանց թագավորին մերժելու աղետալի հետևանքների մասին կարճ մեկնաբանությունից հետո (Չաքարիա 9:10) մարգարեն, Տիրոջ անունից խոսելով, նրանց հետևյալ կերպ է դիմում (12-րդ համարում)։ «Ե՛տ դարձեք ամրոցը, ո՛վ հույսի գերիներ, այսօր ծանուցում եմ. կրկնապատիկ եմ հատուցելու քեզ»։ Այստեղ «երկակի» բառը նույնն է, ինչ Երեմիայում՝ «mishneh», որը նշանակում է կրկնություն կամ մեկ այլ հավասար մաս։ Տարիներ շարունակ խրայելացիները եղել էին հռոմեական լծի տակ, սակայն նրանք «հույսի գերիներ» էին՝ սպասելով մի թագավորի գալստին, որը նրանց ազատելու էր և խոստացված երկրի վրա իշխանություն էր շնորհելու։ Յիմա նրանց թագավորն ու ամրոցը եկել էր, սակայն Նա այնքան խոնարհ ու աննշան էր, որ իրենց սրտերի հպարտության պատճառով չէին կարողանում ճանաչել Նրան որպես այդ ազատարարին։ Եվ դրանից էլ ավել՝ նրանք մեղքի գերիներ էին, և այս Ազատարարը ծրագրել էր մեծ փրկություն։ Մեր Տերը երեք ու կես տարի նրանց հետ էր, նրանց մեջ կատարելով Գրությունների խոսքերը, և այժմ եկել էր վերջին և վճռորոշ

փորձությունը՝ արդյոք Նրանք կընդունե՞ն Նրան, Տիրոջ Օծյալին, որպես իրենց Թագավոր: Աստծո կանխագիտությունը, որ Նրանք մերժելու են Մեսիային, երևում է մարգարեի խոսքերում. «Այսօր ծանուցում եմ. կրկնապատիկ եմ հատուցելու քեզ»:

Այս մարգարեությունը ոչ միայն որևէ կասկած չի թողնում «կրկնապատիկ» գոյության վերաբերյալ (կրկնակի պատժի մասին, որը ավելացվում է Իսրայելի արդեն կրած պատժին՝ Մեսիայի մերժման պատճառով), այլև նշում է այն ճշգրիտ օրը, երբ այն սկսվեց, ինչը Երեմիայի մարգարեությունից բխած եզրակացությունները՝ և մեր Տիրոջ խոսքերով հաստատված՝ «Ահա ձեր տունը ձեզ ավերակ կթողնվի», դարձնում է կրկնակի զորավոր, ճշգրիտ և հստակ:

Հիշենք մեր Տիրոջ այն ժամանակ ասված համապատասխան խոսքերը. «Երուսաղեմ, Երուսաղեմ, որ կոտորում ես մարգարեներին, քարկոծում քեզ մոտ ուղարկվածներին: Քանի՜ անգամ ցանկացա հավաքել քո երեխաներին, ինչպես հավն է իր ձագերին թևերի տակ հավաքում, բայց դուք չցանկացաք»: Ահա ձեր տունը ձեզ ավերակ կթողնվի: Որովհետև ասում եմ ձեզ, որ այսուհետև ինձ չեք տեսնի, մինչև չասեք. «Օրհնյալ է Տիրոջ անունով եկողը»» (Մատթեոս 23:37–39): Մենք նաև կարդում ենք, որ իրենց փորձության վերջին օրը՝ «Եվ երբ մոտեցավ, [Էշի վրա հեծած] քաղաքը տեսնելով՝ լաց եղավ Նրա վրա ու ասաց.. «Եթե դո՛ւ ել իմանայիր՝ զո՞նեա այս օրուայ օրը քո խաղաղութան մասին. Բայց հիմա ծածկուեցաւ քո աչքերիցը»» (Ղուկաս 19:41, 42): Շնորհակալություն Աստծուն, որ Նրանց «կրկնապատիկ» ժամանակը այժմ ավարտվել է, և մենք տեսնում ենք, որ Նրանց կուրությունը սկսում է վերանալ: Սա ուրախություն է բերում հենց սրբերին, քանի որ Նրանք գիտակցում են, որ Զրիստոսի Մարմնի փառավորումը մոտենում է:

Բայց մեր սիրող Հայրը անշուշտ ցանկացավ ամրացնել մեր սրտերը և ցրել ցանկացած կասկած այս փոքր, սակայն չափազանց վճռորոշ և եզրափակիչ տեսակետի վերաբերյալ: Եվ Նա Իսրայելի «կրկնապատիկի» մասին մեզ ուղարկեց մի խոսք Իր ամենահարգված ծառաներից մեկի՝ Եսայիի միջոցով:

Մարգարեն այս հարցին մոտենում է այլ տեսանկյունից՝ այն ժամանակաշրջանի դիրքորոշումից, երբ «կրկնապատիկը» («միշնե») արդեն անցյալ է (մ.թ. 1878 թ.). Մեր՝ այսօր ապրողներին դիմելով, Նա փոխանցում է Տիրոջ ուղերձը՝ ասելով. «Մխիթարեցեք, մխիթարեցեք իմ ժողովրդին, ասում է ձեր Աստուածը. Երուսաղեմի հետ սիրտը առնելով խօսեցեք. Եւ կանչեցեք Նորան, թե Նորա տառապանքը վերջացել է, թե Նորա անօրենությունը թողուեցաւ. որովհետեւ Նա իր բոլոր մեղքերի համար Տիրոջ ձեռքիցը կրկնապատիկ²² հատուցում է ստացել» (Ես. 40:1, 2):

Մարգարեություններ ուսումնասիրողը պետք է նկատի ունենա, որ մարգարեները իրենց հայտարարություններին մոտենում են տարբեր տեսանկյուններից՝ երբեմն ապագան ներկայացնելով ուղղակիորեն որպես ապագա, իսկ երբեմն ընդունելով ապագայի տեսանկյունը և խոսելով այդ դիրքից: Օրինակ՝ Եսայիան, խոսելով մեր Տիրոջ ծննդյան մասին, կարծես ինքն անձամբ կանգնած լինի մուրի մոտ, որտեղ փոքրիկ Հիսուսն է պառկած: «Որովհետեւ մեզ մի մանուկ ծնվեց, մեզ մի որդի տրվեց, և իշխանությունն իր ուսերի վրա կլինի», և այլն (Ես. 9:6): Սաղմոսների գիրքը ընդհանուր առմամբ անհասկանալի է, եթե հաշվի չառնվի այս սկզբունքը: Այս սկզբունքի՝ տարբեր

²² Եբրայերեն «*kephel*» բառը, որը այստեղ թարգմանված է «կրկնապատիկ», նշանակում է «կրկնապատիկ» այն իմաստով, որ ինչ-որ բան ծավլած է մեջտեղից:

մարգարեական դիրքորոշումների առանձնահատկություններից ոչ մի ավելի լավ պատկերացում չի կարող տրվել, քան արդեն նշված Իսրայելի «կրկնապատիկին» վերաբերող երեք մարգարեությունները: Երեմիան մարգարեացրեց, որ կգան օրեր, երբ Աստված նրանց ցրված կղարձնի բոլոր ազգերի մեջ, և որ նրանց «կրկնապատիկից» հետո, Նա կրկին կհավաքի նրանց, ցուցադրելով ավելի մեծ զորություն, քան այն ժամանակ, երբ նրանք դուրս էին եկել Եգիպտացիների ստրկությունից: Չաքարիան խոսում է այնպես, կարծես ապրում էր այն ժամանակ, երբ Զրիստոս Իսրայելին հայտնվեց որպես նրանց Թագավոր: Նա ասում է մեզ, որ հենց այդ օրն սկսվեց նրանց «կրկնապատիկի» հաշվարկը: Եսայան, կարծես թե 1878 թվականին մեր կողքին կանգնած, մեր ուշադրությունը հրավիրում է այն փաստին, որ Աստված Իսրայելին ողորմություն շնորհելու համար նախատեսել էր մի հատուկ, կամ նշանակված ժամանակ, և որ այդ հատուկ ժամանակը եկավ «կրկնապատիկի» ժամանակահատվածից հետո, այսինքն՝ նրանց նախորդ ողորմության ժամանակին համարժեք ժամանակահատվածից հետո: Եվ նա ասում է, որ այժմ մենք պետք է այս հուսադրող ուղերձը հասցնենք Իսրայելին՝ նրանց «կրկնապատիկի» ավարտի մասին: Իրոք, դժվար կլինե՞ր որոշել, թե այս երեք մարգարեություններից ո՞րն է ամենաուժեղը կամ ամենակարևորը: Յուրաքանչյուրը կարևոր է և յուրովի հզոր, սակայն միասին դրանք կազմում են եռակի թելերից հյուսված մի կապ, որը արտասովոր ուժ է տալիս Աստծո խոնարհ, փութաջան և վստահող զավակներին:

Այս մարգարեական խոսքերի համոզիչ լինելը առավել է ամրապնդվում, երբ հիշում ենք, որ այս մարգարեները ոչ միայն ապրել և գրել են հարյուրավոր տարիներ առաջ, այլև գրել են այնպիսի բաների մասին, որոնք ամբողջովին հակասում էին հրեաների սպասումներին: Իրոք, որքան անհավատ և սրտով ծույլ են նրանք (որ հավատան Աստծո

բոլոր խոսքերին մարգարեների միջոցով), ովքեր չեն կարողանում ճանաչել Աստծո ձեռքը և գործերը այս պարզ ու ներդաշնակ վկայության մեջ:

Եթե որևէ մեկը ցանկանա առարկել, որ Բեռլինի կոնգրեսն ու նրա բանաձևերը բավարար նշան չէին Աստծո բարեհաճության Իսրայել վերադարձի սկիզբի համար, մենք պատասխանում ենք, որ դա բարեհաճության վերադարձի շատ ավելի մեծ նշան էր, քան մեր Տիրոջ Երուսաղեմ մուտքը՝ որպես անբարեհաճության նշան: Ոչ մի դեպք իր տեղի ունենալու պահին չի դիտվել որպես մարգարեության կատարում: Եվ այսօր նրանց թիվը, ովքեր գիտակցում են «կրկնապատիկի» կատարումը, հազարներով գերազանցում է նրանց թվին, ովքեր Պենտեկոստից առաջ գիտեին, որ «կրկնապատիկի» կատարումը սկսվել է: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ մանուկը, որի ճակատագիրը, Սիմեոնի խոսքերով, «Իսրայելում շատերի անկման և բարձրացման համար» էր (Ղուկաս 2:34), դարձավ մարմնավոր Իսրայելի՝ որպես ժողովրդի, համար խոչընդոտ: Եվ մենք տեսել ենք, թե ինչպես, որպես Հոգևոր Իսրայելի Գլուխ և Առաջնորդ, Նա կդառնա Ազատարարը՝ մեկ անգամ ևս վեր հանելու մարմնավոր տունը և վերականգնելու ամեն ինչ, երբ նրանց «նշանակված ժամանակը», նրանց «կրկնապատիկը» ավարտվի: Հիմա տեսնում ենք, որ «կրկնապատիկը» ավարտվել է, և ողորմությունը սկսում է վերադառնալ Իսրայելին: Տեսնելով մեր Հոր խոսքի այս կատարումը, մեր սրտերը կարող են երգել՝

Տիրոջ սրբեր, ամուր հիմք է դրված
ձեր հավատքի համար նրա սուրբ խոսքում

Երբ դիտարկում ենք Իսրայելի հեռացումը Աստծո շնորհից և Նրանց հետագա անկումը, ինչպես նաև այս ամենի պատճառը, չպետք է մոռանանք, որ այստեղ նույնպես Նրանք ներկայացնում էին միայն անվանական Յոգևոր Իսրայելին, և որ նույն մարգարեներն էին կանխագուշակել Իսրայելի երկու տների գայթակղությունն ու անկումը: «Նա ձեզ համար սրբարան կլինի, իսկ Իսրայելի երկու տների համար՝ գայթակղության քար ու գլորման վեմ» (Ես. 8:14):

Ինչպես անվանական մարմնավոր Իսրայելի մերժումն ու անկումը տեղի ունեցան, այնպես էլ (և նույն պատճառներով) պետք է տեղի ունենա անվանական հոգևոր Իսրայելի, անվանական ավետարանական եկեղեցու մերժումն ու անկումը: Երկուսի էլ հեռացումն ու անկումը նույնքան հստակ ցույց են տրված Սուրբ Գրություններում: Եվ ինչպես մարմնավոր Իսրայելի մնացորդը փրկվեց կուրությունից և անկումից՝ հեզությամբ և հավատքով, այնպես էլ նույնափսի մնացորդը՝ անվանական Յոգևոր Իսրայելից, փրկվելու է անվանական մեծամասնության կուրությունից և անկումից «հունձքի» ժամանակ, կամ այս դարի վերջում: Այսպիսով, ճշմարիտ եկեղեցուն՝ Զրիստոսի Մարմնի վերջին անդամները պետք է առանձնացվեն միայն անունով եկեղեցուց, որպեսզի միավորվեն փառավորված Գլխի հետ: Միայն Նրանք (մարմնավոր Իսրայելի անկման ժամանակ ընտրված մնացորդը և Ավետարանական դարի մի քանի հավատարիմները, այդ թվում՝ դրա ավարտին ապրող մնացորդը) կազմում են ճշմարիտ «Աստծո Իսրայելը»: Նրանք են ընտրյալները՝ արդարացված Զրիստոսի քավիչ գործի նկատմամբ հավատքի միջոցով, կանչված մասնակցելու զոհաբերությանը և ժառանգությանը Զրիստոսի հետ: Նրանք ընտրյալներ են ճշմարտության հանդեպ իրենց հավատքի և ճշմարտության Յոգով սրբացվելու շնորհիվ, լինելով մինչև մահ հավատարիմ: Այս

դասի ընտրության ավարտին (այս դարի հունձքի ժամանակ) մենք կարող ենք սպասել մեծ խառնաշփոթ ցորենի և որոմի միջև, քանի որ բազմաթիվ աստվածային շնորհներ, որոնք հատուկ շնորհվել էին մի քանի հավատարիմների համար, հետ կվերցվեն անվանական զանգվածներից, երբ Փոքր Հոտը, որի զարգացման համար դրանք նախատեսված էին, կհամալրվի:

Պետք է սպասել, որ այստեղ, ինչպես պատկերավոր հրեական հունձքի ժամանակ, տեղի կունենա առանձնացման գործընթաց: Ինչպես մարգարեն ասաց. «Իմ սրբերին հավաքեցե՛ք ինձ մոտ, որոնք զոհով ուխտ են կապել ինձ հետ» (Սաղմոս 50:5): Եվ ինչպես մ.թ. 33 թվականին անվանական հրեական տունը (որպես համակարգ) դատապարտվեց անբարեհաճության, քայքայման և տապալման, այնպես էլ մ.թ. 1878 թվականը նշանավորեց անվանական Հոգևոր Իսրայելի անբարեհաճության, քայքայման և տապալման սկիզբը, որի մասին մենք ավելի մանրամասն կխոսենք հաջորդ գլխերում:

Մաթեմատիկական ապացույց

Վերոհիշյալ ապացույցները համոզիչ և բավարար համարելով՝ մենք ժամանակագրական կարգով ցույց կտանք, որ, առաջին հերթին, հրեական դարը (Յակոբի մահից մինչև իրենց տան ավերումը, երբ սկսվեց նրանց «կրկնապատիկի», կամ երկրորդ մասի հաշվարկը) տևեց հազար ութ հարյուր քառասունհինգ (1845) տարի, և, երկրորդ՝ որ «կրկնապատիկի» ժամանակաշրջանը ավարտվել է մ.թ. 1878 թվականին, և հենց այդ ժամանակն էր, երբ հասավ շնորհքի սկիզբի պահը, ինչը, իր հերթին, ապացուցեց Ավետարանական դարաշրջանի շնորհքների ավարտը:

Իրականում երկրորդ կետը որևէ ապացույց չի պահանջում, քանզի եթե մեր Տերը իսկապես մահացել է մ.թ. 33 թվականին, ապա բավական է Քրիստոսից հետո 33 թվականին գումարել 1845 տարի, որպեսզի պարզվի, որ Քրիստոսից հետո 1878 թվականն էր այն տարին, երբ Իսրայելի համար պետք է սկսվեր շնորհքի ժամանակաշրջանը: Սա մեզ տրված է, որպեսզի կարողանանք ստուգել սկզբնական ենթադրությունը, որ այն ժամանակահատվածը, երբ Իսրայելը Աստծո ողորմության հովանու տակ սպասում էր Նրա խոստումների կատարմանը, տևել է հազար ութ հարյուր քառասունհինգ տարի:

Այս ժամանակաշրջանի տևողությունը ամբողջությամբ ներկայացված է ժամանակագրության բաժնում, բացառությամբ մեկ կետի՝ Յակոբի մահից մինչև Եգիպտոսից ելքը ընկած ժամանակահատվածի: Մինչև վերջերս այս ժամանակաշրջանը բավականին առանձնահատուկ էր նրանով, որ այն թաքնված էր, ծածկված: Մինչև դրա նկատվելը հրեական դարի տևողությունը մնում էր անծանոթ, և առանց դրա անհնար էր այն «կրկնապատիկը» չափել, նույնիսկ եթե «կրկնապատիկի» վերաբերյալ մարգարեությունները հայտնի և հասկանալի էին: Ժամանակագրությունը հարթ ընթանում է մինչև Յակոբի մահը, սակայն այդ օրվանից մինչև Եգիպտոսից դուրս գալը ամբողջական արձանագրություն չկա: Այստեղ-այնտեղ նշվում են տարբեր ժամանակահատվածներ, սակայն չկա մի միակ թել, որով կարող էինք վստահ լինել: Այդ պատճառով ժամանակագրական աղյուսակի այս կետում ստիպված եղանք դիմել Նոր Կտակարանին: Այնտեղ գտանք օգնություն ոգեշնչված առաքյալից, որը մեզ տրամադրեց կապող օղակ: Այսպիսով պարզեցինք, որ Ուխտից (Թարայի՝ Աբրահամի հոր մահվանից) մինչև Իսրայելի

Եզիպտոսից դուրս գալը անցել է չորս հարյուր երեսուն (430) տարի:

Մենք ճշգրիտ գտնում ենք Հակոբի մահվան և Իսրայելի Եզիպտոսից դուրս գալու միջև թաքնված ժամանակահատվածը՝ նախ հաշվելով Թարայի մահից մինչև Յակոբի մահը ընկած ժամանակահատվածը, ապա այդ տարիները հանելով 430 տարիներից՝ Թերայի մահից մինչև Եզիպտոսից դուրս գալը տևած ժամանակահատվածից:

Աբրահամը յոթանասունհինգ (75) տարեկան էր, երբ նրա հետ կնքվեց ուխտը՝ թարայի մահվան ժամանակ (Շննդոց 12:4), և Իսահակը ծնվեց քսանհինգ (25) տարի անց (Շննդոց 21:5): Ուստի՝

Ուխտից մինչև Իսահակի ծնունդը..... 25 տարի

Իսահակի ծնունդից մինչև Հակոբի ծնունդը (Շննդոց 25:26).....60

Հակոբի ծնունդից մինչև նրա մահը (Շննդ. 47:28).....147

Ընդհանուր տարիներ Աբրահամական ուխտից մինչև Հակոբի մահը..... 232

Ուխտից մինչև այն օրը, երբ Իսրայելը դուրս եկավ Եզիպտոսից (Ելք 12:41), Պասեփն.....430

Այստեղից հանք ժամանակահատվածը ուխտից մինչև Հակոբի մահը.....232

Յակոբի մահից մինչև Ելք այսպիսով, կազմել է....198 տարի

Այսպիսով վերացվում է Իսրայելի ազգային գոյության տևողության հետ կապված բոլոր դժվարությունները: Հակոբի մահից մինչև Ելքը ընկած ժամանակահատվածը դիտավորյալ թաքցվել է մինչև նշանակված պահը: Այսինքն՝ այժմ մենք ավելացնում ենք ժամանակագրական աղյուսակում նշված ժամանակաշրջանները:

Հակոբի մահից մինչև Ելքը ընկած ժամանակաշրջանը.....	198 տարի
Իսրայելը Անապատում	40 տարի
Քանանի բաժանումից առաջ	6 տարի
Դատավորների ժամանակաշրջան	450 տարի
Թագավորների ժամանակաշրջան	513 տարի
Ամայացման ժամանակաշրջան	70 տարի
Կյուրոսի առաջին տարուց մինչև մ.թ.1 տարին...	536 տարի
Հակոբի մահից մինչև մեր թվականը - ընդհանուր տարիներ.....	1813 տարի
Մ.թ. 1-ից մինչև խաչելությունը՝ Պասեքի տոնին, Մ.թ. 33 թ. Գարնանը — լրիվ տարիները Հրեական եկեղեցական ժամանակով*	32 տարի
Թագավորության համար Իսրայելի ամբողջական սպասման ժամանակաշրջանը՝ աստվածային բարեհաճության ներքո	1845 տարի

Նրանց կրկնապատիկի չափը գտնելու համար, երբ նրանց նկատմամբ շնորհը հասունացավ և սկսեց շնորհվել նրանց, և երբ, հետևաբար, այն սկսեց հեռանալ անվանական Հոգևոր Իսրայելից, մենք հաշվում ենք հազար ութ հարյուր քառասունհինգ (1845) տարի Մ.թ. 33 թ. գարնանից և ստանում ենք Պասեքի ամսաթիվը՝ Մ.թ. 1878 թ. Նրանց վերածնունդը մ.թ. 1878-ից մինչև մ.թ. 1915²³ թվականը (հեթանոսների ժամանակների ավարտը), այն Թագավորի շնորհքի ներքո, որին նրանք մերժել էին և որին այդ ժամանակ կճանաչեն, տևողությամբ

²³ Հրեական եկեղեցական տարին սկսվում էր գարնանից, և Պասեքը տեղի էր ունենում յուրաքանչյուր նոր (եկեղեցական) տարվա առաջին ամսվա 15-րդ օրը:

համապատասխանում է նրանց անկման 37 տարիներին՝ սկսած 33 թ. իրենց տունը ավերակ թողնելու օրվանից մինչև 70 թ. որպես ժողովուրդ ամբողջական փլուզումը:

Մենք արդեն քննարկել ենք իրեական դարի ստվերի, կամ տիպի, և Ավետարանական դարի էության, կամ նախատիպի, բազմաթիվ տպավորիչ զուգադիպություններ, և այստեղ մենք ևս մեկը ապացուցեցինք՝ երկու դարերի տևողությունը ճշգրիտ համընկնում է՝ Ավետարանական Եկեղեցին կանչվելով Իսրայելի «միշնե», կամ անբարեհաճության կրկնապատիկ ժամանակահատվածում: Եվ մինչդեռ մյուս համապատասխանությունները տպավորիչ են, առավելապես տպավորիչ են երկու դարերի եզրափակիչ հատկանիշները՝ նրանց «հունձքերը», նրանց հնձողները, նրանց աշխատանքը և նվիրված ժամանակը, որոնք բոլորը ծառայում են մեզ հստակ ուրվագծեր տալու այս դարի ավարտին նախատեսված եզրափակիչ աշխատանքի համար: Ուշադիր նկատեք այս երկու հունձքերի համապատասխանությունները, որոնք մենք կարճ կերպով կհամառոտենք:

Հունձքերի միջև զուգահեռությունների ուսումնասիրություն

Հրեական դարը ավարտվեց «հունձքով», որի ընթացքում մեր Տերը և առաքյալները հավաքեցին այն պատուհները, որոնց սերմերը ցանվել էին Մովսեսի և մարգարեների կողմից: «Բարձրացրեք ձեր աչքերը», – ասաց Հիսուս, – «և նայեք դաշտերին, որովհետև դրանք սպիտակել են հնձի համար»: «Ես ուղարկեցի ձեզ հնձելու այն, ինչի համար դուք չեք աշխատել, բայց դուք մասնակից դարձաք նրանց աշխատանքին» (Հովհ. 4:35–38): Ավետարանական դարի ավարտն էլ կոչվում է հունձք – «հունձքը դարի ավարտն է»: «Եւ հնձի ժամանակին

հնձողներին կ'ասեմ. Առաջ որոմները քաղեցէք եւ սորանց խուրձ խուրձ կապեցէք... իսկ ցորենը ժողովեցէք իմ ամբարի մէջ» (Մատթ. 13:39, 30):

Հովհաննէսը հրեական հնձի աշխատանքն ու արդյունքը մարգարեացրեց այս խոսքերով (Մատթ. 3:12): «հոսելին սորա ձեռին է, եւ նա կ'սրբէ իր կալը եւ իր ցորենը կ'հաւաքէ [իրական Իսրայելացիներին] շտեմարանը, [քրիստոնեական Եկեղեցում], իսկ յարդը [ժողովրդից մերժվածները] կ'այրէ անանցանելի կրակով (նեղություն, որը ոչնչացրեց նրանց որպես ժողովուրդ)»: Այստեղ տեղի ունեցավ Հոգով և կրակով մկրտությունը – Հոգին իջավ «իրական իսրայելացիների» վրա Պենտեկոստի օրը, մինչդեռ նեղությունների կրակը ընկավ մնացած բոլորի վրա նրանց մերժումից հետո երեսուկյոթ (37) տարիների ընթացքում (Մատթ. 3:11): Այս նեղության ժամանակ Իսրայելը ոչ թե անհատապես, այլ որպես ազգ ոչնչացվեց: Հայտնողն ասում է, որ այս դարի բերքը կհնձվի ճշմարտության սուր մանգաղով, քանի որ հնձելու ժամանակը եկել է, և նա նկարագրում է երկակի աշխատանք, որի մի մասը վերաբերում է երկրի որթատունկին, որը տարբերվում է Հոր տնկած ճշմարիտ որթատունկից՝ Քրիստոս Հիսուսից և նրա անդամներից կամ ճյուղերից (Հովհաննէս 15:1-6): Այս դարի հունձքը կոչվում է ցորենի և որոմի հունձք (Մատթ. 13:24–30, 36–39), մինչդեռ հրեական դարի հունձքը՝ ցորենի և հարդի հնձումն է: Եվ եթե այնտեղ հարդը զգալիորեն գերակշռում էր, ապա, հաշվի առնելով բոլոր մյուս առումներով այդքան ակնառու նմանությունը և զուգահեռությունը, այս հնձում որոմները շատ ավելի առատ կլինեն, քան ցորենը:

Հրեական հունձքը (քառասուն տարվա ժամանակահատվածը) սկսվեց մեր Տիրոջ ծառայությամբ և ավարտվեց անվանական Իսրայելի մերժմամբ, նրա անկմամբ և քաղաքի ավերումով հռոմեացիների կողմից մ.թ. 70

թվականին: Եվ այս դարի հունձըը սկսվեց մեր Տիրոջ ներկայությամբ՝ Երկրի Մեծ հոբելյանի սկզբին, 1874 թվականին (ինչպես ցույց է տրված VI գլխում), և ավարտվում է հեթանոսական իշխանության տապալմամբ՝ 1914 թվականին (սաև քառասուն տարվա ժամանակահատված): Սա ևս մեկ զարմանալի զուգահեռ է այս երկու դարերի միջև:

Չնայած հրեական հունձը սկսվեց մեր Տիրոջ ծառայությամբ, և այդ ժամանակ Աստծո ողորմությունը լքեց նրանց անվանական համակարգը երեք ու կես տարի անց, որին հաջորդեցին այդ համակարգի համար երեսուկոթ տարվա տառապանքներ, Այնուամենայնիվ, այս ժողովրդից մի քանիսին համար շարունակվեց հատուկ ողորմություն, և մեր Տիրոջ մերժումից հետո նրանց համար առանձնացված մնաց Քրիստոսի հետ ժառանգակից լինելու բարձր դիրքի կոչը ևս երեք ու կես տարի, և Նա մերժեց նրանց՝ այդպիսով հաստատելով Դանիելի (Դան. 9:27) խոստումը, որ ողորմություն կցուցաբերվի այս ժողովրդին մինչև յոթանասուններորդ շաբաթը լիովին ավարտվի, որի մեջտեղում Մեսիան կհեռացվի: Այս խոստումը կատարվեց բոլոր ճշմարիտ ցորենների համար, մինչդեռ այն համակարգը, որը գերի էր պահում այս ցորենը, դատապարտվեց և լքվեց շաբաթվա կեսին: Հրեական դարի ցորենի հավաքումը շարունակվեց ևս մի քանի տարի՝ սկսած մեր Տիրոջ ծառայության սկզբից, թեև բոլոր հատուկ շնորհները դադարեցին Քրիստոսի մահից երեք ու կես տարի անց:

Այս ժողովրդի նեղությունը (կրակը) վաղաժամ բռնկվեց, սակայն իր սարսափելի ցասմանը չհասավ, մինչև որ այս ժողովրդի ցորենը գրեթե ամբողջությամբ չէր հավաքվել ամբար:

Նմանատիպ շրջաններ, որոնք համապատասխանում են այդ հունձի առանձնահատկություններին, կարելի է

տեսնել այն դարի հունձքի մեջ, որը այժմ մոտենում է իր ավարտին: 1874 թ. աշունը, երբ ըստ Հոբեյյան ցիկլերի եկել էր մեր Տիրոջ ներկայության ժամանակը, համապատասխանում է Նրա մկրտության և Սուրբ Հոգով օծման ժամանակին, երբ Նա դարձավ Մեսիա, Իշխան (Դանիել 9:25) և սկսեց հավաքել հրեական հունձքը: 1878 թ. գարունը (երեք ու կես տարի անց) համապատասխանում է այն օրվան, երբ մեր Տերը ստանձնեց թագավորի պաշտոնը, նստեց Էշի վրա և մաքրեց տաճարը առևտրականներից, ողբալով և հանձնելով անունով միայն գոյություն ունեցող եկեղեցուն՝ թագավորությունը, ավերման: Այս ամսաթիվը նշանավորում է այն պահը, երբ անվանական եկեղեցու համակարգերը «շարտվեցին դուրս» (Հայտնություն 3:16), և այդ պահից (1878 թ.) դադարեցին լինել Աստծո Խոսքի գործիքները և ամբողջությամբ կորցրին Նրա ճանաչումը: 1878 թ. գարնանից սկսած երեք ու կես տարին, որը ավարտվում է 1881 թ. հոկտեմբերին, համապատասխանում է նրանց յոթանասուն շաբաթյա բարեհաճության երկրորդ կեսի ընթացքում անհատական հրեաների նկատմամբ շարունակվող բարեհաճության երեք ու կես տարուն: Ինչպես, պատկերավոր ասած, այս ամսաթիվը (Քրիստոսի մահից երեք ու կես տարի անց) նշանավորեց հրեաների նկատմամբ բոլոր հատուկ շնորհների ավարտը և հեթանոսների նկատմամբ շնորհի սկիզբը, այդպիսով մենք տեսնում ենք, որ 1881 թ. մեր թվարկմամբ նշանավորում է հեթանոսների նկատմամբ հատուկ բարեհաճության ավարտը (ավարտելով «վերին կոչը», կամ այս դարին հատուկ օրհնություններին հրավերը), որպեսզի նրանք դառնան Քրիստոսի հետ ժառանգակիցներ և մասնակիցներ աստվածային բնությանը: Ինչպես տեսանք, սա նշանավորում է հրեական ժողովրդի շրջանում քրիստոնեության ուղղությամբ զանգվածային շարժում, որը հայտնի է որպես «Կիշինևյան շարժում»: Ներկայումս

անվանական քրիստոնեության վրա կախված է տիրություն, սակայն փոթորիկը հետ է պահվում մինչև ցորենը հավաքվի, մինչև Աստծո ուղարկվածները կնքեն Իր ծառաների ճակատները (մտքերը) ճշմարտությամբ (Հայտնություն 7:3):

Այս հուճճի հատկանիշների և հրեական հուճճի միջև զուգահեռները առավել ակնհայտ են դառնում, երբ հաշվի ենք առնում քարոզչությունը: Հրեական հուճճի առաջին երեք ու կես տարիների ընթացքում Տերը և Նրա աշակերտները առանձնակի ուշադրություն էին դարձնում ժամանակին և Մեսիայի ներկայության փաստին: Նրանք հռչակում էին՝ «Ժամանակը հասել է»: Ազատողը եկել է (Մարկոս 1:15, Մատթ. 10:7): Նույնն է այս հնձի դեպքում: Մինչև Քրիստոսի 1878 թվականը մարգարեությունները Տիրոջ ներկայության ժամանակի և փաստի վերաբերյալ (Էությամբ, ինչպես այստեղ է ներկայացված, թեև պակաս հստակ) կազմում էին մեր ուղերձը. այնուհետև աշխատանքը ընդարձակվեց, և այլ ճշմարտություններ ավելի վառ ու հստակ ի հայտ եկան: Այնուամենայնիվ, նույն փաստերն ու Սուրբ Գրքերը, որոնք խոսում են նույն ժամանակի և ներկայության մասին, մնում են անփոփոխ և կասկածից վեր: Ինչպես այն շնորհքը, որ տրվեց որոշ իսրայելացիներին այն բանից հետո, երբ Նրանց անվանական տունը մերժվեց, չէր նախատեսված Նրանց անվանական եկեղեցական համակարգը փոխակերպելու և բարեփոխելու համար, և ոչ էլ որևէ հույս էր տալիս Նրանց որոմը ցորենի վերածելու, այլ միայն՝ հասած ցորենի յուրաքանչյուր հատիկը առանձնացնելու և շտեմարան հավաքելու համար, նույնպես և այս հուճճի ժամանակ շարունակական և առատ ներկա շնորհի (ճշմարտության լույսի) նպատակը ոչ թե ամբողջական սեկտաների փոխակերպումն է կամ ազգային բարեփոխումների իրականացումը, այլ, ընդհակառակը, ցորենի դասի ամբողջական առանձնացումն է որոմների դասից: Դարեր

շարունակ նրանք միասին, կողք-կողքի աճել են, և մի մաքուր, բացառապես միայն հացահատիկից բաղկացած աղանդը անհայտ էր: Բայց այժմ, հունձքի ժամանակ, պետք է կատարվի առանձնացում, և լարվածությունը լինելու է հսկայական: Շատ դեպքերում դա կնշանակի երկրային ընկերությունների ավարտը և բազմաթիվ նուրբ կապերի խզումը: Այսպիսի բաժանումը կառաջացնի ճշմարտությունը: Տիրոջ մարգարեությունը «հնձի» մասին Նրա առաջին գալստի ժամանակ կկատարվի նաև ներկայիս հունձքի ժամանակ (տես Մատթ. 10:35–38, Ղուկ. 12:51–53): Ինչպես այն օրերին ճշմարտությունը հորը հակադրեց որդու հետ, դստերը՝ մոր հետ, և սկեսուրին՝ հարսի հետ, այնպես էլ այս անգամ մարդու թշնամիները ամենից հաճախ Նրա սեփական ընտանիքի անդամները կլինեն: Սա անխուսափելի է: Այն, ով խաղաղությունը ճշմարտությունից ավելի է սիրում, փորձության կենթարկվի, իսկ ով ճշմարտությունը ամենից վեր է դասում, կընդունվի և կճանաչվի որպես «հաղթող»՝ ինչպես հրեական «հունձքի» ժամանակ:

Հրեական «հունձքի» ժամանակ ընտրված պատգամաբերները՝ Թագավորի և գալիք Թագավորության ավետաբերները, խոնարհ, ոչ տիտղոսավոր մարդիկ էին, մինչդեռ ուղերձին դիմադրողները գերագույն քահանաներն էին, դպիրները, փարիսեցիները և աստվածաբանության դոկտորները: Եվ, ինչպես կարելի էր սպասել, այստեղ նույնպես նույնն ենք տեսնում. ամենից կույրերն են նրանք, ովքեր առաջնորդում են կույրերին, որոնք, ինչպես իրենց հրեական գործընկերները, «չճանաչեցին իրենց այցելության ժամանակը» (Ղուկաս 19:44):

Այստեղ փորձության հիմնական կետերից մեկը ներկայությունն էր, իսկ մյուսը՝ խաչը: Հովհաննես Մկրտիչը նրանց ասաց. «Ձեր մեջ կա Մեկը, որին դուք չեք ճանաչում»: Միայն ճշմարիտ խորայելացիներն էին կարող

ճանաչել Մեսիայի ներկայության փաստը: Բայց նրանց համար խաչը խոչընդոտ դարձավ. նրանք, թեև ցանկանում էին ընդունել Մեսիային որպես Ազատարար, իրենց հպարտությունը թույլ չէր տալիս ընդունել Նրան որպես Փրկագնող: Նման մի բան տեղի է ունենում նաև այսօր. շատերի համար Զրիստոսի ներկայությունը, շարունակական «հունձքը» և անվանական հավատացյալների զանգվածների մերժումը դառնում են խոչընդոտ: Նրանք պատրաստ չեն ընդունելու Մեծ Ազատարարին, որի գալուստի և թագավորության համար շատերը աղոթել էին (ինչպես իրեաներն էին արել): Մեկ անգամ ևս ճշմարիտ են հնչում խոսքերը. «Ձեր մեջ կա Մեկը, որին դուք չգիտեք»: Մեկ անգամ ևս Զրիստոսի խաչը դառնում է փորձություն և գայթակղություն, մի բան, որը ոչ ոք չէր կարող կանխատեսել: Եվ շատ-շատերը ընկնում են դրա պատճառով՝ ասելով. «Մենք կընդունենք Զրիստոսին որպես մեր Ազատիչ, բայց մերժում ենք Նրան որպես մեր Փրկագնող, այն Մեկին, ով վճարեց փրկանքի գինը»:

Չկա կասկած, որ բոլոր նրանք, ովքեր ուշադիր ուսումնասիրել են այս հարցը, ստիպված կլինեն ընդունել, որ մեր Տիրոջ ներկայության (որպես հոգեղեն և, հետևաբար, անտեսանելի էակի) ապացույցները շատ ավելի ուժեղ և հստակ են, քան մարմնով գալու ապացույցները, որոնք ներկայացվել էին իրեաներին Նրա առաջին գալուստի ժամանակ: Եվ ոչ միայն այսօր Տիրոջ ներկայության մարգարեական ապացույցները ավելի ամբողջական, կատարյալ և առատ են, այլև մեր շուրջբոլորը գտնվող ժամանակների նշանները (որոնք ապացուցում են, որ հնձի գործը շարունակվում է) շատ ավելի ակնհայտ և համոզիչ են նրանց համար, որոնց աչքերը օծված են (Հայտնություն 3:18) քան այն հանգամանքները առաջին գալստի ժամանակ, երբ մեր Տեր Հիսուսը (մի քանի հետևորդների հետ, մեծ հակադրության և բազմաթիվ անբարենպաստ հանգամանքների առջև)

հայտարարեց. «Ժամանակը ՀԱՍԵԼ Է ... ապաշխարեցեք և հավատացեք ավետարանին» — Մեսիան, Մեծ Եհովայի ուղարկած պատգամաբերը, եկել է ձեզ համար կատարելու հայրերին տրված բոլոր խոստումները: Չարմանալի չէ, որ միայն խոնարհներն էին կարողանում ընդունել խոնարհ Նազովրեցուն որպես Մեծ Ազատարար, և նույնպես պարզ, անտիտղոս մարդիկ՝ Նրա հետ որպես Նրա ընտրված կառավարության մաս, նրանք, ովքեր Նրա առաջնորդությամբ պիտի դառնային իշխաններ: Միայն մի քանիսն էին կարողանում ճանաչել այն Մեկին, ով նստած էր Էշի վրա և լալիս էր Երուսաղեմի համար, որպես այն մեծ Թագավորին, որի մասին Չաքարիան մարգարեացել էր, որ Սիոնը ուրախությամբ կընդունի Նրան որպես Թագավոր:

Նրա առաջին գալուստին Նա խոնարհեցրեց Ինքն Իրեն՝ ստանալով մարդկային մարմին և բնություն (Եբր. 2:9, 15), որպեսզի այդպես Իրեն մատուցելով որպես մեր փրկանքի գին, իրականացնի մեր փրկագնումը: Հիմա Նա բարձրացված է և այլևս չի մեռնի: Իր երկրորդ գալուստին, հազնված ամեն իշխանությամբ (Փիլիպպացիներ 2:9), Նա կբարձրացնի Իր «Մարմինը», և ապա աշխարհին կշնորհի վերականգնման օրհնությունները, որոնք Նա Իր առաջին գալուստին Իր սեփական թանկարժեք արյունով գնել է նրանց համար: Հիշեք, որ Նա այլևս մարմնեղեն չէ, այլ հոգևոր Էակ է, և որ շուտով Նա կփոխակերպի ու կփառավորի Իր բոլոր հավատարիմ հետևորդներին՝ Իր անդամներին և ժառանգակիցներին:

Հիսուսը հրեական ժողովրդին երեք ձևով ներկայացրեց Իրեն՝ որպես հարսի (Հովհ. 3:29), որպես հնձող (Հովհ. 4:35, 38) և որպես թագավոր (Մատթ. 21:5, 9, 4): Զրիստոնեական տան առջև Նա ներկայանում է նույն երեք կերպարներով (Բ Կորնթ. 11:2, Հայտն. 14:14, 15; 17:14). Հրեական ժողովրդի առջև Նա եկավ որպես Փեսա և Հնձող իրենց հնձի սկզբին (Իր ծառայության սկզբին):

Բառացիորեն խաչվելուն նախորդող գիշերը Նա նրանց առջև հայտնվեց որպես իրենց Թագավոր, կիրառելով թագավորական իշխանություն՝ նրանց դատավճիռ հայտարարելով, նրանց տունը ավերակ թողնելով և տաճարի մաքրման խորհրդանշական գործողությամբ (Ղուկաս 19:41–46, Մարկոս 11:15–17): Այս հունձքի ժամանակ նույնպես ճիշտ նույնն էր. մեր Տիրոջ ներկայությունը որպես հարսնացու և հնձող ճանաչվեց առաջին երեք ու կես տարիների ընթացքում (1874–1878 թթ.): Այդ պահից սկսած հատկապես ակնհայտ դարձավ, որ 1878 թվականին եկել է ժամանակը, որպեսզի Աստծո տանից սկսվի թագավորական դատաստանը: Դրան է վերաբերում Հայտնություն 14:14–20-ը, որտեղ մեր Տերը հայտնվում է որպես պսակված հնձող: Զրիստոսի իշխանություն և լիազորություն ստանալու պատկերի համապատասխան՝ 1878 թվականը հստակ նշում է մեր ներկայիս, հոգեղեն, անտեսանելի Տիրոջ՝ Թագավորների Թագավորի, իրական իշխանության ստանձնման ժամանակը: Սա Նրա մեծ իշխանության ստանձնման ժամանակն է, որը մարգարեության մեջ սերտորեն կապված է Նրա հավատարիմների հարության հետ, ինչպես նաև ազգերի վրա նեղությունների և բարկության սկիզբի հետ (Հայտնություն 11:17,18): Այստեղ, ինչպես պատկերում, դատաստանը սկսվում է անվանական եկեղեցուց՝ անվանական համակարգերի (ոչ թե մարդկանց) վրա արտասանված ոչնչացման դատավճռով, որոնք արտաքին տեսքով ներկայացնում են ճշմարիտ եկեղեցին՝ «Մարմինը»: Այստեղ նույնպես տեղի է ունենում ճշմարիտ տաճարի, ճշմարիտ եկեղեցու, Զրիստոսի Մարմնի՝ սրբացված դասի մաքրագործումը (Ա Կորնթ. 3:16, Հայտնություն 3:12): Այս սրբացված դասը, կամ անվանական եկեղեցու ներսում գտնվող տաճարի դասը, նույն հարաբերությունն ունի ամբողջ անվանական եկեղեցու հետ, ինչ իրական տաճարը՝ ամբողջ սուրբ

Երուսաղեմի քաղաքի հետ: Զաղաքը լքվելուց հետո տաճարը մաքրվեց: Այսպես էլ այժմ տաճարի դասը պետք է մաքրվի՝ հեռացնելով յուրաքանչյուր եսասեր, մարմնավոր միտք և ամենայն աշխարհիկ բան, որպեսզի տաճարը մաքուր լինի և դառնա Աստծո Սուրբ Հոգու բնակավայրը՝ կենդանի Աստծո տաճարը:

1878 թվականից ի վեր առանձնահատուկ առաջադրանք է եղել հռչակել Թագավորի կոչը՝ «Դո՛ւրս ելեք դրա միջից [Բաբելոնից], իմ ժողովուրդ, որպեսզի դրա մեղքերին մասնակից չլինեք ու դրա պատուհասները չընդունեք» (Հայտնություն 18:4): «Հեռացե՛ք, հեռացե՛ք, դո՛ւրս ելեք այդտեղից, անմաքուր բանի մի՛ դիպեք, դո՛ւրս ելեք նրա միջից. մաքո՛ւր մնացեք, ո՛վ Տիրոջ սպասները կրողներ» (Ես. 52:11):

Առաջին և երկրորդ գալուստների ուղեկցող մեկ այլ նշանավոր նմանությունն այն է, որ գերիշխող է փրկչի անհրաժեշտության զգացողությունը և ազգերի շրջանում լայնորեն տարածված համոզմունքը, որ փրկությունը պետք է շուտով ինչ-որ ձևով գա (այս առումով որոշների գաղափարները նույնիսկ մոտ են ճշմարտությանը): Բայց ամեն դեպքում միայն քչերն են կարողանում ճանաչել Փրկչին և հավաքվել Նրա դրոշի տակ՝ ճշմարտության ծառայության մեջ: Հրեական հունձքի ժամանակ շատերը սպասում էին Տիրոջ գալստին, երբ բոլորը «սպասում» էին Նրան (Ղուկաս 3:15), սակայն դա տեղի էր ունենում Նրա ծննդյան ժամանակ, Նրա առաքելության և Մեսիայի օծման սկզբից երեսուն տարի առաջ: Այդպիսին էր շատերի (որոնք հետագայում կոչվեցին ադվենտիստներ) սպասումն ու շարժումը, որը գլխավորապես առաջնորդվում էր բապտիստ եղբայր Ուիլյամ Միլլերի (Ամերիկայում) կողմից, ինչպես նաև պարոն Վուլֆի և այլոց կողմից Եվրոպայում և Ասիայում: Այն իր գագաթնակետին հասավ 1844 թվականին՝ ճիշտ երեսուն տարի առաջ 1874 թվականից,

երբ (հոբեյանների ուսմունքի համաձայն) Զրիստոսը՝ Փեսան և Յնձողը, իսկապես եկավ: Այսպիսով, մենք գտնում ենք այս դարերի միջև ևս մեկ տպավորիչ ժամանակագրական զուգադիպություն: Զանի որ այս երեսուն տարիները ճշգրիտ համապատասխանում են մանկան՝ Հիսուսի, ծննդյան և Օծյալի, Մեսիայի, երեսուն տարեկանում մկրտվելու և որպես Փեսա ու Յնձող ներկայացվելու միջև ընկած ժամանակահատվածին (Մատթեոս 3:11, Հովհաննես 3:29):

Երկու դեպքում էլ հիասթափությունն ու երեսուն տարվա սպասումը հաջորդեցին, որի ընթացքում բոլորը քնեցին, իսկ միայն մի քանիսը յուրաքանչյուր դեպքում արթնացան ճիշտ ժամանակին՝ Մեսիայի ներկայությունը գիտակցելու համար: Երկու տների անվանական զանգվածները չկարողացան ճանաչել այցելությունը, քանի որ նրանք չափազանց ծանրաբեռնված և անտարբեր էին, անտեսելով արթուն մնալու և հսկելու կոչը: Այսպես Է կատարվում մարգարեի կանխատեսումը. «Եվ Նա կլինի... Իսրայելի երկու տների համար՝ գայթակղության քար ու գլորման վեմ» (Ես. 8:14): Մարմնավոր տունը սայթաքեց, քանի որ անտեսեց Աստծո օրենքը՝ կարևորություն տալով ավանդույթներին (Մարկոս 7:9,13), քանի որ ճիշտ չէր հասկացել առաջին գալստի ձևն ու նպատակը, քանի որ նրանք պատրաստ չէին ընդունել Նրան այնպես, ինչպես Նա եկավ, և սայթաքեցին Նրա և Նրա զոհաբերության գործի վրա: Անունով միայն հոգևոր Իսրայելի զանգվածները այժմ նույն քարին են գլորվում և նույն պատճառով: Նրանք կուրացել են մարդկային ավանդույթներից և կուսակցական նախապաշարմունքներից, որոնք խոչընդոտում են Աստծո Խոսքի միջոցով լիակատար լուսավորմանը: Արդյունքում նրանք ճիշտ պատկերացում չունեն Տիրոջ երկրորդ գալու ձևի և նպատակի մասին: Այստեղ նույնպես Զրիստոսի խաչը՝ փրկանքի ուսմունքը, բոլորի համար փորձություն է

դառնում: Հարկ է նշել, որ եթե այդ վեմը չլիներ, ոչ մի տուն չէր գլորվի դրա վրա և չէր ընկնի: Վեմը այժմ ներկա է, և անվանական համակարգերը գլորվում են դրա վրա, ընկնում և փշվում են կտոր-կտոր: Մինչդեռ, ինչպես առաջին գալուստին, «ճշմարիտ խորայելացիները» անձամբ ճանաչում և ընդունում են Վեմը, և, բարձրանալով այս ճշմարտության վրա, հոգևորապես վեր են բարձրանում բոլոր գլորվող և մերժող զանգվածներից:

Ովքեր իրենց ըմբռնման աչքերը բացել են, այլևս չեն սայթաքում: Վեմին բարձրանալով՝ նրանք նրա բարձր դիրքից շատ ավելի լավ տեսնում են աստվածային ծրագրի անցյալն ու ապագան՝ կան բաներ, որոնք անգամ բառերով չեն կարող արտահայտվել (Եկեղեցու մոտեցող փառքի և երկրի տոնի մասին): Ով վստահում է Տիրոջը, երբեք չի ամաչի:

Այս զուգահեռության ամբողջ ուժը կլիներ անկատար, եթե չնշեինք, որ Հոբեյանի ցիկլերն ու հեթանոսների ժամանակները նշանավորում են այն նույն ժամանակահատվածները, որոնք ամբողջությամբ համընկնում են հրեական զուգահեռներում նշված ժամանակների հետ: Հրեական և քրիստոնեական դարերի տիպ-նախատիպ լինելու փաստը երևակայության արդյունք չէ: Առաքյալներն ու մարգարեները վկայում են դրանց նմանության մասին: Քրիստոնեական դարի հունձքի աշխատանքների արդեն սկսված լինելը ապացուցելիս մենք միայն զուգահեռությունների վրա հույս չենք դնում. մենք արդեն ցույց ենք տվել, որ այս հունձքի սկիզբն ու ավարտը նշված են նաև մեկ այլ ձևով: Հոբեյան ցիկլերը վկայում են, որ մ.թ. 1874 թվականի աշնանը ժամանակն էր մեր Տեր Հիսուսի ներկայության և վերականգնման գործի սկիզբի համար, մինչդեռ վերոհիշյալ զուգահեռությունները ցույց են տալիս, որ այս ամսաթիվը (1874) ճշգրիտ համապատասխանում է Հիսուսի օծմանը որպես Մեսիայի հրեական «հունձքի»

սկզբին՝ Առաջին գալուստին: «Հեթանոսների ժամանակները» ապացուցում են, որ ներկայիս բոլոր կառավարությունները պետք է տապալվեն մ.թ. 1915 թ. վերջին մոտ, մինչդեռ արդեն նշված զուգահեռությունը ցույց է տալիս, որ այս ժամանակահատվածը համընկնում է մ.թ. 70 թվականին, որը վկա եղավ հրեական պետության ամբողջական անկմանը: Այս ամենի հաշվառմամբ տրամաբանական հարց է ծագում՝ արդյոք այս ժամանակային նմանությունները պարզապես պատահականություններ են, թե՞ դրանք բխում են նույն աստվածային առաջնորդությունից, որը մենք արդեն տեսել ենք մարմնավոր տան այլ գործերի կարգավորման մեջ, որի նպատակն է լինել այս դարի իրականությունների ստվերը:

Ոչ, դրանք պատահական չեն: Չկա որևէ կասկած, որ Ամենաիմաստունը, ով ժամանակագրության միջոցով պարզ դարձրեց մեզ, որ Ադամի ստեղծումից սկսած վեց հազար տարին ավարտվեց Մ.թ. 1872 թվականին, և որ այդ ժամանակ սկսվեց յոթերորդ հազարամյակը՝ հազարամյա դարաշրջանը: Ով Հոբեյանի ցիկլերի միջոցով մեզ հայտնեց, որ Տերը ներկա է գտնվելու և որ Վերականգնման ժամանակները կսկսվեն 1874 թ. Աշնանը, և Ով, հեթանոսների ժամանակների միջոցով, ցույց տվեց մեզ, որ չպետք է սպասենք այս ամենի շտապ իրականացմանը, այլ որ ամեն ինչ պետք է, կարծես, բնականաբար ծավալվի քառասուն տարիների ընթացքում, Նա մեզ տվել է այս զուգահեռ դարերում, որոնք նշված են Իսրայելի «կրկնապատիկով», մի վկայություն, որը ոչ միայն հստակորեն ինքնին ուսուցանում է Տիրոջ ներկայության, հունձքի և վերականգնման (սկսելով մարմնավոր Իսրայելի հանդեպ ողորմությունից) մասին, այլև միևնույն ժամանակ ապացուցում է մյուս մարգարեական վկայությունների և ժամանակագրության ճշգրտությունը: Հատուկ ուշադրություն դարձրեք, որ եթե ժամանակագրությունը կամ այս ժամանակաշրջաններից որևէ մեկը փոխվեր

նույնիսկ մեկ տարով, ապա այս զուգահեռության ողջ գեղեցկությունն ու ուժը կխաթարվեին: Օրինակ, եթե ժամանակագրությունը փոխվեր մեկ տարով՝ լինի դա Թագավորների կամ Դատավորների ժամանակաշրջաններին մեկ տարի ավելացնելով կամ դրանք մեկ տարով կրճատելով, դա կխաթարեր ամբողջ զուգահեռությունը: Եթե մեկ տարի ավելացվեր, Իսրայելի առաջին շրջանը կկազմեր 1846 տարի, իսկ Նրա կրկնապատիկը՝ կամ «մյուս կեսը», կտեղափոխվեր մեկ տարով ավելի ուշ, հակառակ դեպքում, նման փոփոխության դեպքում հոբելյանի ցիկլերը կտեղափոխվեին մեկ տարով ավելի վաղ, այսինքն՝ մ.թ. 1873 թվականին: Այս ամենի արդյունքում 6000 տարվա ավարտը կընկներ մ.թ. 1871 թվականին, թեև դա ոչ մի ազդեցություն չէր ունենա հեթանոսների ժամանակների վրա: Բոլորի համար պարզ է, որ սա ամբողջությամբ կխաթարի բոլոր ներդաշնակությունն ու բոլոր զուգահեռները: Եվ եթե ժամանակագրական հաշվարկից մեկ տարի պակասեցվեր, խառնաշփոթը նույնքան մեծ կլիներ՝ փոփոխություններ կկատարվեին մի քանի ժամանակաշրջաններում, միայն այս անգամ հակառակ ուղղությամբ: Այսպիսով, ժամանակին առնչվող այս տարբեր մարգարեությունները միմյանց հաստատում են, և այս երկու դարերի միջև առկա զուգահեռները ամրապնդում են դրանց վկայությունը:

Յուրաքանչյուր ոք, ով անգամ մի փոքր ծանոթ է մարգարեական ժամանակաշրջանների և նման հաշվարկների, որոնք սովորաբար կատարում են «Երկրորդ ադվենտիստները» և այլոք, կնկատի, որ այս հասկացությունների մեկնաբանման այս մեթոդը մեծապես տարբերվում է Նրանց սեփական մոտեցումից: Նրանք սովորաբար ձգտում են բոլոր մարգարեությունները համադրել մեկ միակ ամսաթվի վրա: Նրանց այսպիսի վարքագծին մղում են իրենց սեփական խաբուսիկ սպասումները: Նրանք հույս ունեն, որ մի քանի պահերի

ընթացքում կիրականանա ամբողջ ծրագիրը, որը իրականում պետք է տևի հազար տարի՝ Տիրոջ գալուստը, հարություն և աշխարհի դատաստան: Եվ նրանք հույս ունեն, որ այդ մի քանի պահերը կավարտվեն աշխարհի այրումով: Աստծո մեծ ծրագրի տարբեր փուլերի համար տարբեր ամսաթվեր նշող մարգարեությունները գնահատելու և ընդունելու համար նրանք նախ պետք է հասկանային «Դարերի ծրագիրը» և Տիրոջ երկրորդ գալուստի իրական բնույթը: Բայց մեծամասնությունը չափազանց կուրացած է իր տեսություններից և նախապաշարմունքներից, որպեսզի դա անի: Նրանց փորձերը մարգարեությունը համապատասխանեցնել իրենց կեղծ ակնկալիքներին հաճախ հանգեցնում են տեքստի խեղաթյուրմանը, դրա ձգմանը կամ սեղմմանը՝ ըստ անհրաժեշտության, որպեսզի մարգարեության բոլոր անավարտ թելերը կապվեն մեկ կոնկրետ ամսաթվի հետ: Այս ընկերները լավ կանեն, եթե արթնանան այս հարցում իրենց մոլորությունից, քանի որ նրանց ակնկալիքները մեկ առ մեկ ոչինչի չեն վերածվել: Ե՛վ մենք, և՛ նրանք լավ գիտակցում ենք, որ կան կանխատեսումներ, որոնք նրանք վերցրել են, սակայն չեն կարող դրանք տարածել ապագա, քանի որ դրանք պատկանում են անցյալին, ուստի այժմ նրանք հրաժարվել են այդ կանխատեսումներից: Դրանք կատարվել են, սակայն ամբողջովին այլ կերպ, քան նրանք սպասում էին, սակայն նրանք դեռևս դա չեն գիտակցում:

Եվ հակառակը, այստեղ ներկայացված մարգարեությունները, որոնք դեռ պետք է ուսումնասիրվեն, ոչ մի կերպ չեն ձգվել, չեն խեղաթյուրվել և չեն նեղացվել: Մենք դրանք պարզապես ներկայացնում ենք այնպես, ինչպես գտնում ենք Աստծո խոսքում: Աստծո «Դարերի ծրագր»-ի վերաբերյալ ճիշտ ակնկալիքներով հեշտ է տեսնել (հատկապես նրանց համար, ովքեր այն հստակ ընկալում են), թե ինչպես են տարբեր մարգարեական թելերը տեղավորվում և չափվում դրա մեջ: Ոմանք նկատում են

դրա մի առանձնահատուկ կարևոր կողմը, մյուսները՝ մեկ այլ, սակայն նրանց համար, ովքեր բավականաչափ հստակ են տեսնում, հրեական և Ավետարանական դարաշրջանների այս զուգահեռությունը ակնհայտ է և հանդիսանում է մյուս բոլորի ճշգրտության աներկբա ապացույցը:

Աստծո ծրագրում ժամանակաշրջանների կառուցվածքը, ինչպես ներկայացվում է մարգարեություններում, շատ նման է ճարտարապետի տրամադրած տեխնիկական պայմաններին, իսկ հրեական դարաշրջանի հետ զուգահեռները նման են նրա գծանկարների: Պատկերացրեք, որ ճարտարապետից ստացել ենք տան տեխնիկական պայմանները, սակայն առանց որևէ գծագրության, ստիպված ենք նստել ու գծագրել դրանք՝ հիմնվելով տվյալների վրա: Այնուհետև մեզ անհրաժեշտ կլինի ձեռք բերել ճարտարապետի գծանկարները ապագա շենքի համար, և եթե, դրանք համեմատելով մեր սեփական էսքիզի՝ սպեցիֆիկացիաների հիման վրա կազմված, պարզենք, որ բոլոր անկյուններն ու չափերը ամբողջությամբ նույնն են, մենք կրկնակի վստահ կլինենք, որ մեր մեկնաբանությունը ճիշտ է: Նույնն է նաև այստեղ. Ավետարանական դարաշրջանի պատկերը (կամ ստվերը) մեզ ներկայացվում է հրեական դարաշրջանում, և մարգարեությունների ու իրադարձությունների՝ որոնք ընդամենը ստվեր էին, համապատասխանությունը մեզ տալիս է մեր եզրակացությունների ճշտության անհրաժեշտ հաստատումը, չնայած որ մենք դեռ «քայլում ենք հավատքով, ոչ թե երևույթով»:

Մյուս դեռևս չքննված մարգարեական վկայությունները նույնպես կգտնվեն այս զուգահեռների հետ կատարյալ համաձայնությամբ: Նրանցից մեկը՝ «Դանիելի օրերը», մատնանշում է մեծ օրհնությունն նվիրվածների համար, ովքեր կյանքի կկոչվեն մ.թ. 1875

թվականից սկսած՝ օրհնություն, որը անշուշտ իրականացվում է Աստծո Խոսքի ճշմարտությունների մեծ բացահայտման ընթացքում այդ ժամանակից ի վեր: Փառք Նրան, ով մեզ մթությունից հանել է դեպի Իր զարմանահրաշ լույսը:

Հիշեք, որ քառասուն տարվա հրեական հունձքը ավարտվեց մ.թ. 69 թվականի հոկտեմբերին, և դրան հաջորդեց այդ ազգի ամբողջական տապալումը: Նույն կերպ, Ավետարանական դարի քառասուն տարվա հունձքը կավարտվի 1914 թվականի հոկտեմբերին, և անմիջապես դրանից հետո մենք նույնպես պետք է սպասենք կոչված «քրիստոնեության» տապալմանը: «Մեկ ժամում դատաստանը կգա նրա վրա» (Հայտնություն 18:10, 17, 19):

Կարդացողի ուշադրությունը հրավիրվում է ստորև բերված Համապատասխանությունների աղյուսակին, որը մանրակրկիտ ուսումնասիրության արժանի է:

**Հիսուսի մահից մինչև մ.թ.1878 թվականը՝ անվանական տան
որին հաջորդեց հավատարիմ մի քանիսի բարձրացում**

ԻՍՐԱՅԵԼԻ ԵՐԿՐՈՒ ՏՆԵՐԸ
Մովսեսական և քրիստոնեական դարաշրջանների
Համապատասխանություններ

ՄԱՐԴՆԱԿՎՈՐ ԻՍՐԱՅԵԼ	ՀՊՈՎՈՐ ԻՍՐԱՅԵԼ
Ծառաների տուն Ա կորնթ. 10:18, Հռովմ. 9:7,8 Եբր. 3:5 հիմնված Հակոբի տաաների և որդիների վրա 3 թագավորաց 18:31 Թագավորություն և քահանայություն, սուրբ ազգ Եվբ 19:6 Ահարոն, Զահանայապետ ըստ մարմնի Եբր. 9:7 Մարմնի թվատում Հռովմ. 2:28,29 Մեղքի և մահվան օրենք Հռովմ. 8:2 Երկրային խոստումներ Ճննդոց 13:14-17, Գործք 7:2-5 Իրական Բաբելոնի գերության մեջ 2 Մսաց. 36:20 Բաղեհաճության տևողությունը՝ 1845 տարի, Յակոբի մինչև Իսրայելի մեծումը և Հոգևոր Իսրայելի սկիզբը, Մ.թ. 33 թ. Նովիկալ համակարգի մեծումը, Մ.թ. 33 թ. Մատթ. 23:28	Որդիների տուն Գաղ. 4:5-7,30,31, 6:15,16, Հովի, 1:12, Հռովմ. 8:15 Հիմնված է Հիսուսի տաաների և առաքյալների վրա Հայտնություն 21:14 Թագավորական քահանայություն, սուրբ ազգ Ա Պետրոս 2:5,9 Հիսուս, հոգևոր քահանայապետ Եբր. 9:11 Սրտի թվատում Հռովմ. 2:28,29 Քրիստոս Հիսուսում կյանքի Հոգու օրենք Հռովմ. 8:2 Ավելի լավ խոստումներ Եբր. 9:23, 11:40 Պատկերավոր Բաբելոնի գերության մեջ Հայտն. 17:5, 18:4 Բաղեհաճության տևողությունը՝ 1845 տարի, Հիսուսի մահից մինչև Քրիստոսի թագավորության սկիզբը և Բաբելոնի մեծումը, մ.թ. 1878 թ. Նովիկալ համակարգի մեծումը, Մ.թ. 1878 թ. Հայտն. 3:6

**Հակոբիմահից մինչև խաչը, շնորհիքի շրջանը
որին հաջորդում է հավատարիմ մի քանիսի բարձրացումը**

Որդիների համար բարեհաճության շրջանը, 1845 տարի,
և մյուսների մերժում, նեղություններ և դատաստաններ

37 տարվա անկումը, փնչւն Ա.Թ. 70 թ. Դարի ավարտը՝ 40 տարվա հունձքի Դուկա 10-2, 16 Զոյի. 4:35-38 Մեր Տիրոջ ներկայությունը և Նրա մահվան զոհաբերական բնույթը - գայթակրության քարը Նա Իսրայելի երկու (մոմիալ) տների համար՝ գայթակրության քար ու զորման վեճ կլինի - Ես. 8:14	ՆՐԱՆԵ ԶԻՆԱՅԱՏ, ԻՐԵՆԵ ԱՅՅԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ Դուկա 19:44, Մատթ. 24:38, 39 Մեր Տեղը ներկայացված է երեք կերպարով - փեսա, հնձող և արքա Զոյի. 3:29, 4:35,38 Մատթ. 21:5,9,4, 2 Կորնթ. 14:14, 15, 17:14	Չիտույի ծննդյան ժամանակ գալստիկ հավատացողների շարժում, Նրա գալստուհից եկ ծնունդը որպես Մեսսիա երեսուն տարի արագ Մատթ. 2:1-16, Գործք 10:37, 38 Տիրոջ իրական ներկայությունը որպես փեսա և հնձող — մ.թ. 29 թ. հոկտեմբեր Թագավորի իշխանությունն ու տիրությունը ստանձնեց երեք ու վեց տարի անց՝ մ.թ. 33 թվականին	Թագավորի արագին գործը - դատաստան Նոսիմալ քրիստոնեական տունը մերժվեց, Զոլուտ տաճարը մաքրվեց — Ա.Թ. 4:17, Զո 3:16, մ. 3:2 Մակեմական քրիստոնեության ամբողջական ոչնչացումը, որը կստարվեց 37 տարում մերժվելուց հետո կամ 40 տարում հունձքի սկզբից — Ա.Թ. 1915 թ.
--	--	---	---

անվանական տան ծառաների համար՝ 1845 տարի,
և մյուսների մերժում, նեղություններ և դատաստաններ

ԳԼՈՒԽ VIII

ԱՌԱՋ ԵՂԻԱՆ ՊԵՏՔ Է ԳԱ

Ինչպես է այս կարևոր մարգարեությունը կապված Երկրորդ գալստի հետ – Մասնակի և պատկերավոր կատարում Հովհաննես Մկրտչի մեջ – Իրական կատարումը – Սուրբ Լեռան տեսիլքը – Եղիայի, պատկերի և նախապատկեր Եղիայի միջև ուշագրավ համապատասխանություններ – Ժամանակը հասել է – Հեռանկար – Եղիայի հաջորդը՝ Եղիսեն:

Ահա ես ձեզ կուղարկեմ Եղիա մարգարեին Տիրոջ մեծ և ահեղ օրվա գալուց առաջ: Եվ նա հայրերի սրտերը պիտի դարձնի դեպի որդիները, իսկ որդիների սրտերը՝ դեպի իրենց հայրերը, որ չլինի ես գամ և երկիրը հարվածեմ անեծքով (Մաղ. 4:5,6):

Երբ հաշվի ենք առնում այն ապացույցները, որ Մեսիական Թագավորությունը շուտով հաստատվելու է երկրի վրա, չի կարելի անտեսել այս մարգարեությունը, որը վկայում է Եղիայի գալուստի կարևորության մասին:

Մեր տեքստի բնույթը անսովոր է: Թվում է, թե այն ենթադրում է, որ Եղիայի առաքելությունը կլինի ծնողներին վերադարձնել խոնարհ, մանկանման վիճակի, և ապա, նրանց դարձնելով փոքրիկ երեխաների պես հնազանդ, շեղել նրանց սրտերը սխալից, մեղքից և անհավատարմությունից և վերադարձնել նրանց «հայրերի» հետ ներդաշնակության մեջ: (Ինչպես հրեաները կոչում էին իրենց հավատարիմ հայրապետներին և մարգարեներին):

Մաղաքիայի մարգարեությունը (Եհովայի վերջին ուղերձը Իսրայելին) կարծես խորը տպավորություն է թողել նրանց վրա՝ հատկապես վերջին երկու գլուխները, որոնք առանձնապես անդրադառնում են Մեսիայի գալուստին և

այն հատուկ փորձություններին, որոնք պետք է բերեր Տիրոջ ներկայության օրը (տես Մաղ. 3:1–3, 13–18; 4:1–6): Այդպիսով, եզրակացնելով, որ փորձությունը լինելու է առանձնահատուկ, նրանք հանգստություն գտան վերոհիշյալ վերջին տողերում, որտեղ խոստացվում է, որ մարգարե Եղիան՝ ով մի անգամ արդեն ամբողջ ազգին Բահաղի պաշտամունքից հեռացրել և Աստծո պաշտամունքի էր բերել, կրկին կգա՝ նրանց պատրաստելու համար այս խիստ փորձության ժամանակին, որը բերելու է Մեսիայի գալուստը:

Այս մարգարեությունը մեր Տիրոջ առաջին գալուստին չկատարվեց՝ ոչ Մեսիայի մասին հատվածը, ոչ էլ Եղիայի մասինը: Ակնհայտ է, որ այն վերաբերում է երկրորդ գալուստին՝ «ուխտի պատգամաբերի» փառքով ու գործությամբ գալուն, ինչպես նաև այդ ժամանակ Տիրոջ օրվա դատաստանին ու մեծ նեղությանը: Սակայն Զրիստոսի ներկայանալը պատկերավոր Իսրայելին և նրանց վրա որպես ժողովրդի հասած մեծ տառապանքը, երբ նրանք մերժեցին Նրան, — այս ամենը ևս մեկ ստվեր էր, Աստծո կողմից նախատեսված և ծրագրված, որպեսզի ավելի մանրամասն բացահայտեր այս մարգարեության բովանդակությունը: Այն, ինչ Հովհաննես Մկրտիչը Իսրայելի համար արեց Եղիայի հոգով, նման էր խոստացված Եղիայի գործին, սակայն այն չհաջողվեց: Արդյունքում այդ ժողովրդի վրա եկավ տառապանք (անեծք): Իրական Եղիան, որի մասին այստեղ խոսում է մարգարեն, պետք է իրականացնի հզոր գործ ամբողջ «երկրի» վրա՝ բոլոր մարդկանց Երկրորդ գալուստին նախապատրաստելու համար: Մի ժամանակահատված նա նույնպես կհանդիպի ձախողման, որի արդյունքում մեծ նեղության (անեծք) ժամանակ կհարվածի ամբողջ երկիրը:

Մարգարեի նշած Եղիայի գալուստը պետք է տեղի ունենա նախքան «Եհովայի մեծ ու ահավոր օրը»:²⁴

Եվ քանի որ (ինչպես արդեն ցույց ենք տվել) Եհովայի մեծ օրը սկսվել է մ.թ. 1874 թվականին և կշարունակվի 40 տարի, ավարտվելով (հեթանոսների ժամանակների ավարտով) աշխարհում սատանայական իշխանության ամբողջական տապալմամբ և Էմանուելի լիակատար հաստատմամբ (Քրիստոս Զիսուսը և Նրա սրբերը) ամբողջ իշխանությամբ և տիրապետությամբ, այստեղ մեզ համար կարևոր է ցույց տալ, որ Եղիան արդեն եկել է: Նա չի հաջողել մարդկանց սրտերը շրջել մանկան պարզության և արդարների [իրական] իմաստության կողմը, հետևաբար (ինչպես Աստված կանխատեսել և մարգարեացել է) մեծ նեղության ժամանակը գալիս է: Այս ժամանակահատվածում Աստված մարդկությանը՝ դաժան ու դառը փորձառության միջոցով, կփոխանցի այն դասերը, որոնք Նրանք պետք է ամբողջությամբ յուրացնեն, որպեսզի պատրաստ լինեն երախտագիտությամբ ընդունելու Քրիստոսին (Եհովայի՝ Նոր Ուխտի Պատգամաբերին) և այս ուխտի բոլոր արդար չափանիշներն ու օրենքները և այլն:

Առաջին գալուստին, ինչպես արդեն տեսանք, Աստծո բազմաթիվ խոստումների և ծրագրերի իրականացումը տեղի ունեցավ փոքր մասշտաբով՝ մեկ ժողովրդի՝ Իսրայելի մեջ: Այս ամենը ծառայեց որպես ավելի մեծ ու փառավոր իրականությունների պատկերավորում, որոնց իրականացումը տեղի կունենա Քրիստոսի Երկրորդ գալուստին: Եվ ինչպես հրաշքները, բժշկումները և նմանատիպ այլերը կանխանշում էին հազարամյա դարաշրջանի ավելի մեծ գործերը, և մեր Տիրոջ իբրև արքա Էջի վրա Երուսաղեմ մտնելը կանխանշում էր Նրա՝ որպես արքաների արքայի և

²⁴ Տես Զատոր I, Գլուխ xv.

տերերի Տիրոջ, Երկրորդ գալուստին ավելի մեծ իշխանություն, փառք և պատիվ ստանձնելը, այնպես էլ «մարդը՝ Հիսուս Զրիստոսը» և Նրա փոքր աշակերտների խումբը նախանշում էին Երկրորդ գալուստին Երկրային փառքի բարձրացված Տիրոջը, որ միացած է սրբերին (Նրա հարսնացուին և ժառանգակցին): Նույն կերպ, Հովհաննես Մկրտիչը, իր աշակերտների հետ, որոնք Նրա առաջնորդությամբ նույն գործով էին զբաղված (փորձելով Իսրայելին դարձի բերել և պատրաստել Մեսիայի ընդունմանը), ներկայացնում էր իսկական Եղիան (ճշմարիտ քրիստոնեական եկեղեցին), որի առաքելությունն էր փորձել աշխարհը դարձի բերել Մեսիայի՝ Հոգևոր Պատվո Տիրոջ և Թագավորների Թագավորի գալուստից առաջ: Հովհաննես մկրտիչը, Եղիայի հոգով ու զորությամբ, չկարողացավ վերափոխել Իսրայելին, ուստի (Մատթ. 17:12) Իսրայելը մերժեց մարմնեղեն Հիսուսին և իր վրա բերեց մեծ «վրեժնորության օրը», նեղության և ցասման օրը (Ղուկաս 21:22). Նույն կերպ, սակայն ավելի մեծ մասշտաբով, ճշմարիտ և մեծ Եղիան չկարողացավ աշխարհին փոխակերպել և պատրաստել Փառքի Թագավորին ընդունելու համար, և այժմ, որպես արդյունք, աշխարհի վրա պետք է գա մեծ ցասման օրը, որպեսզի հալեցնի, մեղմի, խոնարհեցնի և պատրաստի բոլորին՝ ամբողջ սրտով գոչելու. Ովսաննա! Օրհնյալ Է Նա, ով գալիս է Եհովայի անունով:

Այսպիսով, ակնհայտ է, որ մարմնեղեն Եկեղեցին (մարմնեղեն Զրիստոսը, Գլուխն ու Մարմինը) Եղիան է, կամ փառքով Եկեղեցու նախակարապետը, Եհովայի Օծյալը: Ոչ թե անվանական եկեղեցի, այլ իսկապես սրբացված եկեղեցի, որը գերեզմանի մյուս կողմում կլինի մեծ Օծյալ Փրկիչը — հենց այս Եկեղեցին է կազմում Եղիան: Նրա առաքելությունն է դատապարտել սխալն ու մեղքը և ցույց տալ ապագա փառքի Թագավորությունը: Մեր Տեր

Հիսուսը և առաքյալները, ինչպես նաև այդ ժամանակից ի վեր Զրիստոս Հիսուսում հավատացյալներ բոլորը պատկանում են այս մեծ տիպաբանական Եղիային՝ մարգարեին կամ ուսուցչին, նույն դասին (Գլուխ և Մարմին), որը շուտով կկազմի Փառքի Թագավորին: Եկեղեցու այժմյան գործունեությունը բնույթով միայն նախապատրաստական է՝ համեմատած աշխարհի վերափոխման ապագա գործի հետ: Իր թագավորական պաշտոնում Եկեղեցին աշխարհի համար կանխ այն, ինչը չէր կարողացել անել որպես ուսուցիչ Եղիա:

Բայց մի սխալ հասկացեք մեզ. ինչ որ այստեղ ցույց ենք տվել, այն է, որ Աստված Իր Ավետարանական դարի ծրագրում աշխարհի փոխակերպումը չէր նախատեսել: Նա նման մտադրություն չուներ. ներկայումս Նրա ծրագիրը բացառապես Եկեղեցու ընտրությունն ու փորձությունն է, իսկ աշխարհի օրինությունը Եկեղեցու (Զրիստոսի) միջոցով կգա այս դարից հետո. Եվ մենք ինքներս մեզ հակասություն չենք անում, երբ ասում ենք, որ Եղիան (Զրիստոսը մարմնով) փորձեց աշխարհը դարձի բերել, սակայն ձախողվեց (բացառությամբ մի քանի մասնակի բարեփոխումների), քանզի թեև Աստված գիտեր և մարգարեացել էր, որ մեր առաքելությունը աշխարհում մեծապես ձախողվելու է՝ բացի ընտրված փոքր հոտի ընտրությունից, սակայն, գիտակցելով, որ նման ջանքերը օգտակար կլինեն մեզ համար, Նա մեր Տիրոջ միջոցով մեզ հանձնարարեց ջանալ աշխարհը դարձի բերել. «Գնացե՛ք, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին՝ Նրանց մկրտելով»: Տեսնելով, որ Նա կանխատեսել է ոչ միայն մեր ներկայիս ձախողումը, այլև մեր ապագա հաջողությունը, երբ Նա կբարձրացնի մեզ և կհաղորդի մեզ աստվածային զորություն, մենք կարող ենք ուրախանալ անգամ անցած տասնութ դարերի հարաբերական ձախողման տեսքին, միևնույն ժամանակ գիտակցելով, որ ճշմարիտ Եղիայի դասի բոլոր աշխատանքները ապարդյուն չեն եղել, այլ

ծառայել են ճշմարիտ Եկեղեցու զարգացման աստվածային նպատակին՝ ինչպես որ այն վկայեց աշխարհի առջև, ինչը ժամանակին իր օգուտները կբերի:

Հովհաննես Մկրտիչը, փաստորեն, վերադարձած Եղիա չէր, և Եկեղեցին նույնպես Եղիա չէ: Եվ ինչպես ճիշտ է, որ Հովհաննեսը Իսրայելի համար կատարեց Եղիայի գործը (Ղուկաս 1:17) նրանց պատրաստելու համար, և նաև մարմնով Տիրոջը ներկայացրեց, ուստի ճիշտ է նաև, որ Եկեղեցին աշխարհի համար իրականացնում է Եղիայի մարգարեացված գործը «Եղիայի հոգով և զորությամբ», քարոզելով մեր Տիրոջ երկրորդ գալուստը գրեթե նույն բառերով, որոնք Հովհաննեսը օգտագործեց առաջին գալստի ժամանակ: «Բայց ձեր միջումը կայ մեկը, որին դուք չ'գիտեք. Նա է ինձանից հետոյ եկողը, որ ինձանից առաջ եղավ» (Հովհաննես 1:26, 27):

Բոլորը չէին կարողացել ընդունել Հովհաննեսի վկայությունը կամ գիտակցել, որ նա մարմնավոր Թագավորի նախակարապետն էր: Եթե նրանք կարողանային դա անել, նրանք պատրաստ կլինեին ընդունել Հիսուսին որպես իրենց Մեսիային: Բոլոր նրանց համար, ովքեր կարողացան ընդունել և իսկապես ընդունեցին Հովհաննեսի վկայությունը և ճանաչեցին Զրիստոսին, Հովհաննեսը իսկապես կատարեց Եղիայի դերը: Ինչպես Տերը նրանց ասաց Հովհաննեսի մասին (Մատթեոս 11:14). «Եթե ուզում եք ընդունել, նա է Եղիան, որ պետք է գար» — չնայած Հովհաննեսն ու նրա գործը ամբողջությամբ չկատարեցին Եղիայի վերաբերյալ մարգարեությունները, ինչպես մեր Տերը մարմնով չկատարեց ամենը, ինչ մարգարեացվել էր Մեսիայի մասին: Բոլոր նրանց համար, ովքեր կարող էին ընդունել Նրան, Նա Եհովայի Օծյալն էր՝ նույնիսկ մինչ Նա ավարտեր Իր զոհաբերական գործը, փառավորվեր և վերադառնար, կիրառելով Մեսիայի կամ Ազատարարի իսկայական

լիազորությունը: Առաջին գալուստին Յովհաննեսը, իրոք, որոշ չափով այն օրինակի իրականացումն էր, որը սկսվել էր Եղիայի անձով ու գործով, և առաջին գալուստի ժամանակ Յովհաննեսի գործը նախանշում էր Եկեղեցու եզրափակիչ գործը երկրորդ գալուստին: Նրա անդամները, մարմնավոր Զրիստոսի ոտքերը (Եղիայի ոտքերը), քարոզում են Թագավորությունը (Ես. 52:7): Նրանց, ովքեր «կարող են ընդունել», մենք քարոզում ենք փառավորված Զրիստոսի մոտեցող թագավորությունը: Նույն կերպ մենք Նրանց, ովքեր «կարող են ընդունել», ցույց ենք տվել կանխատեսված, նախատիպային Եղիային: Ոմանք, գուցե, սա չընդունեն, այլ կշարունակեն սպասել մի մարդու, որը կկատարի Մաղաքիայի մարգարեությունները, և «չճանաչեն իրենց այցելության ժամանակը», մինչև որ մեծ նեղության օրը բոցավառվի ինչպես վառարան:

Այնժամ պարզ կդառնա, որ Եղիայի (մարմնեղեն Զրիստոսի) աշխարհը փոխակերպելու և վերականգնելու ձախողումը նույնքան կանխատեսված հետևանք էր, որքան Յովհաննեսի Իսրայելին փոխակերպելու ձախողումը: Բայց նա կլինի նույն Եղիայի դասակարգը, միայն հիմա փառավորված և ունենալով իշխանություն, ով հազարամյա դարի ընթացքում կօրինի և կսովորեցնի աշխարհին, ինչպես նաև կվերականգնի ամեն բան, ինչպես խոստացվել է բոլոր սուրբ մարգարեների բերանով (Գործք 3:19–21): Եղիայի պատկերը մեր երկրային ճանապարհորդության ավարտին դադարում է միայն իր անվան և նմանության իմաստով: Սրան համահունչ է մեր Տիրոջ խոսքերը, երբ նա պատասխանեց իր աշակերտներին, որոնք հարցրել էին. «Արդ դպիրներն ինչո՞ւ են ասում, թե նախ Եղիան պետք է գա»: Իր պատասխանում Տերն չի փորձում տալ սպառնիչ բացատրություն, որ Եղիան մի պատկեր է, մինչդեռ Յովհաննեսը նրա շարունակությունն է և, միևնույն ժամանակ, նրա պատկերավոր իրականացումը և այլն,

որովհետև աշակերտները դեռ պատրաստ չէին դա հասկանալու, քանի որ ժամանակը դեռ չէր եկել: Ուստի, մատնանշելով Հովհաննեսի ձախողումը որպես մարգարեության մասնակի կատարում, մեր Տերը ավելացնում է. «Ճմարիտ է, առաջ Եղիան պիտի գա²⁵ և ամեն բան վերականգնի» (Մատթ. 17:11): Պարզ է, որ Նա այդ ժամանակ մտածում էր գալիք դարում իր փառավոր գործի մասին՝ իր փառավորված «Մարմնի» հետ, որի ընտրությունն ու փորձությունը դեռ պետք է տեղի ունենային Ավետարանական դարում: Նա նայեց վարագույրի այն կողմը՝ հազարամյա դարաշրջան և տեսավ Եղիայի դասը, որը վերցված էր կրակե կառքով՝ գորությանմբ և մեծ փառքով՝ հոգեղեն բարձրացման մեջ:

Եկեղեցու մասին խոսելիս՝ առանձին իր Տիրոջից և Գլխից, օգտագործվում է կնոջ պատկեր: Իր Տիրոջից և Փեսայից առանձին և տարբերվող՝ նա է նշանած հարսնացուն: Սակայն այս դեպքում որպես պատկեր օգտագործվում է մի տղամարդ՝ Եղիա, քանի որ պատկերված գործը չի պատկանում միայն առանձին Եկեղեցուն՝ իր Տիրոջից բաժանված, այլ երկուսին էլ: Մեր Տերը մարմնով Եկեղեցու Գլուխն ու նախակարապետն էր (Եղիա), ինչպես որ Նա հաղթական Եկեղեցու Գլուխն է՝ Զրիստոսը: Այլ բազմաթիվ դեպքեր կան, երբ որպես պատկեր օգտագործվում է մարդը՝ երբ տիպավորվում է Զրիստոս Հիսուսի և նրա մարմնի՝ Եկեղեցու համատեղ գործը. օրինակ՝ Ահարոնն ու նրա բոլոր հաջորդները որպես քահանայապետի պաշտոնում ներկայացնում էին Տիրոջը և նրա մարմնի անդամներ՝ ստորին քահանաներին, Մելքիսեդեկը նույնպես ներկայացնում էր ամբողջ մարմինը փառքով, նույնպես Մովսեսը, Դավիթը և Սողոմոնը: Ուստի Եղիայի կերպարի օգտագործումը՝ ներկայացնելու

²⁵ Առաջ բառը չի հանդիպում ամենահին ձեռագրերում:

Քրիստոսի և Եկեղեցու միացյալ գործը, համահունչ է Սուրբ Գրքի պրակտիկային:

Հաշվի առնելով այն դասը, որը ներկայացնում էր Եղիան, որքան հզոր ու բովանդակալից էր Տիրոջ կողմից կերպարանափոխման սարի վրա երեք աշակերտներին ցուցադրված «տեսիլքը» (Մատթ. 17:1–9): Պետրոս առաքյալը ասում է, որ սա գալիք Թագավորության տեսիլք էր (Բ Պետ. 1:16–18): Մեր Տերը, վերափոխված, նրանց աչքերի առջև երևաց փայլուն լույսով: Կային նաև Մովսեսի կերպարը, որը ներկայացնում էր մովսիսական, կամ օրենքի դարը, և Եղիայի կերպարը, որը ներկայացնում էր ավետարանական, կամ քրիստոնեական դարը: Այս երկու դարերն էլ իրենց հայացքը հառել էին, մատնանշել և բառերով ուշադրություն հրավիրել Քրիստոսի զոհաբերությանն ու տառապանքներին, ինչպես նաև հետագա փառքին:

Այս թեմայից չհեռանալով՝ մենք կկենտրոնացնենք ուշադրությունը Եղիա մարգարեի (տիպ) կյանքի որոշ առանձնահատկությունների և իրադարձությունների վրա՝ դրանք համեմատելով Եկեղեցու (Նախատիպային Եղիայի) պատմության հետ: Սա անշուշտ զարմացնելու է բոլոր նրանց, ովքեր մինչ այժմ դրանք չեն նկատել: Համեմատությունը հեշտացնելու համար մենք դրանք կներկայացնենք երկու սյունակով:

ԵՂԻԱ

Եղիան հալածվել է ճշմարտության
և արդարության հանդեպ իր նվիրվածության
համար

Նրա գլխավոր հալածողը Իսրայելի չար
թագուհի Յեզաբելն էր, որի անունը
հիշատակվում է որպես սրբերի
թշնամու օրինակ (Յայտն. 2:20):

Յեզաբելի հալածանքը իրականացվեց նրա
ամուսնու՝ Աքաաթ թագավորի միջոցով:

Եղիան փախավ Յեզաբելից և Աքաաթից,
Աստծո կողմից նախապատրաստված
մի վայր, որտեղ նա հրաշքով կերակրվում էր
(Գ Թագավորաց 17:5–9):

Եղիան անապատում մնաց «երեք տարի
ու վեց ամիս», և այդ ընթացքում՝ անձրև
չկար, երկիրը մեծ սովի մեջ էր
(Յակոբոս 5:17, Գ Թագավորաց 17:7, 18:2):

Երեք ու կես տարի, 1260 օր անց, երբ
Եղիան վերադարձավ անապատից, Յեզաբելի
քահանաների սխալները բացահայտվեցին,
ճշմարիտ Աստված պատվվեց, և առատ
և առատ անձրևներ տեղացին
(Գ Թագ. 18:41-45):

Սկզբում արքան ու ժողովուրդը ուրախացան,
և Եղիան ու Նրա Աստվածը պատվվեցին:
սակայն Յեզաբելի ոգին անփոփոխ մնաց:
Նա դեռ փնտրում էր Եղիայի կյանքը,
և նա կրկին ստիպված եղավ փախչել
անապատ (Գ Թագ. 18:40,45,46, 19:1-4):

Եղիայի կյանքի ընթացքը ավարտվեց,
երբ նա երկրից վերցվեց:

ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցին հալածվել է ճշմարտության
և արդարության հանդեպ իր նվիրվածության
համար

Գլխավոր հալածողը հավատուրաց Յոմի
Եկեղեցին էր, որը պնդում է, թե ինքը
«թագուհի» է և հոգևոր Իսրայելի
տիրակալը (Յայտն. 18:7):

Պապության հալածանքը իրականացվեց
Յոսեֆական կայսրության միջոցով:

Ճշմարիտ Եկեղեցին փախավ
խորհրդանշական անապատ
(մեկուսացման վիճակ)՝ Աստծո կողմից
պատրաստված մի վայր, որտեղ
որտեղ նա պահպանվում էր (Յայտն. 12:6,16):

Եկեղեցին անապատային վիճակում գտնվեց
երեք ու կես խորհրդանշական տարի
(մեկ օրը մեկ տարվա համար՝ 1260 բառացի
տարի), որի ընթացքում ճշմարտության՝
կենդանի ջրի պակասի պատճառով հոգևոր
սով եղավ (Յայտն. 12:6; 11:3, Ամոս 8:11):

1260 տարիների ավարտին (1799 թ.)
Ճշմարտությունը և Նրա վկաների
Չորությունը հայտնվեց և այնուհետև
միլիոնավոր Աստվածաշնչերի միջոցով
տարածվել է, թարմացնելով աշխարհը
և պտուղներ բերելով:

Աստվածաշունչը բերել է այնպիսի
օրհնություններ, որ աշխարհի
կայսրությունները ճանաչում են Տիրոջ
ձեռքը, սակայն պապության՝ Յեզաբելի
սկզբունքները, կոչված բողոքական
աղանդներում, կրկին ստիպում են սրբերին
կրկին փախչել անապատ:
Սրբերը իրենց երկրային վիճակից
փոխվելու են երկնային վիճակի:

Սրանք զարմանալի համընկումներ են և պատահական չեն: Եվ այն փաստը, որ Եղիան պետք է զարմեծ օրվանից առաջ, և որ այժմ մենք ի դեմս Եկեղեցո գտել ենք Մաղաքիա մարգարեի հիշատակած և Հովհաննես Մկրտչի կողմից հետագայում տիպավորված նախատիպային Եղիային, պետք է համարվի ևս մեկ ապացույց, որ ժամանակը մոտ է՝ որ Տիրոջ մեծ օրը եկել է: Բացի այդ, այս պատկերում առկա են նաև գաղափարներ, որոնք հաստատվում են Սուրբ Գրքի այլ հատվածներում: Դրանց նպատակն է առաջնորդել և պատրաստել սրբերին հավատարմորեն կատարել իրենց դերը, ինչպես նաև զորություն և հույս տալ նրանց այդ խռովյալ օրվա համար, որը անմիջապես մեր առջև է:

Մենք ամենևին չենք ձգտում մեր մտքում մռայլ պատկերներ ստեղծել: Մենք նախընտրում ենք մտածել և ընդգծել այն փառքը, որը կհետևի մեծ Չայրույթի օրվան, և գալիք Հազարամյա օրվա ուրախությունը, այլ ոչ թե մոտ ապագայի այն աղետներն ու հիասթափությունները, որոնք նախորդում են արևի լիակատար ծագմանը: Բայց անհրաժեշտ է, առնվազն որոշ չափով, նախազգուշացնել սրբերին մոտեցող իրադարձությունների մասին, որպեսզի երբ դրանք տեղի ունենան, նրանք չվախենան և չհուսահատվեն, այլ նախապես պատրաստված լինելով՝ իմանան, թե ինչպես դիմավորել դրանք, և, բացի այդ, որպեսզի նրանք ավելի լիովին գնահատեն ներկայիս օրհնությունները և եռանդունորեն «գործեն այն ժամանակ, երբ կոչվում է օր, քանզի գալիս է գիշերը [ներկա, «օր» կոչվող ժամանակի համեմատ շատ ավելի մոլթ ժամանակ], երբ ոչ ոք չի կարող գործել:

Այս կարճ ներկայիս ժամանակահատվածը (նախքան փոթորկի ամպերը իջնեն աշխարհի վրա) Եղիայի դասի գործունեության համար ամենահարմար ժամանակն է և համապատասխանում է Եղիայի և Հովհաննեսի

բարեհաջող օրերին: Այն նպաստավոր է շնորհքի և գիտության մեջ անձնական աճի, ինչպես նաև ճշմարտության տարածման համար — մարդկությանը հայտնի ամենահարմար ժամանակն է: Ինչպե՞ս կուրախանային վաղեմի ճշմարտության որոնողները, օրինակ՝ բերեացիները, նման ուսանողական օգնությունների առկայությամբ, ինչպիսիք մենք այժմ ունենք՝ ամբողջական և տպագիր հղումային Աստվածաշնչեր, պատմագրություններ, հանրագիտարաններ, Բառարաններ և այլ արժեքավոր տեղեկատվական աշխատություններ, որոնք մատչելի են բոլորի համար՝ և անվճար հասանելի նույնիսկ միջին չափի քաղաքների հանրային գրադարաններում, և այս բոլորի հետ մեկտեղ՝ ծագող Հազարամյա օրվա աճող լույսը և բոլոր խավերի մարդկանց կարողությունը ինքնուրույն, խելամիտ կերպով կարդալ և մտածել: Այսպիսի օգնություններով մեկ օրում Աստծո խոսքի և ծրագրի մասին կարելի է ավելին իմանալ, քան նախկինում, պակաս բարեհաճ ժամանակներում, հնարավոր էր իմանալ մեկ տարում: Եվ երբեք չի եղել ավելի բարենպաստ ժամանակ քրիստոնեական ջանքերի համար, կամ ավելի խթանող քրիստոնեական եռանդի և ակտիվության համար, քան այսօր՝ Տիրոջ ներկայության փառավոր հնձի ուղերձի և մոտալուտ թագավորության ուրախ ավետիսների այս օրերին:

Եթե մեզ հարկ լիներ տեղից տեղ ճանապարհորդել հավատացյալների հետ հանդիպելու համար, ապա մեկ շաբաթում (շատ ավելի հարմարավետ պայմաններում) կարող էինք անցնել այնքան ճանապարհ, որքան Պողոս առաքյալը մեկ ամսում կամ նույնիսկ ավելի երկար ժամանակում էր անցնում: Եթե ցանկանայինք բարձրաձայն քարոզել, կարող էինք դա անել առանց որևէ մեկին անհարմարություն պատճառելու կամ նրանց մեզանից վախեցնելու: Բացի այդ, մենք ապրում ենք այն դարում, երբ շատ մարդիկ կարող են կարդալ և գրել՝ ինչը

Նախկինում հասանելի էր միայն քչերին, և երբ տպագիր «Բարի Լուրը» մատչելի, հարմար և հաճախ նույնիսկ ավելի արդյունավետ է, քան բանավոր քարոզները: Հնազանդ սիրտը նույն ջանքերով կարող է շատ ավելի շատ բան ձեռք բերել, քան Ակյուղասն ու Պրիսկիդան իրենց ժամանակին ու իրենց ձևով: Մենք կարող ենք քարոզել մեր ընկերներին ու անձանությաններին ամբողջ աշխարհում տպագիր կամ ձեռագիր էջերի միջոցով՝ օգտվելով այսօրվա գերազանց փոստային ծառայություններից և գրեթե առանց որևէ ծախսի:

Բայց Առաքյալը, վերջին օրերի անվանական եկեղեցու մասին խոսելիս, ասում է, որ «կգա ժամանակ, երբ նրանք չեն հանդուրժի առողջ ուսմունքը» (Բ Տիմ. 4:3): Չնայած այս խոսքերը ճշմարիտ են այսօր, ինչպես դրանք, որոշ իմաստով, դարեր ի վեր են եղել ճշմարիտ, այնուամենայնիվ, դրանք ապագայում ավելի համոզիչ և հստակ կիրականանան: Այո, ճիշտ է նույնիսկ հիմա, որ անվանական եկեղեցին չի հանդուրժի այն քարոզիչներին, որոնք անտեսում են նրա դոգմաները և «քարոզում են խոսքը», «Աստծո ամբողջ կամքը»: Ունենալով «շողոքորթական» այն նախընտրում է մարդկային ենթադրությունները Էվոյուցիայի թեմայով և կեղծ փիլիսոփայությունները Աստծո խոսքի փոխարեն: Եվ այնուամենայնիվ, չկարողանալով դա կանխել, այն որոշ չափով հանդուրժում է այս ճշմարիտ ուսմունքը՝ այն աստիճանով, որը շատ ավելի մեծ է, քան Հռոմը հանդուրժեց իր ծաղկման ժամանակ:

Այստեղ մեջբերված բառերից անմիջապես առաջ առաքյալը ուղղակիորեն հղում է անում այս դարի վերջին օրերի դժվար ժամանակներին (Բ Տիմ. 3:1–13): Նա նրանց բնորոշ հատկանիշներ է համարում մեծամտությունը, շահասիրությունը, բարու անտեսումը, ձևապաշտությունը, ազահությունը, հպարտությունը և անհնազանդությունը:

Նա նաև նշում է, որ (Եկեղեցու ներսում) չար մարդիկ, որոնք մյուսներին շեղում են ճշմարտության ուղուց, իրենց չարության մեջ կհաջողեն, մոլորեցնելով ուրիշներին՝ միևնույն ժամանակ ինքները մոլորված լինելով իրենց սոփիստիկայով: Եվ քանի որ առաքյալը մտածում և գրում էր հատկապես վերջին օրերի, այլ ոչ թե միջնադարի մասին, մենք լիովին արդարացված ենք հարցնելով՝ արդյոք այդ ժամանակը հեռու չէ այս ներկայիս «վերջին օրերում», երբ առողջ ուսմունքը ոչ ընդունելի կլինի, ոչ էլ թույլատրելի:

Չնայած այսօր մեծապես ճիշտ է, որ ոչ ոք թույլ չի տալիս հանրային շուկաներում կամ սինագոգաներում գնել կամ վաճառել [վաճառել ճշմարտությունը] առանց գազանի նշանի կամ նրա անվան թվի կրելու (Հայտնություն 13:17), ամբողջությամբ տեղյակ մարդիկ արդեն գիտեն, որ եկեղեցի կոչվող շքեղ, նորաձև տաճարները այսօր Ավետարան քարոզելու համար ոչ ավելի անհրաժեշտ են, քան առաքյալների օրերում, և որ հիասքանչ ու պատրաստված երգչախմբերը մարդկանց ուշադրությունը գրավելու համար էական չեն, քանզի այսօր, ինչպես նախկին օրերում, սովորական մարդիկ ուրախ են Ավետարան լսել փողոցների անկյուններում, շուկաների հրապարակներում, փոստով և տպագիր էջերից: Հարց է ծագում՝ արդյո՞ք Հայտնիչի այս հայտարարությունը չի կարող նշանակել ավելին, քան այն, ինչին մենք այսօր ականատես ենք լինում: Եվ (ինչպես Պողոս առաքյալի հայտարարությունը) միթե սա չի նշանակում, որ կգա մի ժամանակ (վերջին օրերում), երբ ճշմարիտ ուսուցումը ընդհանրապես չի հանդուրժվի՝ Միթե մեր դեպքում նույնպես չի կարող պատահել ինչ-որ նման բան, ինչ տեղի ունեցավ Հովհաննես Մկրտչի հետ, երբ նրան բանտարկեցին՝ Այլ կերպ ասած՝ ինչի՞ն պետք է սպասենք ներկայիս համեմատաբար բարենպաստ ժամանակի (չնայած դրա դժվարություններին) և անարգել արդարության ապագա օրինյալ ժամանակի միջև: Կմնա՞ն

արդյոք ներկայիս պայմանները նույնքան բարենպաստ խաղողի այգում աշխատելու համար, թե՞ դրանք կփոխվեն (ավելի վատ կամ ավելի լավ): Եկեք դիտարկենք, թե ինչ են նշանակում այս պատկերները: Զանի որ մեր Տերը մեր ուշադրությունը հրավիրել է դրանց վրա, այն ամենը, ինչ մենք կարող ենք գտնել թե՛ Եղիայի, թե՛ Յովհաննեսի կյանքում ու դեպքերում, որոնք ամբողջությամբ առնչվում են Եկեղեցու իրադարձություններին և նրա ապագա երկրային ճանապարհորդության վերաբերյալ վկայությամբ, մենք կարող ենք արդարացիորեն համարել պատկերավոր:

Եղիա երկնքով վերցվեց երկնային կրակե կառքով, որը խորհրդանշում է այն հոգևոր փառքը և բարձրացումը, որ սպասում է Եկեղեցու այն անդամներին, որոնք մինչև վերջին օրերը մնում են ապրել երկրի վրա, իրենց երկրային ճանապարհորդության ավարտին: Բայց մենք պետք է նաև հիշենք, որ նրան վեր բարձրացրեց մորիկ քամին՝ այսինքն՝ փոթորիկը, և փոթորիկը խորհրդանշում է նեղություն, մինչդեռ կրակե կառքը հաղթանակի և այդ նեղությունից փառավոր փրկության պատկերն է:

Յովհաննես Մկրտչի կյանքի վերջին իրադարձությունները ավելի խորը վշտով են լեցուն: Չնայած ժողովուրդը նրան ուշադրություն չդարձրեց (Մատթեոս 17:12), նրանք կարճ ժամանակով ճանաչեցին նրան որպես Աստծո մարգարե և ծառա (Յովհաննես 5:35): Սակայն երբ նա հայտարարեց Մեսիայի ներկայությունը, նրա ազդեցությունը շուտով սկսեց նվազել՝ ինչը նա կանխատեսել էր Զրիստոսի մասին խոսելիս. «Նա պետք է աճի, իսկ ես պետք է նվազեմ»: Այսպես է լինելու նաև այս դարի վերջում. Յովհաննեսի դասի (Եղիայի դասի) գործը գազաթնակետին է հասնում Աստծո Թագավորությունը մոտ է, և որ Թագավորը ներկա է հռչակումով: Սա հենց այն է, ինչ տեղի է ունենում այժմ, և Յովհաննեսի վկայության

նույն խոսքերը կարելի է հավասար ուժով կիրառել Տիրոջ երկրորդ գալստի այս ժամանակաշրջանում. «Ձեր մեջ կանգնած է Մեկը, որին դուք չճանաչում եք», «Հոսելին նրա ձեռքում է. նա՛ կմաքրի իր կալը, ցորենը շտեմարանի մեջ կհավաքի, իսկ հարդը կայրի անշեջ հրով» – մեծ նեղության ժամանակը (Հովի. 1:26, Մատթ. 3:12):

Ինչպես Հովհաննեսը նվազեց—երբ նրա հատուկ գործը ավարտվեց, երբ նրա ուղերձը հանձնվեց—այնպես էլ մարմնեղեն եկեղեցին պետք է նվազի, երբ հանձնվի նրա վերջին ուղերձը, մինչև վերջին անդամը չի մատնի իր նվիրված կյանքը և չի անցնի վարագույրի այն կողմը՝ «փառք», որտեղից սկսած կդառնա փառավոր, թագավորող Զրիստոսի անդամը: Ինչպես Հովհաննեսն ասաց, որ Հիսուսը պետք է աճի, այնպես էլ հիմա, երբ ճշմարիտ թագավորությունը մոտ է հաստատվելուն, մենք վստահորեն կարող ենք ասել, որ Թագավորը ներկա է, և որ նրա թագավորությունը պետք է աճի, մինչև այն լցնի ողջ երկիրը: Եվ Հովհաննեսի քարոզած «հունձքի» գործը (ցորենի հավաքումը և հարդի համար սպասվող նեղությունը) նույնպես իր զուգահեռն է գտնում մեր օրերում:

Հովհաննեսի ազատությունը սահմանափակվեց քիչ անց այն բանից հետո, երբ նա իր ուղերձով հայտարարեց Տիրոջ ներկայությունն ու Նրա մոտենալիս գտնվող գործը: Նրան բանտարկեցին, քանի որ նա մեղադրել էր թագավորին անպարկեշտ հարաբերությունների մեջ մի կնոջ հետ (Մատթ. 14:4): Եվ չնայած Աստծո հավատացյալ զավակները բազմիցս դատապարտել են եկեղեցու և քաղաքացիական իշխանությունների այս միությունը՝ որը Սուրբ Գիրքը անվանում է պոռնկություն (Հայտնություն 17:5)՝ որպես անօրինական, և չնայած աշխարհը մեծապես հեռացել է եկեղեցիներից, այս միությունը դեռ գոյություն ունի: Եվ Սուրբ Գրությունները, ցույց են տալիս, որ

մոտեցող նեղության ժամանակ անվանական եկեղեցիները, որոնք պնդում են, թե Քրիստոսի կույսերն են, կանգնած կլինեն երկրի թագավորների կողքին և միացած նրանց հետ, իսկ ճշմարիտ եկեղեցին, ինչպես իր տիպը՝ Հովհաննես Մկրտիչը, ժողովրդականություն չեն վայելի և զրկված կլինեն ազատությունից՝ ճշմարտության հանդեպ հավատարիմ լինելու և սխալը մերժելու պատճառով:

Հովհաննեսի դեպքում, ինչպես նաև Եղիայի դեպքում, հալածողը կինն էր, իսկ թագավորը նրա գործակալն ու գործիքն էր: Իրական եկեղեցու դեպքում անցյալում դա այն էր, ինչ նրանք խորհրդանշում են, և անշուշտ այդպես կլինի նաև ապագայում՝ անվանական եկեղեցին ներկայացված է կնոջով, իսկ քաղաքացիական կառավարությունը՝ թագավորով: Ոչ միայն Մարգարեությունն է մատնանշում է այս ուժերի միջև ներկայիս միությունից ավելի սերտ միություն, այլև ցանկացած ուշադիր դիտորդ կարող է տեսնել, որ թագավորական ազնվականության կողմից կառավարման հիմնական լծակը մարդկային զանգվածների վրա կրոնական նախապաշարմունքն է՝ այն համոզմունքը, որ Աստված նշանակել է այս «մեծ մարդկանց», թեև հաճախ թույլ ու չար, իշխելու նրանց վրա, և որ բռնության ու անարդարության դեմ ապստամբելը և արդարություն, ազատություն ու հավասար իրավունքներ պահանջելը Աստծո կամքին դեմ է: Այդ պատճառով կառավարությունների և եկեղեցիների հակումն ուղղված է բաց կամ գաղտնի միության՝ իրենց փոխադարձ բարօրության համար առաջիկա փոթորկի ժամանակ:

Բացի այդ, առաջիկա պայքարը արիստոկրատիայի և յուրաքանչյուր քաղաքակիրթ երկրի զանգվածների միջև այնքան յուրահատուկ և նախկին որևէ փորձից տարբեր կլինի, որ չափավոր, պահպանողական, կրոնասեր մարդիկ, վախենալով հասարակության ամբողջական փլուզումից՝ խառնաշփոթի և անարխիայի մեջ, բնականաբար կընտրեն

միապետությունը, ճնշումը և ստրկությունը՝ քան այն, ինչը անշուշտ ավելի վատ կլինի: Այդ պատճառով նրանք միավորվելու են եկեղեցու և կայսրության, հարստության և ազնվականության հետ՝ ընդհանուր ջանքեր գործադրելու համար ճնշելու և կանխելու այդ անխուսափելի հակամարտությունը՝ «Ամենակալ Աստծո մեծ օրվա մարտը»:

Վերջ ի վերջո, հավանաբար խաղաղության և ճշմարիտ կրոնի սիրողների մեջ այս ընթացքից բացառություն կլինեն միայն նրանք, ում Թագավորների Թագավորը իր հոսքի միջոցով հաճում է հայտնել իր ծրագրերը (Յովհաննես 16:13), և ովքեր լիովին վստահ են իր իմաստությանը և սիրուն, ինչպես նաև իր գործությանը՝ ամեն ինչ իր խոստումների համաձայն իրականացնելու համար: Միայն այդպիսի մարդիկ (պահպանողական և կարգուկանոն սիրողների մեջ), ճանաչելով մոտեցող սոցիալական հեղափոխության դերը Աստծո ծրագրում անպտուղ, հնացած համակարգերը հեռացնելու և մարդկությանը (լայնածավալ հավասարեցման գործընթացի միջոցով) արդարության հազարամյա թագավորության համար նախապատրաստելու գործում, կկարողանան ճիշտ գնահատել իրավիճակը և համապատասխանաբար գործել: Բայց նրանց կհասկանան սխալ. ամենայն հավանականությամբ, նրանց ջանքերը բացահայտել իրերի իսկական վիճակը և միակ իրական հակաթույնը կհանդիպեն նրանց, ովքեր չեն տեսնում մեծ արդյունքը և ովքեր, չցանկանալով զոհաբերել իրենց սեփական ցանկությունները, գաղափարներն ու ծրագրերը, չեն կարող ընկալել Աստծո ծրագրերը: Երբ ճնշման, սահմանափակման և հարկադրանքի միջոցառումները անհրաժեշտ թվան, դրանք, ամենայն հավանականությամբ, կկիրառվեն ոչ միայն աշխատավորների կազմակերպությունների և նրանց ճշմարտություններն ու կեղծիքները պաշտպանող

հրատարակությունների նկատմամբ, այլև բոլոր նրանց նկատմամբ, ովքեր ներկայացնում են Աստծո ծրագիրը, ազգերին հարվածող մեծ աղետի իսկական պատճառը և դրա միակ հակաթույնը: Իրականում, գուցե այն ժամանակը այնքան էլ հեռու չէ, երբ կձեռնարկվեն միջոցներ ճնշելու սրբերի ցանկացած փորձը տարածել գալիք Թագավորության բարի լուրը՝ բոլորը այն պատրվակով, որ դա պահանջում է ընդհանուր շահն ու հանրային բարօրությունը:

Այսպիսով, Սաղմոս 2-ի մարգարեությունը կկատարվի, և, հավանաբար, վերջում ավելի մեծ դառնությամբ, քան մենք այժմ կարող ենք պատկերացնել, թեև այս սաղմոսը մասամբ արդեն կատարվել է ի դեմս մարմնի Գլխի (Գործք 4:25–29):

Նույն անհրաժեշտությունը՝ քաղաքական և սոցիալական հարցերում ազատությունը սահմանափակելու, հավանաբար նույնքան ազդեցիկ կլինի կրոնական հարցերում խոսքի ազատության վրա, որը, իրականում, բոլոր ազատությունների հիմքն է: Չարմանալի չի լինի, եթե մի օր «զորեղ կառավարությունը»՝ միապետություն, փոխարինի ներկայիս Մեծ Հանրապետությունը: Եվ բավականին հավանական է, որ համարվի նպատակահարմար հայտարարել կրոնական հավատքի միակ չափանիշ, որի սահմաններից ցանկացած շեղում կդիտվի և կպատժվի որպես քաղաքական հանցագործություն: Այսպիսի հալածանքը (Ավետարանական դարի վերջում, կամ հունձքի ժամանակ) ոչ միայն ծառայելու է որպես ևս մեկ զուգահեռ հրեական դարի հունձքին (Գործք 4:10–13, 23–30, 5:29–41, 11:19), այլև լայն և խոր իմաստ կհաղորդի առաքյալներ Պողոսի և Հովհաննեսի խոսքերին (Բ Տիմ. 4:3; Հայտնություն 13:17) և ճշմարիտ Եկեղեցու երկրային ճանապարհորդության ավարտի խորհրդանշական պատկերներին՝ Եդիային պտույտով վեր բարձրացնելը,

ինչպես նաև Հովհաննես Մկրտչի բանտարկությունն ու գլխատումը:

Ապագան ինչ էլ որ բացահայտի մեր մարգարեական վկայության մեկնաբանության ճշտության կամ սխալի վերաբերյալ, մեզ համար օգտակար կլինի այս ամենից երկու դաս քաղել: Առաջին՝ մենք պետք է այնքան լավ պատրաստված, այնքան լավ գինված և այնքան ամբողջությամբ հագեցած լինենք անպարտելի ճշմարտությամբ, որ հալածանքը մեզանում միայն ավելի մեծ եռանդ արթնացնի, այլ ոչ թե անակնկալից կամ վախից ստիպի իջեցնել մեր դրոշը, ոչ էլ ստիպի մեզ հանձնվել, երբ աշխարհիկ թագավորները ոտքի կանգնեն և ժողովրդի կրոնական առաջնորդների հետ միասին կանգնեն մեր և այն ճշմարտության դեմ, որի վկաներն ենք որպես Աստծո ծառաներ ու դեսպաններ, Նրան, ով մեզ շնորհել է այս արտոնությունը (Ա Հովհաննես 3:1): Երկրորդ՝ երբ մարդը խորհում է մեր ներկայիս արտոնությունների մասին և ապագայի վերաբերյալ այսպիսի մտքերի մեջ է մտնում, դա պետք է ոգեշնչի Աստծո յուրաքանչյուր նվիրված զավակին՝ եռանդունորեն օգտագործելու ներկայիս հսկայական հնարավորություններն ու արտոնությունները, հիշելով, որ «հնձողը ստանում է իր վարձքը», ինչպես նաև սերմանողն ու ջրողը, և որ այժմ հիանալի ժամանակն է հավաքելու հավիտենական կյանքի պտուղները: Այս բարենպաստ ներկայիս ժամանակի կարճատև դադարը (որն իր մեջ պարունակում է անհամեմատ մեծ ազատություններ և առավելություններ բոլոր առումներով) աստվածապես նախատեսված է եղել Աստծո ճշմարիտ ծառաների ճակատների (մտքում՝ ճշմարտությամբ) կնիք դնելու համար (Հայտնություն 7:3):

Թող «փոքրիկ պահը»

իր ոսկեգույն լույսում երևա

Վարդապետն ասում է. «Գործեցեք, քանի դեռ ցերեկ է, որովհետև գիշեր է գալիս, երբ ոչ ոք չի կարող գործել».
«Աշխատե՛ք ոչ թե կորստյան ենթակա կերակուրի համար, այլ այն կերակուրի, որ մնում է հավիտենական կյանքում»:

Այսպիսով, այսօր, այս նշանակված ժամանակին, մենք տեսնում ենք, որ Եղիա մարգարեն (ինչպես մարգարեացվել էր) եկել է Տիրոջ մեծ ու կարևոր օրվանից առաջ: Եվ մենք լսում ենք նրա վերջին վկայությունը, որը նման է Հովհաննեսի վկայությանը. «Ձեր մեջ կա Մեկ, որին դուք չգիտեք», — որի ձեռքում է հոսելին. նա՛ր կմաքրի իր կալը, ցորենը շտեմարանի մեջ կհավաքի, իսկ հարողը կայրի (որպես որոմ, ոչ թե որպես մարդկանց) անշեջ հրով, մեծ նեղության ժամանակ — այս անեծքը պետք է գա՛ պատրաստելու ճանապարհը Մեծ Թագավորների Թագավորի համար: Նա պետք է մեծանա, մինչդեռ Եղիան պետք է փոքրանա, մինչև նա ամբողջությամբ մի կողմ կհանվի: Ներկայումս մենք այս վկայությունը լսում ենք ոչ միայն Եղիայի դասի որոշ անդամների շուրթերից, այլ շուտով այդ դասի յուրաքանչյուր անդամ կհռչակի նման ուղերձ և կգբաղվի Եղիայի գործով: Միայն նրանք, եթե այս առումով հավատարիմ գտնվեն, պատկանելու են փառավորված Եղիային և իրավունք կունենան մասնակցելու ամենայնի վերականգնման գործին, որը հազարամյակի ընթացքում կլինի հնչեղ հաջողություն: Ամբողջ իմաստը կայանում է Եղիա անվան նշանակության մեջ: Այն նշանակում է «Աստված [Չորավոր] Եհովա»: Ուստի լիովին տեղին է Տիրոջ օծյալի համար, որի հսկայական առաջադրանքը լինելու է աշխարհի սկզբից ի վեր Աստծո բոլոր սուրբ մարգարեների բերանով ասվածի վերականգնումը:

Այս թեմային ամփոփում տալու համար կարճ հիշենք, որ իր կյանքի վերջում Եղիան մարգարեն կանչեց Եղիսեին, ով (զոհ մատուցելուց հետո) թողեց ամեն ինչ և գնաց

Եղիայի ետևից: Հետագայում, երբ Եղիա փոթորիկով վերացվեց, Եղիսեն դարձավ նրա մարգարեական իրավահաջորդը՝ ստանալով նրա իշխանության թիկնոցը և նրա հոգու ու գործության զգալի մասը (4 Թագավորաց 2:9–16): Զանի որ Եղիան մարմնով ներկայացնում է Զրիստոսի Մարմինը (հաղթական Եկեղեցի, մի դաս, մի կոնկրետ թիվ), ամբողջովին տրամաբանական է եզրակացնել, որ Եղիսեն նույնպես ներկայացնում է մի դաս, որը խորապես կապված կլինի Եղիայի դասին և նրա հետ միասին կհետևի Տիրոջ առաջնորդությանը, սակայն չի փառավորվի: Նա ներդրության «փոթորիկով» առանձնացվելու է Եղիայի դասից, սակայն կպահպանի իր հետաքրքրությունը և կստանա օրհնություն: Եղիայի հեռանալուց հետո Եղիսեն դարձավ այնքան համարձակ և ուժեղ, որ այն օրերի աստվածաբանները («մարգարեների որդիները») ասացին. «Եղիայի ոգին հանգչել է Եղիսեի վրա»:

Եղիսեի անունը նշանակում է «Հզոր Ազատարար», և նրա կոչումը վերականգնման գործն էր: Սա անշուշտ ներկայացնում է այն դասի գործը, որը ապագայում մարդկանց մեջ ակտիվ ներկայացուցիչ կլինի՝ իրականացնելով վերականգնման գործը այն ժամանակ արդեն փառավորված Եկեղեցու գործությամբ: Բացի իր բոլոր մյուս հրաշագործություններից՝ Եղիսեն մաքրեց ջուրը, որպեսզի այնուհետև այլևս չլինի ոչ մի մահ կամ անբեր հող, նա բազմապատկեց աղքատ այրու յուղը, որպեսզի նա կարողանա վճարել իր պարտքերը, նա կյանքի վերադարձրեց Սուսամացի կնոջ որդուն, և երբ երկրում սով եղավ, և «մարգարեների որդիների» պատրաստած ապուրը թունավորվեց, այնպես որ ոչ ոք չէր կարող ուտել այն, Եղիսեն մաքրեց այն, և այն դարձավ ուտելի: Նա ապահովեց, որ հացը, որը բավական էր միայն մի քանիսին, բավականացնի շատերին: Նա բուժեց Նեեմանի բորոտությունը: Նա նաև Աստծո գործիքն էր Յեհուի օծման գործում, որի ձեռքով, ըստ Ելիասի բերած Աստծո խոսքի,

Ահաբի թագավորական ընտանիքը՝ այդ թվում Յեզաբելը և նրա բոլոր քահանաները, ամբողջությամբ ոչնչացվեց (2 Թագավորաց 2:19–22; 4:1–7, 18–44; 5:1–14; 9:1–37; 10:28): Նա նաև Աստծո գործիքն էր Յեուկի օծման գործում, որի ձեռքով, ըստ Եղիայի բերած Աստծո խոսքի, Աքաաբի թագավորական ընտանիքը՝ այդ թվում Յեզաբելը և նրա բոլոր քահանաները, ամբողջությամբ ոչնչացվեցին (4 Թագավորաց 2:19–22, 4:1–7, 18–44, 5:1–14; 9:1–37, 10:28):

Եղիսեի այս բոլոր գործերում դժվար չէ նկատել խիստ նմանությունն այն հատուցման գործին, որը շուտով սպասվում է: Այն ժամանակ ճշմարտության ջրերը այլևս չեն աղիանա ստությամբ, այլ մաքրվելու են հենց աղբյուրի մոտ՝ Աստծո խոսքի ավելի հստակ ըմբռնմամբ: Այն ժամանակ աղքատները կկարողանան ստանալ ուրախության յուղը՝ դառնության ոգու փոխարեն: Այնժամ մեռյալները կվերականգնվեն: Այնժամ սովի մեջ սնունդը (ճշմարտությունը) կդառնա առողջարար և առատ: Եվ այնժամ Աքաաբի ու Յեզաբելի խորհրդանիշ հանդիսացող ուժերն ու համակարգերը, ինչպես նաև նրանց հետ միացած բոլոր նրանք, ովքեր դեմ են Տիրոջը, ամբողջությամբ և վերջնականապես կործանվելու են:

ԳԼՈՒԽ IX

ԱՆՕՐԵՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԸ – ՆԵՌ

Նեռը պետք է զարգանա, հայտնվի և խոցվի Տիրոջ օրվանից առաջ – Զննարկվող հարցի վերաբերյալ հակառակ տեսակետ – Մարգարեական նկարագրություն – Նեռի ծնունդը – Նրա արագ զարգացումը – Պատմական պատկերը և Աստվածաշնչյան նկարագրությունը համընկնում են – Նրա թագավորությունը կեղծ է – Նրա գլուխն ու բերանը աչքի ընկնող են – Նրա ամբարտավան հայիոյական խոսքերը – Նրա հայիոյական ուսմունքները – Նրա ճշումները Ամենաբարձրյալի սրբերի նկատմամբ – Նրա հազարամյա իշխանությունը – Նեռը Հոգու սրով խոցված – Նրա վերջին պայքարը և ավարտը:

Թող ոչ ոք ոչ մի կերպ ձեզ չխաբի, որովհետև Տիրոջ օրը չի գա, եթե նախ ապստամբությունը չգա, ու չհայտնվի անօրենության մարդը՝ կորստյան որդին (Բ Թես. 2:3):

Հաշվի առնելով Պողոս առաքյալի այս խոսքերը, որոնք վկայում են, որ «Անօրենության մարդ» կոչված անձը պետք է նախորդի Տիրոջ օրվա գալստին (որի լուսաբացը մենք արդեն ցույց ենք տվել), մեզ համար կարևոր է շուրջը նայել և պարզել՝ արդյոք այդ անձը արդեն հայտնվել է: Զանգի եթե այս կերպ մանրամասն նկարագրված այս կերպարը Պողոսի և մյուս առաքյալների կողմից դեռ չի հայտնվել, ապա վերոհիշյալ խոսքերը պետք է ընկալվեն որպես Պողոս առաքյալի կողմից այդ ժամանակ Տիրոջ ներկայության և Նրա Թագավորության հաստատման վերաբերյալ բոլոր մյուս վկայություններին ներկայացված վետո: Եվ այս վետոն պետք է մնա անփոփոխ փաստարկ մինչև այն պահը, երբ «Անօրենության մարդը» հայտնվի՝ մարգարեական նկարագրությանը յուրաքանչյուր մանրուքի համապատասխանելով:

Հստակ նշվում է ոչ միայն այն, որ այս «Անօրինության մարդը» պետք է նախ հայտնվի, այլև այն, որ նա պետք է զարգանա և բարգավաճի նույնիսկ մինչև Տիրոջ օրը գա: Զրիստոսի օրվանից առաջ այս ուժի բարգավաճումն ու ազդեցությունը կհասնեն իրենց գազաթնակետին և կսկսեն նվազել: Եվ այն, ինչ ամբողջությամբ ոչնչացնելու է այս «Անօրինության մարդուն», լինելու է Տիրոջ ներկայության պայծառ ճառագայթումը Նրա երկրորդ գալուստին: Մենք պետք է ուսումնասիրենք այս կանխատեսված հանգամանքները՝ պարզելու համար, թե արդյոք Պողոսի օրերի Եկեղեցուն ուղղված այս զգուշացումը դեռևս վերաբերում է մեր օրերին: Հիմա, տասնութ դար անց, կրկին ասվում է, որ Զրիստոսի օրը եկել է: Եվ առաջ է գալիս կարևոր հարց՝ արդյո՞ք Պողոս առաքյալը, ուղղելով թեսաղոնիկեցիների սխալները, ասել է որևէ բան, որը կհակասի այսօրվա այս պնդմանը:

Առաքյալի Եկեղեցուն ուղղված հորդորներից՝ զգուշությամբ սպասելու Տիրոջ վերադարձին և հենվելու մարգարեության հաստատուն խոսքին, ինչպես նաև Նրա հոգատարությունից՝ մատնանշելու Զրիստոսի ներկայության նշանները, այդ ժամանակ Նրա գործի բնույթը և այլն, պարզ է, որ նա նույնքան անհանգստացած էր, որ Եկեղեցին կարողանա ճանաչել Տիրոջ ներկայությունը, երբ Նա գա, մյուս կողմից նույնքան մտահոգ էր, որ նա չընկնի սխալ ճանապարհով՝ կարծելով, թե Նա արդեն եկել է Նրա ներկայության նշանակված ժամանակից առաջ: Այս դարաշրջանի սկզբում նման խաբեության մեջ ընկնելը նրանց, ովքեր ընդունեցին այն, ենթարկվեցին Նեոի հնադրներին, որը նույնիսկ այն ժամանակ արդեն գործում էր, իսկ Տիրոջ օրն ու Նրա ներկայությունը չճանաչելու անկարողությունը, երբ Նրա գալու ժամանակը հասել է, ենթարկում է նրանց, (ովքեր չեն կարողանում ճանաչել Նրան) Նեոի անվերջ խաբեություններին և կեղծ ուսմունքներին, կուրացնելով

Նրանց այս օրվա մեծ ճշմարտություններից և հատուկ արտոնություններից: Այդ պատճառով առաքյալը հոգ տածեց Եկեղեցու համար թե այս այս դարի սկզբում և թե վերջում և զգուշացրեց. «Թող ոչ ոք ոչ մի կերպ ձեզ չխաբի»: Դրա համար էլ նա այդքան ճշգրիտ նկարագրեց «Անօրենության մարդուն», որպեսզի ժամանակին նրան ճանաչեն:

Մինչդեռ այս դարի վերջում քրիստոնյաները հակված են մոռանալու անգամ Տիրոջ վերադարձի խոստումը (և եթե հիշում են այն, ապա միայն սարսափի ու վախի զգացումով), Առաջին Եկեղեցին անհամբերությամբ և ուրախ սպասումով սպասում էր դրան՝ որպես իր բոլոր հույսերի իրականացում, իր բոլոր հավատարմության պարզևատրում և իր բոլոր տխրությունների ավարտ: Ուստի այն օրերի հավատացյալները ուրախությամբ պատրաստ էին լսել ցանկացած ուսուցում, որը պնդում էր, որ Տիրոջ օրը կամ շատ մոտ է, կամ արդեն եկել է, և նրանք այս առումով խաբվելու վտանգի տակ էին, եթե միայն ուշադիր չէին ուսումնասիրում առաքյալների ուսմունքը այս թեմայով:

Թեսաղոնիկեի եկեղեցին, ազդված որոշ մարդկանց կեղծ հաստատումներից, թե Տերը կրկին եկել է և թե նրանք ապրում են Նրա օրերում, ակնհայտորեն ենթադրեց, որ այս գաղափարը ամբողջությամբ համահունչ է Պողոս առաքյալի իրենց ուղղված առաջին նամակում ներկայացված ուսուցմանը, որտեղ նա ասում էր (1 Թես. 5:1–5) որ Տիրոջ օրը գողի պես գիշերով գաղտնի, անսկատ կգա, և մինչ ուրիշները մթության մեջ կլինեն, սրբերը այս առումով լուսավորված կլինեն: Թեսաղոնիկեի եկեղեցին, ազդված որոշ մարդկանց կեղծ հաստատումներից, թե Տերը կրկին եկել է և թե նրանք ապրում են Նրա օրերում, ակնհայտորեն ենթադրեց, որ այս գաղափարը ամբողջությամբ համահունչ է Պողոս առաքյալի իրենց

ուղղված առաջին նամակում ներկայացված ուսուցմանը, որտեղ նա ասում էր (Ա Թես. 5:1–5) որ Տիրոջ օրը գողի պես գիշերով գաղտնի, անսկատ կգա, և մինչ ուրիշները մթության մեջ կլինեն, սրբերը այս առումով լույսի մեջ կլինեն: Հասկանալով, թե որքան լուրջ սխալ էին թույլ տվել՝ կարծելով, թե Տիրոջ ներկայության օրը արդեն եկել է, առաքյալ Պողոսը նրանց գրել է երկրորդ նամակ, որի հիմնական նպատակը այս սխալը ուղղելն էր: Նա ասում է. « Եղբայրներ, մեր Տեր Հիսուս Զրիստոսի գալստյան ու մեր՝ նրա մոտ հավաքվելու համար խնդրում ենք ձեզ, 2 որ դուք ձեր մտքից շուտ չշեղվեք ու չսարսափեք ո՛չ հոգով, ո՛չ խոսքով, ո՛չ էլ որպես մեր կողմից գրված նամակով, իբրև թե Զրիստոսի օրը *[enestemi]* եկել հասել է: Թող ոչ ոք ոչ մի կերպ ձեզ չխաբի, որովհետև Տիրոջ օրը չի գա, եթե նախ ապստամբությունը չգա, ու չհայտնվի անօրենության մարդը՝ կորստյան որդին այն հակառակորդը, որ գոռոզացած է բոլորի նկատմամբ, որն աստված կամ պաշտամունքի առարկա է անվանվում. մինչև իսկ նա Աստծու տաճարում կնստի և ինքն իրեն ցույց կտա, թե Աստված է: Չե՞ք հիշում, որ երբ դեռ ձեզ մոտ էի, այս բաներն ասում էի: Եվ հիմա գիտեք, թե ինչն է նրան [Զրիստոսին] արգելում, որ իր [նշանակված] ժամանակին հայտնվի: Որովհետև անօրենության խորհուրդն [Զրիստոսի դեմ անհնազանդությունը] արդեն գորանում է, բայց չպիտի կատարվի մինչև որ մեջտեղից վերցվի նա, ով այժմ արգելում է: Եվ այդ ժամանակ կհայտնվի այն անօրենը, որին Տեր Հիսուսն իր բերանի շնչով կսպանի ու իր գալստյան [«պարուսիա»] հայտնությամբ կկործանի: Պողոսը կարող էր այսքան պարզ գրել Անօրենության մարդու զարգացման մասին Տիրոջ օրվան նախորդող ժամանակաշրջանում՝ Դանիելի մարգարեության ուսումնասիրության շնորհիվ, որին մեր Տերը նույնպես հղում է անում (Մատթեոս 24:15), և, հավանաբար, որովհետև Պողոսին, իր «տեսիլքներում և

հայտնություններում» ցույց էր տրվել, թե ինչ մեծ ավերածություններ կհասցնի այս կերպարը Եկեղեցում:

Պետք է նշել, որ Պողոս առաքյալը որպես փաստարկներ չի օգտագործել հենց այն կետերը, որոնք այսօր որոշ մարդիկ սիրում են օգտագործել այն պնդման դեմ, թե Տիրոջ օրը սկսվում է: Նա չասաց. «Ո՛վ անխոհեմ թեսաղոնիկեցիներ, միթե՞ չգիտեք, որ երբ Քրիստոս գա, ձեր աչքերը կտեսնեն Նրան, ձեր ականջները կլսեն Աստծո փողի սարսափելի ձայնը, և դրա հավելյալ ապացույցը կլինեն գերեզմանների բացվելը և սրբերի հարությունը»: Արդյո՞ք պարզ չէ, որ եթե նման քննադատությունը հիմնավոր լիներ, Պողոս առաքյալը անմիջապես կօգտագործեր այդպիսի պարզ ու հստակ փաստարկը: Բացի այդ, հենց այն փաստը, որ նա չի օգտագործել այս փաստարկը, արդյո՞ք չի ապացուցում, որ նման փաստարկը չի կարող հիմնված լինել ճշմարտության վրա:

Դատելով այն փաստից, որ Պողոս առաքյալը, իր եռանդուն ջանքերում ուղղելու նրանց սխալը, առաջ քաշեց միայն այս մի առարկությունը, և ակնհայտ է, որ նա ընդհանուր առմամբ ճիշտ էր համարում նրանց պատկերացումը Տիրոջ օրվա մասին՝ որ այն կարող է սկսվել այնպես, որ շատերը դրա մասին անտեղյակ մնան, և որ այն կարող է գալ առանց որևէ արտաքին դրսևորման, որը կհուշեր դրա գալը: Բայց նրա առարկության միակ հիմքը այն էր, որ նախ պետք է գա ապստամբությունը, և այդ ապստամբության հետևանքով՝ Անօրենության մարդու ի հայտ գալը, որը, ինչ էլ որ լինի (միայնակ անհատ լինի, թե մեծ հակաքրիստոսական համակարգ, որին նա այդպես մարմնավորում է), պետք է բարձրանա, ծաղկի և սկսի անկում ապրել՝ մինչև Տիրոջ ներկայության օրը: Այսպիսով, եթե Պողոս առաքյալի առաջ քաշած այս միակ առարկությունը արդեն իսկ կատարվել է (եթե մենք կարող ենք հստակ տեսնել նման մի կերպարի իրական

գոյությունը, որի պատմությունը յուրաքանչյուր մանրուքով համընկնում է «Անօրենության մարդու» մարգարեական նկարագրությանը՝ սկսած նրա գոյության սկզբից մինչև մեր օրերը), ապա այդ առարկությունը, որը, ի վերջո, միակն էր որը իր օրերում լավ ընդունվեց, այլևս չի կարող ծառայել որպես հիմնավոր առարկություն ներկայիս պնդմանը, որ մենք ապրում ենք Տիրոջ օրում, Տիրոջ ներկայության օրում: Բացի այդ, եթե «Անօրենության մարդը» հեշտությամբ ճանաչելի է, եթե նրա բարձրացումը, զարգացումն ու անկումը հստակ տեսանելի են, ապա այս փաստը դառնում է նախորդ գլուխերի ուսուցման հերթական հաստատող ապացույցը, որը ցույց է տալիս, որ մենք այժմ գտնվում ենք Տիրոջ օրում:

Նրա մարգարեական նկարագրությունը

Յուրաքանչյուր ոք, ով ուսումնասիրում է մարգարեությունները, կգտնի, որ «Անօրենության մարդը» Սուրբ Գրություններում հստակ նույնացվում է ոչ միայն նրա բնավորության ճշգրիտ նկարագրության, այլև նրա հայտնվելու, իշխանության գալու և անկման համար նշված ժամանակի ու վայրի շնորհիվ:

Նույնիսկ ներշնչված հեղինակների կողմից օգտագործված անունները շատ համոզիչ վկայություն են տալիս այս անձի մասին: Պողոս առաքյալը նրան անվանում է «Անօրեն», «Անօրենության մարդ», «Անօրենության առեղծված», «Հակաքրիստոս» և «Կորստի որդի»: Դանիել մարգարեն նրան անվանում է «ավերածի պղծութիւն» (Դան. 11:31; 12:11), և մեր Տերը նույն կերպարին հղում է անում որպես «Ավերածի պղծությունը, որի մասին խոսել է Դանիել մարգարեն»: (Մատթ. 24:15) և նաև որպես «Գազան» (Հայտն. 13:1–8): Նույն կերպարը ներկայացվում էր Դանիելի մարգարեական տեսիլքում տեսած սարսափելի

գագանի մի փոքր եղջյուրով (գորություն), որը ունենալիք էր և բերան, որով մեծ մեծ բաներ էր խոսում, և հաջողությամբ սրբերի դեմ պատերազմ մղեց ու նրանց հաղթեց (Դան. 7:8, 21): Հովհաննես առաքյալն էլ նրան տեսավ և եկեղեցուն զգուշացրեց նրա մասին՝ ասելով. «Ինչպես լսեցիք, Նեոք գալիս է»: Նա շարունակում է խորհուրդ տալ, թե ինչպես խուսափել նրա ազդեցությունից (Ա Հովհ. 2:18–27): Բացի այդ, Հայտնության գիրքը մեծապես մանրամասն խորհրդանշական մարգարեություն է նույն այս Հակաքրիստոսի մասին: Սակայն այստեղ մենք միայն թեթև կանխարգելիչ ապացույցներ ենք տեսնում, իսկ ավելի մանրամասն ընկալությունը կթողնենք հաջորդ հատորին:

Այս տարբեր անվանումներն ու կարճ բնութագրերը մատնանշում են մի ստոր, խորամանկ, կեղծավոր, խաբեական, բռնապետական և դաժան էակի, որը զարգացել է քրիստոնեական եկեղեցու ներսում: Սկզբում այն շատ դանդաղ սողոսկեց ներս և անընդհատ բարձրացավ, ապա արագորեն աճեց գորությամբ ու ազդեցությամբ, մինչև հասավ երկրային իշխանության, հարստության և փառքի գագաթնակետին, մինևույն ժամանակ իր ազդեցությունը ուղղելով ճշմարտության և սրբերի դեմ, ինչպես նաև իր սեփական բարօրությունը մեծացնելու համար, և այդ ողջ ընթացքում հռչակելով իր սեփական առանձնահատուկ սրբությունը, իշխանությունն ու Աստծուց ստացած գորությունը:

Այս գլխում մենք ցանկանում ենք ցույց տալ, որ այս «անօրենության մարդը» համակարգ է, այլ ոչ թե մեկ անհատ, ինչպես շատերը կարծեն թե կարծում են: Ինչպես Քրիստոսը կազմված է ճշմարիտ Տիրոջից և ճշմարիտ եկեղեցուց, այնպես էլ Հակաքրիստոսը կեղծ համակարգ է, որը բաղկացած է կեղծ իշխանից և ապստամբ եկեղեցուց, և որին ժամանակավորապես թույլատրվում է խեղաթյուրել ճշմարտությունը, կիրառել խաբեություն, իրական Տիրոջ և

Նրա Եկեղեցու իշխանությունն ու ապագա թագավորությունը կեղծելու, ինչպես նաև ազգերին կեղծ պնդումներով ու խաբեությամբ արբեցնելու համար:

Մենք հույս ունենք ցույց տալ, յուրաքանչյուր խղճամիտ ընթերցողի գոհացմամբ, որ Պողոսի հիշատակած այս մեծ հավատուրացությունը կամ շեղումը տեղի է ունեցել, և որ Անօրենության մարդը ձևավորվել է, նստել է «Աստծո տաճարում» (բառացի, ոչ տիպական իմաստով), կատարել է առաքյալների և մարգարեների բոլոր կանխատեսումները իր բնավորության, գործի վերաբերյալ, և այլև, հայտնվել է, և այժմ, 1799 թվականից ի վեր, ոչնչացվում է Տիրոջ բերանի հոգով (ճշմարտությամբ) և ամբողջությամբ կոչնչանա այս Տիրոջ բարկության և հայտնության օրվա ընթացքում՝ վրեժխնդրության բոցավառ կրակով, որը արդեն սկսվել է:

Այլոց կարծիքները թեթևաբար ընդունելու որևէ ցանկություն չունենալով, մենք, այնուամենայնիվ, համարում ենք անհրաժեշտ ընթերցողին մատնանշել Նեոի վերաբերյալ ընդհանուր տեսակետին առնչվող մի քանի անհեթեթություն, որպեսզի այս թեմայի ճշմարտության արժանիքն ու տրամաբանականությունը ճիշտ գնահատվեն՝ ի տարբերություն նեղամիտ պնդման, թե Սուրբ Գրություններում այս կերպարի վերաբերյալ կանխատեսված ամեն ինչ կիրականանա մեկ բառացի անհատի միջոցով: Ասում են, որ այս մարդը այնքան կիմայի ողջ աշխարհը, որ մի քանի կարճ տարիների ընթացքում կստանա բոլոր մարդկանց հարգանքն ու պաշտամունքը, որոնք այնքան հեշտությամբ կխաբվեն, որ կհամարեն Նրան Աստված և վերակառուցված հրեական տաճարում կպաշտեն Նրան որպես Ամենակարող Եհովային: Այս ամենը պետք է կատարվի կայծակնային արագությամբ՝ երեք ու կես տարում, ասում են Նրանք, սխալ մեկնաբանելով խորհրդանշական ժամանակը, ինչպես

Նրանք սխալ են մեկնաբանում Նաև խորհրդանշական «մարդուն»:

Չկա ոչ մի ֆանտաստիկ ստեղծագործություն կամ մանկության ամենաանհեթեթ երևակայություն, որը կարող է համեմատվել Աստծո սիրելի որոշ զավակների ծայրահեղ տեսակետների հետ, որոնք բառացիորեն մեկնաբանում են Պողոս առաքյալի խոսքերը և այդպիսով իրենց ու ուրիշներին կուրացնում բազմաթիվ թանկարժեք ճշմարտությունների հանդեպ, որոնց նկատմամբ նրանք փակել են իրենց միտքը՝ այս հարցում ունեցած սխալ պատկերացումների պատճառով: Չնայած որքան էլ մենք կարեկցենք նրանց, նրանց «կույր հավատքը» ժպիտ է առաջացնում, երբ նրանք լուրջ դեմքով խոսում են Հայտնության գրքում նշված տարբեր խորհրդանշանների մասին, որոնք չեն հասկանում և սխալմամբ բառացիորեն վերագրում են իրենց երևակայական կերպարին: Այս, աշխարհի երբևէ ճանաչած ամենասկեպտիկական դարում, նրանք պնդում են, որ Նա երեք ու կես տարվա կարճ ժամանակահատվածում ամբողջ աշխարհը կհպատակեցնի իրեն, խոնարհվելով նրա առջև ինչպես Աստծո առջև: Մինչդեռ Կեսարները, Ալեքսանդրը, Նապոլեոնը, Մուհամմադը և մյուսները արյունալի ծովերով են անցել և բազմիցս երեք ու կես տարուց ավելի են անցկացրել՝ նրանք անգամ հազարերորդ մասը չեն կարողացել հասնել այն բանի, ինչ վերագրվում է այս մարդուն:

Եվ այնուամենայնիվ, այդ նվաճողները իրենց կողմում ունեին խորը անտեղյակության և կողմնակալության բոլոր առավելությունները, մինչդեռ մենք այսօր ապրում ենք այնպիսի պայմաններում, որոնք առավելապես անբարենպաստ են նման խաբեության և կեղծիքի զարգացման համար: Մենք ապրում ենք այն դարում, երբ ամեն գաղտնի բան ավելի ակնհայտ է դառնում, քան

երբևէ; երբ այսպիսի խաբեությունը չափազանց անհեթեթ ու ծիծաղելի կլիներ, որպեսզի այն լուրջ ընդունվեր: Իրականում ներկայիս միտումը հենց մարդկանց նկատմամբ անվստահությունն ցուցաբերելն է՝ անկախ նրանից, թե որքան լավ, տաղանդավոր և ունակ են նրանք, և ինչպիսի պատասխանատու ու լիազոր պաշտոններ են զբաղեցնում: Եվ սա (ինչպես երբեք) այնքան ճշմարիտ է, որ հազար անգամ ավելի հավանական է, որ ողջ աշխարհը հրաժարվի ցանկացած Աստծուց, քան որ երբևէ որևէ մարդու պաշտի որպես Ամենակարող Աստծո:

Այս հարցը քննարկելիս շատերի համար գլխավոր խնդիրը «աստված» բառի իմաստի լայնածավալ սխալ ընկալումն է: Նրանք չեն գիտակցում, որ հունարեն «theos» («աստված») բառը վերաբերում է ոչ միայն Եհովային: Այն նշանակում է «զորավոր մեկը, իշխան», և հատկապես կրոնական կամ հոգևոր առաջնորդ: Նոր Կտակարանում «theos» բառը հազվադեպ է հանդիպում, բացի այն դեպքերից, երբ խոսքը վերաբերում է Եհովային, քանի որ իրենց քարոզներում առաքյալները հազվադեպ էին խոսում կեղծ կրոնական համակարգերի մասին և, հետևաբար, հազվադեպ էին հիշատակում իրենց սրբազան առաջնորդներին կամ աստվածներին: Այնուամենայնիվ, հետևյալ հատվածներում «աստված» («theos») բառը վերաբերում է ոչ թե գերագույն Էակին՝ Եհովային, այլ ուրիշներին՝ (Յովհաննես 10:34, 35, Գործք 7:40, 43, 17:23, Ա Կորնթացիներ 8:5):

Հաշվի առնելով հունարեն «theos» բառի լայն իմաստը, անմիջապես պարզ է դառնում, որ առաքյալի հայտարարությունը Հակաքրիստոսի մասին (որ նա կնստի Աստծո տաճարում՝ ներկայացնելով ինքն իրեն որպես աստված) պարտադիր չի նշանակում, որ Հակաքրիստոսը կփորձի բարձրացնել ինքն իրեն Եհովայից վեր կամ նույնիսկ զբաղեցնել Եհովայի տեղը: Դա պարզապես

նշանակում է, որ նա կներկայանա որպես կրոնական առաջնորդ, որը պնդում է և կիրառում է իշխանություն բոլոր մյուս կրոնական առաջնորդների նկատմամբ՝ մինչև այն աստիճան, որ բարձրացնի իրեն Եկեղեցու մեջ, որը Աստծո ճշմարիտ տաճարն է, և այնտեղ պնդի ու կիրառի տիրական իշխանություն որպես դրա գլուխը, այսինքն՝ որպես դրա լիազորված առաջնորդը: Երբ հունարեն «theos» բառը վերաբերում է Եհովային և օգտագործվում է այնպիսի նախադասությունում, որտեղ դրա իմաստը կարող է երկիմաստ լինել, այն նախորդվում է որոշյալ հոդով (անգլերեն «the»-ի նման՝ «the God»): Նշված տեքստերում, որոնք վերաբերում են այլ աստվածներին, և այս տեքստում (Բ Թեսալ. 2:4), որը խոսում է Նեռի մասին, նման հոդ չկա:

Եթե սա լիովին հասկացվի, մի մեծ խոչընդոտ կհեռացվի, և միտքը պատրաստ կլինի ճիշտ ուղղությամբ նայել այս մարգարեության կատարմանը՝ ոչ թե այնպիսի Նեռի, որը ձգտում է դառնալ Եհովա և պահանջում է համապատասխան պաշտամունք, այլ նրան, ով իրեն հռչակում է Եկեղեցու գլխավոր, գերագույն կրոնական ուսուցիչ, ով այդպիսով փորձում է զավթել Զրիստոսի՝ աստվածապետ նշանակված Գլխի, Տիրոջ և Ուսուցչի իշխանությունը:

Եվ բավական տարօրինակ է, որ նրանք, ովքեր «Անօրենության մարդուն» բառացիորեն են ընդունում, մեծ մասամբ նրանք են, ովքեր հավատում են Տիրոջ գալստին հազարամյակից առաջ և ովքեր հույս ու սպասում ունեն, որ Տերը «այսօր ցանկացած պահի» կգա: Ինչո՞ւ, ուրեմն, որոշների համար այդքան դժվար է հասկանալ, թե ինչ է նկատի ունենում առաքյալը, երբ վճռականորեն հայտարարում է, որ Տիրոջ օրը (Նրա ներկայության օրը) չի կարող գալ և չի կարելի սպասել դրան, մինչև չբացահայտվի «Անօրենության մարդը»: Առաջին հրեական տաճարի կառուցմանը ավելի քան քառասուն տարի պահանջվեց, և

անշուշտ առնվազն տասից քսան տարի կպահանջվի Երուսաղեմում նոր տաճար կառուցելու համար (նախորդից շատ ավելի շքեղ), որտեղ, ինչպես նրանք սպասում են, բառացի «Անօրենության մարդը» իրեն Աստված կհռչակի, և որտեղ նրան համապատասխան կերպով պաշտելու են: Այդ դեպքում, ինչպես կարող են այսպիսիները սպասել, որ Տերը «այսօր ցանկացած պահի» գա: Այսպիսի տեսակետը հակասում է և՛ տրամաբանությանը, և՛ առաքյալի մարգարեությանը: Համահունչ լինելու համար նրանք կամ պետք է դադարեցնեն Տիրոջ ցանկացած պահի սպասելը, կամ դադարեցնեն «Անօրինության մարդուն» ապագային վերագրելը, քանի որ Տիրոջ ներկայության օրը չի կարող գալ մինչև տեղի չունենա հավատուրացությունը և մինչև այս հավատուրացությունից չզարգանա և չհայտնվի «Անօրենության մարդը»:

Բայց երբ ճիշտ ենք հասկանում առաքյալի խոսքերը, ինչպես նաև ճիշտ ենք հասկանում Տիրոջ գալուստի կերպը, մենք նման հակասություններ կամ անհամապատասխանություններ չենք գտնում, այլ միայն ներդաշնակություն և համահունչություն: Սա այն տեսակետն է, որը մենք այժմ ներկայացնում ենք ձեզ: Ընթերցողը ինքնուրույն պետք է համոզվի դրա սուրբգրային լինելու մեջ:

Այս համակարգին վերագրվող տարբեր տիտղոսները անշուշտ խորհրդանշական են: Բայց դրանք անունների տեսքով որևէ անհատի չեն վերագրվում, փոխարենը դրանք նկարագրում են կոռումպացված կրոնական և քաղաքացիական միության բնույթը, որը զարգացել է անվանական քրիստոնեական եկեղեցու սահմանների ներսում և որը, Քրիստոսի՝ Գլխի, և Նրա ճշմարիտ Եկեղեցու՝ Նրա մարմնի, դեմ թաքնված հակադրության պատճառով, լիովին արժանի է «Նեո» անվանմանը:

Այսպիսի համակարգը կարող էր իրականացնել Հակաքրիստոսի կամ Անօրենության մարդու վերաբերյալ արված բոլոր կանխատեսումները, ինչը անհատը չէր կարող անել: Բացի այդ, ակնհայտ է, որ այս Նեոի համակարգը չի պատկանում հեթանոսական կրոնների համակարգերին, ինչպիսիք են մահմեդականությունն ու բրահմանիզմը, քանի որ քրիստոնեական եկեղեցին երբեք չի եղել որևէ նման համակարգի վերահսկողության տակ, և այդ համակարգերից ոչ մեկը չի ծագել քրիստոնեական եկեղեցուց: Նրանք այժմ անկախ են քրիստոնեական եկեղեցուց և միշտ էլ անկախ են եղել:

Համակարգը, որը ամբողջությամբ համապատասխանում է ոգեշնչող նկարագրությանը, պետք է հայտարարված լինի քրիստոնեական և ներառի քրիստոնյաներ համարվողների մեծամասնությունը: Եվ նման համակարգը պետք է ծագած լինի հավատուրացությունից՝ ճշմարիտ քրիստոնեական հավատքից հեռանալուց, այն հավատուրացությունից, որը մինչև բարենպաստ հնարավորությունների առաջացումը գաղտնի ու թաքնված էր՝ իշխանություն զավթելու համար: Նրա թաքուն սկիզբը կարելի է հետևել առաքյալների օրերից՝ որոշ ուսուցիչների ամենամեծը լինելու ձգտումից:

Մեզ երկար փնտրել հարկավոր չէ, որպեսզի գտնենք մի կերպար, որը կատարյալ կերպով համապատասխանում է բոլոր պահանջներին, որի պատմությունը՝ ինչպես աշխարհիկ պատմաբանների, այնպես էլ նրա սեփական խաբված ծառաների կողմից արձանագրված է, ինչպես դեռ կտեսնենք այն ամբողջությամբ համընկնում է, Նեոի մարգարեական նկարագրության հետ: Բայց երբ մենք ասում ենք, որ միակ համակարգը, որի պատմությունը համընկնում է այս մարգարեությունների հետ, պապականությունն է, թող ոչ ոք պատահաբար չմտածի, որ մենք յուրաքանչյուր Հռոմի կաթոլիկի համարում ենք

անօրենսության մարդ, կամ որ քահանաները, կամ նույնիսկ Յոզմի պապն է Նեռը: Միանձնյա որևէ անձ չի կարող լինել այս «Հակաքրիստոսը», այս «Անօրենսության մարդը», որի մասին խոսվում է մարգարեությունում: Պապերը, եպիսկոպոսները և մյուսները, ի վերջո, ընդամենը կազմում են և անդամ են Նեռի համակարգի, ինչպես որ Թագավորական քահանայության բոլոր անդամները ընդամենը անդամ են ճշմարիտ Զրիստոսի՝ իրենց Գլխի Հիսուսի ներքո, և ինչպես որ իրենց ներկայիս վիճակում նրանք միասին կազմում են նախատիպային Եղիան, թեև նրանցից ոչ մեկը ինքնին չի հանդիսանում կանխատեսված Եղիան կամ Զրիստոսը: Բացի այդ, նկատենք, որ Յոզմի եկեղեցին որպես եկեղեցական համակարգ «Անօրենսության մարդը» չէ և երբեք չի ներկայացվում որպես մարդ: Հակառակը, եկեղեցու համար, առանձին իր Տիրոջից և Գլխից, միշտ օգտագործվող խորհրդանիշը կինն է: Իրական եկեղեցին ներկայացվում է որպես «մաքուր կույս», մինչդեռ ապստամբ եկեղեցին, որը շեղվել է իր սկզբնական մաքրությունից և Տիրոջ հանդեպ հավատարմությունից, խորհրդանշորեն կոչվում է «պոռնիկ»: Ինչպես որ իսկական «կույս» եկեղեցին շարունակում է այդպիսին մնալ մինչև դարի ավարտը, երբ նա միավորվելու է իր Տիրոջը և ստանալու է Նրա անունը՝ Զրիստոս, այնպես էլ ուխտադրուժ եկեղեցին Հակաքրիստոսը կամ Անօրենսության մարդը չէր, մինչև նա միավորվեց իր տիրոջը և գլխին՝ պապին, ով անդում է, թե Զրիստոսի փոխանորդն է, և դարձավ կրոնական կայսրություն, որը սխալմամբ կոչվում է Զրիստոսություն, ինչը նշանակում է Զրիստոսի Թագավորություն:

Պապականությունն այս կեղծ թագավորության անունն է, և այն կառուցված էր սխալ մեկնաբանված ճշմարտության վրա՝ այն ճշմարտության, որ եկեղեցին կոչված է լինել Աստծո համար թագավորներ և քահանաներ և տիրել երկրի վրա: Բայց տիրելու ժամանակը դեռ չէր եկել:

Ավետարանական դարաշրջանը չի նախատեսվել այդ նպատակով, այլ Եկեղեցու ընտրության, զարգացման, կարգապահության, խոնարհեցման և զոհաբերության համար՝ հետևելով իր Տիրոջ հետքերին և համբերությամբ սպասելով ու դիմանալով մինչև խոստացված բարձրացման և փառավոր տիրապետության համար նշանակված ժամանակը՝ Հազարամյա դարաշրջանը:

Տերը կանխատեսեց, որ անվանական քրիստոնեությունը կտարածվի ամբողջ աշխարհում, կդառնա հանրաճանաչ և կընդունվի բազմաթիվ մարդկանց կողմից, ովքեր կարևորում են ձևը և չեն խորանում դրա հաստատության ոգու մեջ: Նա կանխատեսեց, որ քանի որ այսպիսի բազմությունը ինքն իրեն կնույնականացնի եկեցու հետ, աշխարհիկ ոգին, որը հակադիր է ինքնուրացության և ինքնագոհության ոգուն, կմտնի նրանց հետ, որ եսասիրությունն ու մեծ լինելու և իշխելու ցանկությունը, այդպես ներթափանցելով, երկար չեն սպասի, մինչև որ հնարավորություն ստանան, և որ այսպես Եկեղեցին կփորձի ժամանակից առաջ տիրանալ աշխարհին — կամ, ավելի ճիշտ, որ աշխարհիկ տարրը, որը կմտնի Եկեղեցի, իր ազդեցությունը կզգացնի, և ճշմարիտ Եկեղեցու անունից կհափշտակի երկրի քաղաքացիական իշխանությունը, որը Աստված հանձնել էր հեթանոսներին, և որը չի կարող ամբողջությամբ անցնել ճշմարիտ Եկեղեցու ձեռքը մինչև հեթանոսների ժամանակների ավարտը՝ Մ.թ.1914 թվականը:

Եվ ահա թե ինչպես դա իրականում տեղի ունեցավ. անվանական եկեղեցին սկսեց շեղվել, երբ նրա թվաքանակը աճում էր փառասեր մարդկանց ուսմունքի և օրինակի ազդեցությամբ, որոնց գաղափարները ավելի ու ավելի էին ձգտում իշխանության և աշխարհիկ ազդեցության, որոնք աճում էին համընթաց նրանց թվաքանակի և հարստության հետ: Շուտով Եկեղեցու ոգին

դարձավ աշխարհիկ, և ամեն աշխարհիկ բան դարձավ ցանկության առարկա: Փառասիրությունը շշուշաց. «Եթե միայն մեծ Հռոմեական կայսրությունը՝ իր ողջ իշխանությամբ ու ազդեցությամբ, իր բանակով ու հարստությամբ աջակցեր Եկեղեցուն, որքան պատվավոր ու ազնիվ կլիներ այդ ժամանակ քրիստոնյա լինելը: Որքան արագ կդադարեին հեթանոսական հալածանքները: Այդ ժամանակ մեր զորության մեջ կլիներ ոչ միայն վախեցնել նրանց, այլև ստիպել նրանց միանալ Եկեղեցուն, խաչին և Քրիստոսի անվանը»: Պարզ է, որ Աստծո մտադրությունը չէ, որ Եկեղեցին հավիտյան ենթարկվի աշխարհին և հալածվի նրանից. Առաքյալի խոսքերը՝ «Զգիտե՛ք, որ սրբերն են դատելու աշխարհը», ինչպես նաև մեր Տիրոջ խոստումները, որ մենք նրա հետ կթագնավորենք, և բազմաթիվ մարգարեությունները, որոնք վերաբերում են Եկեղեցու թագավորությանը, հստակ ցույց են տալիս, որ սա Աստծո ծրագիրն է: Ճիշտ է, Առաքյալը գրել է, որ մեր Տերը նախ կվերադառնա և կբարձրացնի Եկեղեցին, և հորդորել է «սպասել» Տիրոջը, սակայն այժմ անցել են մի քանի դար, և մենք Տիրոջ գալստի որևէ նշան չենք տեսնում: Պետք է հասկանալ, որ առաքյալները որոշ չափով սխալվել են: Մեզ համար պարզ է, որ մենք կարող ենք և պետք է օգտագործենք բոլոր միջոցները՝ քաղաքացիական կառավարության վրա տիրելու և աշխարհը Տիրոջ համար նվաճելու համար: Պետք է նաև, որ Եկեղեցուն զլուխ ունենա՝ մեկը, ով կներկայացնի բացակա Տիրոջը և կներկայացնի Եկեղեցին աշխարհի առջև, ով կստանա աշխարհի հարգանքը, կիրականացնի Քրիստոսի իշխանությունը և կկառավարի աշխարհը երկաթե գավազանով, ինչպես մարգարեացել էր Դավիթը: Այսպիսով, աստիճանաբար, դարեր տևած դանդաղ դատողությունների ընթացքում, Եկեղեցու իսկական հույսը՝ բարձրացվելու աշխարհին կառավարելու և օրհնելու (Տիրոջ Երկրորդ գալստի հետ կապված) համար,

կորավ, և դրա փոխարեն առաջացավ նոր հույս՝ հույսը հաջողության հասնելու առանց Տիրոջ, պապերի հաջորդականության գլխավորությամբ և առաջնորդությամբ: Այսպիսով՝ դավադրության, խարդախության և աշխարհի հետ բարեկամական հարաբերությունների շնորհիվ Եկեղեցու հույսը դարձավ կեղծ հույս, մի խորամանկ թակարդ, որով Սատանան մարդկանց մի չարիքից ու սխալից մյուսը տարավ՝ և՛ ուսմունքային, և՛ գործնական առումով:

Հավատուրացությունից «Անօրենության մարդու» վերածվելու պահը եկավ այն ժամանակ, երբ պապական հիերարխիան, հաջորդական պապերի գլխավորությամբ, բարձրացրեց ինքն իրեն և պահանջեց ու ապահովեց երկրի վրա իշխանություն՝ Զրիստոսի հազարամյա թագավորության անունով, որին որ նա հավակնում էր: Սա կեղծ, խաբեական պնդում էր, անկախ նրանից, թե որքան խորը հավատում էին դրան նրա որոշ կողմնակիցներ: Դա խաբեական, կեղծ թագավորություն էր, անկախ նրանից, թե որքան անկեղծ կարող էին լինել դրա կազմակերպիչներն ու կողմնակիցները: Դա Նեոի թագավորությունն էր, անկախ նրանից, թե որքան շատ նրանք պնդում էին և հավատում, որ դա ճշմարիտ Զրիստոսի փառքն ու թագավորությունն ու գորությունն է երկրի վրա: Ով կարծում է, որ խղճամիտ լինելը միշտ նշանակում է ճիշտ լինել, սխալվում է: Յուրաքանչյուր սխալ համակարգ անշուշտ ունի նույնքան, եթե ոչ ավելի, խղճամիտ մոլորված հետևորդներ, որքան կեղծավորներ: Խղճամտությունը բարոյական ազնվությունն է, և այն չի կախված գիտելիքից: Մոլորված հեթանոսները անկեղծորեն պաշտում են կուռքերին և նրանց համար զոհեր մատուցում: Սողոսը, սխալ տեղեկացված, մաքուր խղճով հալածում էր սրբերին: Եվ նույն կերպ շատ պապեր, սխալ տեղեկացված, մաքուր խղճով խեղաթյուրեցին մարգարեությունները, հալածեցին ճշմարիտ սրբերին և կազմակերպեցին մեծ

Հակաքրիստոսի համակարգը: Հարյուրավոր տարիներ պապությունը ոչ միայն խաբել է աշխարհի թագավորներին իր իշխանության՝ այսպես կոչված աստվածային լիազորությունների վերաբերյալ, և տիրապետել նրանց վրա, այլև զբաղեցրել է իր տեղը Եկեղեցում, Աստծո տաճարում (որտեղ միայն Քրիստոսը պետք է ճանաչվի որպես Գլուխ և Ուսուցիչ), հռչակելով ինքն իրեն միակ ուսուցիչ և օրենսդիր: Եվ այստեղ նույնպես, բացառությամբ մի քանիսի, բոլորին խաբեց իր ֆենոմենալ հաջողություններով և հպարտ պնդումներով: «Եվ ամբողջ երկիրը զարմացավ» (ապշած, խաբված, շփոթված) — «որոնց անունները գրուած չեն Գառի կեանքի գրքի մեջ», մինչդեռ շատերի անունները, որոնք գրված են որպես Աստծո սրբեր, գտնվում էին լուրջ շփոթության մեջ: Այս խաբեությունը առավել ուժեղ է, քանի որ նման մեծամիտ ծրագրերը ձևավորվել են շատ աստիճանաբար և իրականացվել են ավելի դանդաղ: Սա շարունակվել է դարեր շարունակ և, որպես ցանկություն, արդեն գաղտնի գործում էր Պողոսի առաքյալի օրերում: Դա մի գործընթաց էր, երբ աստիճանաբար մեկ խաբեությունը մյուսի վրա էր ավելացվում մեկ մարդու մեծամիտ պնդումները լրացնելով մյուսի պնդումներով և այդպես դարերի ընթացքում: Այս կերպ, գաղտնի, Սատանան ցանեց և խնամեց խաբեության սերմերը և ստեղծեց աշխարհի պատմության մեջ ամենամեծ և ամենաազդեցիկ համակարգը՝ Հակաքրիստոսին:

«Հակաքրիստոս» անունը երկակի նշանակություն ունի: Առաջին նշանակությունը՝ «Քրիստոսի դեմ» (այսինքն՝ Քրիստոսին հակադրվող), երկրորդ նշանակությունը՝ «Քրիստոսի փոխարեն» (այսինքն՝ կեղծ Քրիստոս): Առաջին նշանակությունը ընդհանուր ընդունվածն է, որը վերաբերում է Քրիստոսին դիմադրող ցանկացած թշնամու: Այս իմաստով Սողոսը (հետագայում հայտնի Պողոս անունով), յուրաքանչյուր հրեա,

յուրաքանչյուր մուսուլման, բոլոր հեթանոս կայսրերը և Յոմի բնակիչները հակաքրիստոսներ էին՝ Քրիստոսի հակառակորդներ (Գործք 9:4): Սակայն Սուրբ Գիրքը այս իմաստով «Հակաքրիստոս» անունը չի օգտագործում: Այն շրջանցում է այս բոլոր թշնամիներին և «Հակաքրիստոս» տերմինը վերագրում է վերը նշված երկրորդ իմաստին՝ որպես «դեմ», խեղաթյուրման, իմիտացիայի և ճշմարիտ Քրիստոսի տեղը զբաղեցնելու իմաստով: Այսպիսով, Յովհաննես առաքյալը նկատում է. «Ինչպես լսեցիք, Նեռը գալիս է, և արդեն իսկ բազում նեռեր են եկել, և դրանից էլ իմանում ենք, որ վերջին ժամանակն է» (Ա Յովհաննես 2:18, 19): [Յունարեն տեքստը այդ հատուկ Նեռին առանձնացնում է մյուս, ավելի փոքրերից]: Եվ Յովհաննես առաքյալի հետևյալ նկատառումները ցույց են տալիս, որ նա նկատի չունի Քրիստոսի և Եկեղեցու բոլոր հակառակորդներին, այլ մի կոնկրետ խումբ, որը (չնայած դեռ իրեն Քրիստոսի մարմին՝ Եկեղեցի է կոչում) լքել է ճշմարտության հիմնարար սկզբունքները: Արդյունքում նրանք ոչ միայն սկսեցին խեղաթյուրել ճշմարտությունը, այլև աշխարհի աչքերում զբաղեցրին ճշմարիտ Եկեղեցու տեղը և կրեցին նրա անունը, այդպիսով փաստացի նմանակելով ճշմարիտ սրբերին: Յովհաննես առաքյալը նրանց մասին ասում է. «Նրանք մեր միջից դուրս ելան, բայց մեզանից չէին» — այսինքն՝ նրանք չեն ներկայացնում մեզ, նույնիսկ եթե այս առումով կարող են խաբել և իրենց, և աշխարհին: Նույն նամակում Յովհաննես առաքյալը նշում է, որ նրանք, ում նա անվանում է «բազմաթիվ հակաքրիստոսներ», ունեն [այդ] Հակաքրիստոսի ոգին:

Սա հենց այն է, ինչ (ինչպես որ մենք կարող էինք ակնկալել) գտնում ենք պապությունում. այն ոչ թե Քրիստոսի անվան դեմ դիմադրություն է, այլ Քրիստոսի թշնամի կամ հակառակորդ՝ կեղծորեն կրելով Նրա անունը, իմիտացնելով Նրա թագավորությունն ու իշխանությունը և խեղաթյուրելով Նրա բնավորությունը, ծրագրերը և

ուսմունքները աշխարհի առջև: Այսպիսի թշնամին և հակառակորդը իսկապես ամենավնասակարն է: Նա շատ ավելի վտանգավոր է, քան բացահայտ թշնամին: Եվ սա ճիշտ է, պետք է հիշել, Նույնիսկ եթե այդ համակարգին պատկանող որոշ մարդիկ անկեղծորեն մոլորվել են՝ «խաբելով և խաբվելով»:

Այս ուղեցույցներով՝ «Անօրենության մարդու» ինքնության և հատկանիշների, ինչպես նաև նրա հայտնվելու ժամանակի, վայրի և հանգամանքների վերաբերյալ, մենք կանցնենք պատմական որոշ ապացույցների քննությանը, որոնք, մեր համոզմամբ, աներկբայորեն ապացուցում են, որ Հակաքրիստոսի վերաբերյալ բոլոր մարգարեությունները կատարվել են պապական համակարգում՝ այնպիսի ձևով և չափով, որ, հաշվի առնելով մեր օրերի լույսը, բոլորը պետք է ընդունեն, որ դրանք այլևս երբեք չեն կարող կրկնվել: Եվ բոլորը պետք է համաձայնեն այս ամենի հետ: Այստեղ մենք հնարավորություն չունենք ավելի երկար անդրադառնալ պատմական ապացույցների հսկայական քանակին: Բացի այդ, մենք սահմանափակվել ենք միայն այն պատմաբաններով, որոնք հայտնի են իրենց ճշգրտությամբ, և բազմաթիվ դեպքերում դիմել ենք ռոմանկաթուղիկ հեղինակների՝ նրանց վկայությունների կամ խոստովանությունների համար:

Հանգամանքները, որոնք հանգեցրին «Անօրենության մարդու» ծննդին

Մեծ հավատուրացություն: Առաջին հերթին, մենք հարցնում ենք՝ արդյո՞ք գոյություն ունի որևէ պատմական վկայություն Պողոս առաքյալի մարգարեության կատարման մասին, որը վերաբերում է քրիստոնեական եկեղեցու ուսմունքի և կյանքի սկզբնական պարզությանն

ու մաքրության մեծ հավատուրացությանը, և Եկեղեցու ներսում չար, փառասեր ուժի գաղտնի ազդեցությանը պապության զարգացման նախաշեմին, «Անօրենության մարդը» — մինչ Պապը կճանաչվեր Եկեղեցու գլուխ:

Այո, շատ հստակ: Պապական հիերարխիան գոյություն ստացավ միայն մի քանի դար անց, երբ Տերն ու առաքյալները հիմնադրել էին Եկեղեցին: Այս միջանկյալ ժամանակաշրջանի մասին մենք կարդում ենք հետևյալը:²⁶

«Երբ Եկեղեցին թվաքանակով ու հարստությամբ աճեց, կառուցվեցին թանկարժեք պաշտամունքային շինություններ, պաշտամունքային արարողությունները դարձան ավելի բարդ, քանդակագործությունն ու նկարչությունը ներդրվեցին՝ խրախուսելու հավատքը, սրբերի ու մարտիրոսների մասունքները պահվում էին որպես սրբազան ժառանգություն, և կրոնական արարողությունների թիվը աճեց: Զրիստոնյա կայսրերի օրոք (չորրորդ դարում), իր մեծ քահանայական կազմով և տպավորիչ արարողություններով, Եկեղեցին ձեռք բերեց մեծ մասը այն շքեղության և արտաքին փառքի, որը պատկանել էր այն հեթանոսական համակարգին, որը այն փոխարինել էր»:

Մեկ այլ պատմաբան²⁷ ասում է:

«Չորրորդ դարում քրիստոնեությունը կայսրական կրոն հռչակելու հետ մեկտեղ,

Զրիստոնեությունը որպես կայսրության կրոն հռչակելու հետ միաժամանակ առաջընթաց էր ապրում երկու դար առաջ ծագած մեծ ու համատարած ապականությունը: Հավատալիքներն ու անտեղյակու-

²⁶ “Fisher's Universal History”, էջ. 193

²⁷ “White's Universal History”, էջ. 156.

թյունը հոգևորականներին հաղորդեցին իշխանություն, որը նրանք օգտագործեցին իրենց անձնական բարձրացման համար»:

«Ռապինը նշում է, որ «հինգերորդ դարում քրիստոնեությունը խեղաթյուրվեց մարդկային բազմաթիվ հորինվածքներով: Նրա առաջնորդության և կարգապահության պարզությունը զիջեց տեղը քահանայական իշխանության համակարգին, իսկ պաշտամունքը աղտոտվեց հեթանոսներից փոխառված ծիսակարգերով»:

Իր «Քրիստոնեության պատմություն» գրքում Մոսհայմը քայլ առ քայլ հետևում է Եկեղեցու պատմությանը իր սկզբնական պարզությունից ու մաքրությունից մինչև խորը անկումը, որը գազաթնակետին հասավ «Անթեմիոսյան մարդու» զարգանալով: Թե նա ճանաչե՞լ է Հակաքրիստոսին, թե ոչ՝ անհայտ է, սակայն նա վարպետորեն հետևել է «Անթրինության առեղծվածի» գործունեությանը Եկեղեցում մինչև չորրորդ դարի սկիզբը, երբ նրա աշխատանքը հանկարծակի ընդհատվեց մահվամբ: Այստեղ բավարար տեղ չկա նրա հիանալի և ընդարձակ աշխատանքից մեջբերումներ ներկայացնելու համար, սակայն մենք այն ամբողջությամբ խորհուրդ ենք տալիս որպես այս թեմայով չափազանց ուսուցողական:

Մենք մեջբերում ենք (Լորդի «Old Roman World» գրքից) եկեղեցու պատմության առաջին չորս դարերի կարճ և քննադատական ակնարկը, որը հստակ և կոնկրետ կերպով պատկերում է նրա աստիճանական անկումը, ինչպես նաև նրա արագ դեգրադացիան, երբ առաքյալի նշած խոչընդոտը հեռացվեց: Նա ասում է՝

«Առաջին դարում շատ իմաստուններ կամ ազնվականներ չեն կանչվել: Մենք չենք ճանաչում որևէ մեծ

անուն՝ ոչ փիլիսոփաների, ոչ պետական գործիչների, ոչ ազնվականների, ոչ գեներալների, ոչ իշխանների, ոչ դատավորների, ոչ պաշտոնյաների: Առաջին դարում քրիստոնյաները բավարար կարևորություն չունեին, որ իշխանությունները լայնածավալ հալածանքներ իրականացնեին նրանց նկատմամբ: Նրանք անգամ հանրային ուշադրություն չէին գրավում: Մենք չենք կարդում քրիստոնյաների կողմից բողոքների կամ արդարացումների մասին: Նրանց շարքերում չկային մեծ գիտելիք, տաղանդ, հարստություն կամ բարձր հասարակական դիրք ունեցող մարդիկ: Պատմության մեջ մեծ անունների առումով ոչինչ այնքան անհետաքրքրական չի, որքան առաջին դարի եկեղեցու տարեգրությունը: Սակայն այդ դարում յուրաքանչյուր քաղաքում ավելի ու ավելի շատ նորադարձներ էին հայտնվում, և ավանդությունը վկայում է ավելի նշանավորների՝ այդ թվում գրեթե բոլոր առաքյալների, մարտիրոսության մասին»:

«Երկրորդ դարում չկան ավելի մեծ անուններ, քան Պողիկարպոսը, Իգնատիոսը, Զուստինոս Վկան, Կղեմեսը, Մելիտոսը և Ապոլոնիոսը՝ խաղաղ եպիսկոպոսներ կամ անվախ մարտիրոսներ, որոնք իրենց հոտին սովորեցնում էին վերին սենյակներում և աշխարհիկ որևէ կոչում չունեին, հայտնի միայն իրենց սրբությամբ կամ բնավորության պարզությամբ և միայն հիշատակվում էին իրենց տառապանքների ու հավատքի համար: Մենք կարդում ենք նրանց մասին՝ նրանցից ոմանք գրել են արժեքավոր տրակտատներ և գովաբանության գրություններ, սակայն նրանց մեջ չենք գտնում բարձր դիրք ունեցող որևէ անձի: Զեդինակության կամ իշխանության տեսանկյունից քրիստոնյա լինելը համարվում էր նվաստացուցիչ: Առաջին քրիստոնեական գրականությունը մեծամասամբ գովերգող բնույթի է, իսկ նրա ուսմունքի բնույթը պարզ և գործնական է: Եկեղեցու

ներսում կային բանավեճեր, հարուստ կրոնական կյանք, լայնածավալ գործունեություն և մեծ առաքինություններ, սակայն չկային արտաքին հակամարտություններ, աշխարհիկ պատմություն: Նրանք դեռ չէին ստանձնել կառավարության կամ կայսրության մեծ հասարակական հաստատությունների դերը: Դա մաքուր ու անթերի մարդկանց փոքր խումբ էր, որը չէր ձգտում հասարակությունը վերահսկել: Այնուամենայնիվ, նրանք գրավեցին իշխանությունների ուշադրությունը և բավականաչափ նշանավոր դարձան, որպեսզի ենթարկվեն հալածանքների: Նրանց դիտարկում էին որպես ֆանատիկոսներ, որոնք ձգտում էին ոչնչացնել գոյություն ունեցող ինստիտուտների հանդեպ հարգանքը»:

[Իշխանության համար կազմակերպված]

«Այս դարում եկեղեցու կառավարման համակարգը լուռ ձևավորվեց: Անդամների միջև գոյություն ուներ կազմակերպված միություն, եպիսկոպոսները ազդեցիկ դարձան ոչ թե հասարակության մեջ, այլ քրիստոնյաների շրջանում: Ստեղծվեցին թեմեր և եկեղեցական շրջաններ: Բաղաքային և գյուղական եպիսկոպոսների միջև առանձնացում կար, եկեղեցիների պատվիրակներ էին հավաքվում՝ հավատքի հարցերը քննարկելու կամ նոր առաջացած հերետիկոսությունները ճնշելու համար: Չարգացավ եպիսկոպոսների համակարգը, և ներդրվեց եկեղեցական կենտրոնացում: Սարկավագները սկսեցին համարվել բարձրագույն հոգևոր դասի ներկայացուցիչներ: Մշակվեցին արտաքսման միջոցառումներ: Կատարվեցին միսիոներական քարոզչական ջանքեր: Հիմնադրվեցին եկեղեցական տոներ: Գնոստիցիզմը ընդունվեց բազմաթիվ առաջատար մտքերի կողմից: Հավատո խոսքը համակարգված կերպով դասավանդվում էր կատեխետիկական դպրոցներում: Մկրտության ուսմունքն

ու սրբազան խորհուրդները առանձնակի նշանակություն ստացան: Վանականությունը տարածում գտավ: Այս կերպ Եկեղեցին դրեց իր ապագա կառավարման և իշխանության ձևի հիմքերը»:

«Երրորդ դարում Եկեղեցին որպես հաստատություն ավելի հզորացավ: Կայսրության խոշոր քաղաքներում պարբերաբար գումարվում էին սինոդներ: Արքեպիսկոպոսությունների համակարգը հասունացավ: Եկեղեցու կանոնները հստակ ձևակերպվել էին: Առաջատար աստվածաբանական դպրոցները գրավում էին հետաքրքրասեր մտքերը: Ուսմունքները համակարգվեցին [այսինքն՝ սահմանվեցին, սահմանազատվեցին և ձևակերպվեցին որպես դոգմաներ և հավատո հանգանակներ]: Զրիստոնեությունը այնքան էր տարածվել, որ այն կամ պետք է հալածվեր, կամ օրինականացվեր: Հայտնի եպիսկոպոսները ղեկավարում էին աճող Եկեղեցին: Հռչակավոր [թեոլոգիայի] դոկտորները խորհում էին այն հարցերի շուրջ, որոնք զբաղեցնում էին հունական դպրոցները: Եկեղեցական շենքերը դարձան ավելի ընդարձակ, և նահատակների պատվին տոնակատարություններ էին անցկացվում: Եկեղեցին արագորեն առաջ էր շարժվում դեպի այն դիրք, որը պահանջում էր մարդկության ուշադրությունը»:

«Միայն չորրորդ դարում դադարեց կայսրության հալածանքը, երբ [իռոմեական կայսր] Կոստանդինը դարձի եկավ, երբ Եկեղեցին դաշնակցեց Պետության հետ, երբ վաղեմի հավատքը ինքնին աղավաղվեց, երբ մոլորությունն ու ապարդյուն փիլիսոփայությունը ներթափանցեցին հավատացյալների շարքերը, երբ եպիսկոպոսները դարձան պալատականներ, երբ եկեղեցիները դարձան հարուստ ու շքեղ, երբ սինոդները ենթարկվեցին քաղաքական ազդեցությանը: Երբ վանականությունը [վանականներ] հաստատեցին առաքինության կեղծ սկզբունք, երբ

քաղաքականությունն ու դոգմատիկան ձեռք ձեռքի տվեցին, և կայսրերը հրամաններ պարտադրեցին [եկեղեցական] ժողովներին – քանի որ ազնվականները մտել էին եկեղեցի: Երբ քրիստոնեությունը դարձավ արքունիքի և աշխարհիկ դասերի կրոնը, այն սկսեցին օգտագործել ամեն տեսակ չարիքների արդարացման համար, որոնց դեմ նախկինում բողոքել էր: Եկեղեցին ոչ միայն խորապես թաթախվեց հեթանոսական փիլիսոփայության սխալներում, այլև ընդունեց Արևելքի պաշտամունքի բազմաթիվ արարողակարգեր՝ մանրակրկիտ մշակված և շքեղ: Չորրորդ դարում եկեղեցիները հնագույն հեթանոսական տաճարների պես շքեղ ու տպավորիչ դարձան: Տոնակատարությունները հաճախակի ու շքեղ էին դառնում: Ժողովուրդը ձգվում էր դեպի դրանք, քանի որ դրանք հուզմունք ու աշխատանքից հանգիստ էին պարգևում: Մարտիրոսների պաշտամունքը վերաճեց պատկերների ներդրման, որոնք հետագայում դարձան ժողովրդական կուռքապաշտության աղբյուր: Զրիստոնեությունը զարդարվեց շքեղ արարողակարգերով: Սրբերի հանդեպ պաշտամունքը մոտեցավ Նրանց աստվածացմանը, իսկ նախապաշարմունքը մեր Տիրոջ մորը բարձրացրեց ամբողջական պաշտամունքի առարկայի կարգավիճակի: Հաղորդության սեղանները վերածվեցին հուժկու զոհարանների, որոնք բնորոշ էին հրեական զոհաբերություններին, իսկ մարտիրոսների մասունքները պահվում էին որպես սրբազան ամուլետներ: Ճգնափորական կյանքն էլ վերաճել էր ապաշխարության և քավիչ արարողությունների լայն համակարգի: Վանականների բանակները մեկուսացան մռայլ ու մեկուսացված վայրերում և ամբողջովին նվիրվեցին ոգևորված երգեցողություններին, ծոմապահությանը և ինքնաքավությանը: Նրանք տխրատեսիլ ու ֆանատիկոս մարդկանց խումբ էին, որոնք անտեսում էին կյանքի գործնական նպատակները:

Հոգևորականությունը, փառասեր և աշխարհիկ, ձգտում էր տիտղոսների և պատվավոր կոչումների: Նրանք լցնում էին թագավորական պալատները և ձգտում աշխարհիկ պատիվների: Այն այլևս չէր պահպանվում հավատացյալների կամավոր նվիրատվություններով, այլ կառավարության տրամադրած տարեկան եկամուտներով կամ հին [հեթանոսական] տաճարներից ժառանգված գույքով: Հարուստ մարդիկ եկեղեցիներին ժառանգաբար մեծ ունեցվածքներ էին թողնում, որոնք կառավարվում էին հոգևորականների կողմից: Այս ժառանգական նվերները դարձան անսպառ հարստության աղբյուր: Հարստանալով և հոգևորականների հսկողության տակ գտնվելով՝ նրանք անտարբեր դարձան ժողովրդի կարիքների հանդեպ և այլևս չէին հոգ տանում նրանց համար: Նրանք դարձան ծույլ, գոռոզ և անկախ: Ժողովուրդը դուրս մղվեց եկեղեցու կառավարումից: Եպիսկոպոսը դարձավ մեծ լիազորությունների տեր անձնավորություն, վերահսկելով և նշանակելով իր հոգևորականներին: Եկեղեցին միացվեց պետությանը, և կրոնական դոգմաները կիրառվեցին օրենքի սրով:

Հաստատվեց տպավորիչ հիերարխիա՝ տարբեր աստիճաններով, որի գագաթնակետին կանգնած էր Հռոմի եպիսկոպոսը:

Կայսրը լուծում էր հավատքի հարցերը, մինչդեռ հոգևորականությունը ազատված էր ցանկացած պետական պարտավորությունից: Երբ հոգևորականությունը ձեռք բերեց այդպիսի մեծ իշխանություն և հարստություն, շատերը շտապեցին դառնալ քահանաներ: Մեկ մարդու բարձր պաշտոնի [եպիսկոպոսության] բարձրացումը կախված չէր նրա աստվածապաշտությունից կամ տաղանդից, այլ հզորների շրջանում նրա ազդեցությունից: Եկեղեցու առաքելությունը կորավ

պետության հետ նրա անբարո դաշինքում: Զրիստոնեությունը վերածվեց ներկայացման, ծիսակատարության, պետության գործիքի, դատարկ փիլիսոփայության, նախապաշարմունքի և բանաձևի:

Այսպիսով, Պողոս առաքյալի կանխատեսած հավատքի մեծ հավատուրացությունը հաստատված պատմական փաստ է: Բոլոր պատմաբանները վկայում են դրա մասին՝ անգամ նրանք, ովքեր աջակցում են իշխանության նման զավթմանը և գովերգում են այս դավադրության գլխավոր դեմքերին: Ցավոք, տեղի սղության պատճառով կարող ենք մեջբերել միայն մի քանի ամենաազդեցիկ հայտարարություններ: Այս հավատուրացությունը, որը ձգվել է դարերով, այնքան աստիճանական էր, որ ժամանակի մարդկանց համար շատ ավելի դժվար էր նկատել այն, քան մեզ համար, ովքեր կարող են տեսնել այն ամբողջությամբ: Այն առավել խաբեական դարձավ նրանով, որ նրա ձևավորման յուրաքանչյուր քայլը, Եկեղեցում և աշխարհում ազդեցության ու իշխանության ձեռքբերման յուրաքանչյուր առաջընթացը կատարվում էր Զրիստոսի անունով՝ իբրև թե Նրան գովաբանելու և Սուրբ Գրքում գրված Նրա ծրագրերը իրականացնելու համար: Այսպես ի հայտ եկավ մեծ Հակաքրիստոս՝ ճշմարիտ քրիստոնեության ամենավտանգավոր, ամենախորամանկ, ամենահաստատակամ հակառակորդը և ճշմարիտ սրբերի ամենաանխնա հալածիչը:

խոչընդոտը հեռացվեց

Պողոս առաքյալը կանխագուշակեց, որ այս անօրենության առեղծվածը մի ժամանակ գաղտնի կերպով կգործի, քանի որ նրա ճանապարհին կանգնած է մի խոչընդոտ: Եվ միայն երբ այդ խոչընդոտը հեռացվի, ճանապարհը բաց կլինի Հակաքրիստոսի ի հայտ գալու

արագ առաջընթացի համար: Նա ասում է. «մեջտեղից վերցվի նա, ով այժմ արգելում է» (Բ Թեսաղոնիկեցիներ 2:7): Ի՞նչ է պատմությունը ասում այս մարգարեության կատարման մասին: Պատմությունը ցույց է տալիս, որ Հակաքրիստոսի արագ բարձրացմանը խոչընդոտողը այն փաստն էր, որ այդ ցանկալի դիրքը արդեն զբաղեցված էր մեկ ուրիշի կողմից: Հռոմեական կայսրությունը ոչ միայն նվաճեց աշխարհը և պարտադրեց իր քաղաքականությունն ու օրենքները, այլև (հասկանալով, որ կրոնական նախապաշարմունքները մարդկանց պահելու և վերահսկելու ամենահզոր շղթաներն են) որդեգրեց մի համակարգ, որի ծագումը վերագրվում են Բաբելոնին՝ նրա աշխարհակալության ժամանակաշրջանում: Այս ծրագիրը ենթադրում էր, որ կայսրը ճանաչվի և՛ կրոնական, և՛ քաղաքացիական հարցերի գծով առաջնորդ և տիրակալ: Այս նպատակով կայսրին հայտարարեցին կիսաաստված, ինչ-որ իմաստով սերում է իրենց հեթանոսական աստվածներից: Նրան այդպես էլ պատվեցին՝ մարդիկ պաշտում էին նրա հուշարձանները: Այսպիսով նրան շնորհվեց Պոնտիֆեքս Մաքսիմուս տիտղոսը, այսինքն՝ Գերագույն քահանա կամ Բարձրագույն կրոնական առաջնորդ: Սա հենց այն տիտղոսն է, որին ձգտում էին պոնտիֆիկոսները, կամ Հռոմեական հիերարխիայի պապերը, և որը նրանք ստացան, երբ այս Հակաքրիստոսը ստացավ «իշխանություն... և գահ... և մեծ իշխանություն» Հռոմի նախկին տիրակալից (Հայտնություն 13:2):

Այնուամենայնիվ, հնագույն հեթանոսական Հռոմն ու Բաբելոնը քահանայական իշխանության միայն նախնական շրջանակ ունեին՝ համեմատած պապական Հռոմի բարդ ու խորամանկորեն մտածված մեխանիզմի, դոկտրինալ և գործնական հնարամտության հետ, որը նրանց համակարգի հաղթական ժառանգորդն է և որը, ի վերջո, դարավոր ինտրիգաների ու հնարքների

արդյունքում այն այնքան ամուր էր հաստատվել իշխանության մեջ, որ նույնիսկ այսօր, երբ արտաքսապես նրա իշխանությունը կոտրված է և նա զրկված է քաղաքացիական գերիշխանությունից, գաղտնի, ծածկված կերպով, աշխարհն է կառավարում և թագավորություններն ավելի լավ է ղեկավարում, քան երբևէ հռոմեական կայսրերը ենթակա թագավորներին են կառավարել:

Ի օգուտ իրենց պետք է ասել, որ ոչ մի հռոմեական կայսր (Pontifex Maximus, կամ Գերագույն կրոնական առաջնորդի դերում) երբեք չի կիրառել այնպիսի բռնապետություն, ինչպիսին կիրառել են պապական գահի որոշ ժառանգորդներ: Այս առնչությամբ Գիբոնը նշում է.²⁸ «Պետք է ընդունել, որ մեկ նահանգում և մեկ թագավորության ժամանակահատվածում մահապատժի ենթարկված բողոքականների թիվը շատ ավելի մեծ էր, քան երեք դարերի ընթացքում ամբողջ Հռոմեական կայսրությունում սպանված առաջին մարտիրոսների թիվը»: Ժամանակի սովորույթին համապատասխան՝ նրանք պաշտում էին ամենանշանավոր աստվածներին, սակայն իրենց բանակների երթուղիներում նրանք, որպես կանոն, հարգում էին նվաճված ժողովուրդների աստվածներին և պաշտամունքները: Սա ակնհայտ էր Պաղեստինում, որտեղ (չնայած որ հռոմեական իշխանության տակ) կրոնական ազատությունն ու խղճի ազատությունը ընդհանուր առմամբ հարգվում էին կայսերական Պոնտիֆեքս Մաքսիմուսի կողմից, ով որպես կրոնական առաջնորդ այդպիսով ցուցաբերում էր հանդուրժողականություն ժողովուրդների հանդեպ և ընդունում բոլոր հայտնի աստվածներին:

²⁸ Հատոր II, էջ 85

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Հակաքրիստոսի վաղաժամ հայտնության խոչընդոտը այն էր, որ աշխարհի երբևէ գոյություն ունեցած ամենահզոր կայսրության ներկայացուցիչները զբաղեցնում էին ցանկալի հոգևոր գերիշխանության դիրքը, և այս առնչությամբ իր մտադրությունները բացահայտ հայտարարելու փորձը կնշանակեր աշխարհի իշխանությունների կողմից ցաւման ենթարկվելը: Արդյունքում՝ այս անօրենության ձգտումը սկզբում գործում էր գաղտնի, հերքելով իշխանություն կամ թագավորություն ձեռք բերելու որևէ մտադրություն, մինչև որ ստեղծվեց բարենպաստ հնարավորություն՝ երբ անվանական եկեղեցին դարձել էր հսկայական ու ազդեցիկ, իսկ կայսերական իշխանությունը քաղաքական հակամարտությունների պատճառով մասնատվել ու սկսել էր թուլանալ:

Հռոմի իշխանությունը արագորեն թուլանում էր, իսկ Նրա ուժն ու միասնությունը բաժանված էին կայսերական տիրոջ վեց հավակնորդների միջև, երբ Կոստանդինը դարձավ կայսր: Եվ այն ենթադրությունը, որ նա ընդունեց քրիստոնեությունը կայսրությունը ամրացնելու և միավորելու համար, որոշ չափով տրամաբանական է: Ահա թե ինչ է ասում պատմությունը այս հարցի վերաբերյալ.

«Արդյոք Կոստանդինը ընդունեց այն [քրիստոնեությունը] դրա ճշմարտությանը հավատալով, թե՞ քաղաքական նկատառումներով, վիճելի հարց է. Մեկ բան հստակ է. այս կրոնը, թեև հռոմեական իշխանություններից ոչինչ չէր ստացել բացի լուռ արհամարհանքից կամ խիստ հալածանքներից, լայնորեն տարածվել էր ժողովրդի շրջանում. այդպիսով՝ այն որդեգրելով՝ Կոստանդինը ամրապնդեց գինվորների հավատարմությունը իր նկատմամբ... Երբ կայսրը հայտարարեց իրեն քրիստոնյա, Նրան առաջնորդում էր աշխարհիկ հավակնությունը, ոչ թե Զրիստոսի Հոգին, որ ասաց. «Իմ թագավորությունը այս

աշխարհից չէ»: Կոստանդինը այն հռչակեց կայսրության կրոն, և այնուհետև, ինչպես տեսնում ենք, դրա ազդեցությունը պոտորվել է երկրային շահերով... Ոչ մի եպիսկոպոս չի համարվել ողջ Եկեղեցու գլուխը: Իրականում այդ դիրքը զբաղեցնում էր կայսրը, և հենց նա էլ գումարեց Նիկեայի ժողովը, որտեղ Աթանասի և Արիոսի վեճի ժամանակ կողմնակից եղավ առաջինին: Ժողովը համաձայնեց կայսրի հետ:²⁹

«Անկախ նրանից, թե որքան մեծ էին առավելությունները կայսերական կրոնափոխի ձեռքբերումից, նրան իր հազարավոր ենթականերից, որոնք ընդունել էին քրիստոնեության ուսմունքը, առանձնացնում էր ոչ թե իմաստության կամ աստվածապաշտության առավելությունը, այլ նրա մանուշակագույն հանդերձանքի շքեղությունը... Նրա իշխանության նույն տարում, երբ նա գումարեց Նիկիայի ժողովը, ստվերվեց նրա ավագ որդու մահապատժով: Եկեղեցու երախտագիտությունը գովերգում էր այս մեծահոգի հովանավորի առաքինությունները և ներում նրա սխալները, ով քրիստոնեությունը հռոմեական աշխարհում գահ բարձրացրեց:»³⁰

Այդ ժամանակ, Կոստանդինոսի թագավորության օրոք, կայսրության հակակրոնական քաղաքականությունը քրիստոնեության հանդեպ զիջեց տեղը հովանավորությանը, և կայսրության Պոնտիֆեքս Մաքսիմուսը դարձավ մի եկեղեցու հովանավոր, որը իրեն քրիստոնեական էր կոչում, սակայն իրականում մատնվել էր հավատալուծության: Նա բռնեց նրա ձեռքը և տարավ նրան ժողովրդականության ու շքեղության գագաթնակետին, որտեղից (կայսերական իշխանության թուլանալուն պես)

²⁹ «Willard's Universal History», էջ 163:

³⁰ Գիբոն, հատոր II, էջ 269:

կարողացավ իր ներկայացուցիչներին տեղավորել աշխարհի կրոնական գահին՝ որպես Բարձրագույն կրոնական տիրակալ՝ Պոնտիֆեքս Մաքսիմուս:

Այդ ժամանակ, Կոստանդինոսի թագավորության օրոք, կայսրության հակակրոնական քաղաքականությունը քրիստոնեության հանդեպ զիջեց տեղը հովանավորությանը, և կայսրության Պոնտիֆեքս Մաքսիմուսը դարձավ մի եկեղեցու հովանավոր, որը իրեն քրիստոնեական էր կոչում, սակայն իրականում մատնվել էր հավատության: Նա բռնեց նրա ձեռքը և տարավ նրան ժողովրդականության ու շքեղության գագաթնակետին, որտեղից (կայսերական իշխանության թուլանալուն պես) կարողացավ իր ներկայացուցիչներին տեղավորել աշխարհի կրոնական գահին՝ որպես Բարձրագույն կրոնական տիրակալ՝ Պոնտիֆեքս Մաքսիմուս:

Բայց սխալ է ենթադրել, ինչպես շատերը են անում, որ այս ժամանակ Եկեղեցին մաքուր (կույս) եկեղեցի էր, որը հանկարծ բարձրացվեց այնպիսի պատվին ու իշխանության, որը դարձավ նրա գայթակղություն: Իրականում ճիշտ հակառակն է: Ինչպես արդեն նշվել է, տեղի էր ունեցել մեծ շեղում՝ սկզբնական մաքրությունից, պարզությունից և ազատությունից դեպի դավանանքային, փառասեր խմբավորումներ, որոնց սխալներն ու ծիսակարգերը, հեթանոսական փիլիսոփայություններին նման, զարդարված որոշ ճշմարտություններով և ամրացված հավիտենական տանջանքների ուսմունքով, եկեղեցու մեջ էին ներքաշել հսկայական զանգված, որի թվաքանակն ու ազդեցությունը Կոստանդինի համար դարձան արժեքավոր և համապատասխանաբար հարգվեցին ու օգտագործվեցին: Այդպիսի աշխարհիկ մարդը երբեք լուրջ չի մտածել աջակցել խոնարհ, քրիստոսանման «փոքր հոտի»՝ իսկապես սրբացված Եկեղեցու, որի անունները գրված են երկնքում, գործին:

Պատմաբանների հիշատակած նրա գինվորների շրջանում նրա հանրաճանաչությունը մեծ տարբերություն ունի հաչի իսկական մարտիկների շրջանում նրա հանրաճանաչությունից:

Որպես ապացույց թույլ տվեք մեջբերում անել Դիոկլետիանոսի՝ Կոստանդինոսի նախորդի օրոք կրոնական հասարակության վիճակի վերաբերյալ մի հաշվետվությունից, ով իր իշխանության վերջին շրջանում, հավատալով, որ քրիստոնյաները դավադրություն են հյուսել իր կյանքի դեմ, նրանց նկատմամբ թշնամացավ և հալածեց նրանց՝ հրամայելով ոչնչացնել Աստվածաշնչերը, արքայի եպիսկոպոսներին և, վերջապես, մահապատժի ենթարկել բոլոր նրանց, ովքեր հակադրվում էին այս հրամաններին: Գիբոնը³¹ այս դարաշրջանի մասին գրում է՝ «Դիոկլետիանոսն ու նրա շրջապատի անդամները հաճախ էին վստահում ամենակարևոր պաշտոնները նրանց, ովքեր չէին թաքցնում իրենց ատելությունը աստվածների պաշտամունքի հանդեպ, սակայն ցուցաբերում էին պետական ծառայության համար անհրաժեշտ ունակություններ: Եպիսկոպոսները իրենց նահանգներում վայելում էին պատվավոր դիրք և ոչ միայն ժողովրդի, այլև մագիստրատների կողմից արժանանում էին առանձնահատուկ ուշադրության ու հարգանքի: Գրեթե յուրաքանչյուր քաղաքում հին եկեղեցիները արդեն չափազանց փոքր էին դարձել՝ տեղավորելու նորադարձների աճող թվաքանակը, և դրանց փոխարեն հավատացյալների համայնքային պաշտամունքի համար կառուցվեցին ավելի շքեղ ու ընդարձակ շենքեր: Բարքերի և սկզբունքների ապականությունը, որի համար Եվսեբիոսը այդքան խորապես տրտմում էր, կարելի է դիտարկել ոչ միայն որպես հետևանք, այլև որպես այն ազատության ապացույց, որով քրիստոնյաները օգտվում էին՝

³¹ Հատոր II, էջեր 53 և 57:

չարաշահելով այն Դիոկղետիանոսի իշխանության տարիներին: Բարգավաճումը թուլացրել էր կարգապահությունը: Յուրաքանչյուր ժողովում գերիշխում էին խաբեությունը, նախանձը և չարությունը: Նորադարձները ձգտում էին եպիսկոպոսի պաշտոնին, որը օրեցօր ավելի էր արժանի դառնում նրանց ցանկությանը: Եպիսկոպոսների վարքագիծը, որոնք միմյանց հետ մրցում էին եկեղեցական գերիշխանության համար, բացահայտում էր նրանց աշխարհիկ ու բռնապետական իշխանության նկատմամբ ունեցած հավակնությունները Եկեղեցու ներսում, մինչդեռ կենդանի հավատքը, որը դեռևս առանձնացնում էր քրիստոնյաներին հեթանոսներից, նրանց կյանքում ավելի քիչ էր ակնհայտ, քան նրանց հակասական գրություններում»:

Պողոս Սամոսատացու պատմությունը, ով զբաղեցրել է Անտիոքի մետրոպոլիտական աթոռը [եպիսկոպոսություն], երբ Արևելքը գտնվում էր Օդեսատոսի և Չենոբիայի ձեռքում, կարող է ծառայել ժամանակների վիճակի և բնավորության պատկերացման համար: [մ.թ. 270 թ.] Պողոսը եկեղեցու ծառայությունը համարում էր շատ շահութաբեր մասնագիտություն: Նրա եկեղեցական կառավարումը բնութագրվում էր կաշառվածությամբ և ագահությամբ: Նա հաճախակի նվիրատվություններ էր պահանջում ամենահարուստ հավատացյալներից և իր համար վերապահում հանրային եկամուտների բավականին զգալի մասը [քննադատները պնդում են, ինչպես նշում է Գիբոնը, որ Պողոսը զբաղեցնում էր կայսերական դուքսի, այսինքն՝ պրոկուրատորի պաշտոնը, որի տարեկան եկամուտը կազմում էր երկու հարյուր սեստերց՝ 77 000 դոլար] Նրա ինքնավստահության և շռայլության պատճառով քրիստոնեական կրոնը հեթանոսների աչքերում դարձավ ատելի: Նրա խորհրդակցական դահլիճն ու գահը, հանրության առջև հանդես գալու շքեղությունը, նրա

շնորհը հայցող բազմությունը, այն բազմաթիվ նամակներն ու դիմումները, որոնց պատասխանները նա դիկտում էր, և անընդմեջ գործերի հոսքը, որոնցով նա զբաղված էր, շատ ավելի համապատասխանում էին քաղաքացիական պաշտոնյայի դիրքին, քան պարզ եպիսկոպոսի համեստությանը: Ամբիոնից ժողովրդին դիմելիս Պողոսը կիրառում էր Ասիայի սոփիստների պատկերավոր ոճն ու թատերական ժեստերը, և մայր տաճարը հնչում էր ամենազմայլիչ գովերգանքներով՝ ծափահարելով նրա աստվածային ճարտարախոսությունը: Նրանց նկատմամբ, ովքեր մերժում էին նրա իշխանությունը կամ հրաժարվում գովաբանել նրա ինքնասիրությունը, Անտիոքի եպիսկոպոսը գոռոզ, կոպիտ և անողորմ էր, սակայն նա թուլացնում էր կարգապահությունը և առատորեն վատնում էր եկեղեցու գանձերը իր ենթակա հոգևոր դասի վրա:

Այսպիսով, Կոստանդինի իշխանության օրոք բոլոր խոչընդոտները վերջապես վերացվեցին, և, ինչպես հիմա կտեսնենք, պապությունը շատ արագ հաստատվեց՝ որպես անվանական եկեղեցի, որը գլխավորում էր Հռոմի եպիսկոպոսը՝ որպես Պապ:

Հակաքրիստոսի արագ աճը

Կոստանդինի գահ բարձրանալուց հետո պապական հիերարխիայի արագ զարգացումը նրա պատմության ամենանշանավոր առանձնահատկություններից մեկն է: «Այս աշխարհի իշխանը» պահեց իր խոստումը՝ տալ իշխանություն և տիրապետություն պաշտամունքի և ենթարկվելու դիմաց (Մատթ. 4:8, 9): Միլանի հրամանագրով Կոստանդինը եկեղեցական գույքին իրավական պաշտպանություն շնորհեց, և քրիստոնյաները վերադարձրին նախկինում կորցրած հողերը: Երկրորդ

հրամանագիրը (321թ.) թույլատրեց սեփականության ազատ փոխանցումը եկեղեցուն, և Կոստանդինն ինքը օրինակ ծառայեց այդպիսի մեծահոգության մեջ՝ քրիստոնեական հոգևորականության համար ծախսեր չխնայելով: Հազարավոր նրա ենթականեր հետևեցին կայսրի օրինակին. նրանց ողջ կյանքի ընթացքում կատարած նվիրատվություններն ու մահվան պահին թողած ժառանգությունները հոսում էին եկեղեցու գանձարան: Ուայթը ասում է.³²

«Նորադարձների մեծ թվաքանակի և հարստության, ինչպես նաև մայրաքաղաքում գտնվելու շնորհիվ՝ Հռոմի եկեղեցին վաղ շրջանից սկսեց ձեռք բերել իշխանություն մյուսների նկատմամբ (այլ քաղաքների և երկրների եկեղեցիների նկատմամբ). Շատ հանգամանքներ նպաստեցին Հռոմի եպիսկոպոսի ազդեցության ամրապնդմանը, թեև նրա իշխանության ապօրինի զավթումը և ամբիցիաները որոշ ժամանակ առաջացրին ուժգին հակակրանք: Իշխանության կենտրոնի տեղափոխությունը (Կոստանդինի կողմից 334 թ. Հռոմից Կոստանդնուպոլիս) ամրապնդեց Արևմտյան եկեղեցու ազդեցությունը, քանի որ եպիսկոպոսին շնորհվեց գլխավոր դատավորի պաշտոնը: Դրան պետք է ավելացնել Գրատիանոսի և Վալենտինիանոսի կողմից Հռոմին դիմելու սովորույթի հաստատումը և Սուրբ Պետրոսի, Սուրբ Պողոսի ու այլ մարտիրոսների գերեզմանների հաճախակի ուխտագնացությունները»:

Կոստանդինի մահից հետո Հռոմեական կայսրությունում տարբեր հանգամանքներ կարծես համախմբվել էին հավատուրաց եկեղեցու հաջողությունն ու Հակաքրիստոսի վերելքը ապահովելու համար, քանի որ դեռևս չէր հաստատվել միասնություն մեկ գլխի՝ Պապի

³² Տես Գիբոն, հատոր II, էջ 108:

ներքո, ով պիտի համարվեր Զրիստոսի ներկայացուցիչը կամ փոխանորդը: Կոստանդինից սկսած մինչև Թեոդոսիոսը յուրաքանչյուր կայսր շարունակում էր իրեն համարել Եկեղեցու գլուխը, որի մեջ կենտրոնացած էր աստվածային իշխանությունը: Եվ թեև կայսրության 1800 եպիսկոպոսներից ոչ մեկը դեռևս չէր համարձակվում պահանջել ճանաչվել գլուխ կամ պապ, սակայն ոմանք, այնուամենայնիվ, աչք էին դրել այս ցանկալի պարզևի վրա, և կայսրերին ցույց տվեցին Պոնտիֆեքս Մաքսիմուսի տիտղոսի նկատմամբ իրենց պահանջների անհիմն լինելը՝ հիմնավորելով, որ եթե նրանք պաշտում են մեռած սրբերին, ապա պարտավոր են նույն հարգանքը ցուցաբերել նրանց կենդանի ներկայացուցիչներին՝ եպիսկոպոսներին: Այնուամենայնիվ, իրենց հրամաններում կայսրերը շարունակում էին կայսրությունը անվանել աստվածային հիերարխիա, իսկ իրենց՝ աստվածային անձինք:³³

Հռոմի եպիսկոպոսի իշխանությունն ու գլխավորությունը արագորեն ամրապնդվեցին: Զրիստոնեության օրինականացումից հիսուն տարի անց նրա հարստությունն ու կարգավիճակը որպես մայրաքաղաքի և աշխարհի առաջատար քաղաքի եպիսկոպոսի աճել էին արտառոց չափերի: Ժամանակակից պատմաբան Ամմիանոսը, նկարագրելով նրա հարստությունն ու հպարտությունը, ասում է. «Նա շքեղությամբ ու փառասիրությամբ գերազանցում էր թագավորներին, նստում էր ամենաշքեղ կառքերում, հագնվում էր ամենագեղեցիկ զգեստներով և առանձնանում էր իր շքեղությամբ ու մեծամտությամբ»:

Իմպերիայի	կենտրոնի	տեղափոխությունը
Կոստանդնուպոլիս,	Հռոմե	քաղաքի հյուսիսից

³³ “White’s Universal History”, էջ 155:

բարբարոսական հարձակումների նկատմամբ խոցելիությունը և արագ փլուզով կայսրությունում գեներալների ու կառավարիչների անընդմեջ հաջորդականությունը՝ այս ամենը Հռոմի եպիսկոպոսին դարձրել էր ամենակայուն և ամենահարգված պաշտոնյային: Նրա աստիճանաբար աճող հեղինակությունը բարձրացավ ոչ միայն կայսերական պալատի մրցակից շքեղությունների Կոստանդնուպոլիս տեղափոխվելու, այլև աշխարհի բոլոր ժողովուրդների շրջանում Հռոմի անուկին առնչվող մեծ հարգանքի շնորհիվ:

Որպես հաստատում այս ամենի, մենք հիշեցնում ենք որ 455 թվականին, երբ Վանդալները հարձակվեցին և թալանեցին Հռոմը, և ողջ շրջանն աղքատության ու ավերածության մեջ էր, Հռոմի եպիսկոպոս Լեոն չվրիպեց այս հարմար պահը՝ թե՛ բարբարոսների, թե՛ հռոմեացիների վրա իր հոգևոր իշխանության պահանջը ընդգծելու համար: Անտեղյակ ու մոլորված բարբարոսներին, որոնք արդեն խորապես տպավորված էին իրենց շուրջը տեսած Հռոմի փառքով ու հարստությամբ, Լեոն՝ հագնված իր պոնտիֆիկական զգեստներով, գոռաց. «Չգուշացե՛ք! Ես Սուրբ Պետրոսի հաջորդն եմ, որին Աստված տվեց Երկնային Թագավորության բանալիները, և որի Եկեղեցու դեմ դժոխքի դարպասները չեն կարող հաղթել: Ես երկրի վրա աստվածային իշխանության կենդանի ներկայացուցիչն եմ: Ես Կայսրն եմ, քրիստոնյա Կայսրը, որ կառավարում է սիրով, որին բոլոր քրիստոնյաները պարտավոր են հավատարիմ լինել: Իմ ձեռքում են դժոխքի անեծքները և երկնքի օրհնությունները: Ես ազատում եմ իմ բոլոր ենթականերին թագավորների հանդեպ ունեցած հավատարմության պարտավորությունից: Աստվածային իրավունքով ես շնորհում և հետ եմ վերցնում քրիստոնեության բոլոր գահերն ու տիրույթները: Չգուշացե՛ք, որ չկեղտոտեք ձեր անտեսանելի Թագավորի

ինձ փոխանցած ժառանգությունը: Ճշմարտապես խոնարհեցրեք ձեր գլուխները իմ առջև և աղոթեք՝ Աստծո բարկությունը հեռացնելու համար»:

Հռոմի եպիսկոպոսը անմիջապես օգտվեց պաշտոնի և անվան հանդեպ եղած հարգանքից, և շուտով հայտարարեց իր գերագույն իշխանությունը բոլոր մյուս եպիսկոպոսների, իշխանների և առաջնորդների նկատմամբ: Շուտով նա պահանջեց ոչ միայն եկեղեցական իշխանություն աշխարհի վրա, այլև քաղաքացիական իշխանություն՝ հայտարարելով, որ թագ շնորհելու և հետ վերցնելու, հին Հռոմեական կայսրության ցանկացած կամ բոլոր կառավարիչների նշանակելու և պաշտոնանկ անելու իրավունքը Հռոմի եկեղեցու իրավունքն ու ժառանգությունն է, որը, ինչպես պնդվում էր, Աստված էր շնորհել նրան երկրի վրա այդպիսի տիրապետություն: Այս պահանջները անընդհատ հնչում էին, և նույնքան անընդհատ մերժվում էին դրանց դեմ դուրս եկող եպիսկոպոսների կողմից, ուստի անհնար է հստակեցնել դրանց ծագման ճշգրիտ ժամանակը: Պապությունը պնդում էր, որ այն հիմնադրվել է առաքյալների օրերում, և որ Պետրոս առաքյալն է եղել առաջին պապը: Այնուամենայնիվ, ոչ միայն չկա որևէ ապացույց դրա օգտին, այլև դա ամենաորոշիչ հակասության մեջ է ամբողջ պատմության հետ, որը վկայում է, որ, թեև փատասիրության անօրինականությունը բավական երկար ժամանակ գաղտնի գործում էր, այն զսպված էր զարգանալ Հակաքրիստոսի մեջ և ներկայացնել նման բացահայտ պահանջներ մինչև այն պահը, երբ Հռոմեական կայսրությունը սկսեց քայքայվել:

Այդ ժամանակից ի վեր մենք գործ ունենք Հակաքրիստոսի հետ, որի աստիճանական զարգացումն ու կազմակերպումը (սկսած գաղտնի ձգտումներից) ծառայել են որպես հարմար նախերգանք դաժան բնույթի համար,

որը դրսևորվեց ցանկալի իշխանության զավթումից հետո՝ 539 թ.–ից մինչև 1799 թ. 1260 տարվա ընթացքում: Այս ժամանակաշրջանի առաջին երեք հարյուր տարիները բնորոշվել են նրա աշխարհիկ իշխանության աճով, իսկ վերջին երեք հարյուր տարիները՝ նրա անկմամբ՝ բարեփոխումների և քաղաքակրթության ազդեցության տակ: Միջանկյալ յոթ դարերի ժամանակահատվածը ընդգրկում է պապության հաղթական դարաշրջանը և աշխարհի «մուլ զարերը», որոնք լի էին խաբեությամբ և ստերով՝ գործված Զրիստոսի և ճշմարիտ կրոնի անունից:

Հռոմի կաթոլիկ մի հեղինակ ամբողջությամբ հաստատում է մեր տեսակետը այս հարցում, և մենք, անգամ նրա մեկնաբանությունից անկախ, մեջբերում ենք նրա խոսքերը որպես ապացույց: Շատ ոգևորությամբ նկարագրելով պապության աշխարհիկ իշխանության բարձրացումը և այն համեմատելով երկնային ծագման բույսի հետ (որի շնորհիվ այն արագ աճեց և բարձրացավ աշխարհում), նա ասում է՝

Երբ Ուիլյամը հրատարակեց իր թարգմանությունը, Պապ Գրիգորը Օքսֆորդի համալսարանին ուղարկեց պապական հրովարտակ, որով դատապարտում էր թարգմանիչին՝ ասելով, որ նա «ընկել է մի զգվելի չարիքի մեջ»: Թինդալի թարգմանությունն էլ դատապարտվեց: Իսկ երբ Լյութերը գերմաներեն հրատարակեց իր թարգմանությունը, Պապ Լեո X-ը դրա դեմ պապական հրամանագիր արձակեց: Չնայած ամեն ինչին, գործը հոյակապ և անսասան առաջընթաց ունեցավ: Աստվածաշունչը նախատեսված էր լիակատար վերածննդի համար, և այն պետք է լուսավորեր բոլոր ազգերի ու լեզուների մարդկանց: Աստիճանաբար Հռոմիեկեղեցին ստիպված եղավ դա ընդունել, և այդ պատճառով որոշեց թույլատրել Սուրբ Գրքի թարգմանությունը ժամանակակից լեզուներով՝ կաթոլիկ թարգմանիչների կողմից, կաթոլիկ մեկնաբանություններով: Այնուամենայնիվ, այս Աստվածաշնչերը նախատեսված չէին լայն հանրության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վտանգ կար, որ մարդիկ ձեռք կբերեին բողոքական թարգմանություններ: Ռեյմսի թարգմանությունը վկայում է այս մասին:

Հաջորդ մեջբերումները պատկերացնում են Ռեյմսի թարգմանության որոշ նշումների բնույթը (որը, սակայն, վերջին տարիներին փոխարինվել է Դուվելի թարգմանությամբ՝ շատ նման, բայց ավելի քիչ քննադատական մեկնաբանություններով): Մատթեոս 3-ի վերաբերյալ նշումն ասում է. «Հերետիկոսները կարող են պատժվել և ճնշվել, և նրանք կարող են, և իսկապես պետք է, պատժվեն և մահապատժի ենթարկվեն քաղաքացիական իշխանությունների կողմից՝ լինի դա եկեղեցական, թե աշխարհիկ»: Գաղատացիներ 1:8-ի նշումը ասում է. «Կաթոլիկները չպետք է խնայեն անգամ իրենց ծնողներին, եթե նրանք հերետիկոսներ են»: Եբրայեցիներ 5:7-ի նշումը կարդում է. «Բողոքական Աստվածաշնչերի

թարգմանիչները պետք է գցվեն դժոխքի խորքերը»: Իսկ մեկնաբանությունը Հայտնություն 17:6-ի վերաբերյալ այսպիսին է. «Բայց բողոքականների արյունը չի համարվում սրբերի արյուն. դա ոչ այլ ինչ է, քան գողերի, մարդասպանների և այլ չարագործների արյուն, որոնց արյունահեղության համար, ըստ արդարության սկզբունքների, ոչ մի հասարակություն պատասխանատվության չի ենթարկվի»:

Ահա մի քանի սահմանափակումներ, որոնք կիրառվեցին այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ Աստվածաշնչի ընթերցումը չի կարելի ամբողջությամբ կանխել: «Index Expurgatoris»-ի չորրորդ կանոնը սահմանում է՝

Եթե որևէ մեկը համարձակվի կարդալ կամ ունենալ Աստվածաշունչ առանց գրավոր թույլտվության, նա չի ստանա մեղքերի թողություն մինչև չհանձնի այդ Աստվածաշունչը եպիսկոպոսին: Գրախանութները, որոնք կվաճառեն կամ այլ կերպ կփոխանցեն աշխարհիկ լեզվով Աստվածաշունչներ այն անձանց, որոնք չունեն այդ թույլտվությունը, կկորցնեն գրքերի արժեքը և եպիսկոպոսի կողմից կենթարկվեն այլ պատժամիջոցների, որոնք եպիսկոպոսը կհամարի համապատասխան՝ ըստ հանցանքի բնույթի:

Տրենտի խորհուրդը, 1546 թ. իր նիստում, հայտարարեց՝

«Հանդուգն հոգիներին զսպելու համար խորհուրդը հրամայում է, որ հավատքի, բարոյականության և քրիստոնեական ուսմունքի պահպանությանը առնչվող բոլոր հարցերում, ոչ ոք իր սեփական դատողության հիման վրա չպետք է համարձակվի խեղաթյուրել Սուրբ Գիրքը իր ձևով, հակառակ այն բանի, ինչ Սուրբ Մայր Եկեղեցին է

պահել և շարունակում է պահել, քանի որ նրա արտոնությունն է դատել իսկական իմաստը»:

Պիոս VII-ի 1816 թ. հունիսի 29-ին Լեհաստանի առաջնորդին ուղղված «Բուլլա»-ից մեջբերում ենք.

«Մենք իսկապես ցնցված էինք այս ամենաարատավոր դավադրությունից, որը խարխալում է կրոնի հիմնարար սկզբունքները: Եվ, հաշվի առնելով այս հարցի անչափ կարևորությունը, մեր սրբազան եղբայրների՝ Սուրբ Յոհաննեսյան եկեղեցու կարդինալների հետ խորհուրդ գումարելուց հետո, մենք առավելագույն խնամքով և ուշադրությամբ քննարկեցինք այն համապատասխան միջոցառումները, որոնք մեր պապական իշխանությունը պետք է ձեռնարկի՝ որքան հնարավոր է բուժելու և արմատախիլ անելու այս վարակը... Դուք ինքներդ արդեն կամավոր արտահայտել եք անկեղծ ցանկություն բացահայտելու և ոչնչացնելու այս նորարարների անաստված դավադրությունները: Սակայն, մեր պաշտոնի համաձայն, մենք կրկին ու կրկին հորդորում ենք ձեզ ապահովել, որ ամեն ինչ, ինչ հնարավոր է ուժով ձեռք բերել, խորհրդով ապահովել և իշխանությամբ իրականացնել, դուք ամեն օր անեք առավելագույն եռանդով... Յերեստիկոսների տպած Աստվածաշունչը պետք է ավելացվի արգելված այլ գրքերի ցանկին՝ համաձայն Ինդեքսի հոդվածների»:

Նույն Պապը 1819 թվականին պապական հրամանագիր արձակեց Իռլանդիայի դպրոցներում Աստվածաշնչի օգտագործման դեմ: Ահա մի մեջբերում դրանից.

«Սրբազան Ժողովի ուշադրությանն է հասցվել, որ Իռլանդիայի գրեթե բոլոր շրջաններում, հերետիկոսական հիմնադրամների աջակցությամբ, հիմնադրվել են Աստվածաշնչային դպրոցներ, որոնցում երկու սեռերի

անփորձները թունավորվում են պիղծ ու խեղաթյուր ուսմունքների ավերիչ թուլնով... Ուստի պետք է ձեռնարկել բոլոր հնարավոր ջանքերը՝ երիտասարդներին հեռու պահելու այս վնասակար դպրոցներից... Առավելագույնը արեք՝ ուղղափառ երիտասարդներին պաշտպանելու նրանց ապականիչ ազդեցությունից – նպատակ, որը, հուսով եմ, հեշտությամբ կիրականացվի ձեր եպիսկոպոսության ողջ տարածքում կաթոլիկ դպրոցներ հիմնելու միջոցով»:

Այստեղ մենք ունենք անկեղծ խոստովանություն այն իրական նպատակի մասին, որը կանգնած է Մեծ Բրիտանիայում և Յուլսիսային Ամերիկայում կաթոլիկ եկեղեցական դպրոցների հիմնադրման հետևում՝ իրենց համակարգը պաշտպանելու: Հակաքրիստոսը չի ձգտում կրթություն տրամադրել հասարակ ժողովրդին: Անտեղակությունն ու նախապաշարմունքը պապության ամրոցն են, և դարեր շարունակ նրա իշխանությունը, այդ թվում՝ այսպես կոչված «Միջնադարը», ապացուցում են սա: Չնայած հոգևորականների պատրաստումը շարունակվեց «սահմանափակումների» ներքո, հնագույն բոլոր հռոմեական կաթոլիկ երկրներում տիրող խորը անտեղակությունը հստակ ապացուցում է, որ ժողովրդին կրթելու համար ոչինչ չի արվել: Դպրոցներն ու Աստվածաշունչը միշտ էլ եղել են Հակաքրիստոսի դառը թշնամիները, և նա դրանք չէր հանդուրժի, եթե դրանք անհրաժեշտություն չդառնար: Սակայն Հակաքրիստոսի գոյությունը պահպանելու համար դրանց վրա նույնպես պետք է սխալ լույս սփռվի:

Մենք մեջբերում ենք հետևյալը Լեո XII-ի 1825 թ. հռոմեական կաթոլիկ հոգևորականությանը ուղղված կարգադրությունից.

«Ձեզ համար գաղտնիք չէ, հարգարժան եղբայրներ, որ մի միություն, որը սովորաբար կոչվում է Աստվածաշնչային

ընկերություն, համարձակորեն տարածվում է ամբողջ աշխարհում: Սրբազան Հայրերի ավանդույթները անտեսելով և Տրիդենտի եկեղեցաժողովի հայտնի որոշումը խախտելով՝ այս ընկերությունը իր բոլոր ջանքերն ու միջոցները ուղղել է մեկ նպատակին՝ Աստվածաշնչի թարգմանությանը, կամ ավելի ճիշտ՝ խեղաթյուրմանը բոլոր ժողովուրդների ազգային լեզուներով»:

Նույնպես, մահացած Պապ Պիոս IX-ը արտահայտել է իր մտահոգությունը այս մեծ Հակաքրիստոսի թշնամու՝ Աստվածաշնչի հաղթանակի վերաբերյալ: Նա ասել է. «Թող անիծվեն այս ամենախաբեական և խորամանկ ընկերությունները, որոնք կոչվում են «Աստվածաշնչային ընկերություններ» և Աստվածաշունչը տալիս են անփորձ երիտասարդների ձեռքը»:

Ծիշտ է, 1886 թ. Բալթիմորում կայացած Հռոմեական կաթոլիկ լիագումար ժողովում որոշվեց, որ Միացյալ Նահանգների կաթոլիկ դպրոցներում թույլատրվի իրենց կողմից հաստատված Աստվածաշունչ: Սակայն սա չի վկայում Հակաքրիստոսի իրական զգացմունքի որևէ փոփոխության մասին. դա նրա հեռատես քաղաքականության հերթական քայլն է՝ հարգելով այս երկրի ազատության ոգուն, որը արհամարհում է նման սահմանափակումները: Նրանք, սակայն, լավ գիտեին, որ ուզում են ազատություն, ոչ թե Աստվածաշունչ, և ուսումնասիրությունները ցույց է տալիս, որ այժմ, երկու տարի անց, այս շրջանում կաթոլիկ դպրոցներում դժվար է գտնել Աստվածաշունչ:

Մարդու բնական, անբաժանելի անմահության (որ մեկ անգամ սկսված մարդկային գոյությունը երբեք չի կարող դադարել) ուսմունքը հունական փիլիսոփայությունից փոխառված մեկ այլ պտղաբեր սխալ էր: Եվ, ընդունվելով, այն բնականաբար հանգեցրեց այն եզրակացությանը, որ եթե գոյությունը պետք է շարունակվի հավերժ, ապա

Աստվածաշնչյան արտահայտությունները՝ վերջնականապես կամակատար մեղավորների ոչնչացման, երկրորդ մահվան և այլնի մասին, պետք է մեկնաբանվեն հակառակ իմաստով, այսինքն՝ որպես հավիտենական կյանք ինչ-որ պայմաններում: Այնուհետև հեշտ էր հայտարարել, որ չարերի համար կյանքը պետք է տառապանքների կյանք լինի, և տանջանքները հաճախ պատկերվում էին եկեղեցիների պատերին, ինչպես նաև եռանդուն քահանաների ու վանականների խոսքերով: Այս սխալը Նորադարձների վրա ավելի հեշտությամբ էր հաստատվում, քանի որ հունական փիլիսոփաները (որոնք այն ժամանակ գիտության, կրոնի և փիլիսոփայության հարցերում աշխարհի առաջնորդներն էին, և որոնց գաղափարները, ինչպես ցույց է տալիս Հովսեփոսը, սկսել էին Նույնիսկ ներթափանցել հրեականությունը) վաղուց արդեն ընդունել և ուսուցանել էին չարերի համար մահվան պատիժը: Այնուամենայնիվ, ի օգուտ նրանց պետք է ասել, որ նրանք երբեք չեն իջել Աստծո բնույթին և իշխանությանը նման սարսափելի հայհոյանքներ հղելու, ինչպիսիք աշխարհին քարոզում էր Հակաքրիստոսը: Այնուհետև անհրաժեշտ էր նշանակել այս տանջանքների վայրը և կոչել այն դժոխք, ինչպես նաև գտնել Սուրբ Գրություններում հատվածներ (որոնք, փաստորեն, վերաբերում են Շեոլին, Հադեսին և Գեհենին, և նկարագրում են մեղքի իսկական վարձքը՝ առաջին և երկրորդ մահերը) — և հմտորեն կիրառել դրանք, մեր Տիրոջ առակների և Հայտնության խորհրդանիշների հետ միասին, որպեսզի այս հարցում խաբեն և իրենց, և ողջ աշխարհը, ինչպես նաև ամենաանհեթեթ կերպով զրպարտեն և հայհոյեն Աստծո՝ մեր ամենաիմաստուն և ողորմած Երկնային Հոր բնավորությունն ու ծրագիրը:

Քավարանը ներդրվեց, որպեսզի ուսմունքի այս սարսափելի մասը դարձնի ավելի ընդունելի և հանդուրժելի, և այդպիսով ավելի ամրապնդի Հակաքրիստոսի

իշխանությունը մարդկության նկատմամբ: Նա պնդում է, որ ունի երկնքի և դժոխքի բանալիները և կարող է մարդկանց փրկել Զավարանի տառապանքներից՝ ոչ միայն Ադամի մեղքի պատժից և դրա հետևանքով ժառանգված թուլություններից, այլև գիտակցաբար, դիտավորությամբ գործած մեղքերի պատժից: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ ուժ տվեց դա նրան այդ անտեղյակ մարդկանց նկատմամբ՝ հատկապես երբ կայսրերն ու աշխարհի հզորները ճանաչեցին խաբեբային և խոնարհվեցին նրա առջև:

Դրանից հետո անցկացվում էին մեռյալների համար մատուցվող պատարագներ: Հարուստ թե աղքատ, բոլորը համարում էին իրենց պարտքը վճարել դրանց համար, և դա անում էին բավականին առատաձեռնորեն: Պատարագների արդյունավետությունը (Զավարանում տառապանքները թեթևացնելու համար) համարվում էր անսահմանափակ՝ այն աստիճան, որ ոչ Եհովան, ոչ էլ Քրիստոսը չէին կարող այն կանխել: Սա հսկայական եկամտի աղբյուր դարձավ Հակաքրիստոսի համար, քանի որ քահանաները երբեք չէին մոռանում հիշեցնել մահամերձներին՝ եթե նրանք հարուստ էին, որ պարտավոր են լիթուրգիաների համար առատ ժառանգություն թողնել, որպեսզի հարստությունը ժառանգողները չանտեսեն այդ հարցը: Եվ այս տարի նման զգուշացումներ են հայտնվել Հռոմի կաթոլիկ ամսագրերում, որոնք կոչ են անում մարդկանց պակաս գումար ծախսել հուղարկավորական ծաղիկների վրա, որպեսզի ավելի շատ գումար հատկացվի մահացածների համար մատուցվող պատարագներին:

Թողությունները ի հայտ եկան «Խաչակրաց արշավանքներից» քիչ առաջ: Գիտենք, որ թողություններ էին շնորհվում որպես խթան՝ այս «Խաչակրաց արշավանքներին», կամ «Սուրբ պատերազմներին», կամավորներ հավաքագրելու համար: Պապական

հրամանի համաձայն՝ այս սրբազան պատերազմներին մասնակցող յուրաքանչյուրը ոչ միայն կստանար անցյալ մեղքերի թողութիւն, այլև ապագա մեղքերի թողութեան շնորհ, ինչի շնորհիվ կխուսափեր քավարանի որոշ տառապանքներից: Կաթոլիկները ասում են, որ այս ներումները մեղքեր գործելու թույլտվություններ չեն, այլ ողորմած պարգևներ, որոնք փոխհատուցում կամ չեղարկում են քավարանում տանջանքների որոշակի օրեր կամ տարիներ՝ եթե մարդու մեղքերը արժանի են հազար տարվա տառապանքի, սակայն նա (մեկ անգամ կամ բազմիցս) ձեռք է բերել իր համար ընդհանուր առմամբ հազար տարվա թողութիւններ (դրամի միջոցով, պապութեանը ծառայելու կամ ապաշխարանքներ կրելու արդյունքում), ապա այդպիսի մարդը ազատ կարձակվի: Եթե նրանց տրամադրության տակ լինեին ինն հարյուր տարվա ներումներ, նրանք ստիպված կլինեին տանել հարյուր տարվա տանջանքներ: Եվ եթե ներումները նրա պատժից շատ ավելի մեծ լինեին, ապա նրան, ամենայն հավանականությամբ, կհամարեին սուրբ՝ երկնքում հատուկ ազդեցություն ունեցող և աղոթքների ու պաշտամունքի արժանի: Այս առումով օրինակ կարող է ծառայել Ֆրանսիայի արքա և խաչակրաց արշավանքի մասնակից Լուիը: Նա կանոնացվել է և այժմ նրան աղոթում են ու պաշտում որպէս Սուրբ Լուի:

Իրականում այս թողութիւնների հասկացության և մեղքեր գործելու թույլտվության միջև տարբերություն կա, սակայն այն շատ նուրբ է: Վերջիվերջո, պապությունը տարբեր սովորական մեղքերի համար հատուկ թվով պատիժներ էր սահմանել, և այս կերպ հնարավոր էր ոչ միայն անցյալ մեղքերը քավել և ներել: Այսպիսով նրանք, ովքեր ունեին պատճառ հավատալու, որ ապագայում կարող են կատարել որոշ մեղքեր, կարող էին նախապէս ապահովել իրենց համար ողորմություն դրանց թողութեան համար: Բացի այդ, որոշ թողութիւններ, որոնք կոչվում էին

«անսահմանափակ [ամբողջական, ամբողջ]», անշուշտ համարվում էին, որ ծածկում են բոլոր անցյալ և ապագա մեղքերը:

Այսպիսի վիճակը անգամ այսօր անհավանական է թվում: Պապիստները ունեն որոշ աղոթքներ, որոնց կրկնությունը տալիս է սահմանափակ ժամկետով ներում, և նրանք պնդում են, որ բազմաթիվ աղոթքների միասնությունը երկար ժամանակ պաշտպանում են բարկությունից: Այսպիսով, նրանք, ովքեր ասում են՝ «Օրհներգ Սուրբ Թագուհուն», ստանում են քառասուն օրվա ներում, մինչդեռ «Լիտանիա օրհնված կույսին» բառերը տալիս են երկու հարյուր օրվա ներում: Իսկ նրանք, ովքեր աղոթում են՝ «Օրհնյալ լինի Սուրբ, Անարատ և Ամենասուրբ Մարիամ Աստվածածնի Սրբազան Հղիությունը», ստանում են հարյուրամյա ներում, և այդպես շարունակ: Դժվար չէ պատկերացնել այն կոռուպցիան, որի պատճառ դարձավ այս հայիոյական ուսմունքը Միջնադարում, երբ ինդուլգենցիաները հեշտությամբ վաճառվում էին փողի և ծառայությունների դիմաց՝ անհավատների և հերետիկոսների նկատմամբ հալածանքների համար:

Հաճախ հարուստների (որոնք կարող էին առատ վճարել) կողմից կատարվող հանցագործությունների համար սահմանվում էին չափազանց ծանր տուգանքներ, մինչդեռ աղքատ խավի շրջանում բավականին տարածված ամենածանր արդարադատության խախտումները հեշտությամբ ներվում էին: Այսպիսով, զարմիկի հետ ամուսնությունը արժեք 5000 դոլար, մինչդեռ կնոջ կամ ծնողի սպանության համար վճարվում էր ընդամենը 20 դոլար: Սպանիեյմը նշում է. «Ինդուլգենցիայի ինստիտուտը դարձավ դրամահատարան, որը տպում էր փող Հռոմեական եկեղեցու համար, ոսկե հանկեր պապերի անբարո զարմիկների և ապօրինի զավակների համար,

պապական պատերազմների շարժիչ ուժը, պարտքերը մարելու միջոց, և պապերի շքեղության անսպառ աղբյուր»:

Այս առևտուրը կարգավորելու համար տարբեր մեղքերի համար սահմանվեց աստիճանավոր պատժաչափ՝ Զավարանում անցկացվող օրերի կամ տարիների կոնկրետ թվով: Համապատասխան գների սանդղակ էլ սահմանվեց, որպեսզի մարդասպանության, գողության, մանկասպանության, շուռության, կեղծ վկայության կամ որևէ այլ մեղքի համար ներում ստացողները վճարեին տարբեր չափերով գումարներ: Այս կերպ պատիժները չեղարկվում էին, իսկ քավարանի տանջանքները թեթևացվում կամ դադարեցվում էին Հակաքրիստոսի ներկայացուցիչների ցանկությամբ: Չարմանալի չէ, որ մարդիկ արագ հասկացան, որ յուրաքանչյուր մեղքի համար անհրաժեշտ է վճարել կոնկրետ գումար:

Այս ինդուլգենցիաների պատճառով հանցագործությունը այնքան աճեց, որ հասարակության վերին խավի բոլորը վերածվեց եկեղեցու դեմ ապստամբության: Մարդկանց աչքերը սկսեցին բացվել, և նրանք տեսան անօրինության մեջ խրված հոգևոր դասին՝ սկսած եկեղեցու ամենաբարձր պաշտոնյաներից մինչև ամենացածր կարգի հոգևորականները:

Ինչպես ամենամուլթ ժամը նախորդում է փոթորկին, այնպես էլ մեծ բարենորոգչության շարժման նախաշեմին բարոյապես գոյություն ունեւ Հակաքրիստոսի մուլթ իշխանության ամենամուլթ ժամը: Անարգալի և ամոթալի ինդուլգենցիաների առևտուրը զգվանք առաջացրեց և ստիպեց Լյութերին ու մյուս նվիրված պապիստներին կասկածի տակ առնել և քննադատել ամբողջ համակարգը՝ թե՛ բարոյական, թե՛ դոկտրինալ առումով: Վերջապես Լյութերը եկավ ճշմարիտ եզրակացության, որ պապությունը իսկապես Հակաքրիստոսն է: Եվ, այս բացահայտումից հետո, նա անվախորեն մատնանշեց

Հայտնության գրքում որոշ խորհրդանիշներ, ցույց տալով դրանց համապատասխանությունն ու մասամբ կատարումը պապական հիերարխիայում:

Այս թեմայով մեջբերում ենք հետևյալը հայտնի հոգևորական Լայման Աբբոթի գրչից: Նա ասում է՝

Այն պատճառներից մեկը, թե ինչու այն օրերին ավելի շատ ինդուլգենցիաներ էին շնորհվում, քան այսօր, եկեղեցուն արված դրամական սվիրատվություններն էին: Այս առևտուրը հասավ գագաթնակետին 16-րդ դարի սկզբին՝ Լեո X-ի օրոք, ով ինդուլգենցիաներ էր տրամադրում բոլոր նրանց, ովքեր սվիրաբերում էին Հռոմի Սուրբ Պետրոսի մայր տաճարի կառուցմանը: Գերմանիայում ինդուլգենցիաների վաճառքի նրա գլխավոր ներկայացուցիչն էր Յոհան Տեցելը: Տեցելի անբարո վարքագիծը չխանգարեց նրան նշանակվել որպես այդ ինդուլգենցիաների բաշխիչ՝ ավելի բարեպաշտ հոգիներին, և նա ոչ մի ծայրահեղությունից չէր խուսափում, եթե դա լցնում էր նրա դրամարկը: Նա հայտարարում էր, որ իրեն ամենուր ուղեկցող կարմիր խաչը ունի նույն ուժը, ինչ Քրիստոսի խաչը, և չկա որևէ մեղք, որը նա չկարողանա ներել: «Ինդուլգենցիաները փրկում են ոչ միայն կենդանիներին, այլև մեռածներին: Ինչքան շուտ գումարը զնգզնգում է տուփի հատակին, հոգին ազատվում է քավարանից և ազատ թռչում դեպի դրախտ»: Սրանք նրա բազմաթիվ հայիոյական պնդումներից ընդամենը մի քանիսն էին: Սահմանվել էր գների հաստատուն սանդղակ: «Բազմակնությունը արժի վեց դուկատ, սրբապղծությունն ու սուտ վկայությունը՝ ինը, սպանությունը՝ ութ, կախարդությունը՝ երկու»: Սա բաց ու ամոթալի առևտուր էր, որը, ամենից առաջ, հանգեցրեց բարեփոխումների շարժմանը: Ինդուլգենցիաները շարունակում էին տրվել ոչ միայն պաշտամունքային արարողությունների, այլև եկեղեցուն դրամական

Նվիրատվությունների համար: Սակայն այժմ Հռոմեական եկեղեցում ինդուլգենցիաների հանրային և բաց վաճառքը մեծապես արգելված է:

Ահա թե ինչպես մեկ այլ հեղինակ մեջքերել է Տեցելի խոսքի մնացած մասը.

«Մոտեցեք ինձ, և ես ձեզ կտամ նամակներ՝ համապատասխան դրոշմներով, որոնց շնորհիվ ապագայում անգամ այն մեղքերը, որոնք կարող եք գործել, կներվեն: Գոյություն չունի այնպիսի մեղք, որը ինդուլգենցիան չի կարող մաքրել: Վճարեք՝ պարզապես առատորեն վճարեք, և ձեզ կներեն: Դուք՝ քահանաներ, ազնվականներ, առևտրականներ, կանայք, երիտասարդ աղջիկներ, երիտասարդ տղաներ, լսեք ձեր ծնողներին ու ընկերներին, որոնք քել են ձեզ և գոռում են ձեզ անդունդի խորքից. «Մենք տառապում ենք սարսափելի տանջանքներում» Փոքրիկ նվիրատվությունը մեզ ազատ կդարձնի: Դուք կարող եք դա թույլ տալ: Ինչպե՞ս կարող եք մերծել!» Տասը գոռոշի դիմաց դուք կարող եք ձեր հորը ազատել քավարանից: Մեր Տեր Աստված այլևս որպես Աստված մեզ հետ որևէ կապ չունի: Նա բոլոր լիազորությունները հանձնել է Պապին»:

Ահա մենք ներկայացնում ենք Տեցելի օգտագործած ձևաթղթի օրինակն, որի վրա պետք է գրվեին գևորդի անունը, նրա մեղքերը և այլն.

«Մեր Տեր Հիսուս Քրիստոսը ողորմի քեզ... և թողնի քեզ մեղքերիդ համար՝ Իր սրբազան տառապանքների արժանիքներով: Ես, ինձ շնորհված առաքելական իշխանությամբ, քեզ ազատում եմ բոլոր... սխալներից, մեղքերից և հանցագործություններից, որոնք կարող էիր գործած լինել՝ անկախ դրանց բնույթից կամ ծանրությունից... Ես քեզ ազատում եմ այն տանջանքներից, որոնք կրեիր քավարանում... Ես

վերականգնում եմ քեզ քո մկրտության անմեղության ու մաքրության մեջ, որպեսզի քո մահվան ժամին դժոխքի դարպասները փակվեն քեզ համար, իսկ դրախտի դարպասները բացվեն քեզ համար: Եվ եթե երկար կյանք ապրես, այս շնորհքը անփոփոխ կմնա մինչև քո մահվան ժամը: Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Ամեն: Եղբայր Յոհան Տեցելը, լիազոր ներկայացուցիչը, սա ստորագրել է իր սեփական ձեռքով _____»:

Ինչ վերաբերում է անմիջական ներկային, չենք կարող ասել, սակայն գիտենք, որ ընդամենը մի քանի տարի առաջ տպագիր ինդուլգենցիաներ՝ նշված գներով, վաճառվում էին Մեքսիկայի և Կուբայի մի շարք խոշոր կաթոլիկ եկեղեցիների սեղաններում:

**«Եվ նրան իշխանություն տրվեց սրբերի դեմ
պատերազմելու ու նրանց հաղթելու» – «Հյուժելու է
Ամենաբարձրյալի սրբերին»**

Ծի՛շտ է արդյոք, որ կեղծ պապական թագավորությունը իշխանություն է վարել և իշխանություն է գործադրել Աստծո իսկապես նվիրված զավակների նկատմամբ և հաղթել նրանց՝ «ճնշել» նրանց երկարատև հալածման, այսինքն՝ ջախջախման ընթացքում, ինչպես ենթադրում է եբրայերեն տեքստը: Սրան պատասխանում ենք՝ «Այո»: Օգտագործվեցին բոլոր հնարավոր միջոցները՝ ճնշելու իսկական քրիստոնեության հոգին (Հովհ. 8:36, Գաղ. 5:1, Բ Կորնթ. 3:17) և այն փոխարինելու Հակաքրիստոսի հոգով, ուսմունքներով ու պրակտիկաներով: Սկզբում սա հավատացյալների նկատմամբ բացահայտ հարձակում չէր, այլ դանդաղ, անընդմեջ, ճնշող հալածանք, որը առաջին հերթին ուղղված էր դիմադրող ուսուցիչների դեմ և ստիպում էր շատերին կորցնել համբերությունը և հավատքը: Այս

անընդհատ տանջանքների և ճնշման լավ օրինակ է խոստովանության ներդրումը, որի միջոցով Հակաքրիստոսը ոչ միայն տեղյակ էր լինում խոստովանողների կողմից այս համակարգի դեմ հնչեցված յուրաքանչյուր քննադատության և յուրաքանչյուր անհամաձայնության խոսքի մասին, այլ՝ ապագա պատժի սպառնալիքի տակ, ստիպում էր նրանց խոստովանել և զոջալ իրենց ցանկացած ապստամբական մտքի կամ գործողության համար: Շուտով քաղաքացիական իշխանություններն էլ ներգրավվեցին, որպեսզի եկեղեցու դեմ ցանկացած բողոք արտահայտվելու դեպքում այն համարվեր դավադրություն քաղաքացիական իշխանությունների դեմ, որոնք աջակցվում էին պապական իշխանության կողմից:

Պապության բարձրացման ամենասկզբում մարդիկ ընդհանուր առմամբ կամ անվանական եկեղեցական անդամներ էին, կամ համարվում էին հեթանոսներ: Բոլոր նրանք, ովքեր խոստովանում էին Քրիստոսին, պարտավոր էին ենթարկվել աստիճանաբար իր իշխանությունը հաստատող հիերարխիայի սովորույթներին ու կանոններին: Սուտը, որը միշտ ավելի հանրաճանաչ է եղել, քան ճշմարտությունը, երբ ձեռք բերեց ազդեցություն և իշխանություն, հալածեց, արգելեց և վարկաբեկեց ճշմարտությունը և բոլոր նրանց, ովքեր դրան հավատարիմ էին: Սա այն ժամանակն էր, երբ (ինչպես պատկերված է Հայտնությունում) ճշմարիտ Եկեղեցին (կինը) փախավ անապատ (մեկուսացված վայր՝ Հայտնություն 12:6)՝ մերժված իր հավատարմության համար ճշմարտությանը և Եկեղեցու ճշմարիտ Տիրոջն ու Գլխին: Այդ ժամանակ, երբ դավաճանները բարձրացվում էին իշխանների կարգավիճակով, իսկ ճշմարիտ, խոնարհ սրբերը ապրում էին այն, ինչի մասին Տերը նախազգուշացրել էր նրանց (ինչպես նախազգուշացնում է այսօր բոլոր նրանց, ովքեր ցանկանում են աստվածավախ կյանք վարել)՝ հալածանքը: Սկեսուրը դեմ էր իր հարսին, հայրը՝ իր որդուն, և եղբայրը՝

իր եղբորը: Իրականում մարդու թշնամիները հաճախ նրա սեփական ընտանիքի անդամներն էին: Արդյո՞ք հնարավոր է պատկերացնել ավելի հարմար միջոց սրբերի ճնշման (այսինքն՝ ջախջախման) համար, քան այսպիսի դարավոր մարտավարությունները:

Այս հալածանքի դաժանության և անխնայության պատկերացում ստանալու համար մենք կրկին պետք է դիմենք պատմության էջերին:

Հեթանոս Հռոմեական կայսրության օրոք քրիստոնյաների նկատմամբ իրականացված հալածանքները ոչինչ էին պապական Հռոմեական կայսրության օրոք իրականացված հալածանքների համեմատ, քանի որ առաջինները ավելի հազվադեպ էին, ավելի սահմանափակ էին իրենց ծավալով և ավելի քիչ դաժան էին: Ըստ վաղ քրիստոնյաների հաշվետվությունների՝ մեծ մասը հռոմեական դատավորների, որոնք նահանգներում կայսեր կամ Սենատի անուկից իշխանություն էին գործադրում և որոնց ձեռքում կյանքի ու մահվան իշխանությունն էր, իրենց պահում էին որպես նրբաճաշակ վարքով ու ազատ դաստիարակությամբ մարդիկ, հարգելով արդարության օրենքները: Նրանք հաճախ գերծ էին մնում հալածանքի չարիքից՝ արհամարհանքով մերժելով քրիստոնյաների դեմ հնչեցված մեղադրանքները (ինչպես Պիղատոսն ու Հերովդեսը փորձեցին անել մեր Տիրոջ դեպքում – Ղուկաս 23:14–16, 20, 22, Մատթ. 27:24), կամ մեղադրյալ քրիստոնյաներին առաջարկում էին ինչ-որ տեսակի իրավական պաշտպանության միջոց: Հնարավորության դեպքում նրանք իրենց իշխանությունը շատ ավելի հաճախ օգտագործում էին քրիստոնյաներին ազատելու, քան նրանց ճնշելու համար: Եվ հեթանոսական դատարանները

հաճախ քրիստոնյաների համար ամենահուսալի ապաստանն էին սրանց հրեա մեղադրողներից:³⁴

Անհավանական բռնապետ Ներոնի օրոք իրականացված դաժան հալածանքը, երբ նա հրամայել էր այրել մի քանի քրիստոնյաների՝ հասարակության կասկածները իրենից շեղելու նպատակով, հանդիսանում է հեթանոսական Հռոմի պատմության ամենամուգ էջերից մեկը: Սակայն սրա գոհերը համեմատաբար քիչ էին: Հեթանոսական հալածանքների գոհ դարձան ոչ թե համայնքները որպես ամբողջություն, այլ առավելապես նշանավոր անհատներ: Սակայն առաջատար դեմքերի նկատմամբ այս հալածանքը իշխանությունների կողմից մշտական ու անընդմեջ հակադրության արտահայտությունն էր, այլ նախապաշարմունքներով սնվող չկառավարվող ժողովրդական բողոքների հետևանք: Իշխանավորները խաղաղության ու կարգուկանոնի շահերից ելնելով տեսնում էին անհրաժեշտությունը կատարել իրենց պահանջները: Դրա մի քանի օրինակ կարելի է գտնել Պողոս առաքյալի, ինչպես նաև մյուս առաքյալների կյանքում (տես Գործք 19:35–41, 25:24–27, 26:2, 3, 28): Նույնիսկ հռոմեական կայսրերի ամենատարածված հալածանքները կարճատև էին, բացառությամբ Դիոկղետիանոսի օրոք տեղի ունեցած հալածանքների, որոնք տարբեր աստիճանի խստությամբ տևեցին տասը տարի: Այս հալածանքների միջև հաճախ լինում էին երկար խաղաղության և հանգստության շրջաններ: Կայսրերի կառավարման ժամանակ, թեև դա բավականին խռովարար շրջան էր, քրիստոնեությունը ոչ թե ճնշվեց, այլ, ինչպես տեսանք, մեծապես ծաղկեց:

Ինչքան տարբեր էին պապական հալածանքները, որոնց ենթարկվեցին ոչ միայն հայտնի հակառակորդները,

³⁴ Գիբոն, Հատոր II, 31–33 էջեր:

այլև բոլորը, և որոնք շարունակվեցին ոչ թե ընդամենը մի քանի ամիս, այլ անընդմեջ: Ինչը հեթանոս կայսրերի օրոք անցողիկ բարկության կամ խելագարության նույա էր, պապի օրոք դարձավ համակարգված վարչակարգ, սնուցվող կրոնական ֆանատիզմով ու խարդախական ամբիցիայով և ոգեշնչվող սատանայական էներգիայով, եռանդով ու դաժանությամբ, որոնց պատմության տարեգրություններում զուգահեռ չկա: Ապստատ եկեղեցին մի կողմ դրեց Յոգու սուրը և, կաշեկով կայսրության ձեռքին, իր ֆիզիկական զենքերը անխնա բարկությամբ ուղղեց իր փառասիրության ճանապարհին կանգնած յուրաքանչյուր թույլ հակառակորդի դեմ: Միևնույն ժամանակ այն գայթակղեց, հաճոյախոսեց և խաբեց իշխանավորներին, մինչև շահեց նրանց վստահությունը և զավթեց նրանց դիրքն ու իշխանությունը:

Այդ ժամանակ հալածանքի թիրախ դարձան հեթանոսությունն ու հերետիկությունը՝ հատկապես վերջինը: Անվանական քրիստոնեական հոգևորությունը, ինչպես ասում է Էդգարն, «չարաշահեց հրեական թեոկրատիայի օրենքներն ու հրեական արձանագրիչների աշխատությունները՝ ոչ քրիստոնեական և ստոր նպատակով՝ հարուցելու հալածման դեմն հունական և հռոմեական [հեթանոսական] մոլորությունների փլուզվող մնացորդների դեմ... Նրանք քանդեցին բազմաստվածության հնագույն կառուցվածքը և դրա եկամուտները ուղղորդեցին եկեղեցու, պետության և բանակի գանձարաններ... Յեթանոսությունը վտարվեց Յոգմեական տարածքից... Խոսքի ազդեցության փոխարեն մեծապես կիրառվեց հարկադրանքը, իսկ ավետարանի փոխարեն՝ ահաբեկչությունը: Սիմմաքոսին ու Լիբանիոսին կարդալիս ամաչում ես՝ երկու հեթանոս բանախոսներ, որոնք կրոնի տարածման գործում կոչ էին անում բանականության ու համոզման, մինչդեռ քրիստոնյա կայսր

Թեոդոսիոսն ու քրիստոնյա եպիսկոպոս Ամբրոսը հրահրում են բռնություն և հարկադրանք:

Երբ Կոստանդինը բարձրացավ Յոնի գերագույն իշխանության, նա հակված էր հանդուրժողականության ցուցաբերել բոլոր կրոնների հանդեպ, ինչը վկայում է Միլանի հայտնի հրամանագիրը, որը երաշխավորում էր կրոնական ազատություն Յոնիական կայսրության յուրաքանչյուր բնակչի համար: Այսպիսի քայլը պետք է ողջունվեր քրիստոնեական եկեղեցու կողմից, որը երկար ժամանակ ձգտել էր ազատության վերջին հալածանքներից հետո: Բայց, ցավոք, այդպես չեղավ: Քրիստոնեության իսկական ոգին անհետացել էր, և այժմ եկեղեցու միակ նպատակը հնարավորինս արագ բարձրացնել իր դիրքն էր՝ մարեցնելով ազատության ամենափոքր կայծը և ամեն ինչ ենթարկելով իրեն: Այդ պատճառով Գիբոնը ասում է.³⁵ «Նրա [Կոստանդինի] եկեղեցական պաշտոնյաները շուտով կարողացան խարխլել գերագույն դատավորի անաչառությունը և արթնացնել նրա մեջ նորադավանական եռանդը... Եվ հենց որ նա իր պալատի պարիսպների ներսում հավաքեց երեք հարյուր եպիսկոպոս, խաղաղության և հանդուրժողականության բոլոր հույսերը անհետացան»: Այստեղ կայսրին համոզեցին հայտարարել, որ ով դիմադրում է այս եկեղեցական մարմնի դատավճռին հավատքի հարցերում, պետք է պատրաստվի անմիջական աքսորի: Պնդվում էր, որ իրենց որոշումները ունեն աստվածային իշխանություն: Այս անհանդուրժողական ոգին շուտով վերաճեց դառը և անխնա հալածանքների: Կոստանդինը հերետիկոսության դեմ ընդունեց երկու պատժիչ օրենք, և նրա օրինակին հետևեցին հաջորդ կայսրերը՝ Վալենտինիանոսը, Գրացիանոսը, Թեոդոսիոսը, Արկադիոսը և Յոնորիոսը:

³⁵ Չատոր II, էջ. 236:

Թեոդոսիոսը հրապարակեց տասնհինգ նման օրենք, Արկադիոսը՝ տասներկու, իսկ Յոնորիոսը՝ ոչ պակաս քան տասնութ: Դրանք ամրագրված են Թեոդոսիոսի և Յուստինիանոսի օրենսգրքերում, ինչը ամոթ է այս եկեղեցական և կայսերական հեղինակների համար:

Հակաքրիստոսը, որը համարձակվեց այն անվանել հերետիկություն (որը մեծ մասամբ բաղկացած էր ճշմարտությունից և արդարությունից, որոնք ձգտում էին պահպանել իրենց դիրքերը), համարվում էր անհավատությունից ավելի վատ: Երկուսն էլ հանդիպեցին թագավորների, կայսրերի և աստվածաբանների դիմադրությանը: Երկուսն էլ, և հատկապես առաջինը, հալածվեցին ինկվիզիցիայի կողմից: Երբ 18-րդ դարի սկզբին տեղի ունեցավ գիտության վերածնունդ, և մարդիկ սկսեցին արթնանալ «Միջնադարի» անհանգիստ երազներից, նրանք, որոնց մտքերից ճշմարտությունը դեռ ամբողջությամբ չէր ջնջվել, քաջություն ստացան և բարձրացրին ճշմարտության դրոշմը՝ ընդդեմ Հակաքրիստոսի ամենադաժան կեղծիքների: Այդ ժամանակ Հակաքրիստոսի հալածանքի ոգին բռնկվեց խելագար բռնկումներով, որոնք ուղղված էին ընդդիմության ճնշմանը:

Թագավորներն ու իշխանները, որոնք դողում էին իրենց թագերի անվտանգության համար, եթե որևէ չափով արժանանում էին պապի անբարեհաճությանը, և որոնց թագավորությունները կարող էին ենթարկվել սարսափելի եկեղեցական արգելքի, եթե նրանք կամ իրենց ժողովուրդը հրաժարվեին անվերապահորեն ենթարկվել պապի հրամաններին, երդվել էին ոչնչացնել հերետիկությունը և զգուշացվել էին մաքրել իրենց մարզերը հերետիկական պղծությունից՝ տուգանքի տակ, տիրույթները կորցնելու սպառնալիքի տակ: Իսկ այն բարոնները, որոնք անտեսում էին հալածանքի գործում օգնելը, կորցնում էին իրենց

ունեցվածքը: Ուստի թագավորներն ու իշխանները ուշացում չկատարեցին Պապության հրամանները կատարելու հարցում, իսկ բարոններն ու նրանց վարձկանները նրանց ծառայության տակ էին՝ ավերման գործում օգնելու համար:

Նույնիսկ այս արթնացումից առաջ, արդեն մեր թվարկության 630 թվականին, Տուլեդոյի խորհուրդը Իսպանիայի թագավորին, գահ բարձրանալիս, ստիպեց երդվել, որ չի հանդուրժի որևէ հերետիկոսական ուսմունք Իսպանիայի տիրույթներում, և հայտարարվեց, որ այն իշխանը, ով կխախտի այդ երդումը, «անիծված կլինի հավիտենական Աստծո առջև և կդառնա հավիտենական կրակի զոհ»: Բայց այդպիսի պահանջների սարսափելի նշանակությունը շատ ավելի լիովին պարզ դարձավ, երբ սկսվեց արթնացումը և երբ Հակաքրիստոսը ձեռք բերեց իր իշխանության առավելագույն չափը:

1160 թվականին Օքսֆորդի խորհուրդը Վալդենսների մի խմբին, որոնք Գասկոնիայից Անգլիա էին գաղթել, պատժի համար հանձնել էր աշխարհիկ իշխանություններին: Հետևաբար թագավոր Հենրի II-ը հրամայել էր նրանց՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց հրապարակախորեն ծեծել, այտին կարմրացած տաք երկաթով կնքել և ձմռան սառնամանիքում կիսամերկ վիճակում վտարել քաղաքից, և ոչ ոքի թույլ չէր տրվում ցուցաբերել նրանց նկատմամբ ողորմություն կամ ցուցաբերել ամենափոքրիկ օգնություն:

Գերմանիայի կայսր Ֆրիդրիխը 1224 թվականին ցանկացած տեսակի հերետիկոսների դատապարտեց կենդանի այրման, նրանց գույքը բռնագրավեց, իսկ նրանց երեխաներին, եթե հալածողներ չդառնային, ամոթանքի: Ֆրանսիայի արքա Լյուդովիկոս IX-ը 1228 թվականին ընդունեց օրենքներ հերետիկությունը արմատախիլ անելու համար և կիրառեց դրանք: Նա պարտադրեց Տուլուզի կոմս

Ռայմոնդին իր տիրույթներում արմատախիլ անել հերետիկոսությունը՝ չխնայելով ոչ ընկերներին, ոչ ծառաներին:

Դեռևս սկզբնական շրջանում, երբ իշխանությունը աստիճանաբար վերաճում էր պապական համակարգի, դիմադրություն ցուցաբերվեց, սակայն այն դրսևորեցին միայն հավատարիմ մի քանի հոգի, որոնց ազդեցությունը քիչ հետք ունեցավ եկեղեցու վրա հեղեղած աշխարհիկության հզոր հոսքի դեմ: Ժամանակի ընթացքում, երբ նրանք գիտակցեցին սխալը, ոմանք լուռ հեռացան մեծ հավատուրացությունից՝ Աստծուն պաշտելու իրենց խղճի պահանջներին համապատասխան, անգամ հալածանքների վտանգի տակ: Այս շարքում առանձնանում էին նրանք, ովքեր հետագայում կոչվեցին Վալդենսներ, Ալբիգոյեցիներ, Վիկլիֆյաններ և Զուգենոտներ: Չնայած նրանց տարբեր անուններով կոչելուն, որքան մենք կարող ենք դատել, նրանք ունեին ընդհանուր ծագում և ընդհանուր հավատք: «Վալդենսները», ասում է Ռայներուսը (3.4), հայտնի տասներեքերորդ դարի ինկվիզիտորը, «հնագույն հերետիկոսությունն է. և գոյություն է ունեցել, ըստ որոշների, [պապ] Սիլվեստրի օրերից, իսկ ըստ մյուսների՝ առաքյալների օրերից»: Սիլվեստրը պապն էր, երբ Կոստանդինը կայսր էր և խոստովանել էր քրիստոնեությունը, և այսպես մենք տեսնում ենք, որ ճշմարտությունը սկզբից ի վեր ունեցել է իր հետևորդները, որոնք, թեև խոնարհ և ոչ հանրաճանաչ, վճռականորեն դիմադրել են պապությանը և պապական ուսմունքներին՝ քավարանի, պատկերապաշտության, սրբերի կանչի, Աստվածածնի պաշտամունքի, մեռյալների համար աղոթքի, գոյափոխման ուսմունքի, հոգևորականության կուսակրոնությունը, ինդուլգենցիաները, պատարագը, և այլն, և մերժում էին ուխտագնացությունները, տոներն, խունկի այրումը, սրբազան թաղումը, սրբացված ջրի

օգտագործումը, քահանայական հագուստները, վանականությունը և այլն, և պնդում էին, որ Սուրբ Գրքի ուսուցումը պետք է ընդունվի՝ հակառակ Հռոմեական եկեղեցու ավանդույթների և պահանջների: Նրանք պապին համարում էին բոլոր մոլորությունների գլուխը և պնդում էին, որ մեղքերի թողությունը ստացվում է միայն Տեր Հիսուսի արժանիքների շնորհիվ:

Այս մարդկանց հավատքն ու գործերը կազմեցին բարեփոխման հիմքը և ծառայեցին սխալների դեմ բողոքի արտահայտմանը Լյութերի ժամանակներից շատ առաջ: Նրանք և պապականության այլ ընդդիմախոսները հետապնդվեցին, ատվեցին և անխնա դաժանությամբ հալածվեցին պապական էմիսարների կողմից: Վալդենսներն ու Ալբիգոյեցիները պապությանը հակադրվող բողոքականների ամենամեծ խմբավորումներն էին: Երբ սկսվեց տասներեքերորդ դարի գրական վերածնունդը, ճշմարտությունը առավելապես նրանց միջոցով շողաց, թեև Ուիքլիֆը, Հուսը, Լյութերը և մյուսները իրենց գրություններով արտացոլեցին ու ամրապնդեցին այն: Նրանց ուսմունքները, հիմնված պարզության և բարոյականության վրա, շատ ավելի պայծառ փայլեցին՝ ի հակադրություն պապության հպարտության և սարսափելի անբարոյականության հետ, որը այդ ժամանակ գտնվում էր իր գագաթնակետին:

Այդ ժամանակ պապերը, եկեղեցական ժողովները, աստվածաբանները, թագավորները, խաչակրացները և ինկվիզիտորները միավորեցին իրենց սատանայական ուժերը՝ ոչնչացնելու յուրաքանչյուր հակառակորդին և մարեցնելու անգամ ամենաթույլ ճառագայթը բարձրացող լույսի: Պապ Իննոկենտիոս III-ը առաջին հերթին ուղարկեց միսիոներներ այն շրջաններ, որտեղ Ալբիգոյեցիների ուսմունքը արմատներ էր գցել, որպեսզի քարոզեն կաթոլիկություն, կատարեն հրաշքներ և այլն: Բայց,

տեսնելով, որ իր բոլոր ջանքերը ապարդյուն են, նա նրանց դեմ խաչակրաց արշավ հայտարարեց՝ խոստանալով բոլոր մասնակիցներին բոլոր մեղքերի թողութիւն և անմիջապես դրախտ մտնելու իրավունք առանց քավարանով անցնելու: Պապի խոստացված պարգևներ շնորհելու ուժին լիովին հավատալով՝ կես միլիոն մարդ (ֆրանսիացիներ, գերմանացիներ և իտալացիներ) հավաքվեց խաչի դրոշի տակ՝ պաշտպանելու կաթոլիկությունը և արմատախիլ անելու հերետիկությունը: Դրան հաջորդեց մի շարք ճակատամարտեր և պաշարումներ, որոնք տևեցին քսան տարի: 1209 թվականին Բեզյե քաղաքը գրավեց գրոհով, և, ինչպես պնդում են որոշ պատմաբաններ, նրա վաթսուն հազար բնակիչներ՝ անկախ տարիքից ու սեռից, սպանվեցին սրով: Եկեղեցիներում ապաստանած և այնտեղ սրբազան խաչակրացների կողմից շրջապատված մարդկանց արյունը հեղեղեց գոհասեղանները և հոսեց փողոցներով:

Լավուրդը շրջափակվեց 1211 թվականին: Կառավարիչը կախաղան բարձրացվեց, իսկ նրա կինը գցվեց հորի մեջ և քարերով սպանվեց: Բնակիչները ոչնչացվեցին անխտիր, նրանցից չորս հարյուրը կենդանի այրվեցին: Լանգեդոկի ծաղկող շրջանն ավերվեց, նրա քաղաքները մոխրացվեցին, իսկ բնակիչները ոչնչացվեցին կրակով ու սրով: Ըստ գնահատականների, մեկ օրվա ընթացքում հարյուր հազար Ալբիգոյեցի է զոհվել: Նրանց դիակները հավաքեցին և այրեցին:

Այս բոլոր արյունալի գեխությունը և նողկալիությունը կատարվել են կրոնի անունից՝ ասես Աստծո փառքի և Եկեղեցու պատվի համար: Բայց իրականում այդամենը ծառայում էր Հակաքրիստոսին, որը Աստծո տաճարում (Եկեղեցում) էր նստել՝ ներկայացնելով իրեն որպես աստված (այսինքն՝ հզոր), ընդունակ հաղթելու և ոչնչացնելու իր թշնամիներին: Քահանայությունը

շնորհակալություն հայտնեց Աստծուն այս ավերածության համար, և Լավուրի մեծ հաղթանակի պատվին գրվեցին ու երգվեցին Աստծո փառքի օրհներգեր: Բեզյեի սարսափելի կոտորածը համարվեց «երկնքի տեսանելի դատաստան» Ալբիգոյեցիների հերետիկոսության համար: Առավոտյան պատարագին, մասնակցելուց հետո խաչակիրները, ողջ օրվա ընթացքում շարունակեցին ավերել անգեղոկի շրջանն ու սպանել նրա բնակիչներին:

Այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ Ալբիգոյեցիների և Վալդենսների դեմ այս բացահայտ խաչակրաց արշավանքները իրականացվել են բացառապես այն պատճառով, որ այդպես կոչված «հերձվածողությունը» ամուր արմատներ էր գցել այդ համայնքների զգալի մասում: Մեծ սխալ կլիներ ենթադրել, որ խաչակրաց արշավանքները միակ հալածանքն էին. հազարավոր մարդկանց լուռ ու անխնա ճնշումը, որը տարածվում էր ամբողջ հսկայական պապական տիրապետության մեջ, արագորեն ուժ էր հավաքում և ճնշում Բարձրյալի Սրբերին:

Գերմանիայի կայսր և Իսպանիայի ու Նիդերլանդների թագավոր Կառլոս V-ը իր ընդարձակ տիրույթներում հալածեց բարեփոխումների կողմնակիցներին: Վորմսի պառլամենտի աջակցություն ստանալուց հետո նա Լյութերին, նրա հետևորդներին և նրա գրվածքները հայտարարեց ոչ օրինական և դատապարտեց բոլոր նրանց, ովքեր աջակցում էին Լյութերին կամ կարդում նրա գրքերը, ունեցվածքի բռնագրավման, կայսրությունից արտաքսման և բարձր դավաճանության համար պատժի: Նիդերլանդներում Լյութերի հետևորդներին պետք է գլխատեին, իսկ կանանց՝ կենդանի թաղեին կամ, եթե դիմադրեին, խարույկի վրա այրեին: Չնայած այս լայնամասշտաբ հրամանը կասեցվեց, մահացու հալածանքը շարունակվեց իր բոլոր սարսափելի ձևերով:

Ալբայի դուքսը հպարտանում էր, որ վեց շաբաթվա ընթացքում սպանել է 18 000 բողոքականների: Պառլոն գնահատում է, որ Նիդերլանդներում իրենց հավատքի համար սպանվել է 50 000 մարդ: Իսկ Գրոթիուսը ներկայացնում է 100 000 բելգիացի նահատակների ցուցակ: Չարլզը, մահվան շեմին, հորդորեց իր որդի Ֆիլիպ II-ին շարունակել մինչև վերջ այն հալածանքի և հերետիկոսության արմատախիլ անելու գործը, որը ինքը սկսել էր: Ֆիլիպը շտապեց հետևել այս խորհրդին: Չայրույթով նա խրախուսեց հալածանքի ոգին և առանց որևէ բացառության կամ ողորմության հրամայեց այրել բողոքականներին:

Ֆրանսիայի թագավորներ Ֆրանցիսկոսն ու Յենրին հետևեցին Կառլոսի ու Ֆիլիպի օրինակին՝ կաթոլիկության հանդեպ իրենց նվիրվածության և հերետիկոսության վերացման գործում: Մերինդոլի, Օրենշի և Փարիզի ջարդերը ցնցող օրինակ են նրանց նվիրվածության Հակաքրիստոսի գործին: Մերինդոլի կոտորածը, որը պլանավորվել էր Ֆրանսիայի թագավորի կողմից և հաստատվել Ֆրանսիայի խորհրդարանի կողմից, հանձնվել էր նահանգապետ Օպպեդիին իրականացնելու համար: Նահանգապետին հանձնարարվել էր բնաջնջել բնակչությունը, այրել քաղաքները և ոչնչացնել վալդենսների ամրոցները, որոնք մեծ թվով բնակվում էին այդ շրջանում: Հռոմեական կաթոլիկ պատմաբանները ընդունում են, որ այս հրամանի համաձայն հազարավոր տղամարդիկ, կանայք և երեխաներ սպանվել են, քսանչորս քաղաք ավերվել է, իսկ շրջանն ավերվել և թալանվել է: Տղամարդիկ, կանայք և երեխաներ փախան անտառներ ու լեռներ, սակայն նրանց գտան և սպանեցին: Քաղաքներում մնացածների մեծ մասը նույն կամ ավելի դաժան ճակատագրի արժանացավ: Հինգ հարյուր կին գցեցին մի ամբարի մեջ և այրեցին, իսկ երբ ոմանք ցատկեցին պատուհաններից, նրանց դիմավորեց սուր նետերը:

Կանանց բռնաբարեցին, իսկ երեխաներին սպանեցին իրենց ծնողների աչքի առաջ, որոնք անզոր էին օգնել նրանց: Ոմանց զցեցին անդունդը, մյուսներին մերկ քարշ տվեցին փողոցներով:

1562 թվականին Օրենժում տեղի ունեցած կոտորածը Մերինոլի կոտորածի նման բնույթ ուներ և մանրամասն նկարագրվել է կաթոլիկ պատմաբանների կողմից: Պապ Պիոս IV-ի կողմից ուղարկած իտալական բանակին հրամայել էին սպանել տղամարդկանց, կանանց և երեխաներին, և այդ հրամանը կատարվեց սարսափելի դաժանությամբ: Պաշտպանագուրկ հերետիկոսները սպանվել են սրով, զցվել ժայռերից, կախվել, եփվել դանդաղ կրակի վրա, ենթարկվել հանրային նվաստացման և ամեն տեսակի խոշտանգումների:

1572 թ. օգոստոսի 24-ին Փարիզում տեղի ունեցած Սուրբ Բարդուղիմեոսի օրվա ջարդը դաժանությամբ հավասար էր Մերինոլի և Օրենժի ջարդերին, սակայն մասշտաբով գերազանցեց դրանք: Սա նույնպես մանրամասն նկարագրվում է կաթոլիկ պատմաբանների կողմից, որոնցից մեկը՝ Տուանուսը, այն անվանել է «վայրենի դաժանություն, աննախադեպ ամբողջ ժամանակների մեջ»: Օգոստոսի 23-ի կեսգիշերին զանգի հնչեցումը ազդանշան էր կոտորածի սկիզբը, և Մերինոլի ու Օրենժի սարսափելի տեսարանները կրկնվեցին ատելի հուզենոտների նկատմամբ: Այս մահվան կարևավալը տևեց յոթ օր: Քաղաքը ողողված էր մարդկային արյունով: Պալատ լցված էր դիակներով, որոնց տեսքը թագավորին ու թագուհուն անսահման հաճույք պատճառեց: Ադմիրալ Կոլինհի դին քարշ տվեցին փողոցներով, իսկ Սենա գետը ծածկված էր լողացող դիակներով: Չոհերի թվի վերաբերյալ գնահատականները տատանվում էին 5 000-ից մինչև 10 000-ը: Կոտորածի արշավը սահմանափակված չէր միայն Փարիզով, այլև լայնորեն տարածվել էր ամբողջ

Ֆրանսիայում: Մի օր առաջ հատուկ հաղորդիչներ էին ուղարկվել բոլոր ուղղություններով՝ հուզենոտների գանգվածային ոչնչացման հրամանով:Նույն տեսարանները կրկնվեցին գրեթե բոլոր նահանգներում, և զոհերի թիվը գնահատվում է 25 000-ից մինչև 70 000:

Հակաքրիստոսը մեծ հաճույք ստացավ այս սարսափելի արյունալի սպանդի տեսարանից: Պապն ու նրա պալատը Մերինոլայում նշեցին կաթոլիկության հաղթանակը վաղեմաների նկատմամբ, իսկ չար Օպեդան հռչակվեց «հավատքի պաշտպան և քրիստոնեության հերոս»: Ֆրանսիայի թագավորը մասնակցեց լիտուրգիային և հանդիսավորապես շնորհակալություն հայտնեց Աստծուն Փարիզյան Հուզենոտների ջարդի և հաղթանակի համար: Այս ջարդը, որը հավանություն էր ստացել Ֆրանսիայի թագավորի, պառլամենտի և հռոմեական կաթոլիկ ենթակաների կողմից, ամենայն հավանականությամբ անմիջապես հրահրվել էր Պապի և պապական հիերարխիայի կողմից: Այն հանգամանքը, որ այն այդքան բարձր գնահատվեց, վկայվում է, եթե ոչ այլ բանով, քան այն փաստով, որ պապական արքունիկը լուրը ընդունեց մեծ ուրախությամբ: Պապ Գրիգոր XIII-ը շքեղ երթով մեկնեց Սեն Լուի եկեղեցի՝ Աստծուն շնորհակալություն հայտնելու այս նշանակալի հաղթանակի համար: Նա անմիջապես հայտարարեց տոն օր և ուղարկեց իր նվիրակին Ֆրանսիայի արքունիք, որը պապի անունից գովաբանեց «երկար ժամանակ պլանավորված և այդքան փառավոր կերպով իրականացված սխրանքը՝ կրոնի բարօրության համար»: Թագավորը կոտորածի հիշատակին թողարկեց մեդալ, որի վրա գրված էր «*Pietas Excitavit Justitiam*»՝ «Բարեպաշտությունը Արթնացրեց Արդարությունը»:

Պապը նաև հրամայել է Պապական դրամահատարանում թողարկել հուշամեդալներ այս իրադարձությունը

նշելու համար: Դրանցից մեկը այժմ ցուցադրվում է Փենսիլվանիայի Ֆիլադելֆիա քաղաքի Յուշահամալիրի դահլիճում: Նրա դիմերեսին պատկերված է Պապի ռելիեֆային դիմանկարը և կրճատված մակագրությունը՝ «Gregorius XIII, Pontifex Maximus Anno I», նրա իշխանության առաջին տարում, այսինքն՝ 1572 թվականին: Հակառակ երեսին պատկերված է պատժիչ հրեշտակ, որը ձախ ձեռքում բռնել է խաչ, իսկ աջ ձեռքում՝ սուր: Նրա առջև կանգնած է Հուգենոտների մի խումբ՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, որոնցից ոմանք ընկնում են, մյուսները փախչում՝ նրանց դեմքերն ու կերպարանքները արտահայտում են սարսափ և հուսահատություն: Սրա տակ գրված են բառերը՝ «Ugonottorum Strages 1572», ինչը նշանակում է «Հուգենոտների կոտորած, 1572թ.»:

Սուրբ Բարդուղիմեոսի ջարդը պատկերող նկարը կախվեց Վատիկանում: Նրա վերևում նկարված էր գլանաձև թուղթ՝ լատիներեն մակագրությամբ, որի բառերը նշանակում էին. «Պապը հավանություն է տալիս Կոլինիի կործանմանը»: Կոլինիս նշանավոր Հուգենոտ առաջնորդ էր և առաջին զոհերից մեկը: Նրա սպանությունից հետո նրա գլուխը կտրեցին և ուղարկեցին թագուհուն, որը այն զմռսեց և որպես տրոֆե ուղարկեց Հռոմ, մինչդեռ նրա մարմինը ամբողջ քարշ տվեց Փարիզի փողոցներով: Մի փոքր անց թագավորին պատեց խղճի սարսափելի խայթոցներ, որոնցից նա երբեք չվերականգնվեց: Գիտեն, որ նա գաղտնի իր անձնական բժշկին ասել է՝ «Զգիտեմ, թե ինձ հետ ինչ է կատարվում, բայց իմ միտքն ու մարմինս կարծես տենդի մեջ լինեն: Յուրաքանչյուր րոպե, թե քնած եմ, թե արթնացած, ինձ թվում է, թե առջևումս հայտնվում են խեղված, արյունոտ մարմիններ սարսափելի դեմքերով»: Նա մահացավ սարսափելի տանջանքներով՝ ծածկված արյունոտ քրտնքով:

1641 թվականին Հակաքրիստոսը Իռլանդիայում հայտարարեց «կրոնական պատերազմ» և կոչ արեց բնակիչներին ոչնչացնել բողոքականներից ցանկացած միջոցով: Խաբված մարդիկ այս հրամանը ընդունեցին որպես Աստծո ձայն և անմիջապես սկսեցին այն կատարել: Բողոքականների արյունը հոսում էր գետերի նման ամբողջ Իռլանդիայով: Տները մոխրի վերածվեցին միսչև հիմքերը, քաղաքներն ու գյուղերը գրեթե ամբողջությամբ ոչնչացվեցին: Ոմանք ստիպված եղան սպանել իրենց հարազատներին, ապա ինքնասպան լինել: Վերջինը, ինչ նրանք լսեցին, քահանաների հավաստիացումն էր, որ իրենց մահվան տառապանքները ընդամենը հավերժական տանջանքների սկիզբն են: Հազարավորներ մահացան սառնությունից ու սովից՝ փորձելով փախչել այլ երկրներ: Կավանում տասներկու մղոն ճանապարհը ամբողջությամբ պատված էր վիրավոր փախստականների արյունոտ հետքերով: Փախուստի ընթացքում վաթսուև երեխա լքվեց իրենց դաժանորեն հալածված ծնողների կողմից, և հրաման տրվեց, որ ով որ օգնություն ցուցաբերի այս փոքրիկներին, թաղվի նրանց կողքին: Ֆերմոյում կենդանի թաղվեցին տասնյոթ մեծահասակ, իսկ Կիլքենիում՝ յոթանասուներկու: Միայն Ալստերի նահանգում ավելի քան 154 000 բողոքականներ սպանվեցին կամ արտաքսվեցին Իռլանդիայից:

Իռլանդիայի արքեպիսկոպոս Օ'Նիլը սա հռչակեց «բարեպաշտ և օրինական պատերազմ», իսկ պապը (Ուրբան VIII) 1643 թ. մայիսին թողարկեց մի կանոն, որով նրանց, ովքեր «քաջաբար իրենց ուժերի չափով ձգտել էին արմատախիլ անել և ամբողջությամբ ոչնչացնել հերետիկոսական վարակիչ խմորիչի վնասակար ազդեցությունը», շնորհվեց «ամբողջական և անվերապահ ներում իրենց բոլոր մեղքերի համար»:

Ինկվիզիցիա, կամ «Սրբազան Ծառայություն»

Այս սատանայական ինկվիզիցիայի հորինման պատիվը վերագրվում է Դոմինիկին, խաչակրաց արշավանքների ոգեշնչողին, թեև Բենեդիկտոսը, ով եռանդով վերագրում է Սուրբ Դոմինիկին առաջին մեծ ինկվիզիտորի պատիվը, չի կարող հստակ ասել՝ ով առաջինն էր այդ գաղափարի հեղինակը՝ Պապ Ինոկենտիոսը՝, թե՞ Սուրբ Դոմինիկը: Այն առաջին անգամ հիմնադրվեց 1204 թ. Յոմի պապ Ինոկենտիոս III-ի կողմից:

Սուրբ Դոմինիկը հրեշ էր, գուրկ որևէ ողորմության գագաթումից: Թվում էր, թե նա առավելագույն հաճույք էր ստանում տանջանքների և տառապանքի տեսարաններից: Ալբիգոյեցիների դեմ խաչակրաց արշավանքի ժամանակ (ձեռքում խաչով) նա առաջնորդում և հրահրում էր սուրբ մարտիկներին սպանության և ավերածությունների: Այսօր ինկվիզիցիան, կամ Սրբազան Ծառայությունը, Յոմեական կաթոլիկ եկեղեցու դատարանն է, որը հայտնաբերում, ճնշում և պատժում է հերետիկությունը և Յոմի եկեղեցու դեմ ուղղված այլ հանցագործություններ:³⁶ Սակայն Դոմինիկի օրերում չկար որևէ օրինական դատարան, և տանջանքների գործիքները դեռ չէին կատարելագործվել այն աստիճան, որին հասան ավելի ուշ ժամանակներում: Այնուամենայնիվ, նման մեխանիզմներ չլիներ ոչ դեպքում անգամ Դոմինիկը գտավ բավարար տանջանքների միջոցներ՝ հողեր կոտրելը, նյարդեր կտրելը, անդամներ կտրելը և խաչի վրա այրելը նրանց, որոնց համոզմունքները ոչ մի այլ միջոցով չէր կարելի փոխել և որոնք չհրաժարվեցին իրենց հավատքից ու ազատությունից:

³⁶ «Սուրբ Պետրոսի գահը», էջ 589:

Պապ Իննոկենտի կողմից լիազորված՝ իր ավետարանը չընդունող հերետիկոսներին գույքի բռնագրավմամբ, արքայի և մահապատժով պատժելու համար, Դոմինիկը համոզեց քաղաքացիական դատարանին և տեղի բնակչությանը ոչնչացնել Վալդենսներին հերետիկոսներին: Մի անգամ նա այրեց հարյուր ութսուն Ալբիգոյեցիների: Հակաքրիստոսի ծառայության հանդեպ նման նվիրվածության համար նրան սրբացրին, և այսօր կաթոլիկները իրենց աղոթքներն ու պաշտամունքը նրան են ուղղում: Կաթոլիկ միսալը (աղոթագրքի մի տեսակ), խոսելով սուրբ Դոմինիկի մասին, գովերգում է «նրա արժանիքներն ու ուսմունքը, որոնք լուսավորեցին Եկեղեցին, նրա հնարամտությունն ու առաքինությունը, որոնք հաղթեցին Տուլուզի հերետիկոսներին»: Կաթոլիկ լիտուրգիայի գիրքը (որը ներառում է Տիրոջ ընթրիքի տոնակատարության ծիսակարգը) գովերգում է նրա արժանիքները և նրա միջնորդությամբ աղոթում են օգնության համար: Այսպիսով Հակաքրիստոսը աջակցում և պատվում է իր հավատարիմ հերոսներին:

Մի քանի բառով անհնար է փոխանցել ինկվիզիցիայի ամբողջ սարսափը կամ այն ոսկորները սառեցնող վախը, որը նա սերմանում էր մարդկանց մեջ: Նրանք, ովքեր բարձրաձայն չէին գովաբանում Հակաքրիստոսին կամ համարձակվում էին քննադատել նրա մեթոդները, կասկածվում էին հերետիկության մեջ: Այդպիսի մարդիկ անորոշ ժամկետով բանտարկվում էին խավար բանդում՝ մինչև դատավարության համապատասխան օրը, առանց նախազգուշացման կամ փոխհատուցման (շատ դեպքերում նրանք անգամ չէին իմանում, թե ով է իրենց մեղադրողը կամ ինչ մեղադրանք է իրենց վերագրված): Այս դատավարությունները անցկացվում էին գաղտնի, և խոստովանությունն ստանալու համար հաճախ կիրառվում էր խոշտանգում: Այս խոշտանգումը այնքան սարսափելի էր, որ այսօր, ազատության այս դարաշրջանում և այս

ազատ երկրում, գրեթե անհնար է հավատալ, որ այն տեղի է ունեցել: Սակայն դրա իրականությունը հաստատվում է այնպիսի ապացույցներով, որոնք անգամ կաթոլիկ պատմաբանները չեն կարող հերքել, և նրանց ապարդյուն փորձերը արդարացնելու այն միայն ծառայում են այդ ապացույցները հաստատելուն: Խոշտանգման ենթարկելու գործիքները, ինկվիզիցիայի ժառանգությունը, գոյություն ունեն մինչև այսօր, ինչը ցանկացած հերքում դարձնում է ապարդյուն: «Սրբազան Ծառայությունը» Նույնիսկ վարձում էր բժիշկների, որոնք հսկում էին տանջանքների ընթացքը և դադարեցնում այն, երբ մահը մոտ էր մարտիրոսին տանջանքներից ազատելու: Չոհին թույլատրվում էր մասամբ ապաքինվել, որպեսզի նրան հնարավոր լիներ տանջել երկրորդ և երրորդ անգամ: Այս տանջանքները միշտ չէ որ նախատեսված էին հերետիկոսությունը պատժելու համար. դրանց հիմնական նպատակը մեղադրյալին ստիպելն էր խոստովանել, հերքել իր հավատքը կամ մեղադրել ուրիշներին՝ կախված հանգամանքներից:

Նույնիսկ այս դարում, երբ ինկվիզիցիան կորցրել էր իր սարսափի մեծ մասը, այն շարունակում էր վախ ներշնչել: Նապոլեոնյան պատերազմների մի պատմաբան, նկարագրելով Նապոլեոնի բանակի կողմից Տուլոյի գրավումը, նշում է, ի թիվս այլ բաների, ինկվիզիցիայի բացված բանտերի: Նա ասում է՝

«Թվում էր, թե գերեզմաններն են բացվել: Սպիտակամարմին, հոգիների նման կերպարներ դուրս եկան խցերից, որոնցից գերեզմանային հոտ էր բարձրանում: Շատ երկար մորուքներ, որոնք հասնում էին նրանց կրծքին, և թռչնային ճանկերի նման եղունգները խեղաթուրում էին ոսկորային կերպարները, որոնք հնալով առաջին անգամ երկար տարիներ անց շնչեցին թարմ օդը: Նրանցից շատերը հաշմանդամ էին դարձել՝ գլուխները

թեքված առաջ, իսկ ձեռքերը անշարժ ու անօգնական կախված: Նրանց պահել էին այնքան ցածր նկուղներում, որ այնտեղ ուղղահայաց կանգնելն անհնար էր: Եվ չնայած [ռազմական] բժիշկների բոլոր ջանքերին, նրանցից շատերը հենց այդ օրը մահացան: Հաջորդ օրը գեներալ Լասալը, իր ուղեկցող մի քանի սպաների հետ, մանրակրկիտ զննեց տեղանքը: Նույնիսկ պատերազմի դաշտին սովոր մարդիկ սարսափեցին տանջանքների գործիքների քանակից»:

Հողի տակ գտնվող մի գաղտնասենյակի խորշում, որը հարակից էր քննությունների մասնավոր սենյակին, կանգնած էր վանականների ձեռքով փայտից փորագրված մի արձան, որը ներկայացնում էր Կույս Մարիամին: Ոսկեգօծ փառքի շողք էր շրջապատում նրա գլուխը, իսկ աջ ձեռքում նա բռնել էր մի դրոշակ: Բոլորին առաջին հայացքից կասկածելի թվաց, որ, չնայած նրա ուսերից երկու կողմերով լայն ծալքերով իջնող մետաքսե զգեստին, նա կրում էր մի տեսակ գրահաբաճկոն: Մանրակրկիտ զննությամբ պարզվեց, որ մարմնի առջևի մասը խցկված է անչափ սուր մեխերով և նեղ, փոքր դանակի եզրերով, որոնց ծայրերը ուղղված էին դիտողի կողմը: Բազուկներն ու ձեռքերը հողավոր էին, իսկ բաժանարարի հետևում տեղադրված մեխանիզմը շարժեց կերպարը: Ինկվիզիցիայի ծառաներից մեկը Գեներալի հրամանով ստիպված էր աշխատեցնել այն մեխանիզմը, ինչպես ինքը կոչում էր: Երբ կերպարը ձգեց իր թևերը, կարծես ուզում էր սիրալիրորեն գրկել ինչ-որ մեկին, ապա Լեհ զինվորի փքված մեջքի պայուսակը զբաղեցրեց կենդանի զոհի տեղը: Արձանը նրան ավելի ու ավելի սեղմում էր, և երբ պաշտոնյան, ըստ հրամանի, ստիպեց կերպարին բացել ձեռքերը և վերադառնալ նախնական դիրքին, գրենադերի ծանրաբեռնված պայուսակը խրված էր եղել երկու-երեք դյույմ խորությամբ և կախված էր մնացել եղունգների ու դանակների ծայրերից:

Տանջանքների նպատակով հորինվել էին տարբեր տեսակի «տանջարանային սարքեր»: Մեկ ամենապարզ մեթոդը գործում էր այսպես՝ զոհին ամբողջովին մերկացնում էին, ձեռքերը ամուր պարանով կապում մեջքի ետևում, որով էլ պարանի օգնությամբ բարձրացնում էին վեր: Նրանց ոտքերին կցվում էր ծանրություն: Չոհին մի քանի անգամ հանկարծակի, ցնցող շարժումներով իջեցնում և բարձրացնում էին, ինչի հետևանքով նրա ձեռքի և ոտքի հողերը դուրս էին գալիս տեղից, իսկ կապող պարանն խրվում էր դողացող մարմնի մեջ մինչև ոսկորը:

Վերջերս հանրության ուշադրությանը ներկայացվեց Զրիստոսի անունից գործված նման բռնության հիշատակ: Բավարար տարածքի բացակայության պատճառով Հռոմում գործող Աստվածաշնչային ընկերության հրատարակչական գրասենյակը վարձակալեց Վատիկանից ոչ հեռու գտնվող մի ընդարձակ սենյակ: Առաստաղին ամրացված հսկայական ու անսովոր օղակը գրավեց նրանց ուշադրությունը, և ստուգման ժամանակ պարզ դարձավ, որ սենյակը, որտեղ այժմ զբաղված են Աստվածաշունչ տպելով («Հոգու սուրը, որ Աստծո խոսքն է», որի միջոցով Հակաքրիստոսը սրբերի ճնշման և հալածման փորձերում օրեցօր ավելի թույլ էր դառնում) Ինկվիզիցիան ժամանակին օգտագործել է որպես խոշտանգման սենյակ: Ճախարակի օղակը, ամենայն հավանականությամբ, օգտագործվել է բերանով կապված բազմաթիվ դժբախտ մարտիրոսների խոշտանգման համար:

Հերետիկոսության մեջ մեղավոր ճանաչվածներին երբեմն դատապարտում էին այն, ինչը կոչվում էր «Հավատքի ակտ»: Եկեղեցական իշխանությունը դատապարտյալներին հանձնում էր աշխարհիկ իշխանությանը, իսկ հոգևորականները, ողորմածության կեղծ պատրանքով, խնդրում էին դատարանին ցուցաբերել

ողորմությունն դատապարտյալի նկատմամբ և, խաչը բարձրացնելով, աղաչում էին զոհին հերքել իր հավատքը և փրկել թե՛ ներկա, թե՛ ապագա կյանքը: Դատավորները լավ գիտեին իրենց դերը և ողորմությունն չէին ցուցաբերում, բացի մեղքից հրաժարվողների նկատմամբ, այդպիսով նրանք ստանում էին «Հավատքի պաշտպան» և «Հերետիկոսների ոչնչացնող» տիտղոսներն ու օրհնությունները: Դատապարտված «հերետիկոսը», հագած դեղին վերարկու, զարդարված շների, օձերի, կրակի բոցերի և սատանաների պատկերներով, տարվում էր մահապատժի վայր, կապվում սյան վրա և հանձնվում կրակին:

Տորկվեմադան, մեկ այլ հայտնի գլխավոր ինկվիզիտոր, հանդիսանում է Հակաքրիստոսի ոգու ակնառու օրինակ: Հռոմեական կաթոլիկ հեղինակները ընդունում են, որ նա հրամայել է այրել կենդանի տասը հազար երկու հարյուր քսան (10,220) մարդ՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց: Լորենտեն, ով երեք տարի ինկվիզիցիայի գլխավոր քարտուղարն էր և մուտք ուներ բոլոր փաստաթղթային ապացույցներին, իր զեկույցներում, որոնք հրապարակվել են 1817 թ. (4-րդ հատոր), ցույց է տալիս, որ 1481-ից մինչև 1808 թվականները միայն այս «Սրբազան ծառայության» հրամանով ոչ պակաս քան 31,912 մարդ կենդանի այրվել է, և մոտ 300,000-ը տանջվել և դատապարտվել է պատժի: Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի յուրաքանչյուր կաթոլիկ երկրում գործել է ինկվիզիցիա:

Այստեղ հնարավոր չէ ներկայացնել բոլոր հալածանքները, որոնք Հակաքրիստոսը իրականացրել է բարենորոգության, խղճի ազատության կամ քաղաքական ազատության հետ կապված: Բավական է նշել, որ այդ հալածանքները զգացվել են յուրաքանչյուր երկրում, որտեղ պապությունը ամուր դիրք էր զբաղեցնում՝ Գերմանիա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Իտալիա, Անգլիա, Իռլանդիա,

Շոտլանդիա, Ֆրանսիա, Իսպանիա, Պորտուգալիա, Եթովպիա, Հնդկաստան, Կուբա, Մեքսիկա և որոշ լատինամերիկյան պետություններ: Այստեղ բավարար տեղ չկա առանձին դեպքեր նկարագրելու համար, որոնք ապացուցում են, որ շատ մարտիրոսներ իսկական սրբեր և հերոսներ էին: Նույնիսկ ամենասարսափելի տանջանքների ժամանակ նրանք բավականաչափ ազնվություն և ուժ ունեին, որպեսզի դանդաղ մահանալիս երգեին օրհներգեր և գոհաբանական երգեր ճշմարիտ Եկեղեցու ճշմարիտ Գլխին և, ինչպես նա, աղոթել իրենց թշնամիների համար, որոնք, ինչպես նա կանխատեսել էր, հալածում էին նրանց իր համար:³⁷

Նույն պատճառով մենք չենք անդրադառնա բոլոր այն սարսափելի, զգվելի և սարսափեցնող տանջանքների մանրամասներին, որոնց ենթարկվեցին Տիրոջ որոշ սիրելիները իրենց համոզմունքների նկատմամբ հավատարիմ մնալու պատճառով: Այս հարցը ուսումնասիրածների համաձայն՝ վերջին տասներեք դարերի ընթացքում Պապությունը ուղղակի կամ անուղղակիորեն պատճառ է դարձել հիսուն միլիոն մարդու մահվան: Եվ կարելի է վստահորեն ասել, որ մարդկային և սատանայական բոլոր հնարքներն ու հնարամտությունը կիրառվել են՝ Հակաքրիստոսի քաղաքական և կրոնական հակառակորդների համար նոր և սարսափելի տանջանքների ձևեր հորինելու համար: Վերջիններս (հերետիկոսները) հալածվել են տասնապատիկ

³⁷ Այս սարսափելի ժամանակների և իրադարձությունների մասին ավելին իմանալ ցանկացողներին մենք խորհուրդ ենք տալիս հետևյալ աշխատությունները՝ Մակոլեյի «Անգլիայի պատմություն», Մեթլիի «Հոլանդիայի հանրապետություն», Դե Օբինիի «Բարեփոխումների պատմություն», Ուայթի «Քրիստոնեության տասնութ դարեր», Էլիոթի «Կաթոլիկություն» և Ֆոքսի «Մարտիրոսների գիրք»:

դաժանությամբ: Սովորական հալածանքների և մահվան ձևերի (օրինակ՝ խարույկի վրա ձգվելը, այրվելը, խեղդվելը, դանակահարվելը, սովամահ լինելը կամ աղեղով ու նետերով, ինչպես նաև այլ զենքերով սպանվելը) կողքին, այս անմարդկային արարածները հորինեցին եղանակներ՝ հարվածելու ամենանուրբ և զգայուն օրգաններին, որոնք եթակա են ամենաձանր տանջանքների: Նրանց ականջներում լցնում էին հալած սնդիկ, լեզուները կտրում էին, իսկ բերաններում լցնում սնդիկ, պատրաստում էին անիվներ՝ դանակի եզրերով, որպեսզի զոհին աստիճանաբար կտոր-կտոր անեին, կարմրած տակդիրներ և պինցետներ կիրառում էին մարմնի զգայուն մասերի վրա, աչքերը հանվում էին, եղունգները քաշվում էին կարմրացած երկաթով, կրունկներին անցքեր էին փորվում, որոնցով զոհերին կախում էին, ոմանց ստիպում էին բարձրությունից ցատկել երկար մեխերի վրա, որտեղ նրանք ցավից կծկվելով աստիճանաբար մահանում էին, նրանց բերաններում լցնում էին վառօղ, որը պայթելիս գլուխները փշուրներ եր դարձնում, Ոմանք ջարդուփշուր էին արվում պողպատի վրա, մյուսները երկաթագործի փչակով փչվելով մեծացվում էին մինչև պայթելը, իսկ մնացածները խեղդվում էին իրենց սեփական մարմնի կտրած մասերով, միզով կամ կղանքով և այլն:

Այս սարսափելի դաժանությունների հավատալը անհնար կլիներ, եթե դրանց իսկությունը վերջնականապես չհաստատվեր: Դրանք ցույց են տալիս, թե որքան խոր կարող է ընկնել մարդկային սիրտը պղծության մեջ և որքան կույր կարող են դառնալ մարդիկ արդարության և ամենայն բարի բնագոյների նկատմամբ՝ կեղծ, կեղծված կրոնի ազդեցության տակ: Հակաքրիստոսի ոգին կեղեքել և ավերել է աշխարհը, ինչպես որ Իրական Քրիստոսի Հոգին և Իրական Աստվածային Թագավորության իշխանությունն ու ազդեցությունը նախատեսված են բարձրացնելու և ազնվացնելու մարդկանց սրտերն ու գործերը – և ինչպես

որ սա իսկապես տեղի կունենա հազարամյակի ընթացքում: Սա որոշ չափով երևում է քաղաքակրթության զարգացման և արդարության ու ողորմության աճի մեջ՝ այն պահից ի վեր, երբ Հակաքրիստոսի ուժը սկսեց թուլանալ, և մարդիկ, գոնե որոշ չափով, սկսեցին լսել ու հաշվի առնել Աստծո խոսքը:

Իրոք, դժվար է պատկերացնել մարդկությանը խաբելու և ճնշելու ավելի լավ միջոց: Յուրաքանչյուր անբարո հակում և անկյալ մարդու թուլություն շահագործվեց: Յուրաքանչյուր ստորագույն ցանկություն արթնացվեց և խրախուսվեց, և դրանից ստացված հաճույքը պարգևատրվեց: Այս կերպ բոլոր չար մարդիկ ներգրավվեցին և ընդունվեցին հետևորդների շարքերը, մինչդեռ ավելի ազնիվները գայթակղվեցին այլ միջոցներով՝ վանականների կողմից ցուցադրվող բարեպաշտության, ինքնուրացության և բարեգործության մակերեսային ու կեղծավոր տեսքով, որը իրականում ծառայում էր միայն շատերին առաքիկության ուղիներից ավելի հեռու տանելու համար: Անառակներն ու թեթևամիտները անսահման հաճույք էին ստանում շքերթներից ու ներկայացումներից, շքեղությունից ու արարողակարգից, նախաձեռնողները ու ասպետասերները՝ առաքելություններում և խաչակրաց արշավանքներում, անառակները՝ ինդուլգենցիաներում, իսկ դաժան ֆանատիկոսները՝ իրենց հակառակորդներին ճնշելու միջոցներում:

Սարսափով ու զարմանքով մենք ինքներս մեզ հարցնում ենք՝ ինչպես կարողացան թագավորները, իշխանները, կայսրերը և ողջ բնակչությունը թույլ տալ, որ տեղի ունենան նման սարսափելի գազանություններ: Ինչու՞ նրանք վաղուց չեն ոտքի ելել և չեն տապալել Հակաքրիստոսին: Պատասխանը գտնվում է Սուրբ Գրքում (Հայտնություն 18:3): Ազգերը հարբած (խլացած) էին. նրանք կորցրել էին իրենց միտքը՝ խմելով խառը գինին

(կեղծ ու ճշմարիտ ուսմունքների խառնուրդ), որը նրանց մատուցել էր հավատուրաց եկեղեցին. նրանք խաբվել էին պապության պնդումներից. Եվ, ճշմարտությունն ասած, նրանք դեռևս ամբողջությամբ չեն արթնացել իրենց մթազնությունից: Քանզի թեև թագավորների դեսպանները, գլխահակ լինելով Պապի առջև, նրան չեն դիմում այնպես, ինչպես հնում էին անում՝ «Աստծո Գառ, որ վերացնում ես աշխարհի մեղքը», – և նրան չեն դիտարկում որպես «Աստված, որ իշխանություն ունի երկնքում և երկրի վրա ամեն ինչի վրա», նրանք դեռևս հեռու են ճշմարտությունը գիտակցելուց՝ որ պապությունը եղել է և մնում է ճշմարիտ Թագավորության սատանայական կեղծիք:

Մինչ թագավորներն ու ռազմիկները արդեն հոգնել էին նման անմարդկային հետապնդումներից, սրբազան հիերարխիայի հետ իրավիճակը բոլորովին այլ էր: Մենք տեսնում ենք, թե ինչպես 1423 թ. Սիենայի Էկումենիկ խորհուրդը հայտարարեց, որ աշխարհի տարբեր մասերում հերետիկության տարածման մեղքը ընկած է ինկվիզիտորների անփութության վրա: Իշխաններին, Աստծո շնորհով, հորդորում էին արմատախիլ անել հերետիկությունը, եթե ցանկանում էին խուսափել աստվածային պատժից, իսկ բոլոր նրանք, ովքեր մասնակցում էին ոչնչացման գործին կամ տրամադրում էին զենքեր այդ նպատակով, ստանում էին հավիտենական ինդուլգենցիաներ: Այս հրամանները հայտարարվում էին եկեղեցիներում ամեն շաբաթ օր: Եվ բազմաթիվ կաթոլիկ աստվածաբաններ ու պատմաբաններ իրենց գրիչները ծառայեցրին ստոր նպատակին՝ արդարացնելու, խրախուսելու և գովաբանելու հերետիկոսության նկատմամբ հալածանքը: Բեյլարմինեն, օրինակ, նշում է. «Առաքյալները գերծ մնացին աշխարհիկ գործի օգնությանը դիմելուց միայն այն պատճառով, որ իրենց օրերում քրիստոնյա իշխաններ չկային»: Դոկտոր Դենսը, հայտնի

հռոմեական կաթոլիկ աստվածաբան, 1758 թվականին հրատարակեց մի աստվածաբանական տրակտատ, որը այսօր պապիստների կողմից համարվում է հեղինակավոր նորմատիվ աղբյուր, հատկապես իրենց քոլեջներում, որտեղ այն դասակարգվում է նույն կերպ, ինչպես Բլեքսթրունի աշխատանքը անգլիական քաղաքացիական իրավունքի վերաբերյալ: Ամբողջ աշխատությունը լեցուն է հալածանքի ոգով: Այն դատապարտում է հերետիկոսներ թաքցնողներին՝ նրանց գույքի բռնագրավմամբ, երկրից արտաքսմամբ, բանտարկությամբ և մահապատժով, առանց քրիստոնեական թաղման իրավունքի:

Բողոքականների դեմ հաստատված անեծքներից մեկը, որը տպված է Հռոմեական արարողակարգում, հնչում է այսպես՝

Թող Ամենակալ Աստվածն ու Նրա բոլոր սրբերը նրանց անիծեն այն անեծքով, որով անիծված են սատանան և Նրա հրեշտակները: Թող նրանք ջնջվեն կենդանիների երեսից: Թող նրանց վիճակվի ամենավախճան մահը, և թող նրանք կենդանի իջնեն անդունդի մեջ: Թող նրանց սերունդը ջնջվի երկրի երեսից՝ թող այն ոչնչանա սովից, ծարավից, մերկությունից և ամեն տեսակի աղետներից: Թող նրանց վրա գա ամեն մի դժբախտություն, ժանտախտ և տանջանք: Թող նրանք բոլորը անիծված լինեն: Թող նրանք անիծված լինեն միշտ և ամենուր: Թող նրանք անիծված լինեն խոսքում և լռության մեջ: Թող նրանք անիծված լինեն ներսից և դրսից: Թող նրանք անիծված լինեն գլխից մինչև ոտքերը: Թող նրանց աչքերը կուրանան, ականջները խլանան, բերանները անզգայանան, լեզուները կաչեն կոկորդիլներին, ձեռքերը թուլանան, և ոտքերը չկարողանան քայլել: Թող նրանց մարմնի յուրաքանչյուր անդամը անիծված լինի: Թող նրանք անիծված լինեն՝ կանգնած թե պառկած, այժմ և մինչև աշխարհի վերջը, և այսպես թող նրանց մոմը մարի Աստծո առջև Դատաստանի օրը: Թող

Նրանց թաղումը շների ու էշերի կողքին լինի: Թող սոված գայլերը կուլ տան Նրանց դիակները: Թող սատանան և Նրա հրեշտակները հավիտյան Նրանց ընկերներ լինեն: Ամեն, ամեն: Թող այդպես լինի, թող այդպես լինի:

Սա պապականության ոգին է: Բոլոր Նրանք, ովքեր տիրապետում են ճշմարիտ Քրիստոսի ոգուն, հեշտությամբ կճանաչեն նման ստոր կեղծիքը:

Քանի որ վարդապետական սխալները բոլոր վարքագծային սխալների արմատն են, կասկած չկա, որ եթե բարենպաստ հանգամանքներ կրկին ստեղծվեն, այդ նույն անփոփոխ վարդապետությունների չար ոգին և չար պտուղները շուտով կրկին կհայտնվեն նման անարդարություն, ճնշում, մոլեռանդություն, անտեղյակություն և հալածանք: Եվ ոչ մի միջոց չի խնայվի՝ այս կեղծ Աստծո Թագավորությունը վերականգնելու, պահպանելու և տարածելու համար: Այս ամենի ապացույց համար՝ բերենք մի քանի օրինակներ, որոնք վերջերս մեր ուշադրության են արժանացել:

1887 թ. օգոստոսի 7-ին ԱուենԷտիտլանում (Գերերո, Մեքսիկա) տեղացի բողոքական միսիոներ Աբրահամ Գոմեսը և Նրա երկու օգնականները սառնասրտորեն սպանվեցին տեղի բնակիչների կողմից՝ Հռոմեական կաթոլիկ քահանա հայր Վերգարայի հրահրմամբ, ով նախորդ օրը, մասնավորապես պատարագի ընթացքում, իր հավատացյալներին կոչ էր արել «օրինակ ցույց տալ Սատանայի սուրհանդակով», որը եկել էր Նրանց մոտ, հավելելով, որ Նրանք կարող են անվտանգ «սպանել» Նրան՝ հենվելով ոստիկանապետի և հենց քահանայի պաշտպանության վրա: Քահանայի խոսքը օրենք էր և՛ այս անգրագետ մարդկանց, և՛ քաղաքացիական իշխանությունների համար: Խեղճ միսիոների խեղված մարմինը, որին գնդակահարել և կտոր-կտոր արել էին, քարշ տվեցին փողոցներով և ենթարկեցին ամեն տեսակի

վայրագությունների՝ որպես նախագգուշացում մյուսների համար: Սրա համար ոչ մի արդարացում չի կարող լինել:

Երբ Նյու Յորքի Independent-ը ուշադրություն հրավիրեց այս արյունալի ջարդի վրա, The Freeman-ում՝ Նյու Յորքի ազդեցիկ հռոմի կաթոլիկ ամսագրում, հայտնվեց հետևյալ առարկությունը՝

«Նրանք [բողոքական միսիոներները] տեսնում են, թե ինչպես ազնիվ մարդիկ ծնկի են գալիս Անգելուսի դողանջի ձայնին՝ ի պատիվ Հրեշտակային ավետման և Մարմնացումի: Նրանք ասում են, որ Աստվածաշունչը շուտով կվերացնի նման « սնահավատությունները»: Աստծո Մոր պատկերի առջև վառվում է մոմը:» «խա՛», գոչում է միսիոները, «շուտով մենք կսովորեցնենք խավարում խրվածներին ոչնչացնել այս խորհրդանիշը» և այլն: Եթե նման մի քանի միսիոների սպանությունը ստիպում է մյուսներին մնալ տանը, ապա մենք գրեթե ստիպված ենք (մենք՝ այդքան չար պապեր) ասել. «Պարեք, թող ձեր ուրախությունը անսահման լինի»:

Մի քահանա՝ Կ. Գ. Մաուլ անունով, պատմում է մամուլում շրջանառված մի ցավալի պատմություն Մադեյրայում Ռոբերտ Քելլիի և Նրա քարոզչության արդյունքում մկրտվածների հալածանքի մասին, որոնք, իրենց երեխաների հետ միասին, ընդհանուր առմամբ մոտ հազար մարդ, արտաքսվեցին որպես պատիժ ճշմարտության մի մասն ընդունելու համար:

«Բողոքական Պրուսիա» կոչվող երկրում պաստոր Թումմելը ձերբակալվել է «Հռոմեական կաթոլիկ եկեղեցուն վիրավորելու» մեղադրանքով: Նա հրատարակել է մի թռուցիկ, որտեղ քննադատում էր պապությունը, և որտեղ «քննադատական» մեկնաբանություններից մեկը պնդում էր, որ պապությունը մատնված է հերետիկության՝

«կառուցված սնահավատության և կոռւքապաշտության վրա»:

Վերջերս Պրուսիայի և Իսպանիայի միջև վեճ էր ծագել Կարոլինյան կղզիների շուրջ, և Պապը ստանձնել էր միջնորդի ու դատավորի դերը՝ այն լուծելու համար (այս ամենը մեծապես հիշեցնում է նրա Նախկին լիազորություններն ու քաղաքականությունը որպես ազգերի միջնորդ կամ գերագույն դատավոր): Պապը վեճը լուծեց Իսպանիայի օգտին: Իսպանիան անմիջապես ուղարկեց ռազմական, որի վրա տեղավորված էին հիսուն զինվոր և վեց քահանա: Նրանց ժամանելուն պես ամերիկացի առաքելական Դոանին ձերբակալեցին և առանց որևէ այլ պատճառի մեկուսացրին իր բոլոր նորադարձներից՝ բացառապես այն պատճառով, որ նա հրաժարվել էր հանձնել իր միսիոներական գործունեությունն ու ունեցվածքը քահանաներին: Քանի որ կղզիները արդեն պատկանում էին Իսպանիային, իսկ Իսպանիան՝ Պապին, այլ կրոն թույլատրելի չէր, բացի պապական հավատքից:

Մի պարոն, Նախկին կաթոլիկ և հեղինակի ընկեր, ասում է, որ վերջերս, Լատինական Ամերիկա ճանապարհորդելիս, նրան քարերով են ծեծել, և ստիպված եղավ փախչել իր կյանքը փրկելու համար միայն այն պատճառով, որ չէր հանել գլխարկը կամ ծնկի չէր եկել ամբոխի հետ, երբ հռոմեական քահանաները փողոցներով խաչն ու Սուրբ Հացը կրելով անցնում էին: Նմանատիպ դեպք, երբ երեք ամերիկացիներ քահանաների կողմից ծեծի են ենթարկվել, ամբոխի շրջապատման են արժանացել և ոստիկանության կողմից ձերբակալվել Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում նմանատիպ իրավախախտման համար, անշուշտ, դեռ թարմ է շատերի հիշողության մեջ, ովքեր կարդում են օրաթերթերը:

«Դարձի եկած կաթոլիկը» մեջբերում է «The Watchman» ամսագրից, որը հրատարակվում է Միսսուրի նահանգի Սենթ Լուիս քաղաքում՝ որպես հռոմի-կաթոլիկ հրատարակություն.

«Բողոքականությունը! Մենք նրան դուրս կքաշենք և կկտրատենք չորս մասի! Մենք կծակենք այն և կկախենք ագռավների բույների մոտ: Մենք կպատռենք այն ակցաններով և կայրենք կարմրացած երկաթով: Մենք կլցնենք այն հալած մետաղով և կխեղդենք դժոխքի կրակներում, հարյուր ֆաթոմ խորության մեջ:

Հաշվի առնելով անցյալը, լիովին հնարավոր է, որ այս ոգով, եթե նա ունենար այդ իշխանությունը, «The Watchman»-ի հրատարակիչը շուտով իր սպառնալիքները կիղեր ոչ միայն «բողոքականությանը», այլև հենց բողոքականներին:

Իսպանիայի Բարսելոնայում կառավարության հրամանով վերջերս այրվեցին Աստվածաշնչի բազմաթիվ օրինակներ՝ իհարկե Հռոմի եկեղեցու դրդմամբ: Հետևյալը, թարգմանված այնտեղի պապական մարմին «Catholic Banner»-ից, ցույց է տալիս, որ նրանք հավանություն են տվել և բարձր են գնահատել այդ արարքը: Այն ասում էր՝

Նոր խաչակրաց արշավանք խրախուսելով՝ նույն հրատարակությունը նշում է.

«Մենք ճիշտ ենք համարում հրապարակել այն սրբերի անունները, որոնց ձեռքով այդքան շատ մեղավորներ պատժվել են, որպեսզի բարի կաթոլիկները հարգեն նրանց հիշատակը».

Տորկվեմադի ձեռքով – Կենդանի այրված տղամարդիկ
և կանայք.....10220

Խորհրդանշական այրված 6840

Դատապարտված այլ պատիժների	97371
Դիեգո Դեզայի ձեռքով – Կենդանի այրված տղամարդիկ և կանայք.....	2592
Խորհրդանշական այրված	829
Դատապարտված այլ պատիժների	32952
Կարդինալ Խիմենես դե Սիսներոսի ձեռքով – Կենդանի այրված տղամարդիկ և կանայք.....	3564
Խորհրդանշական այրված	2232
Դատապարտված այլ պատիժների	48059
Ադրիան դե Ֆլորենցիայի ձեռքով – Կենդանի այրված տղամարդիկ և կանայք.....	1620
Խորհրդանշական այրված	560
Դատապարտված այլ պատիժների	21835

45 սուրբ ինկվիզիտոր-գեներալների պաշտոնավարման - ժամանակ կենդանի այրված տղամարդկանց և կանանց ընդհանուր թիվը.....	35534
Խորհրդանշական այրվածների ընդհանուր թիվը	18637
Այլ պատիժների դատապարտվածների ընդհանուր թիվը.....	<u>293533</u>
Ընդհանուր	347704

Պապական հազարամյակը

Ինչպես ճշմարիտ Զրիստոսի թագավորությունը պետք է տևի հազար տարի, այնպես էլ պապական կեղծիքը իր ամենափառավոր ժամանակաշրջանը՝ որը սկսվեց մ.թ. 800

թվականին և ավարտվեց այս դարի առավոտյան, համարում է Հայտնության 20-րդ գլխում կանխատեսված հազարամյա թագավորության իրականացումը: Եվ այն ժամանակահատվածը (սկսած այդ պահից), երբ Պապությունը աստիճանաբար կորցրել է իր բոլոր աշխարհիկ իշխանությունը, բազմիցս ստորացումների է ենթարկվել այն ժողովուրդների կողմից, որոնք նախկինում աջակցում էին նրան, և մեծապես զրկվել է այն տարածքներից, եկամուտներից և ազատություններից, որոնք երկար տարիներ եղել են նրա պահանջների և տիրապետության առարկա, պապիստների կողմից համարվում է «փոքր ժամանակը» (Հայտնություն 20:3, 7, 8) հազարամյակի ավարտին, երբ Սատանան պետք է ազատ արձակվի:

Պապական հազարամյակի՝ անտեղյակության, մոլորության և խաբեության, սկիզբն ու ավարտը պատմությամբ հստակ նշված են: Ահա թե ինչպես է մի հռոմի-կաթոլիկ հեղինակ³⁸ մեկնաբանում այս կրոնական կայսրության սկիզբը. «Մ.թ. 800 թ. Պապ Լեոյի կողմից Կարլոս Մեծի՝ Արևմուտքի կայսր, թագադրումը իսկապես Սրբազան Հռոմեական կայսրության սկիզբն էր»³⁹:

³⁸ Սուրբ Պետրոսի Գահը:

³⁹ «Սրբազան Հռոմեական կայսրություն» – միջնադարի մի հսկայական քաղաքական հաստատության տիտղոս է: Նրա ծագումը կապված է Կարլոս Մեծի հետ: Ֆիշերի «Ընդհանուր պատմություն» (Universal History), Էջ 262, այն նկարագրում է այսպես՝ «Թերոթեոփորեն դա աշխարհիկ պետության և աշխարհիկ եկեղեցու միություն էր՝ կայսեր և պապի ենթակա անբաժանելի համայնք, որի գլխավորները (աշխարհիկ և հոգևոր) նշանակվում էին երկնքից»: Հետևաբար, այն պահից, երբ պապերը Զրիստոսի փոխարեն օժեցին կայսրերին, նրանք դարձան դրա փաստացի գլխավորները:

Չնայած պապությունը որպես կրոնական հաստատություն հիմնադրվել էր դեռ շատ ավելի վաղ և նույնիսկ 539 թ. ամրապնդել իր աշխարհիկ իշխանությունը, այնուամենայնիվ, հենց Կարլոս Մեծն էր, որ առաջինը իրականում պապին շնորհեց աշխարհիկ իշխանություն և պաշտոնապես ճանաչեց այն: Ինչպես Կարլոս Մեծը եղել է «Սուրբ Զոմմեական կայսրության» (մ.թ. 800 թ.) առաջին կայսրը, այնպես էլ Ֆրանցիսկոս II-ն է եղել վերջինը, ով կամավոր հրաժարվել է այդ տիտղոսից (մ.թ. 1806 թ.):⁴⁰ Ինչպես մ.թ. 800 թ.–ից առաջ պապությունը բարձրացավ հռոմեական «գազանի» (ժողովուրդ) և նրա «եղջյուրների» (իշխանություններ)–ի աջակցությամբ, այնպես էլ 1800 թ.–ից սկսած աստիճանաբար զրկվեց թագավորների և ազգերի նկատմամբ իր աշխարհիկ իշխանությունից և ցրված ու թալանվեց նրանց կողմից, ովքեր նախկինում աջակցել էին նրան (Հայտնություն 17: 16, 17): Այսօր պապությունը, թեև դեռ շրջապատված է պատիվներով և շարունակում է լայն ազդեցություն ունենալ մարդկանց մտքերի վրա, սգում է աշխարհիկ իշխանությանը առնչվող ամեն ինչի կորուստը:

Ուշադիր ուսումնասիրողը կնկատի Հակաքրիստոսի զարգացման և բարձրացման մեջ չորս ավելի կամ պակաս հստակ սահմանված ժամանակաշրջաններ, և նույնքան

⁴⁰ 1800 թ. Մարենգոյի և 1805 թ. Աուստերլիցի ճակատամարտերով Գերմանիան երկու անգամ ծնկի եկավ Նապոլեոնի առջև: Վերջին պարտության հիմնական արդյունքը եղավ Հռենոսի համադաշնության ստեղծումը՝ ֆրանսիական կառավարչի հովանավորության ներքո: Այս իրադարձությունը վերջ դրեց հին գերմանական կամ [Սուրբ] Հռոմեական կայսրությանը, որը գոյություն էր ունեցել հազար տարի: Ուայթի «Ընդհանուր պատմություն», էջ 508:

հստակ թվով ամսաթվեր, որոնք նշանավորում են նրա անկումը:

Նրա զարգացումը նշանավորող չորս ամսաթվերը՝

1. Պողոս առաքյալի օրերում, մ.թ. մոտ 50 թվականին, գաղտնի, անօրինական ձգտման ի հայտ գալը նշանավորեց սկիզբը:

2. Պապություն, «Անօրենության մարդը», կազմակերպվեց որպես հիերարխիա. այսինքն՝ եկեղեցին ձեռք բերեց կազմակերպված կառուցվածք, և պապերը ճանաչվեցին որպես Գլուխ, ներկայացնելով Զրիստոսին, իշխելով եկեղեցում և ազգերի վրա, աստիճանաբար՝ մոտավորապես մ.թ. 300 թվականից մինչև 494⁴¹ թվականը:

3. Այն ժամանակը, երբ պապերը սկսեցին կիրառել քաղաքացիական իշխանություն և ուժ, ինչպես հետագայում կցուցադրվի, Մ.թ. 539 թ. (III հատոր, գլուխ 3)

4. 800 թվականին, վերելքի շրջանում, ինչպես արդեն ցույց է տրվել, հիմնադրվեց «Սուրբ Հռոմեական

⁴¹ Պապությունը երկար ու դժվար պայքար մղեց եկեղեցու գլխի իշխանության համար և աստիճանաբար ձեռք բերեց ճանաչում և գերագույն իշխանություն: Այդ գերագույն իշխանության մոտ 494 թվականին համընդհանուր ճանաչում ստանալը հստակ ցույց է տալիս կաթոլիկ հեղինակը «Սուրբ Պետրոսի աթոռը» գրքում, էջ 128-ում: Սուրբ Պետրոսի աթոռի [Հռոմի եպիսկոպոսությունը] առաջնությունը հինգերորդ դարում այնքան էր զարգացել, որ պապը այդ ժամանակ համընդհանուր ճանաչվում էր որպես քրիստոնեական միասնության կենտրոն — Աստծո եկեղեցու Գերագույն Տիրակալ և Ուսուցիչ, եպիսկոպոսների Տիրակալ, աշխարհի բոլոր մասերից եկեղեցական վեճերի բողոքների վերջնական միջնորդը և ընդհանուր ժողովների դատավորն ու ատենապետը, որոնց նախագահում էին նրա լեգատները»:

կայսրությունը», և Պապը, թագադրելով Կարլոս Մեծին որպես կայսր, ճանաչվեց թագավորների թագավոր, կայսրերի կայսր և «երկրի վրա մեկ այլ Աստված»:

Ահա, այն չորս ժամանակաշրջանները, որոնց ընթացքում պապական ազդեցությունը անկում ապրեց:

1. Ռեֆորմացիայի ժամանակաշրջանը, որը, կարելի է ասել, սկսվեց մոտավորապես 1400 թվականին Ուիքլիֆի աշխատություններով, որին հաջորդեցին Զուսի, Լյութերի և այլոց գործերը:

2. Նապոլեոնի հաջողությունների շրջանը, պապերի անկումը և Ֆրանց II-ի կողմից «Սուրբ Զոմենական կայսրության կայսր» տիտղոսի վերջնական կորուստը, մ.թ.1800–1806 թթ.

3. Պապի՝ որպես Զոմի և Իտալիայի կոչված «Պապական Նահանգների» կառավարիչի վերջնական մերժումը պապի ենթակաների և Իտալիայի թագավորի կողմից մ.թ. 1870 թվականին, որի արդյունքում Զակաքրիստոսը մնում է առանց որևէ աշխարհիկ իշխանության:

4. Այս կեղծ հիերարխիայի վերջնական ոչնչացումը «ցասման օրվա» և դատաստանի ավարտին արդեն սկսվել է և կավարտվի, ինչպես ցույց ենք տվել «Յեթանոսների ժամանակներ» գլխում, 1914 թվականին:

Արդյոք Կա՞ որևէ պատճառ կասկածի?

Մենք հետևեցինք Զակաքրիստոսի վերելքին քրիստոնեական եկեղեցու ներսում տեղի ունեցած հավատուրացությունից, կամ «հեռացումից»: Մենք

լսեցինք Նրա աստվածանարգ պնդումները Զրիստոսի Թագավորության դերի վերաբերյալ և որ Նրա Պապը Զրիստոսի փոխանորդն է, «երկրի վրա մեկ այլ Աստված»: Մենք լսեցինք Նրա հանդուգն, հայիոյական անհեթեթությունները, երբ ինքն իրեն վերագրում է այն տիտղոսներն ու իշխանությունը, որոնք պատկանում են ճշմարիտ Տերերի Տիրոջը և Թագավորների Թագավորին: Մենք տեսանք, թե որքան սարսափելիորեն է Նա կատարել մարգարեությունը՝ «Նա... ճնշելու է սրբերին»: Մենք տեսանք, որ ճշմարտությունը, ճնշված և խեղաթյուրված, ամբողջությամբ կթաղվեր հոգևոր դասի խաբեության, մոլորության և կեղծիքի տակ, եթե Տերը ճիշտ պահին չխանգարեր՝ բարձրացնելով բարեփոխիչներին և այդպիսով օգնելով իր սրբերին, ինչպես գրված է. «Եվ ժողովրդի իմաստունները շատերին պիտի հասկացնեն, բայց մի որոշ ժամանակ պիտի ընկնեն սրով ու բոցով, գերության մեջ ու հափշտակությամբ: Եվ ընկնելիս Նրանք մի փոքր օգնություն պիտի ստանան» (Դանիել 11:33, 34):

Այս բոլոր ապացույցների լույսի ներքո արդյո՞ք կա որևէ պատճառ կասկածելու, որ հենց պապությունն է այն, որի մասին առաքյալներն ու մարգարեները գրել են այդպիսի հոգևոր խորաթափանցությամբ՝ մանրամասն նկարագրելով Նրա առանձնահատուկ հատկանիշները: Մենք հավատում ենք, որ յուրաքանչյուր անաչառ մտքում չի կարող մնալ անգամ ամենափոքր կասկած, որ պապությունը Հակաքրիստոսն է՝ «Անօրենության մարդը», և որ ոչ մի մարդ չի կարող կատարել այս մարգարեությունները: Պապականության աննախադեպ հաջողությունը՝ որպես կեղծ Զրիստոս, որը խաբում է ողջ աշխարհին, լիովին իրականացրել է մեր Տիրոջ մարգարեությունը, երբ, հղում անելով իր մերժմանը, Նա ասաց. «Եթե մեկ ուրիշը գա իր անունով, Նրան դուք կընդունեք» (Յովհաննես 5:43):

Անշուշտ, Շատերը զարմացած կմնան, երբ նկատեն, որ այս հարցի մեր քննության ընթացքում մենք մեծապես խուսափել ենք նշելու պապերի և այլ պաշտոնյաների անձնական չարությունը և սարսափելի անբարոյականությունը, ինչպես նաև այն ստվերային «հարմար» գործողությունները, որոնք իրականացրել են Իզուխոսները և այլ գաղտնի օրդերներ՝ պապության անուկից տարբեր տեսակի հետաքննական աշխատանքներ կատարելով: Մենք դիտմամբ դրանք բաց ենք թողել, ոչ թե այն պատճառով, որ դրանք կեղծ են՝ քանի որ Նույնիսկ հռոմեական կաթոլիկ հեղինակներն են դրանցից շատերը ընդունում, այլ որովհետև մեր փաստարկման գիծը չի պահանջում այս ապացույցները: Մենք ցույց ենք տվել, որ պապական հիերարխիան (եթե Նույնիսկ կազմված լիներ մարդկանց ամենաբարոյական ու արդար ներկայացուցիչներից՝ ինչը, ինչպես վկայում է ողջ պատմությունը, ոչ մի կերպ այդպես չէ) հանդիսանում է «Անօրենության մարդը», Նեռը՝ Քրիստոսի հազարամյա թագավորության խեղաթյուրված ու կեղծ տարբերակը, հմտորեն հորինված խաբեության նպատակով:

Անգլիացի պատմաբան Մակուլեյի խոսքերը ապացուցում են, որ անգամ նրանք, ովքեր չունեն որևէ առանձնահատուկ մարգարեական լույս, կարող են ճանաչել պապության զարմանալի համակարգը որպես բոլոր համակարգերից ամենազարմանալի՝ Աստծո ապագա Թագավորության կեղծիք:

Նա ասում է՝ «Անհնար է հերքել, որ Հռոմի եկեղեցու կառավարման ձևը մարդկային [մենք կասեինք՝ սատանայական] իմաստության գլուխգործոց է:

Իրականում, նման հակառակության առջև միայն այսպիսի կառավարման ձևն էր կարողացել պահպանել այս տեսակ ուսմունքը: Տասներկու հազեցած դարերի փորձը, քառասուն սերունդների ղեկավարների հնարամտությունն ու համբերատար հոգատարությունը այս համակարգին այնպիսի կատարելության են հասցրել, որ քաղաքական հմտության հնարքների մեջ այն առաջատար դիրք է զբաղեցնում:

Հակաքրիստոսի վերջնական վախճանը

Մենք հետևեցինք պապության պատմությանը մինչև մեր օրերը՝ մինչև Տիրոջ օրը՝ Էմանուելի ներկայության ժամանակը: Այս «Անօրենության մարդը» զարգացավ, իրականացրեց իր սարսափելի գործը և տապալվեց Հոգու սրով՝ Աստծո Խոսքով: Քրիստոսի բերանից դուրս եկած Հոգին նրան գրկել է կարողությունից բացահայտ և լայնածավալ հալածանքներ իրականացնել սրբերի նկատմամբ, որքան էլ որ նա ցանկանա դա անել: Եվ այժմ հարցնում ենք՝ ինչ է հաջորդելու? Ի՞նչ է ասում Առաքյալը Հակաքրիստոսի վերջի մասին:

Բ Թեսաղոնիկեցիներ 2:8–12-ում Պողոս Առաքյալը խոսում է Հակաքրիստոսի մասին. «Որին Տեր Հիսուսն իր բերանի շնչով կսպանի ու իր գալստյան հայտնությամբ կկործանի»: Ճշմարտության լույսը պետք է լուսավորի յուրաքանչյուր հարց: Ճշմարտությունն ու անսարդարությունը բացահայտելով՝ այն կհանգեցնի մեծ հակամարտության այս սկզբունքների և յուրաքանչյուրի մարդկային ներկայացուցիչների միջև, ինչը կբերի մեծ նեղության և ցասման ժամանակ: Այս հակամարտության մեջ անսարդարությունն ու չարը կընկնեն, իսկ բարությունն ու ճշմարտությունը կհաղթեն: Այլ չարիքների հետ մեկտեղ, որոնք այժմ նախատեսված են վերջնական և ամբողջական

ոչնչացման, կործանվելու է նաև Հակաքրիստոսը, որի հետ գրեթե բոլոր չարիքները՝ թե տեսական, թե գործնական, ուղղակի կամ անուղղակի կապված են: Եվ հենց այս պայծառ, այս արեգակնային լույսը Տիրոջ ներկայությունից է, որ կբերի «նեղության օր», որի պատճառով և որի ընթացքում Հակաքրիստոսը և բոլոր մյուս չար համակարգերը կոչնչանան: «Որի ներկայությունը [այն ժամանակ կուղեկցվի] սատանայի գործով [սատանայական էներգիայով և ակտիվությամբ]... ամեն զօրութիւնով եւ սուտ նշաններով եւ հրաշքներով.Եւ անհրաւութեան ամեն խաբեբայութիւններով կորուսեալների մէջ . Փոխանակ նորա որ ճշմարտութեան սերը չ'ընդունեցին որ ապրեն: Եւ նորա համար Աստուած մոլորութեան ներգործութիւն կ'ուղարկէ նորանց, որ հաւատան ստութեան: Որ դատապարտուին ամենը որ չ'հաւատացին ճշմարտութեանը, * բայց հաւանեցին անօրէնութեանը» անարժան՝ մասնակցելու Հագարամյա Թագավորությանը որպէս Քրիստոսի ժառանգակիցներ:

Այս խոսքերը, ինչպէս մենք դրանք հասկանում ենք, նշանակում են, որ Տիրոջ ներկայության ժամանակաշրջանում (ներկայիս՝ սկսած 1874 թվականից), այս Հակաքրիստոսի համակարգի միջոցով (Որը աշխարհին խաբելու և վերահսկելու Սատանայի գլխավոր գործիքներից մեկն է), ինչպէս նաև նրա բոլոր մյուս գործիքների միջոցով, Սատանան ամենաանհաշտ դիմադրություն կցուցաբերի նոր կարգուկանոնին, որը մոտ է հաստատվելուն: Նա կօգտագործի ամեն մի մանրուք և մարդկային ցեղի ժառանգական թույլ կողմերն ու եսասիրությունը, որպեսզի այս վերջին պայքարում նրանց սրտերը, ձեռքերը և գրիչները շրջվեն ազատության և ճշմարտության լիարժեք լույսի դեմ: Կձևավորվեն նախապաշարմունքներ, որոնք, եթե ճշմարտությունը ամբողջությամբ հասկացված լիներ, չէին կարող գոյություն ունենալ: Կարթնանա խելագար եռանդ, և հետևորդների

դաշինքներ կկազմվեն, որոնք շատերին կհանգեցնեն խաբեության և սխալի: Եվ այս ամենը տեղի կունենա ոչ թե այն պատճառով, որ Աստված բավարար չափով չի հայտնագործել ճշմարտությունը՝ բոլոր ամբողջությամբ նվիրվածներին ճանապարհը ցույց տալու համար, այլ այն պատճառով, որ բոլոր խաբվածները բավարար ջանասիրաբար չեն փնտրել և չեն կիրառել ճշմարտությունը, որը տրամադրվում է որպես «Ժամանակին կերակուր»: Այսպիսով պարզ կդառնա, որ մոլորվածների խումբը ճշմարտությունը ընդունել է ոչ թե սիրով, այլ պարզապես սովորությամբ, որպես ձևականություն կամ վախից: Առաքյալը, կարծես, վստահեցնում է մեզ, որ այս վերջին, մահացու պայքարում Հակաքրիստոսի դեմ (եթե թվա, որ նոր հնարքներով, խաբեությամբ և ծրագրերով նա կրկին ուժ է հավաքում աշխարհում), երկրի իսկական Տերը, թագավորների Թագավորը Իր ներկայության ընթացքում կհաղթի և, ի վերջո, մեծ նեղության ժամանակ լիովին կվերացնի Հակաքրիստոսին և մեկընդմիջտ կոչնչացնի նրա ուժը ու խաբեությունը:

Մենք կարող ենք միայն ենթադրել, թե ինչ տեսք կունենա այս վերջին ճակատամարտը՝ հիմնվելով Հայտնության գրքում ներկայացված խորհրդանշական պատկերազարդումների վրա: Մենք կանխատեսում ենք, որ ամբողջ աշխարհում աստիճանաբար կձևավորվեն երկու մեծ ճամբարներ, որոնցից հավատարիմ, հաղթական սրբերը կմասն առանձին: Այս երկու մեծ ճամբարները, մի կողմից, կկազմվեն սոցիալիստներից, ազատամիտներից, աթեիստներից, դժգոհներից և նրանցից, ովքեր իսկապես սիրում են ազատությունը, որոնց աչքերը սկսում են բացվել բոլոր այն երևույթների նկատմամբ, որոնք առնչվում են սխալ քաղաքական ու կրոնական առաջնորդությանը, ինչպես նաև բռնապետությանը: Մյուս կողմից, մարդկային ազատության և հավասարության հակառակորդները՝

կայսրեր, թագավորներ և արիստոկրատներ, աստիճանաբար կհավաքվեն, և նրանց հետ լիակատար ներդաշնակությամբ կգործի Քրիստոսի Թագավորության կեղծ տարբերակը՝ Հակաքրիստոսը, որը աջակցում է երկրային քաղաքացիական բռնակալներին և նրանց կողմից աջակցվում է: Մենք նաև ակնկալում ենք, որ Հակաքրիստոսի քաղաքականությունը որոշ չափով կփոխվի և կդառնա ավելի հաշտեցուցիչ՝ փորձելով վերականգնել համակրանքը և շահավետ համագործակցությունը (չնայած ոչ իսկական միություն) բոլոր բողոքական ուղղությունների հետ, որոնք նույնիսկ այժմ ցանկանում են անվանական միություն միմյանց և Հռոմի հետ, մոռանալով, որ միակ իսկական միությունը կարող է լինել միայն այն, որը ծնվում և պահպանվում է ճշմարտությունից, այլ ոչ թե դոգմաներից, պայմանագրերից և օրենքներից: Չնայած որոշների համար բողոքականների և կաթոլիկների միջև նման համագործակցությունը կարող է թվալ անհավանական, մենք տեսնում ենք դրա մոտալուտ գալու անթերի նշաններ: Այն արագացվում է Պապության կողմից իր իսկ ժողովրդի շրջանում իրականացվող գաղտնի գործողությունների շնորհիվ, որոնց միջոցով Պապության հետ համագործակցել ցանկացող քաղաքական գործիչներին օգնում են բարձր պաշտոններ զբաղեցնել կառավարական շրջանակներում:

Շուտով կարող ենք ակնկալել օրենքների ընդունում, որոնց միջոցով անհատական ազատությունը կսահմանափակվի անհրաժեշտության և հանրային բարիքի պատրվակով, մինչև քայլ առ քայլ հաստատվեն որոշ «պարզ կրոնական օրենքներ»: Այս կերպ Եկեղեցին և Պետությունը որոշ չափով կարող են միավորվել Միացյալ Նահանգների կառավարման մեջ: Այս օրենքները, բավականաչափ պարզ՝ հարմար բոլոր այնպես կոչված «օրթոդոքս» (այսինքն՝ ժողովրդական) կրոնական

հայացքների համար, նախատեսված կլինեն ճնշելու և խոչընդոտելու ներկայիս «Ժամանակին տրված մենդի» շնորհի և գիտության հետագա զարգացումը: Նախատեսված, ամենայն հավանականությամբ, կլինի պաշտպանություն սոցիալիզմից, անհավատությունից և ստորին ու անկախ խավերի քաղաքական անկարգություններից:

Պարզ է, որ մոտ ապագայում, որպես նրա նեղության մի մաս (և նույնիսկ մինչև այն «նեղության օրվա» մեծ ցասման ամբողջական խստությունը կբռնկվի ողջ աշխարհում և կքանդի երկրի ամբողջ սոցիալական կառուցվածքը՝ ճանապարհի հարթելով ճշմարիտ Զրիստոսի ներքո խոստացված նոր և ավելի լավ կարգի համար), նվիրված Եկեղեցու համար կգա փորձության և քննության ծանր ժամ, որը շատ նման կլինի պապության հաղթանակի օրերում տեղի ունեցածին: Միայն մեր օրերում հալածման մեթոդները կլինեն ավելի նուրբ՝ համահունչ մեր ժամանակի ավելի քաղաքակիրթ մեթոդներին: Տանջանքի գործիքները կփոխվեն ծաղրանքների ու սպառնալիքների, ազատության սահմանափակումների, ինչպես նաև սոցիալական, ֆինանսական և քաղաքական բոյկոտների տեսքով: Այս գլուխը եզրափակելիս մենք ցանկանում ենք մեր ընթերցողներին կրկին ընդգծել այն փաստը, որ Պապությունը Հակաքրիստոսն է՝ ոչ թե իր բարոյական շեղումների, այլ այն պատճառով, որ այն ճշմարիտ Զրիստոսի և ճշմարիտ Թագավորության կեղծիքն է: Հենց այս փաստը չհասկանալու պատճառով շատ բողոքականներ կխաբվեն և կհամագործակցեն Պապության հետ՝ դեմ լինելով ճշմարիտ փառքի Թագավորին:

ԳԼՈՒԽ X

ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՍԵԼ Է

Հակասությունների բացակայություն – Զրիստոսի թագավորության հաստատումը, այժմ ընթացող գործը – Մարգարեության վկայությունը համընկնում է – Այս աշխարհի իմաստունները շատ բան են տեսնում – Արթուն սրբերը ավելի հստակ են տեսնում – Բոլորի համար կարևոր է ունենալ բաց աչքեր և նայել ճիշտ ուղղությամբ

Փրկչի Թագավորության հաստատման ժամանակը մոտեցել է: Սա անխուսափելի վկայություն է նախորդ գլուխներից: Հակասություններ չկան: Մենք արդեն ապրում ենք յոթերորդ հազարամյակում՝ 1872 թվականի հոկտեմբերից ի վեր: Հեթանոս թագավորություններին տրված արտոնությունը պետք է ավարտվի 1914 թվականին: Մեծ նախատիպային Հոբեյանը՝ ամենայնի վերականգնման ժամանակները, սկսվեց 1874 թվականին, երբ հասավ Մեծ Վերականգնողի ներկայության ժամանակը: Նրա վերադարձի ձևն ու գործի բնույթը մինչև այսօր ամբողջությամբ համապատասխանում են մարգարեությունների մանրամասներին: Այս դարաշրջանի վերջին հատկանիշները, ինչպես երևում են այսօր, ամբողջությամբ համապատասխանում են իր հրեական համարժեքի վերջին հատկանիշներին: Եղիան եկել է և, ինչպես մարգարեացվել էր, ընդունվել է, և կանխատեսված անեծքը՝ մեծ նեղության ժամանակը, արդեն մոտենում է: «Անօրենության մարդը» արդեն բացահայտվել է իր ամբողջ զգվելի տգեղությամբ, և նրա կանխատեսված ընթացքը գրեթե ավարտին է մոտենում: Ուստի, երկար սպասված Մեսիայի Թագավորության հաստատման ճակատագրական իրադարձությունը անմիջապես մեր

առջև է: Բացի այդ՝ դրա հաստատումը արդեն ընթացքի մեջ է: Այս աշխարհի՝ խավարի իշխանության՝ «այս աշխարհի իշխանի» ենթակա թագավորությունների անհրաժեշտ քայքայումը և տապալումը այսօր որոշ չափով տեսանելի է Նույնիսկ այս աշխարհի գավակների բնական աչքերին: Բայց սա (ինչպես որ պետք է լինի) շատ ավելի պարզ է նրանց համար, ովքեր ընթացող իրադարձություններին նայում են Աստծո խոսքի հեռադիտակով, որը, ճիշտ կենտրոնացնելիս, հեռավոր բաներն ու դրանց հետևանքները ավելի հստակ է դարձնում, և նաև թույլ է տալիս Աստծո գավակներին տեսնել մանրամասներ, որոնք բնական աչքի համար անհասանելի են, և այն հիմնական հատկանիշները, որոնք պետական գործիչներն ու փիլիսոփաները տեսնում են միայն անորոշ ուրվագծերով: Նույնիսկ աշխարհիկ հարցերում իմաստուն մարդիկ կարող են նկատել աճող հանրային տագնապը, ինչպես նաև այն, որ անտեղյակության իշխանությունը գիջում է տեղը ավելի ընդարձակ ընդհանուր գիտելիքին և անհատական անկախությանը: Եվ թեև նրանք ապարդյուն հույսեր են կապում ինչ-որ անհայտ ու անսպասելի բարենպաստ շրջադարձի հետ, այնուամենայնիվ, ինչպես ասվում է Սուրբ Գրքում, իրենց սրտերը քարացած են վախից և երկրի վրա սպասվող բաներից, որովհետև նրանք տեսնում են, որ խորհրդանշական երկինքները ցնցվում են, և հասկանում են, որ նման ցնցման հետևանքը՝ զանգվածներից սխալի, նախապաշարմունքի և կրոնական սահմանափակումների զորության հեռացումը, կլինի բռնություն և անարխիա:

Բայց Աստծո տեսանկյունից՝ որը տեսնելու արտոնություն ունեն հավատքի տան մեջ զգուշությամբ մնացողները, կարելի է ավելի հստակ տեսնել ոչ միայն նեղության խստությունը, այլև Հազարամյա Թագավորության հաստատման օրհնված հետևանքները,

որը Աստծո նախախնամությամբ կօզնի իրականություն դարձնել: Սա մխիթարություն է և ավելի քան բավարար փոխհատուցում բոլոր վշտերի համար, անգամ եթե դրանք ազդել են մեզ վրա կամ մեր սիրելիների վրա:

Ժամանակների վերաբերյալ մարգարեությունները տրվել են, մասնավորապես որպեսզի այս գիտելիքը մեզ համար հենց հիմա լինի մխիթարության աղբյուր և որպեսզի չմտնենք կասկածի կամ շփոթության մեջ: Մյուս նպատակը այն է, որ մենք, որպես այս թագավորության ներկայացուցիչներ մարդկության մեջ, տեղյակ լինենք ներկայում տեղի ունեցող մեծ, դարաշրջանային փոփոխություններից և կարողանանք աշխարհին վկայել Աստծո ծրագրի մասին և այլն: Եվ թեև այս վկայությունը այսօր անտեսվում է, շուտով այն նրանց համար մեծ օգուտ կբերի և կօզնի ավելի արագ ճանաչել Տիրոջ ներկայությունը մոտեցող մեծ բարկության օրը: Հաջորդ նպատակը նրանում է, որ հավատացյալները, այսպես զինված և ամրացած Աստծո խոսքով, կկարողանան ամուր կանգնել, երբ շատերը ընկնեն անհավատության մեջ և ամեն տեսակի այլ խաբեական սխալների մեջ, որոնք շուտով կկլանեն «քրիստոնեությունը»: Հաջորդ նպատակը Դարերի ամբողջ ծրագրին ուժ և նշանակություն տալն է: Զանգի հաճախ է պատահում, որ, չնայած Աստծո զավակների առաջին հայացքը Նրա շնորհաշատ ծրագրին՝ օրհնել ամբողջ աշխարհը Եկեղեցու միջոցով (Հազարամյա դարաշրջանում), լցնում է նրանց սրտերը և արթնացնում արտասովոր ոգևորություն Նրա հավատարիմների մեջ, նրանց փորձերը լուսավորել ուրիշներին դիմավորվում են սառը ընդունելությամբ, և այն գիտակցությունը, որ համեմատաբար քչերն ունեն «լսելու ականջներ», առաջացնում է հանգիստ մնալու հակում՝ լուռ վայելելով այս թանկագին գիտելիքը, որպեսզի հնարավորինս քիչ հանդիպեն քննադատության և ընդդիմության:

Մեր այս բնական թուլության նկատառմամբ Տերը տվեց ժամանակների վերաբերյալ մարգարեություններ՝ որպես խթան՝ մեզ ամբողջությամբ վերակենդանացնելու և արթնացնելու, ինչպես նաև մեր ծառայության գործունեությունը շարունակելու համար: Քանի որ «հունձքի» ժամանակն է հիմա, այս աշխատանքը պետք է զբաղեցնի Տիրոջ ծառաների ժամանակը, ծառայությունը և մտքերը, որոնք այժմ, ինչպես աշակերտները առաջին գալստի ժամանակ, պետք է իրականացնեն հունձքի աշխատանքը (Հովհաննես 4:35–38): Թող յուրաքանչյուրս ջանա անել այն, ինչ մեր ձեռքերը գտնում են անելու, ենթարկվելով մեծ Հնձողի հրահանգներին: Այնուամենայնիվ, այս «հունձքի» իրադարձությունների ժամանակացույցի և հաջորդականության վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար ընթերցողին պետք է ուղղորդել այս շարքի հաջորդ հատորին, որը կենտրոնանում է վերոնշյալ և այլ մարգարեություններից ժամանակների վերաբերյալ արված եզրակացությունների վրա և ընդգծում է Տիրոջ ներկայության և Նրա գործի ընթացքի տարբեր կանխատեսված նշաններ և հաստատող ապացույցներ: Այնտեղ ցույց է տրվում, որ «Վերջի ժամանակը» եկել է, որ Թագավորության սպասման օրերը կատարվել են, որ Սրբավայրի մաքրագործումը ավարտված է, որ Հունձքի մեծ գործը ընթացքի մեջ է, որ Իսրայելի ժողովումը ակնհայտ է, որ Ամենակալ Աստծո Մեծ Օրվա մարտը մոտենում է, որ Աստծո փառավոր Թագավորության լիակատար հաստատումը նշանակված ժամանակին, հեթանոսների ժամանակների վերջում, կասկածից վեր է: Այնուհետև նկարագրվում է սրբերի գործը հունձքի ժամանակ, այն ցույց է տալիս «վերին կոչման» ավարտը և «կենդանի մնացած» սրբերի «փոխակերպումը»: Այն նաև ցույց է տալիս, որ Եգիպտոսի Մեծ Բուրզը Աստծո վկաներից մեկն է (Ես. 19:19, 20), որի հրաշալի ուղերձը ամբողջական և կատարյալ հաստատում

Է Աստծո դարերի ծրագիրը՝ իր ժամերով և ժամանակներով:

ՀԱՉԱՐԱՄՅԱՅԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ

Ամեն ինչ առաջ է շարժվում: Թող օրհնյալ ժամանակը սկսվի: Հինը արագ անցնում է, և Նորը գալիս է: Ոսկե զանգակները հնչում են, և տոնակատարությունը առաջ է շարժվում, ինչպես բանակ, որը շտապում է երգի տեմպով:

Մուկ տեսությունները այժմ թուլանում են՝ դրանք չափազանց թույլ են հենվելու համար: Լույսը լեռների գագաթներին է, և ճշմարտությունը առաջ է շարժվում: Շատ նշանավոր վայրեր ընդամենը ստվերներ են, որոնք այժմ մարում և փախչում են այսօրվա գալիք հզոր ուժերի առջև:

Ո՛վ եղբայր, ինչո՞ւ ես սպասում: Ո՛վ քույր, ինչո՞ւ ես լուռ: Վեր կաց վաղ առավոտյան արևի հետ: Դիտիր ոսկեգույն պտուղը: Ո՛վ բանաստեղծ, ինչո՞ւ ես տխուր: Ո՛վ երգիչ, ինչո՞ւ ես լուռ: Ո՛վ նկարիչ, ինչո՞ւ ես երկար ձգձգում երկնային երանգը:

Արթնացի առավոտյան վաղ արթնացող թռչունների հետ: Արթնացի արևի ծագման հետ: Մի՛ սպասիր մինչև կեսօր, մի՛ դադարիր սկսելուց հետո: Քանզի ամեն ինչ շարժվում է, թող օրհնված պահը սկսվի: Հինը արագ անցնում է, Նորը գալիս է:

Երկնային լույսը տարածվում է, տարածվում է Թագավորի հրամանով: Այն տարածվում է իր փառքով, արագ առաջ շարժվելով երկրով: Մարդկային հավատալիքները նահանջի մեջ են. թող նրանք թառամեն ու անհետանան:

Արևածագի լույսին հետևելով՝ մենք տեսնում ենք ավելի լավ ճանապարհ:

Օ, եկեք բոլորս պատրաստ լինենք այն աշխատանքին, որը պետք է կատարենք, ուշ ու վաղ աշխատելով, քանզի աշխատողները քիչ են: Հնձելով, ինչպես հրահանգված է, առավոտյան լույսի տակ, քաղելով հնձի դաշտում, աշխատելով ճշմարտության համար:

Ամեն ինչ առաջ է շարժվում: Թող երկրի Հոբելյանը սկսվի: Հինը արագ անցնում է, և Նորը գալիս է: Այն գալիս է: Օ, այն գալիս է: Իմ հիացած աչքերն են տեսնում: Լույսը լեռների գագաթներին է, հովիվը՝ իր հոտի հետ: